

ՏԻԳՐԱՆ ԱՐԹՈՒՐԻ ՄԱՐԿՈՍՅԱՆ

ՆՈՐ ԵՐԵՎԱՆ ԵԿԱԾ
ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐՈՎ ԴԱՏԱԿԱՆ
ԱԿՏԵՐԻ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ
ՎԱՐՈՒՅԹԸ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ



ԵՐԵՎԱՆ 2013

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Տ.Ա. ՄԱՐԿՈՍՅԱՆ

**ՆՈՐ ԵՐԵՎԱՆ ԵԿԱԾ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐՈՎ
ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ
ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

**Երևան
ԵՊՀ հրատարակչություն
2013**

ՀՏԴ 340
ԳՄԴ 67.99
Մ 371

***Հրատարակության է երաշխավորել ԵՊՀ իրավագիտության
ֆակուլտետի գիտական խորհուրդը***

Խմբագիր՝ իրավաբանական գիտությունների թեկնածու,
դոցենտ **Վ.Վ. Հովհաննիսյան**

Մարկոսյան Տ.Ա. – իրավաբանական գիտությունների թեկնածու,
ԵՊՀ քաղաքացիական դատավարության
ամբիոնի ասիստենտ

Մ 371 Նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վե-
րանայման վարույթը քաղաքացիական դատավարությունում/
Տ.Ա. Մարկոսյան.– Եր.: ԵՊՀ հրատ., 2013, 208 էջ:

Մենագրությունը նվիրված է նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման ինստիտուտի հիմնահարցերի վերլուծությանը և լուսաբանմանը: Դրանում հնարավորինս համալիր և բազմակողմանի բացահայտվել է նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման վարույթի էությունը՝ որպես արդարադատության իրականացման արդյունքում օբյեկտիվ պատճառներով տեղ գտած թերությունները, բացթողումները վերացնելու կառուցակարգ, և առանձնացվել են այս ինստիտուտի վերաքննությունից և վճռաբեկությունից տարբերակող հատկանիշները: Նշվածի հիման վրա հեղինակի կողմից կատարվել են բազմաթիվ տեսական եզրահանգումներ, ինչպես նաև ներկայացվել են դատավարական օրենսդրության և իրավակիրառ պրակտիկայի կատարելագործմանն ուղղված մի շարք գործնական առաջարկություններ:

Աշխատությունը նախատեսված է իրավաբանական բուհերի և ֆակուլտետների ուսանողների, դասախոսների և ասպիրանտների համար: Այն կարող է օգտակար լինել նաև գործնական աշխատանքով զբաղված իրավաբանների, իրավաստեղծ գործունեությանը մասնակցող մասնագետների, ինչպես նաև նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման հիմնախնդիրներով հետաքրքրվող այլ անձանց համար:

ՀՏԴ 340
ԳՄԴ 67.99

ISBN 978-5-8084-1814-1

© Մարկոսյան Տ., 2013

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ	5
---------------	---

ԳԼՈՒԽ 1.

ՆՈՐ ԵՐԵՎԱՆ ԵԿԱԾ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐՈՎ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ	7
§ 1. Նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման վարույթի էությունը և նշանակությունը	7
§ 2. Նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման հիմքերը	35

ԳԼՈՒԽ 2.

ՆՈՐ ԵՐԵՎԱՆ ԵԿԱԾ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐՈՎ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ	102
§ 1. Նոր երևան եկած հանգամանքներով բողոք ներկայացնելու իրավունք ունեցող սուբյեկտները.....	102
§ 2. Նոր երևան եկած հանգամանքներով վերանայման օբյեկտները և բողոք ներկայացնելու ժամկետները.....	114
§ 3. Նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման վարույթի ձևական նախադրյալները.....	131

ԳԼՈՒԽ 3.

ՆՈՐ ԵՐԵՎԱՆ ԵԿԱԾ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐՈՎ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	144
§ 1. Նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման վարույթի հարուցումը.....	144

§ 2. Նոր երևան եկած հանգամանքներով դատական
ակտերի վերանայման բողոքի քննության
դատավարական կարգը166

§ 3. Նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերը
վերանայող դատարանի լիազորությունները..... 179

**ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՆՈՐՄԱՏԻՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ,
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ՆՅՈՒԹԵՐԻ ՑԱՆԿ 190**

ՆԱԽԱԲԱՆ

Դատական իշխանության մարմինների գործունեության արդյունավետությունը մեծապես պայմանավորված է նրանց կողմից կայացվող դատական ակտերի որակով, որի երաշխավորման տեսանկյունից հատկապես կարևորվում է դատական ակտերի վերանայման գործուն կառուցակարգերի առկայությունը: Այս առումով իր ուրույն տեղն է գրավում նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման ինստիտուտը, որը թույլ է տալիս գործի քննության ավարտից հետո բացահայտված որոշակի հանգամանքների առկայության դեպքում վերանայել ու բեկանել օրինականության և հիմնավորվածության տեսանկյունից կասկած հարուցող օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը: Որպես օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի վերանայման հնարավորություն ընձեռող վարույթ՝ նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման ինստիտուտը դատավարագիտության մեջ արդարացիորեն դիտարկվում է որպես քաղաքացիական գործերով պատշաճ արդարադատության իրականացման և օրինականության ապահովման լրացուցիչ և կարևորագույն միջոցներից մեկը:

Նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման ինստիտուտը ՀՀ գործող քաղաքացիական դատավարության օրենսդրության կարճատև գոյության ընթացքում բազմիցս ենթարկվել է էական փոփոխությունների: Այդուհանդերձ, նույնիսկ վերջին փոփոխություններով ձևավորված իրավակիրառ պրակտիկայի ուսումնասիրությունը վկայում է, որ քննարկվող վարույթի առկա իրավակարգավորումը չի կարող կատարյալ համարվել, քանի որ, մի կողմից, որոշ դրույթների ձևակերպումները տարըմբռնումների տեղիք են տալիս, իսկ, մյուս կողմից, մի շարք սկզբունքային հարցերի լուծումները դուրս են մնացել օրենսդրի ուշադրությունից:

Միևնույն ժամանակ, պետք է նշել, որ Հայաստանի Հանրապետությունը 2002 թվականի մարտի 20-ին վավերացրել է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» 1950 թվականի նոյեմբերի 4-ին ստորագրված եվրոպական կոնվենցիան¹, որի արդյունքում ստանձնել է դրանում ամրագրված պարտավորությունների պատշաճ կատարումն ապահովելու պարտականություն: Իսկ այդ հանգամանքը պարտավորեցնում է հետազոտվող ինստիտուտը վերլուծել այն չափորոշիչների լույսի ներքո, որոնք առաջադրված են եվրոպական կոնվենցիայով և դրա կիրառման արդյունքում ձևավորված Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկայով:

Դրա հետ մեկտեղ, ՀՀ սահմանադրական դատարանը մի շարք որոշումներում անդրադարձել է նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման ինստիտուտի վերլուծությանը և իրավական դիրքորոշումներ արտահայտել դրա բազմաթիվ հարցերի վերաբերյալ, որոնք, սակայն, դեռևս լիարժեք կերպով արտացոլված չեն դատավարական օրենսդրության մեջ:

Այսպիսով, նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման վարույթի էությունը և նշանակությունը ժամանակակից դատավարագիտական ըմբռնումներին համապատասխանեցնելու, իրավակիրառ պրակտիկայում դրա բովանդակությունը ճիշտ բացահայտելու, գործող դատավարական օրենսդրության մեջ առկա բացթողումներն ու թերությունները վերացնելու և առկա իրավակարգավորումը ՀՀ ստանձնած միջազգային պարտավորություններին, ՀՀ սահմանադրական դատարանի դիրքորոշումներին համապատասխան գնահատելու անհրաժեշտությունը օբյեկտիվորեն արդիականություն են հաղորդում սույն աշխատությանը:

¹ Տե՛ս ՀՀՊՏ 2002.06.05/17(192) Հոդ. 367:

ԳԼՈՒԽ 1.

ՆՈՐ ԵՐԵՎԱՆ ԵԿԱԾ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐՈՎ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

§ 1. Նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման վարույթի էությունը և նշանակությունը

Ժամանակակից աշխարհում սահմանադրական ժողովրդավարության հիմնական հենասյուներ համարվող մարդու իրավունքները և ազատությունները կկրեին ընդամենը հռչակագրային բնույթ, եթե ապահովված չլինեին իրավունքների պաշտպանության և վերականգնման արդյունավետ ընթացակարգերով: Դրանց շարքում առանձնահատուկ տեղ է զբաղեցնում քաղաքացիական գործերով արդարադատության իրականացումը, որի էությունը՝ որպես պետության հատուկ գործառույթ, կայանում է նրանում, որ քաղաքացիական իրավահարաբերություններում երաշխավորվի խախտված կամ վիճարկվող իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը²:

Քաղաքացիական դատավարության մրցակցային ձևի պայմաններում քաղաքացիական գործերով արդարադատության հիմնական նպատակը ոչ թե գործով ճշմարտության բացահայտումն է, այլ քաղաքացիների, իրավաբանական անձանց և իրավունքի այլ սուբյեկտների խախտված կամ վիճարկվող իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանությունը: Հետևաբար, դատարանի հիմնական պարտականությունը քաղաքացիական գործի ճիշտ լուծումն է, որը ենթադրում է նաև գործի փաստական հանգամանքների բացահայտում: Դա պայմանավորված է այն անհերքելի իրողությամբ, որ դատարա-

² Տե՛ս **Власов А.А.**, Гражданский процесс: учебник для бакалавров /А.А. Власов. – 4-е изд., перераб. и доп. – М.: Изд-во «Юрайт», 2012, էջ 15:

նը կարող է ճիշտ արդարադատություն իրականացնել միայն այն դեպքում, երբ գործի քննության ընթացքում կբացահայտի գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստական հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը և դրանց համապատասխան ճիշտ կկիրառի օրենքը: Ըստ որում, քաղաքացիական դատավարությունը նախատեսում է բավարար դատավարական երաշխիքներ գործով ճշմարտությունը բացահայտելու համար³:

Սակայն քաղաքացիական գործերով արդարադատությունը միշտ չէ, որ ավարտվում է օրինական և հիմնավորված դատական ակտերի կայացմամբ: Նման իրավիճակները հնարավոր են ամենից առաջ այն պատճառով, որ արդարադատությունը՝ որպես դատական իշխանության մարմինների գործունեություն, իրականացվում է մարդու կողմից, որին բնութագրական է սխալվելը (*errare humanum est*)⁴: Այս առումով իր արդիականությունը չի կորցրել Ե.Վ. Վասկովսկու այն տեսակետը, ըստ որի. «Որքան էլ դատավորները լավ պատրաստված լինեն իրենց գործունեությանը, որքան էլ բարեխիղճ և ուշադիր լինեն իրենց պարտականությունների կատարմանը, ամեն դեպքում նրանք չեն կարող լրիվ երաշխավորված լինել սխալներից և բացթողումներից: Ոչ միայն օրենքի սխալ ըմբռնումը կամ գործի փաստական հանգամանքների հաստատման ժամանակ դրսևորած պատահական թերուշադրությունը, այլև դատավորի սուբյեկտիվ հայացքները, համակրանքը և հակակրանքը, ինչպես նաև տվյալ տարածքում գերիշխող մտածելակերպի և նախապաշարմունքների ազդեցությունը կարող են սխալ որոշումների կայացման պատճառ հանդիսանալ: Չի կարելի հերքել նաև արդարությունից դատա-

³ Ст'я Гражданское процессуальное право России: Учебник для вузов /**П.В. Алексий, Н.Д. Эриашвили, В.Н. Галузо и др.**; Под ред. проф. П.В. Алексия, проф. Н.Д. Амаглобели. – М.: ЮНИТИ-ДАНА, 2005, էջ 311:

⁴ Ст'я **Давыдов В.А.**, Возобновление уголовного судопроизводства ввиду новых или вновь открывшихся обстоятельств: теория и практика исправления судебных ошибок / В.А. Давыдов. – М.: Изд-во «Юрайт», 2012, էջ 14:

վորների գիտակցաբար շեղումը, որը, նրանց տրված ներքին համոզման ազատության շնորհիվ, կարող է վրիպել նույնիսկ ամենաուշադիր հսկողությունից և այդ պատճառով մնալ անպատիժ»⁵:

Գործի իրական հանգամանքներին դատական ակտի չհամապատասխանելը հնարավոր է նաև դատավարության մասնակիցների կամքից անկախ պատճառներով, քանի որ դատավարության մրցակցային ձևի պայմաններում ճշմարտությունը ոչ միշտ է հասանելի, ուստի գործում է միայն դատական ակտի ճշմարտացիության կանխավարկածը: Այլ կերպ ասած՝ դատական ակտը համարվում է գործի հանգամանքներին համապատասխանող, եթե այն կայացնելիս պահպանվել են ապացույցների հետազոտման և գործի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքների գնահատման վերաբերյալ օրենքով սահմանված կանոնները: Այդ իսկ պատճառով հնարավոր են դեպքեր, երբ դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելուց հետո կարող են բացահայտվել գործի լուծման համար էական նշանակություն ունեցող հանգամանքներ, որոնք գոյություն են ունեցել գործի քննության ժամանակ, սակայն գործին մասնակցող անձանց և դատարանին հայտնի չլինելու հետևանքով հաշվի չեն առնվել: Իսկ այդ հանգամանքների համատեքստում, որոնք իրավաբանական գրականության մեջ կոչվում են «նոր երևան եկած», օրինական ուժի մեջ մտած դատական ակտը դառնում է ոչ ճիշտ, օբյեկտիվ իրականությանը չհամապատասխանող⁶: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ իրականությանը չհամապատասխանող դատական ակտերը ոչ միայն չեն հանդիսանում խախտված կամ վիճարկվող իրավունքների և օրինական շահերի պաշտպանության միջոց, այլև իրենց հերթին կարող են ոտնահարել քաղաքացիական շրջանառության մասնակիցների

⁵ Տե՛ս **Васьковский Е.В.**, Курс гражданского процесса. Том 1 – М.: Изд-во «Бр. Башмаковых», 1913, էջ 172:

⁶ Տե՛ս Советский гражданский процесс: Учебник. /Под ред. **М.А. Гурвича.**: Изд-во «Высшая школа», М., 1967, էջ 316:

իրավունքները: Պատահական չէ, որ դեռևս Ի.Ե. Էնգելմանը նման դատական ակտերն անվանում էր անարդար⁷: Արդյունքում առաջանում է այդպիսի դատական ակտերի վերանայման անհրաժեշտություն, որն իրականացվում է նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման ինստիտուտի միջոցով:

Նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման ինստիտուտը հանդիսանում է քաղաքացիական դատավարության համեմատաբար ուշ ձևավորված ինստիտուտներից մեկը: Այն առավել ամբողջական տեսք ստացավ Ռուսաստանում, այդ թվում՝ նրա կազմում գտնվող Արևելյան Չայաստանում, կատարված դատական բարեփոխումների արդյունքում 1864թ. նոյեմբերի 20-ին ընդունված Քաղաքացիական դատավարության կանոնագրքում, որը նախատեսում էր դատական ակտերի վերանայման երկու տեսակ՝ վերաքննություն և վճռաբեկություն: Համաձայն Քաղաքացիական դատավարության կանոնագրքի՝ նոր երևան եկած հանգամանքները, ինչպես նաև փաստաթղթերում բացահայտված կեղծիքները հիմք էին հանդիսանում դատական ակտը վճռաբեկության կարգով բեկանելու համար: Ընդ որում, նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտի վերանայման կարգն էականորեն տարբերվում էր այլ հիմքով բերված վճռաբեկ բողոքի քննությունից և ուղղված էր նյութական արդարության պահպանմանը և գործի ըստ էության քննությանը⁸: Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ Քաղաքացիական դատավարության կանոնագրքի քննարկվող ինստիտուտի իրավակարգավորման հիմքում դրված էր Ֆրանսիայի 1806 թվականի քաղաքացիական դատավարության կանոնագր-

⁷ Տե՛ս **Завруев С.С.**, Пересмотр по вновь открывшимся обстоятельствам решений, определенных постановлений президиума суда надзорной инстанции, вступивших в законную силу, в гражданском процессе. Дис. ... канд. юрид. наук – Москва, 2008, էջ 12:

⁸ Տե՛ս **Петрова И.А.**, Пересмотр судебных актов по вновь открывшимся обстоятельствам в гражданском и арбитражном процессах (сравнительно-правовой аспект). Дис. ... канд. юрид. наук – Москва, 2010, էջ 16:

քուն նախատեսված մոդելը⁹:

Նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման վարույթը կարգավորող օրենսդրության մեջ Քաղաքացիական դատավարության կանոնագրքի ընդունումից մինչ այսօր էական և սկզբունքային փոփոխություններ չեն կատարվել¹⁰: Հիմնականում փոփոխությունները հանգել են նրան, որ առավել հստակեցվել են վերանայման հիմքերը և վերանայման լիազորությունը տրվել է դատական համակարգում համապատասխան իրավասություն ունեցող դատարաններին:

Նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման վարույթը զբաղեցնում է առանձնահատուկ տեղ քաղաքացիական դատավարությունում, քանի որ այն վերանայման այլ վարույթների հետ միասին կոչված է ապահովել քաղաքացիական գործերի լուծման օրինականությունը և հիմնավորվածությունը¹¹: Քննարկվող վարույթի շրջանակներում դատարանը հետազոտում և զնահատում է նախկինում անհայտ հանգամանքները, դրանք հաստատող ապացույցներն այն նպատակով, որ, ելնելով արդարադատության պատշաճ իրականացման, քաղաքացիների և իրավաբանական անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության անհրաժեշտությունից, պարզի, թե արդյոք կան բավարար հիմքեր արդեն իսկ լուծված գործի քննությանը վերադառնալու համար: Արդյունքում այն դատարանին հնարավորություն է ընձեռում վերանայելու և բեկանելու օրինական ուժի մեջ մտած արդարադատության այն

⁹ Տե՛ս **Ахмедов С.М.**, Производство по пересмотру судебных актов по вновь открывшимся обстоятельствам в системе пересмотра судебных актов в арбитражном процессе. Дис. ... канд. юрид. наук – Москва, 2008, էջեր 25-26:

¹⁰ Տե՛ս **Резуенко А.Н.**, Пересмотр судебных актов, вступивших в законную силу, по вновь открывшимся обстоятельствам как стадия гражданского процесса. Дис. ... канд. юрид. наук – Волгоград, 2001, էջ 15:

¹¹ Տե՛ս **Петрова И.А.**, Пересмотр судебных актов по вновь открывшимся обстоятельствам в гражданском и арбитражном процессах (сравнительно-правовой аспект). Дис. ... канд. юрид. наук – Москва, 2010, էջ 17:

ակտերը, որոնք դատարանի կամքից անկախ պատճառներով կայացվել են առանց գործի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքների հաշվառման:

Հիմք ընդունելով վերոշարադրյալը՝ կարելի է առանձնացնել նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման վարույթի հետևյալ առանձնահատուկ խնդիրները.

1) հնարավորություն ընձեռել դատարանին գործի հանգամանքներին համապատասխան լուծելու քաղաքացիական գործը՝ չնայած այն հանգամանքին, որ գործի լուծման համար էական նշանակություն ունեցող հանգամանքները, դատարանից անկախ պատճառներով, նրան հայտնի չեն եղել, և արդարադատության ակտը մտել է օրինական ուժի մեջ,

2) շահագրգիռ անձանց և կազմակերպությունների մասնակցությամբ ապահովել այդ հանգամանքների հաստատումը՝ դրանց բազմակողմանի, լրիվ և խորը հետազոտության միջոցով,

3) երաշխավորել նոր երևան եկած հանգամանքների կապակցությամբ օրինականության, հիմնավորվածության և գործի հանգամանքներին համապատասխանելու տեսանկյունից կասկած հարուցող դատական ակտերի բեկանումը և, միևնույն ժամանակ, բացառել դրա համար բավարար հիմքերի բացակայության դեպքում օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի բեկանումը¹²:

Դատարանը, լուծելով նշված առանձնահատուկ խնդիրները, միաժամանակ լուծում է նաև քաղաքացիական դատավարության ընդհանուր խնդիրները՝ ապահովելով քաղաքացիների, իրավաբանական անձանց և իրավունքի այլ սուբյեկտների խախտված կամ վիճարկվող իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանությունը:

Պետք է նշել, որ իրավաբանական գրականության մեջ

¹² Տե՛ս *Исаенкова О.В., Демичев А.А.*, Гражданское процессуальное право России: учебник /Под. ред. О.В. Исаенковой. – М.: Норма, 2009, էջ 385:

քննարկվող վարույթը լուսաբանվում է որպես քաղաքացիական դատավարության ինքնուրույն փուլ¹³: Ընդ որում, նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման վարույթի ինքնուրույն փուլ հանդիսանալը պայմանավորված է ոչ միայն դրա առանձնահատուկ խնդիրներով, այլև վերանայման յուրահատուկ պայմաններով, օբյեկտներով, ժամկետներով և դատավարական կարգով: Այս առումով տեղին է հիշատակել, որ դեռևս Ի.Ե. Էնգելմանը խոսում էր նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման վարույթի ինքնուրույնության մասին՝ նշելով, որ ոչ արդար վճիռների համար, որոնք չեն համապատասխանում նոր երևան եկած հանգամանքներին, սակայն մտել են օրինական ուժի մեջ և, հետևաբար, չեն կարող բողոքարկվել ո՛չ վերաքննության, ո՛չ էլ վճռաբեկության կարգով, բոլոր ժամանակակից օրենսդրություններում նախատեսված է բեկանման հատուկ կարգ¹⁴:

Ներկայումս օրենսդիրը հետազոտվող վարույթի իրավակարգավորմանն է նվիրել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի¹⁵ (այսուհետ կրճատ՝ «ՔԴՕ») «Դատական ակտը նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով վերանայելու վարույթը» վերտառությամբ 3³-րդ բաժինը՝ դրանով իսկ ընդգծելով այս վարույթի ինքնուրույնությունը: Միաժամանակ, ՔԴՕ 204.38-րդ հոդվածի 1-ին մասում սահմանվել է, որ, եթե նշված բաժնով նախատեսված չեն հատուկ կանոններ, ապա նոր երևան եկած

¹³ Տե՛ս, օրինակ, **Авдеенко Н.И. и др.**, Гражданский процесс – М., Изд-во «Юридическая литература», 1968, էջ 336, **Вандышев В.В., Дернова Д.В.**, Гражданский процесс. Курс лекций – СПб: Питер, 2001, էջ 361, Гражданский процесс: Учебник. 3-е изд., перераб. И доп. / Под ред. **М.К. Треушниковой**. М.: Издательский Дом «Городец», 2010, էջ 578, **Миронов В.И.**, Гражданский процесс: учебник / Миронов В.И. – М.: Эксмо, 2011, էջ 471:

¹⁴ Տե՛ս **Завриев С.С.**, Пересмотр по вновь открывшимся обстоятельствам решений, определений, постановлений президиума суда надзорной инстанции, вступивших в законную силу, в гражданском процессе. Дис. ... канд. юрид. наук – Москва, 2008, էջեր 12-13:

¹⁵ Ընդունվել է 17.06.1998թ.: Տե՛ս ՀՀՊՏ 1998.09.09/20(53):

հանգամանքներով դատական ակտի վերանայման վարույթի վրա տարածվում են ՔԴՕ ընդհանուր դրույթները: Սակայն, ՔԴՕ մյուս՝ վերաքննիչ և վճռաբեկ վարույթների վերաբերյալ բաժիններում էլ օրենսդիրը, դրսևորելով բավականին յուրօրինակ մոտեցում, նոր երևան եկած հանգամանքները դիտարկել է որպես վերաքննիչ և վճռաբեկ բողոք բերելու հիմքեր:

Ասվածը, սակայն, չի կարող մեկնաբանվել որպես նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման վարույթի ինքնուրույնության բացառում, քանի որ այն էականորեն տարբերվում է ինչպես վերաքննիչ, այնպես էլ վճռաբեկ վարույթներից: Այսպես, եթե նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման վարույթում վերանայման ենթակա են միայն օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը, ապա վերաքննության և վճռաբեկության կարգով բողոքարկման ենթակա են դեռևս օրինական ուժի մեջ չմտած դատական ակտերը: Նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման վարույթի առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ այստեղ վերանայման ենթակա են այն դատական ակտերը, որոնք կայացվել են առանց նոր երևան եկած հանգամանքների հաշվառման: Այնինչ վերաքննիչ և վճռաբեկ վարույթների շրջանակներում բողոքարկվում են դատական սխալ պարունակող ակտերը, որոնք կայացվել են առանց գործի հանգամանքներն ամբողջությամբ պարզելու, ապացույցները սխալ գնահատելու կամ օրենքն այլ կերպ սխալ կիրառելու հետևանքով¹⁶:

Նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայմանը բնութագրական է նաև այն հանգամանքը, որ այս վարույթը, ի տարբերություն վերաքննիչ և վճռաբեկ վարույթների, պայմանավորված է ոչ թե ստորադաս դատարանների գործունեության նկատմամբ հսկողություն իրականացնելու, այլ գործի

¹⁶ См. *Петрова И.А.*, Пересмотр судебных актов по вновь открывшимся обстоятельствам в гражданском и арбитражном процессах (сравнительно-правовой аспект). Дис. ... канд. юрид. наук – Москва, 2010, т. 21:

ավարտից հետո ի հայտ եկած հանգամանքներին համապատասխան դատական ակտ կայացնելու անհրաժեշտությամբ: Այլ կերպ ասած՝ այս դեպքում խոսքը վերաբերում է ոչ թե քաղաքացիական դատավարության փուլերի աստիճանական փոփոխման, այլ արդեն իսկ ավարտված գործի նորոգման կամ գործի վարույթի վերաբացման մասին: Ուշագրավ է, որ մի շարք եվրոպական երկրների (Գերմանիա, Ավստրիա, Լիտվա և այլն) քաղաքացիական դատավարության օրենսգրքերում հետազոտվող վարույթը կրում է հենց «Գործի նորոգում» վերտառությունը¹⁷:

Հաշվի առնելով շարադրվածը՝ ակնհայտ է դառնում, որ օրենսդիրը, նոր երևան եկած հանգամանքները դիտարկելով որպես վերաքննիչ և վճռաբեկ բողոքարկման հիմք, արհեստական ձևով միմյանց է կապակցել ոչ միասեռ վարույթները: Այդ մասին է վկայում նաև այն հանգամանքը, որ ՔԴՕ-ն նոր երևան եկած հանգամանքները ներկայացրել է և՛ որպես վճռաբեկ բողոք բերելու հիմք, և որպես վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հիմնավորում, որի հետևանքով միախառնել է տարբեր քաղաքացիադատավարական բովանդակություն և նշանակություն ունեցող հասկացությունները: Այդուհանդերձ, պետք է արձանագրել, որ դա ոչ մի դեպքում չի կարող նսեմացնել նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման վարույթի ինքնուրույն բնույթը, քանի որ այդ կերպ ընդամենը ոչ այնքան հաջողված փորձ է արվել ընդգծելու վերաքննիչ և վճռաբեկ վարույթները կարգավորող անհրաժեշտ նորմերի և նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման վարույթի միջև հնարավոր կապը, ինչը, սակայն, ընդունելի համարվել չի կարող և ենթակա է շտկման:

Մասնագիտական գրականության մեջ կարծիք է արտահայտվել այն մասին, որ նոր երևան եկած հանգամանքներով

¹⁷ Տե՛ս **Борисова Е.А.**, Теоретические проблемы проверки судебных актов в российском гражданском, арбитражном процессах. Дис. ... док. юрид. наук - Москва, 2005, էջ 81:

դատական ակտերի վերանայման վարույթը հանդիսանում է քաղաքացիական դատավարության ոչ միայն ինքնուրույն, այլև բացառիկ փուլը: Այսպես, օրինակ, մինչհեղափոխական դատավարագետ Վ.Ս. Գորդոնը, քննարկելով հետազոտվող վարույթի բացառիկությունը, գրում էր. «Այս տեսակ բողոքների ներկայացումը պետք է հնարավորինս սահմանափակվի այն նպատակով, որ բոլոր միջոցներով երաշխավորվի դատական ակտերի անձեռնմխելիությունը: Սա բողոքարկման սովորական ձև չէ, այլ արդարադատությանը հասնելու լրիվ բացառիկ միջոց»¹⁸:

Ըստ Ա.Պ. Վերշինինի՝ նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման փուլի բացառիկությունը պայմանավորված է դատական ակտի բեկանման հիմքերով, որոնք համեմատաբար հազվադեպ են հանդիպում պրակտիկայում¹⁹: Մ.Ս. Շաքարյանը ևս քննարկվող փուլի բացառիկությունը բացատրում էր դատական ակտի բեկանման հիմքերով²⁰:

Իսկ Լ.Ս. Սորոզովայի կարծիքով՝ նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման ինստիտուտի բացառիկությունը նրանում է, որ այն կարգավորում է այն դատական ակտերի վերանայման հետ կապված հարաբերությունները, որոնք արդեն մտել են օրինական ուժի մեջ²¹: Մ.Ս. Ահմեդովը նույնպես նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման փուլը համարում է բացառիկ, քանի որ, ըստ նրա, այն հնարավորություն է տալիս վերանայելու օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը՝ ի հակադրություն դրանց կայունութ-

¹⁸ Տե՛ս **Алиев Т.Т.**, Производство по пересмотру судебных постановлений ввиду вновь открывшихся обстоятельств в гражданском судопроизводстве: теоретические и практические аспекты, перспективы развития. Дис. ... док. юрид. наук - Саратов, 2005, էջ 52:

¹⁹ Տե՛ս Гражданский процесс. Учебник /Под. ред. **В.А. Мусина, Н.А. Чечинной, Д.М. Чечота.** – М.: «ПРОСПЕКТ», 1997, էջ 364:

²⁰ Տե՛ս **Боннер А.Т. и др.**, Советский гражданский процесс – М., Изд-во «Юридическая литература», 1985, էջ 379:

²¹ Տե՛ս **Морозова Л.С.**, Пересмотр решений по вновь открывшимся обстоятельствам. – М.: Госюриздат, 1959, 13 էջ:

յան և որոշակիության հատկանիշների²²:

Այն հանգամանքը, որ նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի բեկանման հիմքերն իրենց էությանը յուրահատուկ են և գործնականում հազվադեպ հանդիպող, կասկած չի հարուցում: Այդ մասին է վկայում նաև ՀՀ վճռաբեկ դատարանի աշխատակազմի ղեկավարի 01.03.2012թ. 'ԴԴ-6-Ե-1301 գրության ուսումնասիրությունը, որից հայտնի է դարձել, որ 2009 թվականից մինչև 2011 թվականն ընկած ժամանակահատվածում այս հիմքով ներկայացված բողոքները չեն գերազանցել բողոքների ընդհանուր թվի 2%-ը: Սակայն դրանք, մեր կարծիքով, ինքնին չեն կարող հանդիսանալ այս փուլի բացառիկությունը կանխորոշող բավարար հատկանիշներ, քանի որ նույն կերպ բացառիկ կարելի է համարել դատական վերանայման այլ վարույթները ևս: Հետևաբար, կարծում ենք, որ քննարկվող փուլի բացառիկությունը կարելի է պայմանավորել ոչ այնքան նշված հատկանիշով, որքան այն հանգամանքով, որ այս փուլը թույլ է տալիս դատական ակտի օրինական ուժի հատկանիշներից բացառություններ: Խոսքն այն մասին է, որ օրինական ուժի մեջ մտնելու պահից դատական ակտը ձեռք է բերում որոշակի հատկանիշներ և դառնում վերջնական: Հենց այդ պահից էլ սպառվում են դատական ակտի հետագա բողոքարկման ու վերանայման հնարավորությունները, քանի որ, ինչպես արդարացիորեն նշում է Վ.Ֆ. Յակովլևը, արդարադատությունն ինչ-որ տեղ պետք է ավարտվի²³: Այդ պատճառով ՔԴՕ 14-րդ հոդվածը սահմանում է, որ օրինական ուժի մեջ մտած դատական ակտը պարտադիր է բոլոր պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմին-

²² Տե՛ս **Ахмедов С.М.**, Производство по пересмотру судебных актов по вновь открывшимся обстоятельствам в системе пересмотра судебных актов в арбитражном процессе. Дис. ... канд. юрид. наук – Москва, 2008, էջ 37:

²³ Տե՛ս **Терехова Л.А.**, Право на исправление судебной ошибки как компонент судебной защиты. Дис. ... док. юрид. наук - Екатеринбург, 2008, էջ 251:

ների, դրանց պաշտոնատար անձանց, իրավաբանական անձանց և քաղաքացիների համար ու ենթակա է կատարման Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում: Ընդ որում, որպեսզի իրացվի իրավական անորոշությունը վերացնելու դատական իշխանության գործառույթը, ինչի արդյունքում պաշտպանվում են քաղաքացիների և կազմակերպությունների խախտված կամ վիճարկվող իրավունքները և օրինական շահերը, անհրաժեշտ է ապահովել գործով կայացված վերջնական դատական ակտի կայունությունը²⁴: Հակառակ դեպքում կինաստազրկվի դատական ակտերի օրինական ուժի գաղափարը, որի էությունը դրանց անփոփոխելիության հանդեպ դատավարության կողմերի վստահությունը պաշտպանելու մեջ է:

Այս կապակցությամբ ուշագրավ է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դիրքորոշումը, որը բազմիցս նշել է. «Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված արդար դատաքննության իրավունքը պետք է մեկնաբանվի Կոնվենցիայի նախաբանի լույսի ներքո, որի համաձայն՝ պայմանավորվող կողմերի ընդհանուր ժառանգության մասն է իրավունքի գերակայությունը, որի բաղկացուցիչ մասն է իրավական որոշակիության սկզբունքը: Իրավական որոշակիության սկզբունքը ենթադրում է *res judicata* սկզբունքի, այն է՝ դատական ակտերի վերջնական լինելու սկզբունքի պահպանում: Այդ սկզբունքը պահանջում է, որպեսզի կողմերից ոչ մեկը չունենա իրավունք պահանջելու վերջնական և պարտադիր դատական ակտի վերանայում՝ ուղղակի գործի կրկնակի քննության և գործով նոր ակտի կայացման նպատակով: Այսինքն՝ հարցի առնչությամբ երկու կարծիքի առկայության հնարավորությունը չպետք է հիմք հանդիսանա կրկնակի քննության համար: Նախանջն այս սկզբունքից արդարացված է միայն այն դեպքում, երբ դա անհ-

²⁴ Տե՛ս *Մեդրյան Ս.Գ.*, Առաջին ատյանի դատարանի քաղաքացիական գործերով դատական ակտերը: Երևան պետ. համալսարան: Եր.: ԵՊՀ հրատ., 2010, էջ 153:

րաժեշտ է էական և անհերքելի բնույթ ունեցող հանգամանքներում»²⁵:

ՀՀ վճռաբեկ դատարանը, վերահաստատելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումները, մեկնաբանել է իրավական որոշակիության սկզբունքը և սահմանել, որ. «Իրավական որոշակիության սկզբունքի բովանդակության մեջ ներառվում են հետևյալ դրույթները.

- դատարանների կողմից կայացված վերջնական, այսինքն՝ օրինական ուժի մեջ մտած դատական որոշումները ենթակա չեն վերանայման,

- անթույլատրելի է դատարանի կողմից արդեն մեկ անգամ լուծված գործի կրկնակի քննությունը,

- կողմերից ոչ մեկը չի կարող պահանջել վերջնական, այսինքն՝ օրինական ուժի մեջ մտած, դատական ակտի վերանայում՝ միայն կրկնակի քննության իրականացման և նոր ակտի կայացման նպատակով,

- վերջնական դատական ակտի վերանայումը նահանջ չէ իրավական որոշակիության սկզբունքից, եթե այն իրականացվում է դատական սխալի, արդարադատության սխալ իրականացման ուղղման նպատակով,

- վերանայումը չի կարող լինել բողոքարկման քողարկված ձև, իսկ գործի նկատմամբ կողմերի հակադիր հայացքների առկայությունն ինքնին չի կարող հիմք ծառայել վերջնական դատական ակտի վերանայման համար»²⁶:

Իրավական որոշակիության սկզբունքի վերաբերյալ իր մեկնաբանությունն է ներկայացրել նաև Մարդու իրավունքների եվ-

²⁵ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի *Բրունարեսկունո ընդդեմ Ռումինիայի* գործով 1999 թվականի հոկտեմբերի 28-ի վճիռը, կետ 61, *Ռյաբիխն ընդդեմ Ռուսաստանի* գործով 2003 թվականի հուլիսի 24-ի վճիռը, կետեր 51-52, *Նեյուբիմն ընդդեմ Ռուսաստանի* գործով 2006 թվականի նոյեմբերի 2-ի վճիռը, կետեր 22-23:

²⁶ Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ԱՐԴ/0062/02/09 քաղաքացիական գործով 2009 թվականի փետրվարի 13-ի և թիվ ԵՇԴ/0473/02/10 քաղաքացիական գործով 2011 թվականի մայիսի 27-ի որոշումները:

րոպական դատարանի նախագահ Կ. Ռոզակիսը, ով նշել է. «Իրավական որոշակիությունը ոչ թե տեսական դրույթ է, այլ այն բանի ակնկալումը, որ վերջնական դատական ակտը ենթակա կլինի հարգանքի: Երբ դատական ակտը սուբյեկտիվ, անհիմն վերանայվում է, ապա տուժում են ոչ միայն իրավական որոշակիությունը, արդյունավետությունը, այլև վերացական է դառնում դատարան դիմելու իրավունքը»²⁷:

Սակայն, անհրաժեշտ է նկատի ունենալ, որ իրավական որոշակիության սկզբունքը չի կրում բացարձակ բնույթ և շեղումն այս սկզբունքից կարող է արդարացվել միայն այն դեպքում, երբ դա պայմանավորված է էական և անհերքելի բնույթ ունեցող հանգամանքների թելադրանքով: Այլ կերպ ասած՝ իրավական որոշակիության սկզբունքը, երաշխավորելով դատական ակտերի կայունությունը, լուրջ իրավաչափ նկատառումների ազդեցության դեպքում թույլ է տալիս որոշակի բացառություններ: Այս առումով տեղին է հիշատակել Տ.Գ. Մորշակովի կարծիքը, ըստ որի՝ կայունությունը դատական ակտի արժեքների աստիճանակարգությունում գրավում է ավելի ցածր դիրք, քան արդարությունը է²⁸:

Նշվածը նկատի ունենալով՝ կարծում ենք, որ նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման վարույթը լիովին համապատասխանում է իրավական որոշակիության պահանջներին, քանի որ այն կարող է հարուցվել միայն գործի լուծման համար նշանակություն ունեցող էական, բացառիկ և անհերքելի հանգամանքների բացահայտման դեպքում: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը ևս անդրադարձել է նոր երևան եկած հանգամանքներով դատական

²⁷ Տե՛ս **Борисова Е.А.**, Теоретические проблемы проверки судебных актов в российском гражданском, арбитражном процессах. Дис. ... док. юрид. наук - Москва, 2005, էջ 34:

²⁸ Տե՛ս **Петрова И.А.**, Пересмотр судебных актов по вновь открывшимся обстоятельствам в гражданском и арбитражном процессах (сравнительно-правовой аспект). Дис. ... канд. юрид. наук – Москва, 2010, էջ 53:

ակտերի վերանայման վարույթի իրավաչափությանը և արտահայտել հետևյալ իրավական դիրքորոշումը. «Օրինական ուժի մեջ մտած դատական ակտի բեկանման վարույթը ենթադրում է, որ առկա են նախկինում անհասանելի ապացույցներ, որոնք պետք է հանգեցնեն դատավարության այլ արդյունքի: Դատական ակտի բեկանման համար դիմող անձը պետք է ապացուցի, որ զրկված է եղել այդ ապացույցները գործի քննության ժամանակ ներկայացնելու հնարավորությունից, և որ այդ ապացույցները կարևոր են: Այս վարույթը ինքնին չի հակասում իրավական որոշակիության սկզբունքին»²⁹:

Այսպիսով, պետք է արձանագրել, որ նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման փուլի բացառիկությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ այն թույլ է տալիս անտեսել իրավական որոշակիության սկզբունքի երաշխավորմանը կոչված դատական ակտի օրինական ուժի այնպիսի հատկանիշը, ինչպիսին է անհերքելիությունն (անփոփոխելիությունը): Միաժամանակ հարկ է նկատի ունենալ, որ այդ բացառությունն իրավաչափ է: Այլապես այս փուլի գոյությունը կխախտեր ՀՀ ստանձնած միջազգային պարտավորությունները, քանի որ իրավական որոշակիության դրույթներին լիարժեք չափով չհամապատասխանող դատավարության փուլերի առկայության դեպքում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը դիտարկում է ողջամիտ ժամկետներում դատական վեճերի քննության սկզբունքի խախտում³⁰:

Պետք է նշել, որ այս դիրքորոշմանը համահունչ կարգավորումներ են ամրագրված նաև ԶԴՕ-ում: Մասնավորապես, ԶԴՕ 207-րդ հոդվածի 7-րդ մասը սահմանում է, որ առաջին ատյանի դատարանի՝ գործն ըստ էության լուծող օրինական ուժի մեջ

²⁹ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի *Պրավեդնայան ընդդեմ Ռուսաստանի* գործով 2004 թվականի նոյեմբերի 18-ի վճիռը, կետեր 27-28:

³⁰ Տե՛ս ՀՀ արդարադատության խորհրդի 2011 թվականի փետրվարի 25-ի թիվ ԱԽ-3-Ո-6 որոշումը:

մտած դատական ակտի դեմ բերված վերաքննիչ բողոքը կարող է ընդունվել քննության այն բացառիկ դեպքերում, երբ, ի թիվս այլ հիմքերի, առկա են նոր երևան եկած հանգամանքներ: Իսկ ՔՂՕ 204.38-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված է, որ նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման արդյունքում կայացված վերաքննիչ դատարանի դատական ակտն օրենքով սահմանված ընդհանուր կարգով կարող է բողոքարկվել վճռաբեկ դատարան: Ասվածից հետևում է, որ օրենսդիրը նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայումը համարում է ընդհանուր կարգից տարբերվող բացառիկ դեպք:

Այս ինստիտուտի իրավաբանական բնույթը մասնագիտական գրականության մեջ հանդիսանում է բանավեճերի առարկա, քանի որ դատավարագետների մի մասի կարծիքով նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման հիմքում բացառվում է դատական սխալի առկայությունը, իսկ մյուսներն այն դիտարկում են որպես դատական սխալի վերացման միջոց:

Այսպես, Լ.Ֆ. Լեսնիցկայան, հետազոտելով նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման ինստիտուտը, նշում է. «Նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման ինստիտուտին, ի տարբերություն վճռաբեկ և հսկողական վարույթների, բնութագրական է այն հանգամանքը, որ այստեղ վերանայվող դատական ակտի օրինականությունը և հիմնավորվածությունը ստուգվում է ոչ թե գործի նյութերին, այլ նոր երևան եկած հանգամանքներին համապատասխանության տեսանկյունից: Յետևաբար, դատական ակտերի վերանայման քննարկվող տեսակի հիմքում ընկած չէ դատական սխալը»³¹: Լ.Ս. Սորոգովան ևս, քննարկվող վարույթում բացառելով դատական սխալի առկայությունը, գրում էր. «Այդ պատ-

³¹ Տե՛ս *Мельников А.А. и др.*, Курс советского гражданского процессуального права. Том II, М., Изд-во «Наука», 1981, էջեր 307-308:

ճառով գործի վերանայման ժամանակ բացակայում են դատական մարմինների գործունեության նկատմամբ վերահսկողության տարրերը: Այն դեպքում, երբ հենց վերահսկողության տարրերն են բնութագրական դատական ակտերի ստուգման մյուս երկու տեսակներին՝ վճռաբեկ և հսկողական վարույթներին»³²: Դատական սխալի բացակայության՝ որպես նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման ինստիտուտի բնութագրական առանձնահատկության մասին կարծիքներ են հայտնել նաև այլ հեղինակներ³³:

Հարկ է նշել, որ իրավաբանական գրականության մեջ բավականին լայն տարածում է ստացել նաև հակառակի վերաբերյալ մոտեցումը: Այսպես, օրինակ, ըստ Գ.Լ. Օսոկինայի և Ի.Ս. Ջայցևի, նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման փուլը հանդիսանում է դատական սխալի վերացման ձևերից մեկը, որի ընթացքում դատարանն իրականացնում է ինքնավերահսկողություն³⁴: Ա.Ն. Ռեզունենկոն ևս նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման ինստիտուտը դիտարկում է որպես դատական սխալների վերացման միջոցներից մեկը: Մասնավորապես, ըստ Ա.Ն. Ռեզունենկոյի. «Դա դրսևորվում է նրանում, որ առանց նոր երևան եկած հանգամանքների կայացված դատական ակտի թերությունն է հանդիսանում անհիմն լինելը, որն արտահայտվում է կամ գործի հա-

³² Ст'я **Морозова Л.С.**, Пересмотр решений по вновь открывшимся обстоятельствам. – М.: Госюриздат, 1959, էջեր 17-18:

³³ Ст'я, օրինակ, Гражданский процесс. Учебник/ Под ред. **С.Н. Абрамова** - М., Изд-во министерства юстиции СССР, 1948, էջ 395, **Авдеенко Н.И. и др.**, Советский гражданский процесс – Ленинград, Изд-во Ленинградского университета, 1984, էջ 327, **Новик-Качан М.Ю.**, Надзорное производство в гражданском процессе. Дис. ... канд. юрид. наук – Москва, 2005, էջ 92, **Диордиева О.Н.**, Гражданское процессуальное право: Учебно-методический комплекс. – М.: Изд-во «ЕАОИ», 2008, էջ 247:

³⁴ Ст'я **Ахмедов С.М.**, Производство по пересмотру судебных актов по вновь открывшимся обстоятельствам в системе пересмотра судебных актов в арбитражном процессе. Дис. ... канд. юрид. наук – Москва, 2008, էջ 47:

մար նշանակություն ունեցող հանգամանքների ոչ լրիվ հաստատման, կամ ապացույցների վատորակության, կամ էլ օբյեկտիվ իրականությանը գործով հաստատված փաստերի անհամապատասխանության մեջ»։ Միևնույն ժամանակ, հեղինակը վերապահում է անում այն մասին, որ դատարանի կողմից թույլ տրված նյութական կամ դատավարական իրավունքի խախտումը, որպես այդպիսին, չի հանդիսանում նոր երևան եկած հանգամանք³⁵։ Ա.Ն. Ռեզունենկոյի մոտեցման օգտին է արտահայտվել Տ.Տ. Ալիևը, ով նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման ինստիտուտը համարում է դատական սխալների ուղղման, քաղաքացիական գործով օրինականության և հիմնավորվածության հաստատման համար օրենքի իրական կիրառման էական երաշխիքներից մեկը³⁶։

Ի տարբերություն նշված հեղինակների՝ Ի. Ա. Պետրովան նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման ինստիտուտը՝ որպես դատական սխալի վերացման միջոց, դիտարկում է որոշակի վերապահումով։ Մասնավորապես, ըստ հեղինակի. «Նոր երևան եկած հանգամանքներով գործի նորոգման ինստիտուտի գոյությունը վկայում է օրենսդրի կողմից դատական սխալի (լայն իմաստով) ռիսկի հաշվառման մասին, որը չի կարող վերացվել այլ ընթացակարգերով և որի վերացման խնդրին է ծառայում դատավարության քննարկվող փուլը»³⁷։ Համանման մոտեցում են ցուցաբերում նաև Օ.Վ. Իսայենկովան և Ա.Ա. Դեմիչևը, ովքեր նոր երևան եկած հանգամանքներով դա-

³⁵ Տե՛ս **Резуенко А.Н.**, Пересмотр судебных актов, вступивших в законную силу, по вновь открывшимся обстоятельствам как стадия гражданского процесса. Дис. ... канд. юрид. наук – Волгоград, 2001, էջ 27:

³⁶ Տե՛ս **Алиев Т.Т.**, Производство по пересмотру судебных постановлений ввиду вновь открывшихся обстоятельств в гражданском судопроизводстве: теоретические и практические аспекты, перспективы развития. Дис. ... док. юрид. наук - Саратов, 2005, էջ 108:

³⁷ Տե՛ս **Петрова И.А.**, Пересмотр судебных актов по вновь открывшимся обстоятельствам в гражданском и арбитражном процессах (сравнительно-правовой аспект). Дис. ... канд. юрид. наук – Москва, 2010, էջ 15:

տական ակտերի վերանայումը կապում են դատական ակտի օբյեկտիվ սխալների վերացման հանգամանքի հետ³⁸:

Վերը շարադրված բոլոր տեսակետներն էլ, իհարկե, արժանի են ուշադրության: Սակայն, նախքան դրանցից որևէ մեկին հավանություն տալը, անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ այն հարցի վերլուծությանը, թե ինչպիսի քաղաքացիադատավարական բովանդակություն ունի «դատական սխալ» հասկացությունը:

Դատավարագիտության մեջ դատական սխալների և դրանց վերացման միջոցների առավել լրիվ և համակողմանի ուսումնասիրությունները կատարվել են Ի.Ս. Ջայցևի կողմից: Նրա կարծիքով, դատական սխալը դատական իշխանության մարմինների՝ արդարադատության նպատակներին չհամապատասխանող գործողությունն է կամ այդպիսի գործողության հետևանքը: Ընդ որում, հեղինակը, տարբերություն չդնելով դատական սխալի և իրավախախտման միջև, նշում էր. «Դատական սխալի հասկացությունը ավելի լայն է. այն ներառում է ոչ միայն դատավարական խախտումները, երբ անճշտությունները կամ բացթողումները թույլ են տրվում ուղղակի և անուղղակի դիտավորությամբ, ինքնավստահությամբ կամ անփութությամբ, այլև այն դեպքերը, երբ պաշտոնատար անձը չի նախատեսել և չէր էլ կարող նախատեսել իր գործողությունների և դրանց հետևանքների սխալ լինելը: Իրավական նորմերի կիրառման ժամանակ թույլ տրված անճշտությունը նշանակում է այդպիսի ակտի անհամապատասխանություն սահմանված նպատակներին, այսինքն՝ դատական սխալ»³⁹: Նման մոտեցում է ցուցաբերում Վ.Ա. Դավիդովը, ով դատական սխալ է համարում արդարադատության՝ որպես սոցիալական կոնֆլիկտների լուծման միջոցի ցանկացած պատ-

³⁸ Տե՛ս *Исаенкова О.В., Демичев А.А.*, Гражданское процессуальное право России: учебник /Под. ред. О.В. Исаенковой. – М.: Норма, 2009, էջ 383:

³⁹ Տե՛ս *Зайцев И.М.*, Устранение судебных ошибок в гражданском процессе. - С., Изд-во Саратовского университета, 1985, էջեր 5-6, 15-16:

ճառով առաջացած բացասական արդյունքը, որը միշտ էլ դրսևորվում է արդարադատության հետապնդած նպատակներից շեղումով⁴⁰:

Վերոշարադրյալ այն դիրքորոշումը, ըստ որի դատական սխալ է համարվում դատավարության մասնակիցների սուբյեկտիվ իրավունքների ցանկացած, այդ թվում՝ առանց մեղքի թույլ տրված խախտումը, Ա.Ն. Ռեզունենկոյի պնդմամբ, համապատասխանում է արդարադատության հետապնդած վեհ նպատակին և մեծապես նպաստում է այն անձանց շահերի հաշվառմանը, ում իրավունքը չի վերականգնվել կամ հաստատվել⁴¹: Այսինքն՝ ըստ նշված հեղինակների, դատական սխալ պետք է համարել նաև այն դեպքերը, երբ արդարադատության նպատակները չեն իրականացվում այնպիսի հանգամանքների պատճառով, որոնք դատարանը չի նախատեսել և չէր էլ կարող նախատեսել:

Սակայն մասնագիտական գրականության մեջ դատական սխալի իրավական բնույթի վերաբերյալ հանդիպում են նաև այլ կարծիքներ, ըստ որոնց այն չունի նման ընդգրկում բովանդակություն: Այսպես, օրինակ՝ Ե.Գ. Տրիշինան դատական սխալը բնորոշում է որպես իրավասու սուբյեկտի (դատարանի)՝ դատավարական և (կամ) նյութական իրավունքը խախտող, քաղաքացիական դատավարության նպատակները չիրագործող բացթողում, որի արդյունքում արդարադատության ակտը կամ առանձին դատավարական գործողությունը դառնում է ոչ իրավաչափ⁴²: Դատական սխալը՝ որպես սուբյեկտիվ բնույթ կրող երևույթ է դիտարկում նաև Ս.Ս. Ախմեդովը, ով դրանում ներառում է ինչպես

⁴⁰ Տե՛ս *Давыдов В.А.*, Возобновление уголовного судопроизводства ввиду новых или вновь открывшихся обстоятельств: теория и практика исправления судебных ошибок / В.А. Давыдов. – М.: Изд-во «Юрайт», 2012, էջ 26:

⁴¹ Տե՛ս *Резуненко А.Н.*, Пересмотр судебных актов, вступивших в законную силу, по вновь открывшимся обстоятельствам как стадия гражданского процесса. Дис. ... канд. юрид. наук – Волгоград, 2001, էջ 28:

⁴² Տե՛ս *Тришина Е.Г.*, Проблема судебного контроля в гражданском судопроизводстве. Автореф. Дис. ... д.ю.н. – Саратов, 2000, էջ 11:

դատավարական ձևի, այնպես էլ նյութական իրավունքի նորմերի սխալ կիրառման հետ կապված իրավակիրառ մարմնի բուլոբ հնարավոր բացթողումները⁴³:

Վերոգրյալի համատեքստում հարկ է նկատի ունենալ, որ ՀՀ սահմանադրական դատարանը ևս անդրադարձել է «դատական սխալ» եզրույթի բովանդակության բացահայտմանը՝ արտահայտելով հետևյալ իրավական դիրքորոշումը. «Դատական սխալ» եզրույթը տարածական մեկնաբանման ենթակա չէ և չի կարող ընկալվել որպես դատարանի կողմից թույլ տրված ցանկացած սխալ (վրիպում): Դատական սխալ կարող է թույլ տրվել միայն գործով ըստ էության դատական ակտի կայացման արդյունքում, այսինքն՝ այնպիսի ակտի, որը կոչված է լինելու լուծել գործը (քրեական, քաղաքացիական, վարչական), վերացնել դրա վիճելիությունը՝ որոշել կողմերի (վիճելի իրավահարաբերության մասնակիցների) իրավական անվիճելի կարգավիճակը, անձանց համար հնարավորություն ստեղծել իրացնելու իրենց իրավունքներն ու պաշտպանել օրինական շահերը, հետևաբար՝ կոչված է իրականացնելու ՀՀ Սահմանադրության 18-րդ և 19-րդ հոդվածներում ամրագրված դատական պաշտպանության կամ արդարադատության նպատակները: Այդ գործընթացում դատարանը կիրառում է ինչպես նյութական, այնպես էլ դատավարական իրավունքի նորմեր, որի արդյունքում է կայացվում դատական ակտը: Հետևաբար, այդ ակտի օրինականության վիճարկումը դատական բողոքարկման ընթացակարգով անհրաժեշտաբար կարող է լինել ինչպես նյութական, այնպես էլ դատավարական իրավունքի նորմի խախտման հիմքով: Իսկ դատական սխալը կամ նյութական, դատավարական իրավունքի նորմերի խախտման փաստը, որը հանգեցրել է սովյալ գործի սխալ լուծմանը, հետևաբար՝ խախտվել են արդարադատության նպա-

⁴³ Տե՛ս **Ахмедов С.М.**, Производство по пересмотру судебных актов по вновь открывшимся обстоятельствам в системе пересмотра судебных актов в арбитражном процессе. Дис...канд. юрид. наук – Москва, 2008, էջ 51:

տակները, վտանգվել է արդարադատության և դատարանի հեղինակությունը, ենթակա է գնահատման և հաստատման իրավասու դատարանի կողմից վերաքննիչ կամ վճռաբեկ բողոքի քննության արդյունքում»⁴⁴:

Հետևաբար, ակնհայտ է, որ դատական սխալ պետք է համարել ոչ թե դատական գործունեության՝ քաղաքացիական դատավարության նպատակներին չհամապատասխանող ցանկացած արդյունքը, այլ միայն այն, որը հանդիսանում է նյութական կամ դատավարական իրավունքի՝ գործի սխալ լուծմանը հանգեցնող խախտման հետևանք: Այլ կերպ ասած՝ մենք համամիտ ենք այն հեղինակների տեսակետին, որ դատական սխալը կրում է սուբյեկտիվ բնույթ և օբյեկտիվ պատճառներով արդարադատության նպատակների չիրագործումն ինքնին չի կարող վկայել դատական սխալի առկայության մասին:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ առավել հիմնավոր է թվում այն հեղինակների պնդումը, ըստ որի նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման ինստիտուտը չի կարող հանդիսանալ դատական սխալների վերացման միջոցներից մեկը: Նման դիրքորոշումը պայմանավորված է այն հանգամանքով, որ նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտը վերանայելիս անհրաժեշտ չէ ստուգել դատարանի կողմից օրենքի ճիշտ կիրառությունը, այս կամ այն դատավարական գործողության կատարման կամ գործով ապացույցների հետազոտման և գնահատման իրավաչափությունը⁴⁵: Ավելին, նման ստուգումն ինքնին կհակասի քննարկվող ինստիտուտի էությանը, քանի որ այստեղ վերանայվող դատական ակտի անօրինական կամ անհիմն լինելը հանդիսանում է ոչ թե գործի ոչ բոլոր հանգամանքների բացահայտման, ապացույցների սխալ գնահատման

⁴⁴ Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի 2011 թվականի փետրվարի 8-ի թիվ ՍԴՌ-936 որոշումը (ՀՀՊՏ 2011.02.16/9(812) Հոդ. 134):

⁴⁵ Տե՛ս Гражданский процесс: Учебник /Под ред. д.ю.н., проф. **А.Г. Коваленко**, д.ю.н., проф. **А.А. Мохова**, д.ю.н., проф. **П.М. Филиппова**. – М.: Юридическая фирма «КОНТРАКТ»; «ИНФРА-М», 2008, էջ 301:

կամ օրենքի խախտման, այլ այնպիսի հանգամանքների բացահայտման հետևանք, որոնք գործի քննության ժամանակ հայտնի չեն եղել և չէին կարող հայտնի լինել ո՛չ դատարանին և ո՛չ էլ գործին մասնակցող անձանց: Հետևաբար, նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտը վերանայելիս դատարանի գործողությունները նյութական կամ դատավարական իրավունքի խախտման, այսինքն՝ դատական սխալ թույլ տալու տեսանկյունից գնահատելն արդարացված չի կարող համարվել, քանի որ դատարանը քննարկվող պարագայում ոչ թե թույլ է տվել օրենքի խախտում, այլ օբյեկտիվ պատճառներով հաշվի չի առել գործի քննության համար նշանակություն ունեցող հանգամանքները: Ի. Բենտամն այս առումով արդարացիորեն նշում է. «Դատավորին չի կարելի մեղադրել ո՛չ անարդարության, ո՛չ էլ սխալի մեջ միայն այն բանի համար, որ նա չի հետազոտել այն ապացույցները, որոնք իրեն չեն ներկայացվել: Դա այն պատճառով, որ որևէ նման ապացույցի ներկայացման դեպքում դատական ակտը կարող էր բուրոքովին այլ լինել»⁴⁶:

Վերոշարադրյալ դատողությունների լույսի ներքո ակնհայտ է դառնում, որ նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտի վերանայման ինստիտուտը չի կարող հանդիսանալ դատական սխալի վերացման միջոցներից մեկը: Հարկ է նշել, որ օրենսդիրը ևս քաղաքացիադատավարական օրենսդրությունում նոր երևան եկած հանգամանքները դիտարկել է դատական սխալից տարբերվող՝ դատական ակտի վերանայման հիմք (ՔԴՕ 226-րդ հոդվ., ՀՀ դատական օրենսգրքի⁴⁷ 44-րդ, 57-րդ հոդվ.): Նման պայմաններում վիճելի է թվում ՀՀ սահմանադրական դատարանի դիրքորոշումը այն մասին, որ նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտի վերանայումը լուրջ երաշխիք է դատական ակտի օրինականությունը և հիմնավորվածությունը

⁴⁶ Տե՛ս **Борусова Е.А.**, Теоретические проблемы проверки судебных актов в российском гражданском, арбитражном процессах. Дис. ... док. юрид. наук - Москва, 2005, էջ 75:

⁴⁷ Ընդունվել է 21.02.2007թ.: Տե՛ս ՀՀՊՏ 2007.04.18/20(544) Հոդ. 489:

ստուգելու, դատական սխալն ուղղելու և գործով ճշմարտությունը բացահայտելու համար⁴⁸: Ավելին, ՀՀ սահմանադրական դատարանի այս դիրքորոշումը հակասում է հենց իր 2011 թվականի փետրվարի 8-ի թիվ ՍԴՈ-936 որոշմամբ արտահայտած դատական սխալի վերաբերյալ իրավական դիրքորոշմանը: Բացի այդ, նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայումը դատական սխալների վերացման երաշխիք դիտարկելը կհակասի նաև իրավական որոշակիության սկզբունքին, քանի որ իրավական պետությունում, որպես կանոն, անթույլատրելի է ցանկացած դատական սխալի առկայության հիմքով օրինական ուժի մեջ մտած դատական ակտի վերանայումը⁴⁹:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման վարույթը հանդիսանում է ոչ թե դատական սխալի վերացման, այլ արդարադատության իրականացման արդյունքում օբյեկտիվ պատճառներով տեղ գտած թերությունները, բացթողունները շտկելու միջոց: Այս եզրահանգման համար հիմք է ընդունվում այն հանգամանքը, որ քննարկվող վարույթի հարուցման համար հիմք հանդիսացող հանգամանքներն ինքնին կասկած են հարուցում օրինական ուժի մեջ մտած դատական ակտի օրինականության և հիմնավորվածության կապակցությամբ, որպիսի պայմաններում դատարանին հնարավորություն է տրվում բեկանելու այլևս վերջնական դարձած դատական ակտը և կայացնելու նոր երևան եկած հանգամանքներին համապատասխանող օրինական և հիմնավորված դատական ակտ:

Այդ պատճառով դատավարության այս փուլի էությունն առավել ճիշտ բացահայտելու համար անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ նաև այն հարցի վերլուծությանը, թե ինչպիսի ազդեցություն կարող են ունենալ նոր երևան եկած հանգամանքներ-

⁴⁸ Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի 2007 թվականի հուլիսի 20-ի թիվ ՍԴՈ-709 որոշումը (ՀՀՊՏ 2007.08.01/39(563) Հոդ 849):

⁴⁹ Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի 2008 թվականի նոյեմբերի 25-ի թիվ ՍԴՈ-780 որոշումը (ՀՀՊՏ 2008.12.10/71(661) Հոդ. 1276):

րը դատական ակտերի օրինականության և հիմնավորվածության վրա, քանի որ, ինչպես նշում է Ն.Ի. Տկաչովը, միայն օրինական և հիմնավորված դատական ակտերը կարող են լուծել քաղաքացիական դատավարության խնդիրները⁵⁰:

Դատական ակտի օրինականությունը դրսևորվում է տարբեր գործոններով, մասնավորապես՝ այն կախված է և՛ դատարանի գործունեության ճիշտ կազմակերպումից, նրա կազմի օրինականությունից, և՛ դատական ակտ կայացնելիս դատարանի կողմից իր իրավասությունը և դատավարական կարգը պահպանելու հանգամանքից: Բացի այդ, օրինականության պահանջը հիմնվում է օրենքին և այլ իրավական ակտերին դատական ակտերի համապատասխանության և ճիշտ ձևակերպման վրա: Այլ կերպ ասած՝ դատական ակտը օրինական է այն դեպքում, երբ կայացվել է գործով կիրառման ենթակա նյութական իրավունքի նորմերին համապատասխան և դատավարության նորմերի պահպանմամբ⁵¹:

Իսկ դատական ակտի հիմնավորվածությունը բնութագրում է դատարանի կողմից գործի հանգամանքների և կողմերի փոխհարաբերությունների ճանաչման արդյունքները: Դատական ակտին ներկայացվող այս պահանջը պահպանված է համարվում այն դեպքում, երբ դատարանը գործի լուծման համար բավարար ծավալով որոշել է գործի համար նշանակություն ունեցող հանգամանքների շրջանակը (ապացուցման առարկան), օրենքով թույլատրված և դատական միստում օրենքով սահմանված կարգով հետազոտված ապացույցների գնահատման հիման վրա այդ հանգամանքներից յուրաքանչյուրի առկայությունը կամ բացակայությունը համարել է հաստատված (ապացուցված), իսկ դատական ակտում արված հետևությունները համապատասխան

⁵⁰ Տե՛ս **Ткачёв Н.И.**, Законность и обоснованность судебных постановлений в гражданском процессе. Дис. ... канд. юрид. наук – Саратов, 1984, էջ 36:

⁵¹ Տե՛ս **Авдеенко Н.И. и др.**, Советский гражданский процесс – Ленинград, Изд-во Ленинградского университета, 1984, էջեր 207-208:

նում են այդ հանգամանքներին⁵²:

Դատական ակտին ներկայացվող այս երկու պահանջներն անխզելիորեն փոխկապակցված են: Դրանց միջև առկա կապը դրսևորվում է նրանում, որ ամեն մի չհիմնավորված դատական ակտ նաև անօրինական է, բայց ամեն մի հիմնավորված դատական ակտ չէ, որ օրինական է: Ասվածից, սակայն, չի հետևում, որ դրանք նույնացվում են, քանի որ, ինչպես նկատեցինք, դատական ակտի օրինականության և հիմնավորվածության պահանջներն ունեն ինքնուրույն քաղաքացիադատավարական բովանդակություն: Մասնավորապես, դրանցից առաջինը վերաբերում է դատական ակտի իրավաբանական կողմին, իսկ հիմնավորվածության պահանջը գործնականում ապահովում է դատական ակտի փաստական կողմը⁵³:

Նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման վարույթում այդ հանգամանքների ազդեցությունը դատական ակտի օրինականության և հիմնավորվածության վրա գնահատելիս անհրաժեշտ է հաշվի առնել, որ այդ դեպքում վարույթի նորոգումը տեղի է ունենում ոչ թե դատական սխալի, այսինքն՝ նյութական կամ դատավարական իրավունքի նորմի խախտման, այլ այն պատճառով, որ գործի քննության ավարտից հետո հայտնի են դարձել գործի լուծման համար էական նշանակություն ունեցող հանգամանքներ, որոնք հայտնի չեն եղել և չէին կարող հայտնի լինել գործին մասնակցող անձանց և դատարանին: Այդ իսկ պատճառով առանց նոր երևան եկած այդ հանգամանքների հաշվառման կայացված դատական ակտին, որպես կանոն, բնութագրական է չհիմնավորված լինելը: Ընդ որում, դատական ակտի չհիմնավորվածությունը տվյալ դեպքում պայմա-

⁵² Տե՛ս *Մեդրյան Ս.Գ.*, Առաջին ատյանի դատարանի քաղաքացիական գործերով դատական ակտերը: Երևան պետ. համալսարան: Եր.: ԵՊՀ հրատ., 2010, էջ 89:

⁵³ Տե՛ս Гражданский процесс: учеб. для студентов вузов/ [*Абушенко Д.Б. и др.*]; отв. ред. – *В.В. Ярков.* – 7-е изд., перераб. и доп. – М.: Волтерс Клувер, 2009, էջ 398:

նավորված է լինում կամ գործի լուծման համար էական նշանակություն ունեցող հանգամանքների ոչ լրիվ պարզման, կամ ապացույցների և թարգմանության ոչ պատշաճ լինելու, կամ էլ օբյեկտիվ իրականությանը գործով հաստատված փաստերի այլ անհամապատասխանության հանգամանքով⁵⁴: Իսկ դատական ակտի ապօրինի լինելը միայն կրում է ածանցվող բնույթ:

Միևնույն ժամանակ, հարկ է նշել նաև, որ դատական ակտի ապօրինի լինելը նոր երևան եկած հանգամանքներով վերանայման դեպքում ոչ միշտ է ածանցվում դատական ակտի չհիմնավորվածությունից: Մասնավորապես, այն դեպքում, երբ որպես նոր երևան եկած հանգամանք հանդես է գալիս դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռով հաստատված՝ դատավորի՝ գործի քննության հետ կապված հանցավոր արարքը, ապա կարելի է ասել, որ դատական ակտը ապօրինի է: Ինչ վերաբերում է հիմնավորվածությանը, ապա այն, ելնելով գործի հանգամանքներից, կարող է լինել ինչպես հիմնավորված, այնպես էլ չհիմնավորված: Ասվածից հետևում է, որ նոր երևան եկած հանգամանքները գտնվում են պատճառահետևանքային կապի մեջ դատական ակտի օրինականության և հիմնավորվածության պահանջների հետ:

Այս տեսանկյունից վիճելի է թվում Ե.Ա. Բորիսովայի այն կարծիքը, ըստ որի՝ հնարավոր չի թվում պնդումն այն մասին, որ նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման վարույթում դատարանը ստուգում է դատական ակտի օրինականությունը և հիմնավորվածությունը, քանի որ սկզբնապես ստուգվում է ոչ թե դատական ակտը, այլ նոր երևան եկած հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը⁵⁵: Թեև

⁵⁴ Տե՛ս **Петрова И.А.**, Пересмотр судебных актов по вновь открывшимся обстоятельствам в гражданском и арбитражном процессах (сравнительно-правовой аспект). Дис. ... канд. юрид. наук – Москва, 2010, էջեր 58-59:

⁵⁵ Տե՛ս **Борисова Е.А.**, Теоретические проблемы проверки судебных актов в российском гражданском, арбитражном процессах. Дис. ... док. юрид. наук - Москва, 2005, էջ 78:

քննարկվող վարույթում դատարանի հիմնական խնդիրը նոր երևան եկած հանգամանքների առկայությունը պարզելն է՝ այդուհանդերձ, այս խնդիրը չի կրում ինքնավար բնույթ, քանի որ նոր երևան եկած հանգամանքների հաստատումն իրականացվում է դատական ակտերի ստուգման նպատակով և դրանց առկայությունն ինքնին կասկած է հարուցում դատական ակտի օրինականության և հիմնավորվածության կապակցությամբ: Այդ իսկ պատճառով հետազոտվող վարույթում դատարանի հիմնական խնդիրն է ոչ միայն պարզել նոր երևան եկած հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը, այլև դրանց ազդեցությունը կայացված դատական ակտի օրինականության և հիմնավորվածության վրա⁵⁶: Ասվածից հետևում է, որ նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման վարույթը արդարադատության պատշաճ իրականացման և օրինականության ապահովման կարևորագույն երաշխիքներից մեկն է քաղաքացիական դատավարությունում:

Նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման վարույթի դերակատարությունը էական է ոչ միայն դատական ակտերի օրինականության և հիմնավորվածության ապահովման, այլև օբյեկտիվ իրականությանը դատական ակտերի համապատասխանության երաշխավորման տեսանկյունից: Չնայած այն հանգամանքին, որ գործող քաղաքացիադատավարական օրենսդրությունը չի ամրագրում գործի իրական հանգամանքները պարզելու, այսինքն՝ օբյեկտիվ ճշմարտությունը բացահայտելու դատարանի պարտականությունը՝ այնուամենայնիվ, նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման վարույթի գոյությունը վկայում է օրենսդրի կողմից գործի իրական հանգամանքները որոշակի դեպքերում չբացահայտվելու և դատական ակտի հիմքում չդրվելու հավանա-

⁵⁶ Տե՛ս *Аргунов В.Н. и др.* Научно-практический комментарий к Гражданскому процессуальному кодексу РФ. М.: Городец-издат, 2000, էջ 529:

կանությունը նկատի ունենալու հանգամանքը: Չետևաբար, կարելի է պնդել, որ քննարկվող վարույթը դատական ակտը օբյեկտիվ ճշմարտությանը համապատասխանեցնելու լրացուցիչ կառուցակարգ է: Այդ հանգամանքը մեծապես նպաստում է քաղաքացիական դատավարության նպատակների իրագործմանը, քանի որ դատարանը կոչված է պաշտպանել միայն իրական իրավունքները և օրինական շահերը: Այս առումով պետք է համաձայնել Է.Մ. Մուրադյանի այն պնդմանը, որ օբյեկտիվ ճշմարտությունից հրաժարումը համարժեք է արդարադատությունից հրաժարմանը⁵⁷:

Այսպիսով, նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման վարույթն իրենից ներկայացնում է քաղաքացիական դատավարության ինքնուրույն և բացառիկ փուլ, որի ընթացքում արդարադատության իրականացման արդյունքում օբյեկտիվ պատճառներով տեղ գտած թերությունները, բացթողումները շտկելու նպատակով նոր երևան եկած հանգամանքների համատեքստում ստուգվում են օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի օրինականությունը և հիմնավորվածությունը:

§2. Նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման հիմքերը

Նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման վարույթի ինքնատիպությունն ամենից առաջ պայմանավորված է այն հանգամանքով, որ այստեղ, ի տարբերություն դատական ակտերի վերանայման այլ վարույթների, վերանայման հիմք են հանդիսանում նոր բացահայտված հանգամանքները: Չարկ է նշել, որ գործող քաղաքացիական դատավարության օրենսդրությունը չի պարունակում «նոր երևան եկած հանգամանքներ» եզրույթի սահմանումը: Այդ իսկ պատճառով

⁵⁷ См. *Мурадьян Э.М.*, Истина как проблема судебного права. – М.: Юрист, 2002, էջ 91:

դատավարագիտության մեջ բավականին լայն տարածում են ստացել նոր երևան եկած հանգամանքների հասկացության և դրանց հատկանիշների վերաբերյալ հետազոտությունները, ինչով էլ կարելի է պայմանավորել նոր երևան եկած հանգամանքների հասկացության տարբեր բնորոշումների գոյությունը:

Այսպես, Մ.Ս. Շաքարյանը նոր երևան եկած հանգամանքները բնորոշում է որպես գործի քննության ժամանակ գոյություն ունեցող և գործի լուծման համար էական նշանակություն ունեցող իրավաբանական փաստեր, որոնք հայտնի չեն եղել և չէին կարող հայտնի լինել բողոք բերած կողմին: Այդ կերպ հեղինակը առանձնացնում է նոր երևան եկած հանգամանքների այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են այդ հանգամանքների՝ գործի լուծման համար էական նշանակություն ունենալը, գործի քննության ժամանակ գոյություն ունենալը և բողոք բերած անձին անհայտ լինելը⁵⁸: Նման տեսակետ է հայտնում նաև Վ.Ս. Անոխինը, ով նոր երևան եկած հանգամանքներին բնութագրական պարտադիր հատկանիշ է համարում դրանց անհայտ լինելը ոչ միայն բողոք բերած անձին, այլև դատարանին⁵⁹:

Կ.Ի. Կոմիսարովը, անդրադառնալով նոր երևան եկած հանգամանքների հասկացության սահմանմանը, նշում է. «Նոր երևան եկած հանգամանքները փաստեր են, որոնցից կախված է գործին մասնակցող անձանց իրավունքների և պարտականությունների ծագումը, փոփոխումը և դադարումը: Այդ պատճառով անհրաժեշտ է դրանք հստակ տարանջատել ապացույցներից, որոնց նպատակային նշանակությունը սահմանափակվում է այդ իրավաբանական փաստերի հաստատմամբ»⁶⁰:

⁵⁸ Տե՛ս Гражданский процесс: Учебник / Под ред. **М.С. Шакарян.** – М., Юрид. лит., 1993, էջեր 414-415:

⁵⁹ Տե՛ս **Анохин В.С.**, Арбитражное процессуальное право России: Учеб. для студ. высш. учеб. заведений. – М.: Гуманит. изд. центр «ВЛАДОС», 1999, էջ 415:

⁶⁰ Տե՛ս **Воложанин В.П. и др.**, Советский гражданский процесс. - М., Изд-во «Юрид. С 56 лит.», 1978, էջ 338:

Ա.Ն. Ռեզունենկոն ևս նոր երևան եկած հանգամանքները դիտարկում է որպես օբյեկտիվ իրականության փաստեր, որոնք, ըստ հեղինակի, դառնում են նոր երևան եկած միայն այն դեպքում, երբ ունեն գործի համար էական նշանակություն, գոյություն են ունեցել մինչև դատական ակտի կայացումը, հայտնի չեն եղել և չէին կարող հայտնի լինել բողոք բերած անձին և դատարանին, ինչպես նաև դրանք բացահայտվել են դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելուց հետո⁶¹:

Վերը շարադրվածից հետևում է, որ նոր երևան եկած հանգամանքներ են համարվում օբյեկտիվ բնույթ կրող իրավաբանական փաստերը և ոչ թե գործին մասնակցող անձանց եզրակացությունները կամ փաստարկները: Այսինքն՝ նոր երևան եկած հանգամանքները բոլոր դեպքերում օբյեկտիվ իրականության որոշակի փաստեր են՝ գործողություններ և իրադարձություններ, որոնք գոյություն ունեն տարածության և ժամանակի մեջ, և որոնք գտնվում են իրավունքի համապատասխան նորմի ազդեցության ներքո⁶²:

Սակայն անհրաժեշտ է նկատի ունենալ, որ նոր երևան եկած հանգամանքների հիշատակված բոլոր բնորոշումներն էլ ունեն այն թերությունը, որ դրանք, ըստ էության, հանդիսանում են նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման միայն մեկ հիմքի տարածական մեկնաբանությունը: Ընդ որում, ինչպես նկատում է Լ.Ա. Տերեխովան, դրանցում միակ էական լրացումը դրսևորվում է նրանում, որ որպես նոր երևան եկած հանգամանքներին բնորոշ պարտադիր հատկանիշ է դիտարկվում դրանց անհայտ լինելը նաև դատարանին⁶³: Մինչդեռ նոր երևան եկած հանգամանքների այսպիսի սահմանումները չեն

⁶¹ Տե՛ս **Резуенко А.Н.**, Пересмотр судебных актов, вступивших в законную силу, по вновь открывшимся обстоятельствам как стадия гражданского процесса. Дис. ... канд. юрид. наук – Волгоград, 2001, էջ 41:

⁶² Տե՛ս **Рожкова М.А.**, Теории юридических фактов гражданского и процессуального права: понятия, классификации, основы взаимодействия. Дис. ... док. юрид. наук - Москва, 2010, էջ 11:

⁶³ Տե՛ս **Терехова Л.А.**, Право на исправление судебной ошибки как компонент судебной защиты. Дис. ... док. юрид. наук - Екатеринбург, 2008, էջ 229:

կարող համարվել սպառիչ, քանի որ չեն արտացոլում դրանց բնորոշ բոլոր հատկանիշները: Հիմնական խնդիրը նրանում է, որ օրենսդիրը, նախատեսելով նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման հիմքերը, ամրագրել է դրանցից յուրաքանչյուրի համար այն որոշակի չափանիշները, որոնցով պետք է ղեկավարվել կոնկրետ հիմքի առկայությունը կամ բացակայությունը պարզելու համար: Դրանով կարելի է բացատրել այն հանգամանքը, որ երբեմն իրավաբանական գրականության մեջ փորձեր են արվում սահմանելու նոր երևան եկած հանգամանքների հասկացությունը նեղ և լայն առումներով⁶⁴:

Այս տեսանկյունից հարցը դիտարկելիս, մեր կարծիքով, անհնար է թվում նոր երևան եկած հանգամանքների համար մեկ միասնական բնորոշման ձևակերպումը, որը հավասարապես կիրառելի կլինի բոլոր նոր երևան եկած հանգամանքների նկատմամբ և առավել ամբողջական կհամապատասխանի դրանց էությանը: Ասվածի համատեքստում ակնհայտ է, որ նոր երևան եկած հանգամանքների վերլուծությունը նպատակահարմար է կատարել դրանց առանձին հիմքերի շրջանակներում, որոնք սպառիչ կերպով թվարկված են ՔԴՕ 204.32-րդ հոդվածում:

ՔԴՕ 204.32-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ նոր երևան եկած հանգամանքները հիմք են դատական ակտի վերանայման համար, եթե բողոք ներկայացրած անձն ապացուցում է, որ այդ հանգամանքները հայտնի չեն եղել և չէին կարող հայտնի լինել գործին մասնակցող անձանց, կամ այդ հանգամանքները հայտնի են եղել գործին մասնակցող անձանց, բայց նրանցից անկախ պատճառներով չեն ներկայացվել դատարան, և այդ հանգամանքները գործի լուծման համար ունեն էական նշանակություն: Նշված դրույթի վերլուծությունից հետևում է, որ այն՝ որպես դատական ակտերի վերանայման հիմք, նախատեսում է երկու խումբ հանգամանքներ, որոնք են.

⁶⁴ Տե՛ս **Ахмедов С.М.**, Производство по пересмотру судебных актов по вновь открывшимся обстоятельствам в системе пересмотра судебных актов в арбитражном процессе. Дис. ... канд. юрид. наук – Москва, 2008, էջ 86:

1) գործի լուծման համար էական նշանակություն ունեցող հանգամանքներ, որոնք հայտնի չեն եղել և չէին կարող հայտնի լինել գործին մասնակցող անձանց, և

2) գործի լուծման համար էական նշանակություն ունեցող հանգամանքներ, որոնք հայտնի են եղել գործին մասնակցող անձանց, բայց նրանցից անկախ պատճառներով չեն ներկայացվել դատարան:

Հարկ է նշել, որ, մինչև «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության 2007 թվականի նոյեմբերի 28-ի ՀՕ-277-Ն օրենքի⁶⁵ ընդունումը, ՔԴՕ 228-րդ հոդվածում դրանք դիտարկվում էին որպես նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման ինքնուրույն հիմքեր: Ըստ որում, այդպիսի տարանջատումը պատահական չէր, քանի որ, չնայած որոշակի ընդհանրություններին, նշված հանգամանքները ունեն էական տարբերություններ: Ուստի, դրանց հատկանիշների բացահայտումը անհրաժեշտ է կատարել առանձին-առանձին:

Դատական պրակտիկայի ուսումնասիրությունը վկայում է, որ նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայումը առավելապես իրականացվում է հենց գործի լուծման համար էական նշանակություն ունեցող հանգամանքներով, որոնք հայտնի չեն եղել և չէին կարող հայտնի լինել գործին մասնակցող անձանց: Հիմնական պատճառը նրանում է, որ նոր երևան եկած հանգամանքների այս ընդհանրական ձևակերպումը թույլ է տալիս դրանց շարքին դասել փաստերի բավականին լայն շրջանակ: Դրա շնորհիվ է, որ այս խմբում ընդգրկված հանգամանքները դատավարագիտության մեջ կոչվում են նաև նոր երևան եկած հանգամանքներ «նաքուր տեսքով»⁶⁶:

⁶⁵ Տե՛ս ՀՀՊՏ 2007.12.26/66(590) Հոդ. 1330:

⁶⁶ Տե՛ս **Алиев Т.Т.**, Производство по пересмотру судебных постановлений ввиду вновь открывшихся обстоятельств в гражданском судопроизводстве: теоретические и практические аспекты, перспективы развития. Дис. ... док. юрид. наук - Саратов, 2005, էջ 236:

Բացի այդ, դրանց բնութագրական է նաև այն, որ այդ հանգամանքները ենթակա են հաստատման անմիջականորեն դատական ակտը վերանայող դատարանի կողմից և որևէ լրացուցիչ պայմաններով ծանրաբեռնված չեն: Մինչդեռ նոր երևան եկած հանգամանքների մյուս հիմքերը հաստատվում են իրավասու մարմինների ակտերով, իսկ գործը վերանայող դատարանը ստուգում է միայն այդ ակտերի առկայությունը: Այս հանգամանքը ևս մեծապես նպաստում է դրանց գործնական կիրառելիությանը, քանի որ անվիճելի է այն իրողությունը, որ առավել ոյուրին է ապացուցել հանգամանքի նախկինում անհայտ լինելը և գործի համար էական նշանակություն ունենալը, քան ունենալ, օրինակ, գրավոր ապացույցների կեղծված լինելը հաստատող օրինական ուժի մեջ մտած դատավճիռ:

Նշված խմբում ընդգրկված հանգամանքների հիմքով դատական ակտի վերանայման համար ամենից առաջ անհրաժեշտ է, որ այդ հանգամանքները գործի լուծման համար ունենան էական նշանակություն: Ըստ Լ.Ս. Մորոզովայի՝ նոր երևան եկած հանգամանքների էական լինելու հատկամիշը դրսևորվում է նրանում, որ դրանց ի հայտ գալու հետևանքով հերքվում է գործով սկզբնական դատական ակտի հիմքում դրված հանգամանքների հավաստիությունը⁶⁷: Իսկ Մ.Ս. Շաքարյանը հանգամանքը համարում է գործի համար էական նշանակություն ունեցող, եթե այն հայտնի լինելու դեպքում գործը քննած դատարանը պարտավոր կլիներ կայացնելու ամբողջությամբ կամ մասամբ այլ դատական ակտ⁶⁸: Ս.Ս. Ջավրիևը ևս հանգամանքի էական լինելը պայմանավորում է նրանով, թե արդյոք այն կարող է դրվել նախկինում կայացված դատական ակտի բեկանման և սկզբունքորեն նոր դատական ակտի կայացման մասին դատարանի եզ-

⁶⁷ Տե՛ս **Морозова Л.С.**, Пересмотр решений по вновь открывшимся обстоятельствам. – М.: Госюриздат, 1959, էջ 27:

⁶⁸ Տե՛ս **Гражданское процессуальное право России: Учебник для вузов /Под ред. М.С. Шакарян – М.: Изд-во «Былина», 1998, էջ 384:**

րահանգման հիմքում⁶⁹:

Նշված բոլոր տեսակետներն էլ, ըստ էության, ունեն այն ընդհանրությունը, որ հանգամանքի էական լինելու հարցը արդարացիորեն կախվածության մեջ են դնում գործի ելքի վրա դրանց ազդեցության հնարավորությունից: Այլ կերպ ասած՝ հանգամանքները պետք է համարվեն գործի լուծման համար էական նշանակություն ունեցող, եթե դրանց հայտնի լինելու դեպքում գործը կստանար լրիվ կամ մասնակի այլ լուծում: Այս առումով ուշագրավ է նաև ՀՀ վճռաբեկ դատարանի դիրքորոշումը, որը բազմիցս հանգամանքի էական լինելը պայմանավորել է հետևյալով. «Յուրաքանչյուր գործ իր փաստական հանգամանքներով եզակի է, հետևաբար նոր երևան եկած հանգամանքի էական լինելը յուրաքանչյուր գործով որոշելիս դատարանները պետք է հաշվի առնեն վերանայվող գործի բոլոր փաստերը և պարզեն՝ արդյոք այդ հանգամանքներն իրենց բնույթով ազդում են վերանայվող գործի ելքի վրա, թե՛ ոչ»⁷⁰:

Հայտնի է, որ փաստերի ամբողջությունը, որոնք գործի լուծման համար ունեն էական նշանակություն, դատավարագիտության մեջ ավանդաբար կոչվում է ապացուցման առարկա: Սակայն մասնագիտական գրականության մեջ մինչ օրս չկա միասնական մոտեցում այն հարցի կապակցությամբ, թե ինչ փաստերի շրջանակ է մտնում ապացուցման առարկայի մեջ, և, հետևաբար, ինչ բնույթի փաստերը կարող են հանդես գալ որպես նոր երևան եկած հանգամանքներ:

Այսպես, ըստ Գ.Լ. Օսկինյայի, ապացուցման առարկան են կազմում նյութաիրավական բնույթի իրավաբանական փաստերը,

⁶⁹ Տե՛ս **Засруев С.С.**, Пересмотр по вновь открывшимся обстоятельствам решений, определений, постановлений президиума суда надзорной инстанции, вступивших в законную силу, в гражданском процессе. Дис. ... канд. юрид. наук – Москва, 2008, էջ 44:

⁷⁰ Տե՛ս, օրինակ, ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ԵԿԴ/2397/02 քաղաքացիական գործով 2009 թվականի մարտի 13-ի, թիվ 3-248/ԿԴ/ քաղաքացիական գործով 2010 թվականի սեպտեմբերի 10-ի, թիվ ԵԱԴԴ/0056/02/08 քաղաքացիական գործով 2011 թվականի ապրիլի 1-ի որոշումները:

որոնք ունեն էական նշանակություն գործն ըստ էության լուծելու համար⁷¹: Մ.Կ. Տրեուշնիկովը ևս ապացուցման առարկայի կազմի մեջ ներառում է բացառապես նյութաիրավական նշանակության փաստերը, որոնց հաստատումն անհրաժեշտ է նյութական իրավունքի նորմերի ճիշտ կիրառման և գործի ըստ էության լուծման համար⁷²:

Ի տարբերություն նշված հեղինակների՝ Դ.Մ. Չեչոտը ապացուցման առարկան բնորոշում է որպես փաստերի համակցություն, որոնց հաստատումը ապահովում է քաղաքացիական գործի ճիշտ, օրինական և հիմնավորված լուծումը: Այդ կերպ հեղինակն ապացուցման առարկայի կազմում նախատեսում է ոչ միայն նյութաիրավական, այլև դատավարական բնույթի փաստերը⁷³: Ըստ էության, նման դիրքորոշում է արտահայտել նաև Ի.Վ. Ռեշետնիկովան⁷⁴:

Այն հանգամանքը, որ գործի լուծման համար էական նշանակություն ունեցող կարող են առաջին հերթին լինել նյութաիրավական բնույթի և ապացուցողական փաստերը, բխում է ԲԴՕ 48-րդ հոդվածի 2-րդ մասից, որի համաձայն. «Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող ապացուցման ենթակա փաստերը որոշում է դատարանը՝ գործին մասնակցող անձանց պահանջների և առարկությունների հիման վրա»: Սակայն չպետք է մոռանալ, որ գործին մասնակցող անձը կարող է ներկայացնել ոչ միայն նյութաիրավական, այլև դատավարական առարկություններ, որոնք նպատակ են հետապնդում ապացուցել վարույթի ծագման կամ այն շարունակելու ոչ իրավաչափության փաստը: Չետևաբար, այս հանգամանքները ևս պետք է դիտարկվեն որ-

⁷¹ Տե՛ս **Осокина Г.Л.**, Курс гражданского судопроизводства России. Общая часть: Учебное пособие. – Томск: Изд-во Том. ун-та, 2002, էջ 518:

⁷² Տե՛ս **Треушников М.К.**, Судебные доказательства – М.: Издательский Дом «Городец», 2004, էջ 16:

⁷³ Տե՛ս **Авдеенко Н.И. и др.**, Советский гражданский процесс – Ленинград, Изд-во Ленинградского университета, 1984, էջեր 137-139:

⁷⁴ Տե՛ս **Решетникова И.В.**, Доказывание в гражданском процессе: учеб.-практ. пособие. – М.: Изд-во «Юрайт», 2010, էջ 55:

պես ապացուցման առարկայի մաս՝ թեկուզև դրանք գործն ըստ էության լուծելու համար չեն կարող ունենալ էական նշանակություն: Բացի այդ, դատավարական բնույթի փաստերը ապացուցման առարկայի կազմում ներառելու օգտին է վկայում նաև ՔԴՕ 47-րդ հոդվածում ամրագրված ապացույցների հասկացությունը, որի ներքո հասկացվում են ոչ միայն գործին մասնակցող անձանց պահանջները և առարկությունները հիմնավորող, այլև վեճի լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքների առկայության կամ բացակայության մասին օրենքով սահմանված տեղեկությունները: Այս առումով հատկանշական է, որ ՀՀ սահմանադրական դատարանը ևս «ապացուցման առարկա» հասկացությունը սահմանել է հետևյալ կերպ. «Ապացուցման առարկան այն իրավաբանական (հիմնականում նյութաիրավական բնույթի) փաստերի համակցությունն է, որոնք էական նշանակություն ունեն գործն ըստ էության լուծելու համար, և ենթակա են պարզելու դատական քննության ընթացքում»⁷⁵:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ առավել ամբողջական է թվում Ս.Գ. Մեղրյանի կողմից տրված լայն իմաստով ապացուցման առարկայի բնորոշումը, ըստ որի. «Ապացուցման առարկան են կազմում այն նյութաիրավական և դատավարական բնույթի և ապացուցողական փաստերը, որոնք գործի հարուցման, քննության և լուծման համար ունեն էական նշանակություն»⁷⁶: Արդյունքում կարելի է եզրակացնել, որ որպես նոր երևան եկած հանգամանքներ կարող են դիտարկվել ապացուցման առարկայի կազմի մեջ մտնող ինչպես նյութաիրավական, այնպես էլ դատավարական բնույթի իրավաբանական փաստերը: Հակառակ դեպքում, ինչպես արդարացիորեն նշում է Ա.Ն. Ռեզունենկոն, ապացուցման առարկայի կազմից դատավարական բնույթի փաստերի

⁷⁵ Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի 2009 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ ՍԴՈ-845 որոշումը (ՀՀՊՏ 2009.12.16/64(730) Հոդ. 1378):

⁷⁶ Տե՛ս *Մեղրյան Ս.Գ.*, Ապացուցումը Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարությունում: Դասախոսություններ: Երևանի պետ. համալսարան: Եր., 2011, էջ 19:

բացառումը և այդ հիմքով նոր երևան եկած հանգամանքների մեջ մտնող փաստերի շրջանակի սահմանափակումը կհանգեցնե՞ր նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման ինստիտուտի գործողության սահմանների ամհարկի նեղացմանը⁷⁷:

Հարկ է նշել, որ այս մոտեցմամբ է առաջնորդվում նաև դատական պրակտիկան: Մասնավորապես, ՀՀ վճռաբեկ դատարանը քաղաքացիական գործերից մեկի շրջանակներում, պատճառաբանելով, որ Արայիկ Սիմոնյանը չէր կարող ներկայացնել Գեորգի Հակոբյանի շահերը դատական ատյաններում, քանի որ վերջինիս մահվամբ դադարել է Արայիկ Սիմոնյանին տրված լիազորագրի գործողությունը, հայտնել է հետևյալ դիրքորոշումը. «Բողոք բերած անձի կողմից վկայակոչված Գեորգի Հակոբյանի մահվան փաստը նոր երևան եկած հանգամանք է, որն էական նշանակություն ունի սույն գործի լուծման համար»⁷⁸: Այսինքն, դրանով իսկ նոր երևան եկած հանգամանք է ճանաչվել գործի քննության ժամանակ անհայտ մնացած դատավարական բնույթի փաստը՝ գործին մասնակցող անձի մահը, քանի որ գործի քննության ժամանակ այն հայտնի լինելու դեպքում, ելնելով վիճելի իրավահարաբերության բնույթից, կհանգեցնե՞ր գործի վարույթի կասեցմանը կամ կարճմանը (ՔԴՕ 105-րդ և 109-րդ հոդվ.):

Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող հանգամանքները, որոնք հայտնի չեն եղել և չէին կարող հայտնի լինել գործին մասնակցող անձանց, հիմք են դատական ակտի վերանայման համար, եթե դրանք գործի քննության ժամանակ գոյություն են ունեցել օբյեկտիվ իրականությունում: Չնայած այս հատկանիշը ուղղակիորեն նախատեսված չէ ՔԴՕ 204.32-րդ հոդվածի 1-ին կետում՝ սակայն այն ենթադրվում է

⁷⁷ Տե՛ս **Резуненко А.Н.**, Пересмотр судебных актов, вступивших в законную силу, по вновь открывшимся обстоятельствам как стадия гражданского процесса. Дис. ... канд. юрид. наук – Волгоград, 2001, էջ 35:

⁷⁸ Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ԿԴ1/0253/02/09 քաղաքացիական գործով 2011 թվականի մարտի 4-ի որոշումը:

նշված նորմի բովանդակությունից: Ուստի, այս առումով անհրաժեշտ է տարանջատել նոր երևան եկած հանգամանքները նոր և փոփոխված հանգամանքներից:

Նոր են համարվում գործի համար նշանակություն ունեցող, սակայն միայն գործի քննությունից հետո ծագած հանգամանքները⁷⁹: Իսկ փոփոխված պետք է համարել այն իրավաբանական փաստերը, որոնք դրվել են դատական ակտի հիմքում, սակայն հետագայում փոփոխվել են: Չետևաբար, և՛ նոր, և՛ փոփոխված հանգամանքների հիմնական տարբերությունը նոր երևան եկած հանգամանքներից դրսևորվում է ժամանակային գործոնի մեջ: Դրանով է պայմանավորված նաև նշված հանգամանքների դատավարական հետևանքները: Խոսքն այն մասին է, որ նոր և փոփոխված հանգամանքները, ի տարբերություն նոր երևան եկածների, կասկածի տակ չեն դնում օրինական ուժի մեջ մտած դատական ակտի օրինականությունը և հիմնավորվածությունը, քանի որ գործի քննության ժամանակ գոյություն չունենալու փաստի ուժով դրանք չէին կարող դառնալ դատական քննության առարկա: Այդ իսկ պատճառով նոր և փոփոխված հանգամանքները ոչ թե դատական ակտը նոր երևան եկած հանգամանքներով վերանայելու, այլ նոր հայց հարուցելու հիմք կարող են հանդիսանալ⁸⁰: Այսպես, օրինակ, կողմերից մեկի գույքային կամ ընտանեկան դրության փոփոխության հանգամանքը ՀՀ ընտանեկան օրենսգրքի⁸¹ 107-րդ հոդվածի իմաստով հիմք է դատական կարգով որոշված ալիմենտի սահմանված չափը փոփոխելու կամ ալիմենտ վճարելուց ազատելու պահանջով հայց հարուցելու համար:

Չատկանշական է, որ նոր երևան եկած հանգամանքների գործի քննության ժամանակ գոյություն ունենալու անհրա-

⁷⁹ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի *Բուլգարիայի ընդդեմ Ռուսաստանի* գործով 2007 թվականի հունվարի 18-ի վճիռը, կետ 39:

⁸⁰ Տե՛ս *Мельников А.А. и др.*, Курс советского гражданского процессуального права. Том II, М., Изд-во «Наука», 1981, էջ 312:

⁸¹ Ընդունվել է 09.11.2004թ.: Տե՛ս ՀՀՊՏ 2005.01.19/4 (376) Հոդ. 60:

ժեշտությունը բազմիցս շեշտադրվել է նաև ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումներում⁸²: Սակայն այս պահանջն իրավակիրառ պրակտիկայում ոչ միշտ է պահպանվում, որպիսի դեպքերից է հանդիսանում թիվ ԵԱԴԴ/0056/02/08 քաղաքացիական գործը: Նշված գործով ՀՀ վճռաբեկ դատարանը, քննելով Ազգուշ Մելքոնյանի, Գոհար, Արայիկ Տոնոյանների և Ալվարդ Նախոյանի կողմից ըստ հայցի Արամ Խաչատրյանի ընդդեմ Ազգուշ Մելքոնյանի, Գոհար, Արայիկ Տոնոյանների և Ալվարդ Նախոյանի՝ առանց փոխհատուցման բնակելի տարածության օգտագործման իրավունքը դադարեցնելու և վտարելու պահանջների մասին, և հակընդդեմ հայցի՝ Արամ Խաչատրյանի անվամբ տրված բնակելի տան տեխնիկական անձնագիրը 50%-ի չափով անվավեր ճանաչելու և սեփականության իրավունքը ճանաչելու պահանջների մասին քաղաքացիական գործով բերված վճռաբեկ բողոքը, գտել է, որ Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի՝ 26.02.2010 թվականի օրինական ուժի մեջ մտած վճիռն էական նշանակություն ունի թիվ ԵԱԴԴ/0056/02/08 քաղաքացիական գործի լուծման, համարվում է նոր երևան եկած հանգամանք և հիմք է ՀՀ վճռաբեկ դատարանի 04.11.2009 թվականի որոշումը վերանայելու համար:

ՀՀ վճռաբեկ դատարանը իր դիրքորոշման հիմքում դրել է հետևյալ պատճառաբանությունը. «Սույն գործով որպես նոր երևան եկած հանգամանք բողոք բերած անձինք ներկայացրել են Երևանի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի՝ 26.02.2010 թվականի օրինական ուժի մեջ մտած վճիռը: Տվյալ վճռով մասնակիորեն բավարարվել է Ազգուշ Մելքոնյանի, Գոհար և Արայիկ Տոնոյանների ու Գոհար Նախոյանի հայցն ընդդեմ Արամ Խաչատրյանի՝ ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքի ճա-

⁸² Տե՛ս, օրինակ, ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ 3-1224 (ՎԴ) քաղաքացիական գործով 2007 թվականի սեպտեմբերի 5-ի, թիվ 3-1311 (ՎԴ) քաղաքացիական գործով 2007 թվականի սեպտեմբերի 5-ի և թիվ ԵՄԴ/0771/02/08 քաղաքացիական գործով 2009 թվականի հունիսի 26-ի որոշումները:

ճանաչման պահանջի մասին և վճռվել է Երևանի Միրաքյան նրբանցքի թիվ 16 հասցեում գտնվող տան առաջին հարկում գտնվող և հայցվորների կողմից փաստացի զբաղեցրած օրինական տարածքների նկատմամբ և այդ շինության տակ գտնվող հողամասի կեսի նկատմամբ ձեռքբերման վաղեմության ուժով ճանաչել Ազգուշ Մելքոնյանի, Գոհար և Արայիկ Տոնոյանների սեփականության իրավունքը: Այսինքն՝ որպես նոր երևան եկած հանգամանք վկայակոչված՝ Երևանի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի՝ 26.02.2010 թվականի օրինական ուժի մեջ մտած վճռով Ազգուշ Մելքոնյանը, Գոհար և Արայիկ Տոնոյանները ճանաչվել են վեճի առարկա գույքի՝ Երևանի Միրաքյան նրբանցքի թիվ 16 հասցեում գտնվող տան համապատասխան մասի սեփականատերեր: Մինչդեռ Վերաքննիչ դատարանի 19.06.2009 թվականի որոշմամբ որոշվել է Ազգուշ Մելքոնյանին, Արայիկ և Գոհար Տոնոյաններին, Ալվարդ Նախոյանին վտարել Երևանի Միրաքյան նրբանցքի թիվ 16 հասցեից»⁸³: Մինչդեռ ակնհայտ է, որ գործի քննության ավարտից հետո ծագած հանգամանքը՝ վեճի առարկա գույքի նկատմամբ սեփականության իրավունքի ճանաչումը, պետք է որակվեր ոչ թե նոր երևան եկած, այլ նոր հանգամանք՝ դրանից բխող հետևանքներով:

Նոր երևան եկած հանգամանքներին վերագրվող հաջորդ հատկանիշը գործի քննության ժամանակ դրանց անհայտ լինելն է բողոք բերած անձին: Ընդ որում, հանգամանքները նոր երևան եկած են համարվում միայն այն դեպքում, երբ ոչ միայն հայտնի չեն եղել, այլև չէին կարող հայտնի լինել բողոք բերած անձին: Հետևապես, գործի քննության ժամանակ անհայտ մնացած հանգամանքները նոր երևան եկած որակելու տեսանկյունից կարևորվում է այն հանգամանքի գնահատականը, թե արդյոք գործին մասնակցող անձն ունեցել է այդ հանգամանքների մասին տեղեկանալու հնարավորություն:

⁸³ ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ԵԱԴԴ/0056/02/08 քաղաքացիական գործով 2011 թվականի ապրիլի 1-ի որոշումը:

Այս կապակցությամբ ուշագրավ է, որ մասնագիտական գրականության մեջ գործի քննության ժամանակ նոր երևան եկած հանգամանքների մասին տեղեկանալու անհնարինության հարցը տարակարծությունների տեղիք է տալիս: Առավել հաճախ հանդիպում է այն տեսակետը, ըստ որի՝ գործի քննության ժամանակ հանգամանքների հայտնի դառնալու անհնարինության մասին կարելի է խոսել բոլոր այն դեպքերում, երբ բողոք բերած անձը պարտավոր չէր իմանալ գործի համար էական նշանակություն ունեցող այդ հանգամանքի մասին⁸⁴:

Ընդհանուր առմամբ պետք է համաձայնել այն մոտեցմանը, որ որոշակի հանգամանք իմանալու պարտականության դեպքում անձը չի կարող հետագայում այդ հանգամանքը վկայակոչել որպես նոր երևան եկած, քանի որ բողոք բերած անձի այդ պարտականությունից, ըստ էության, ենթադրվում է նաև դրա մասին տեղեկանալու հնարավորությունը: Այդուհանդերձ, նոր երևան եկած հանգամանքի նախկինում հայտնի լինելու հնարավորությունը այդ հանգամանքի մասին բողոք բերած անձի իմանալու պարտականության հետ կապելը արդարացված չի թվում:

Նախ, անհրաժեշտ է նկատի ունենալ, որ օրենսդիրը, օգտագործելով «չէին կարող հայտնի լինել» բառակապակցությունը, արդեն իսկ շեշտում է այն, որ խոսքը տվյալ դեպքում ոչ թե հանգամանքի մասին տեղյակ լինելու պարտականության, այլ դրա հնարավորության մասին է: Հատկապես, եթե հաշվի առնենք այն կարևոր հիմնադրույթը, որ անձը չունի պարտականություններ, որոնք նախատեսված չեն օրենքով (ՀՀ Սահմանադրության⁸⁵ 42-րդ հոդվ.): Բացի այդ, չեն բացառվում իրավիճակները, երբ անձը, չունենալով որևէ պարտականություն, գործի քննության ժամանակ տեղյակ է լինում կամ կարող էր տեղյակ լինել որո-

⁸⁴ Տե՛ս **Алиев Т.Т.**, Производство по пересмотру судебных постановлений ввиду вновь открывшихся обстоятельств в гражданском судопроизводстве: теоретические и практические аспекты, перспективы развития. Дис. ... док. юрид. наук - Саратов, 2005, էջ 212:

⁸⁵ Ընդունվել է 05.07.1995թ.: Տե՛ս ՀՀՊՏ 2005.12.05/Հատուկ թողարկում Հոդ. 1426:

շակի հանգամանքների: Նման պայմաններում ակնհայտ է, որ անձը չպետք է կարողանա դրանք վկայակոչել որպես նոր երևան եկած:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ գտնում ենք, որ այն հարցը, թե արդյոք հանգամանքները կարող էին հայտնի լինել գործի քննության ժամանակ, պետք է դիտարկել գործի քննության ժամանակ հայտնի դառնալու հնարավորության տեսանկյունից: Այս առումով պետք է արժևորել Ս.Ս. Ջավրիևի այն դիտարկումը, ըստ որի՝ անձը զրկվում է նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտի վերանայման իրավունքից, եթե գործի սկզբնական քննության ժամանակ այդ հանգամանքները կարող էին հայտնի լինել նրան, եթե վերջինս ցուցաբերեր բավարար շրջահայեցություն⁸⁶: Այսինքն՝ հեղինակը, ըստ էության, արտահայտում է այն դիրքորոշումը, որ հանգամանքը նոր երևան եկած կարող է համարվել, եթե այն գործի քննության ժամանակ անհայտ է մնացել բողոք բերած անձի կամքից անկախ պատճառներով:

Կարծում ենք, որ նման մոտեցումը պետք է առավել ընդունելի համարել: Նման եզրահանգումը բխում է նաև ՔԴՕ 204.32-րդ հոդվածի 1-ին կետի բովանդակությունից: Այսպես, եթե գործի լուծման համար էական նշանակություն ունեցող հանգամանքները գործի քննության ժամանակ անհայտ են մնացել ոչ օրյեկտիվ բնույթ կրող պատճառներով, ապա ակնհայտ է, որ այդ դեպքերում խոսք չի կարող լինել նոր երևան եկած հանգամանքների մասին: Հակառակ պարագայում կխախտվի օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի վերջնական լինելու սկզբունքը:

Սակայն, եթե բողոք բերած անձը գործի քննության ժամանակ դրսևորել է գործի փաստական հանգամանքները պարզելու կապակցությամբ բավարար հոգատարություն և շրջահայեցություն, սակայն դրանք իրենից անկախ պատճառներով մնացել են

⁸⁶ Տե՛ս **Заспиев С.С.**, Пересмотр по вновь открывшимся обстоятельствам решений, определений, постановлений президиума суда надзорной инстанции, вступивших в законную силу, в гражданском процессе. Дис ... канд. юрид. наук – Москва, 2008, էջ 47:

անհայտ, ապա հիմքեր կան ենթադրելու, որ այդ հանգամանքները չէին կարող հայտնի լինել բողոք բերած անձին: Միևնույն ժամանակ, հարկ ենք համարում նշել, որ հանգամանքների մասին գործի քննության ժամանակ տեղեկանալու հնարավորության հարցը յուրաքանչյուր գործով ենթակա է առանձին գնահատման՝ ելնելով տվյալ գործի առանձնահատկություններից:

Նշված դատողություններից հետևում է, որ որպես նոր երևան եկած հանգամանք երբևէ չեն կարող դիտարկվել հանրահայտ փաստերը (լատիներեն «Factum notorium» եզրույթից, որը թարգմանաբար նշանակում է հանրահայտ փաստ): Նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման հիմք չեն նաև այն հանգամանքները, որոնք իրենց բնույթով հանրամատչելի են⁸⁷: Դա պայմանավորված է այն պարզ իրողությամբ, որ մամուլի և զանգվածային լրատվության մյուս միջոցներով, համաշխարհային համակարգչային ցանցով, պաշտոնական հրատարակություններով և այլ միջոցներով հրապարակված և հանրությանը մատչելի դառնալու հնարավորություն ընձեռող տեղեկատվությունը ինքնին բացառում է այն իրավիճակը, երբ դրանցով հայտնի դարձած հանգամանքների մասին տեղեկանալը լինի անհնարին:

Այս կապակցությամբ ուշադրության է արժանի թիվ 3-1936 (ՏԴ) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի դիրքորոշումը, ըստ որի. «Սույն գործի փաստերի համաձայն՝ «Գյուղատնտեսական և բնակավայրերի նշանակության հողերի կադաստրային զուտ եկամտի ու կադաստրային արժեքների 2005 թվականի չափերը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 30.12.2004 թվականի թիվ 897-Ն որոշման հավելված 4-ի 134-րդ կետում «ՄԷՏԱ ՍՊԸ մեխանիկական գործարան» նշումը սույն գործի համար էական նշանակություն ունեցող նոր երևան եկած հանգամանք է, քանի որ դրանում նշված Ընկերության ան-

⁸⁷ Ст'я Арбитражный процесс: компендиум / отв. ред. **В.В. Ярков**. – М.: Изд-во «Инфотропик Медиа», 2011, т.2 308:

վանումն այլ է, քան «Մոլդովական փողոցի մոտ գտնվող «ՄԵՏԱ» ՍՊԸ-ի կողմից վարձակալության իրավունքով օգտագործվող հողամասն ընկերությանն օտարելու մասին» Երևանի քաղաքապետի 24.08.2005 թվականի թիվ 1839-Ա որոշման մեջ նշված Ընկերության անվանումը»:

Մինչդեռ նման դիրքորոշումը խիստ կասկածելի է թվում: Մի կողմ թողնելով նշված գործի փաստերի առանձին քննարկումը՝ հարկ է նշել, որ նորմատիվ իրավական ակտի դրույթը չի կարող բավարարել գործի քննության ժամանակ անհայտ լինելու պահանջը, քանի որ, եթե այն նույնիսկ փաստացի հայտնի չի եղել, ապա պաշտոնական հրապարակման փաստի ուժով հանդիսացել է հանրամատչելի և կարող էր հայտնի լինել բողոք բերած անձին: Բացի այդ, նորմատիվ իրավական ակտի դրույթը որպես նոր երևան եկած հանգամանք դիտարկելը հիմնավորված չէ այն առումով, որ իրավանորմների գոյության փաստը չի մտնում ապացուցման առարկայի կազմի մեջ, քանի որ գործում է դատարանի կողմից օրենքի պատշաճ իմացության կանխավարկածը (*jura novit curia*)⁸⁸:

Դատավարագիտության մեջ հիմնականում տարածված է այն մոտեցումը, որ քննարկվող խմբում ընդգրկված նոր երևան եկած հանգամանքները գործի քննության ժամանակ պետք է անհայտ լինեն ոչ միայն բողոք բերած գործին մասնակցող անձին, այլև դատարանին: Այս հատկանիշը, ինչպես նշում էին Բ.Ս. Անտիմոնովը և Ս.Լ. Գերզոնը, թեև նախատեսված չէ օրենքով, սակայն բխում է նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման ինստիտուտի էությունից⁸⁹:

Այս առնչությամբ բոլորովին այլ տեսակետ է արտահայտում Ս.Ս. Ջավրիևը, ով, հիմք ընդունելով օրենքի ձևակերպումը, կար-

⁸⁸ Տե՛ս ԴԴ վճռաբեկ դատարանի թիվ 3-132 (ՎԴ) քաղաքացիական գործով 2008 թվականի մարտի 27-ի որոշումը:

⁸⁹ Տե՛ս **Антимонов Б.С., Герзон С.Л.**, Обжалование и пересмотр решений по гражданским делам. – М., Госюриздат, 1953, էջ 92:

ծիք է հայտնում այն մասին, որ դատարանը չի դասվում այն սուբյեկտների շարքը, ում այդ հանգամանքները պետք է անհայտ մնացած լինեն գործի քննության ժամանակ: Արդյունքում հեղինակը գալիս է այն հետևության, որ, եթե հանգամանքները գործի քննության ժամանակ անհայտ են եղել բողոք բերած անձին, իսկ դատարանը տեղյակ է եղել դրանց մասին, ապա դատարանն իր նախաձեռնությամբ իրավասու չէ հաստատված համարելու այդ փաստը⁹⁰:

Այնինչ Ս.Ս. Ջավրիևի այս մոտեցումը հազիվ թե ընդունելի համարվի: Այսպես, եթե գործի լուծման համար էական նշանակություն ունեցող հանգամանքները հայտնի են եղել դատարանին, սակայն դրանք հաշվի չեն առնվել դատարանի կողմից, ապա նման պայմաններում կայացված դատական ակտը կլինի անհիմն և ապօրինի: Այսինքն՝ տվյալ պարագայում հիմքեր կան խոսելու դատարանի կողմից թույլ տրված դատական սխալի մասին, որը, ինչպես գիտենք, բնութագրական չէ նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման վարույթին:

Միևնույն ժամանակ, ուշադրության է արժանի այն կարևորագույն հանգամանքը, որ դատարանը գործի լուծման համար էական նշանակություն ունեցող հանգամանքների մասին տեղեկությունները կարող է ստանալ միայն գործում առկա ապացուցման միջոցների հետազոտման և գնահատման արդյունքում (ՔԴՕ 47-րդ, 53-րդ և 131-րդ հոդվ.): Իսկ նման պայմաններում ակնհայտ է, որ նոր երևան եկած հանգամանքներով բողոք բերած գործին մասնակցող անձը իմացել է կամ կարող էր իմանալ այդ հանգամանքների մասին, քանի որ գործին մասնակցող անձը դատավարության ցանկացած փուլում ունի գործի նյութերին

⁹⁰ Տե՛ս **Завруев С.С.** Пересмотр по вновь открывшимся обстоятельствам решений, определений, постановлений президиума суда надзорной инстанции, вступивших в законную силу, в гражданском процессе. Дис. ... канд. юрид. наук – Москва, 2008, էջեր 47-48:

ծանոթանալու դատավարական իրավունք:

Բացի այդ, Ս.Ս. Ջավրիկի նշված տեսակետի հիմքում դրված այն փաստարկը, որ օրենքը դատարանին չի դատում այն սուբյեկտների շարքում, ում գործի քննության ժամանակ պետք է անհայտ մնացած լինեն որպես նոր երևան եկած վկայակոչվող հանգամանքները, ևս հիմնավոր չի թվում: Մասնավորապես, չպետք է մոռացության մատնել այն հիմնարար կանխադրույթը, որ օրենքներում օգտագործվող առանձին հասկացություններ չեն կարող ինքնաբավ լինել և դրանց բովանդակությունը, բնորոշ հատկանիշների շրջանակը ճշգրտվում են ոչ միայն օրինաստեղծ գործունեության արդյունքում, այլև դատական պրակտիկայում:

Վերոգրյալ դատողությունների լույսի ներքո՝ հետաքրքրական է ՀՀ վճռաբեկ դատարանի հետևյալ իրավական դիրքորոշումը. «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.32-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված նոր երևան եկած հանգամանքները գործի լուծման պահին արդեն իսկ առկա, գործի լուծման համար էական նշանակություն ունեցող հանգամանքներ են, որոնք գործին մասնակցող անձանց, հետևաբար և դատարանին հայտնի չլինելու կամ ներկայացնելու անհնարինության պատճառով գործը լուծելիս հաշվի չեն առնվել»⁹¹: Այս կերպ՝ փաստորեն, ՀՀ վճռաբեկ դատարանը խնդրո առարկա հարցի կապակցությամբ նախ ընդգծել է այն, որ նոր երևան եկած հանգամանքները պետք է անհայտ լինեն նաև դատարանին, ինչպես նաև սահմանել է, որ միայն այդ դեպքում դատարանը չի կարող հաշվի առնել գործի լուծման համար էական նշանակություն ունեցող հանգամանքները:

Ասվածից հետևում է, որ նոր երևան եկած հանգամանքներին բնութագրական պարտադիր հատկանիշ է համարվում գործի քննության ժամանակ դրանց անհայտ լինելը ոչ միայն բողոք

⁹¹ Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ԵՇԳ/0611/02/09 քաղաքացիական գործով 2011 թվականի մայիսի 27-ի որոշումը:

բերած անձին, այլև դատարանին: Ընդ որում, գործի քննության ժամանակ գործի լուծման համար էական նշանակություն ունեցող հանգամանքների անհայտ մնալը կարող է պայմանավորված լինել ինչպես այդ մասին գործին մասնակցող անձանց ընդհանրապես անհայտ լինելու հանգամանքով, այնպես էլ գործին մասնակցող մեկ կամ մի քանի անձանց ոչ իրավաչափ գործողություններով, որոնք շահագրգռված են այդ հանգամանքները գործին մասնակցող մյուս անձանցից և դատարանից թաքցնելու հարցում⁹²: Այդ իսկ պատճառով առավել հիմնավոր է թվում ՔԴՕ 204.32-րդ հոդվածի 1-ին կետում խոսել ոչ թե ընդհանրապես գործին մասնակցող անձանց, այլ հենց բողոք բերած գործին մասնակցող անձին անհայտ լինելու մասին: Արդյունքում դրանով կապահովվի «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի⁹³ 45-րդ հոդվածով նախատեսված օրենսդրական տեխնիկայի այն պահանջը, որ նորմատիվ իրավական ակտում չպետք է կիրառվեն նորմեր, որոնց կատարումը անհնար է:

Հարկ է նշել, որ դատական պրակտիկայում հաճախ նոր երևան եկած հանգամանքների անհայտ լինելու հատկանիշը վերագրվում է ապացույցներին և որպես նոր երևան եկած հանգամանք են քննարկվում գործի քննության ժամանակ անհայտ մնացած, այսինքն՝ նոր ապացույցները: Այսպես, օրինակ, ՀՀ վճռաբեկ դատարանը թիվ ԵԱԲԴ/2860/02/08 քաղաքացիական գործով կայացված 27.05.2009թ. որոշմամբ նշել է. «15.05.1974 թվականի ձեռագիր կնքած առուվաճառքի պայմանագիրը և ձեռագրաբանական փորձագիտական 17.03.2009 թվականի եզրակացությունը նոր երևան եկած հանգամանք չեն, քանի որ բողոքում բացակայում է որևէ հիմնավորում վերոնշյալ պայմանագիրը կամ փորձագիտական եզրակացությունը Սիմոն

⁹² Տե՛ս **Резуненко А.Н.**, Пересмотр судебных актов, вступивших в законную силу, по вновь открывшимся обстоятельствам как стадия гражданского процесса. Дис. ... канд. юрид. наук – Волгоград, 2001, էջեր 46-47:

⁹³ Ընդունվել է 03.04.2002թ.: Տե՛ս ՀՀՊՏ 2002.05.21/15(190) Հոդ. 344:

Մանուկյանի կամքից անկախ պատճառներով ներկայացված չլինելու վերաբերյալ»: Իսկ մեկ այլ գործով ՀՀ վճռաբեկ դատարանը Երևանի քաղաքապետի 23.01.2008 թվականի գրությունը համարել է նոր երևան եկած հանգամանք այն պատճառաբանությամբ, որ դրանով նշված փաստը հայտնի չի եղել և չէր կարող հայտնի լինել և այն տվյալ գործի լուծման համար ունի էական նշանակություն⁹⁴:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ կարծում ենք, որ առանձնակի ուշադրության է արժանի հանգամանքների և ապացույցների հարաբերակցության հարցը: Հանգամանքները կամ փաստերն օբյեկտիվ իրականության երևույթներ են, որոնք գոյություն ունեն անկախ մարդու գիտակցությունից: Ի տարբերություն հանգամանքների՝ ապացույցներն օրենքով սահմանված կարգով ձեռք բերված տեղեկություններն են, որոնք ուղղակի կամ անուղղակի հաստատում են գործի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները: Դրանք՝ որպես իրադարձությունների և երևույթների մասին տեղեկություններ, իրենցից ներկայացնում են փաստերի արտացոլանքը, որոնց անմիջական ընկալումն անհնար է⁹⁵: Այդ պատճառով էլ հավաստի տեղեկությունները հանգեցնում են նրան, որ հանգամանքի ճանաչումը դառնում է իրականություն, իսկ կեղծ տեղեկությունները խոչընդոտում են նման հնարավորության իրացմանը:

Դատավարագիտության և քաղաքացիադատավարական օրենսդրության մեջ դատական ապացույց են անվանվում ոչ միայն գործի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքների մասին տեղեկությունները, այլև այդ տեղեկությունների ստացման դատավարական միջոցները (գրավոր և իրեղեն ա-

⁹⁴ Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ԵԱԴԴ/0438/02/08 քաղաքացիական գործով 2009 թվականի հունիսի 26-ի որոշումը:

⁹⁵ Տե՛ս **Баулин О.В.**, Доказательства и доказывание в гражданском судопроизводстве: учебное пособие /О.В. Баулин, Д.Г. Фильченко; под общ. ред. О.В. Баулина. - Воронеж: Изд-во Воронежского государственного университета, 2006, էջ 87:

պացույցները, վկայի ցուցմունքը և այլն): Ապացույց հասկացության բազմիմաստությունը պայմանավորված է այն դիալեկտիկական կապով, որն առկա է տեղեկության (փաստական տվյալի), այն կրող սուբյեկտի կամ իրի և դրա ստացման դատավարական եղանակների միջև: Արդյունքում գիտական միտքը դատական ապացույցի մեջ տեսնում է բովանդակության և դատավարական ձևի միասնություն, որտեղ բովանդակությունը տեղեկություններն (ապացույցներն) են, իսկ դատավարական ձևը՝ ապացուցման միջոցները⁹⁶:

Ելնելով նշվածից՝ պետք է արձանագրել, որ նոր ապացույցները գործի քննության ավարտից հետո հայտնի դարձած նոր փաստական տվյալներ, տեղեկություններ են դատարանի կողմից արդեն իսկ հետազոտված փաստերի մասին: Դրանք կարող են վկայել այն մասին, որ դատարանը սխալ է հաստատել գործի լուծման համար էական նշանակություն ունեցող այս կամ այն հանգամանքը, դա արել է ոչ բավարար պատճառաբանվածությամբ կամ այդ ապացույցների հետազոտման դեպքում դատարանի հետևություններն այլ կլինեին: Այնինչ նոր երևան եկած հանգամանքները ոչ թե նոր տեղեկություններ են գործի համար նշանակություն ունեցող հանգամանքների մասին, այլ հենց այդ հանգամանքներն են, որոնք բողոք բերած գործին մասնակցող անձին և դատարանին գործի քննության ժամանակ անհայտ լինելու հետևանքով հաշվի չեն առնվել դատական ակտը կայացնելիս:

Նոր ապացույցների և նոր երևան եկած հանգամանքների այս տարբերություններից էլ բխում է այն հետևությունը, որ նոր ապացույցները չեն կարող նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման հիմք լինել: Նման դիրքորոշումը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ նոր ապացույցների առկայությունը առավելապես կարող է վկայել դա-

⁹⁶ Տե՛ս *Պետրոսյան Ռ.Գ.*, Հայաստանի քաղաքացիական դատավարություն (իրավ. գիտ. դոկտոր, պրոֆ. Գ.Յ. Ղարախանյանի խմբագրությամբ): - Երրորդ հրատարակություն - Եր.: Երևանի համալսարանի հրատ., 2007, էջ 346:

տական սխալի մասին, ինչն ինքնին համատեղելի չէ նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման վարույթին: Ասվածը նկատի ունենալով՝ մենք չենք կիսում Մ.Ս. Ստրոգովիչի կարծիքն այն մասին, որ նոր ապացույցների և հանգամանքների հստակ տարանջատումը չունի ո՛չ տեսական, և ո՛չ էլ գործնական նշանակություն⁹⁷:

Միաժամանակ անհրաժեշտ է նկատի ունենալ, որ, այնուամենայնիվ, նոր երևան եկած հանգամանքների և նոր ապացույցների միջև որոշակի կապ առկա է: Խոսքն այն մասին է, որ նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման ժամանակ բողոք բերած անձը կրում է նոր երևան եկած հանգամանքի ապացուցման պարտականությունը, որն էլ պետք է կատարվի նոր ապացույցների ներկայացմամբ:

Այսպիսով, ՔԴՕ 204.32-րդ հոդվածի 1-ին կետում ընդգրկված առաջին խումբ հանգամանքներով դատական ակտը ենթակա է վերանայման, եթե դրանք.

- 1) գործի լուծման համար ունեն էական նշանակություն,
- 2) գործի քննության ժամանակ գոյություն են ունեցել օբյեկտիվ իրականությունում,
- 3) գործի քննության ժամանակ հայտնի չեն եղել և չէին կարող հայտնի լինել բողոք բերած գործին մասնակցող անձին,
- 4) գործի քննության ժամանակ հայտնի չեն եղել և չէին կարող հայտնի լինել գործը քննած դատարանին:

Պետք է նշել, որ դատական պրակտիկայում⁹⁸ նոր երևան եկած հանգամանքների հենց նշված խմբի լույսի ներքո են դիտարկվում մաս այն դեպքերը, երբ դատական ակտի կայացման հիմքում դրված գործարքները գործի քննության ավարտից հետո

⁹⁷ Տե՛ս *Строгович М.С.*, Проверка законности и обоснованности судебных приговоров. – М., Изд-во Академии наук СССР, 1956, էջեր 308-309:

⁹⁸ Տե՛ս, օրինակ, ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ 3-1615 (Ա) քաղաքացիական գործով 2007 թվականի դեկտեմբերի 12-ի, թիվ 3-248 (ՎԴ) քաղաքացիական գործով 2010 թվականի սեպտեմբերի 10-ի և թիվ ՎԴ/4584/05/08 վարչական գործով 2011 թվականի մայիսի 27-ի որոշումները:

ճանաչվում են անվավեր:

Հայտնի է, որ քաղաքացիական շրջանառությունում գործարքները զբաղեցնում են առանձնահատուկ տեղ: Դրանց՝ որպես իրավաբանական փաստի, լայն տարածումը և կարևոր տնտեսական նշանակությունը բացատրվում է այն իրողությամբ, որ գործարքը հանդիսանում է ամենաբազմազան քաղաքացիաիրավական հարաբերությունների առաջացման, փոփոխման կամ դադարման հիմք⁹⁹: Սակայն, որպեսզի գործարքն առաջացնի իրավական հետևանքներ, անհրաժեշտ է, որ այն համապատասխանի օրենսդրության պահանջներին, քանի որ հակառակ դեպքում նման գործարքը կհամարվի անվավեր: Ընդ որում, ինչպես բխում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի¹⁰⁰ 303-րդ հոդվածի վերլուծությունից, անվավեր գործարքները բաժանվում է վիճարկելի և առոչինչ գործարքների:

Վիճարկելի են համարվում այն գործարքները, որոնք միայն անվավեր են դառնում օրենքով նախատեսված հիմքերով դատարանի կողմից այդպիսին ճանաչվելու ուժով: Այլ կերպ ասած՝ վիճարկելի գործարքը վավեր է, այսինքն՝ առաջացնում է այն իրավական հետևանքները, որոնց համար կնքվել է մինչև այն պահը, երբ դատարանի կողմից այն կճանաչվի անվավեր: Հետևաբար, եթե շահագրգիռ անձը վիճարկելի գործարքն անվավեր ճանաչելու պահանջով դատարան չդիմի, այն կշարունակի համարվել վավեր՝ անկախ դրանում առկա թերություններից: Այդ պատճառով էլ վիճարկելի գործարքների կապակցությամբ քաղաքացիական իրավունքի գիտության մեջ օգտագործվում է նաև «հարաբերական անվավերություն» եզրույթը¹⁰¹:

⁹⁹ Տե՛ս *Բարսեղյան Տ.Կ.*, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք: Առաջին մաս. (երրորդ հրատարակություն) - Երևանի պետ. համալս. - Եր.: Երևանի համալս. հրատ., 2006, էջ 202:

¹⁰⁰ Ընդունվել է 05.05.1998թ.: Տե՛ս ՀՀՊՏ 1998.08.10/17(50):

¹⁰¹ Տե՛ս Гражданское право. В 4 т. Т. 1: Общая часть: учеб. для студентов вузов / [Ем В.С. и др.]; отв. ред. – Е.А. Суханов. – 3-е изд., перераб и доп. – М.: Волтерс Клувер, 2010, էջ 481:

Հաշվի առնելով նշվածը՝ ակնհայտ է, որ վիճարկելի գործարքի անվավեր ճանաչումը անխուսափելիորեն հանգեցնում է կողմերի միջև առկա քաղաքացիական իրավահարաբերությունների փոփոխությանը, քանի որ այդ դեպքում բացառությամբ գործարքի անվավերության հետ կապված հետևանքների, որևէ այլ իրավաբանական հետևանքների վիճարկելի գործարքը, որպես կանոն, կնքման պահից չի առաջացնում (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 304 հոդվ., 1-ին մաս)։ Իսկ այդ հանգամանքը, այսինքն՝ գործարքի անվավեր ճանաչումը, բնականաբար, չի կարող չանդրադառնալ վիճարկելի գործարքից ծագած հարաբերությունների հիման վրա կայացված դատական ակտի վրա։

Այդուհանդերձ, վիճարկելի գործարքի անվավեր ճանաչումը ՔԴՕ 204.32-րդ հոդվածի 1-ին կետով նոր երևան եկած հանգամանք որակելն այնքան էլ հիմնավոր չի թվում։ Բանը նրանում է, որ գործի քննության ժամանակ օբյեկտիվ իրականությունում գոյություն ունենալու և դրանով պայմանավորված գործին մասնակցող անձանց և դատարանին անհայտ լինելու պայմանները վիճարկելի գործարքն անվավեր ճանաչելու հանգամանքի կապակցությամբ չեն ապահովվում դրա գործի քննությունից հետո ծագած լինելու պատճառաբանությամբ։ Այլ խոսքով՝ դատական ակտի հիմքում դրված գործարքի անվավեր ճանաչելը, մեր համոզմամբ, ոչ թե նոր երևան եկած, այլ նոր հանգամանք է։

Այս առումով հիշատակման է արժանի Ռուսաստանի Դաշնության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 392-րդ հոդվածում առկա կանոնակարգումը, ըստ որի, ի թիվս այլ հանգամանքների, նոր հանգամանք է համարվում ընդհանուր իրավասության կամ արբիտրաժային դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով գործարքի անվավեր ճանաչումը, եթե դա հանգեցրել է տվյալ գործով ապօրինի կամ չհիմնավորված դատական ակտի կայացմանը¹⁰²։

¹⁰² Տե՛ս **Власов А.А.**, Гражданский процесс: учебник для бакалавров /А.А. Власов. – 4-е изд., перераб. и доп. – М.: Изд-во «Юрайт», 2012, էջ 470:

Վիճարկելի գործարքը դատարանի կողմից անվավեր կարող է ճանաչվել ինչպես կնքման պահից, այնպես էլ դրա գործողությունը կարող է դադարեցվել ապագայում: Ընդ որում, վերջին կանոնը կիրառելի է այն բացառիկ դեպքերում, երբ վիճարկելի գործարքի բովանդակությունից հետևում է, որ այն կարող է դադարեցվել ապագայում (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 304-րդ հոդվ., 3-րդ կետ): Այսպես, օրինակ, եթե պայմանագրի առարկան ծառայությունների մատուցումն է կամ գույքն այլ անձի օգտագործմանը հանձնելը, ապա գործարքը մասնակի կատարված լինելու պայմաններում երկկողմանի ռեստիտուցիան անհնար է լինում, քանի որ համապատասխան ծառայությունն արդեն սպառվել է, իսկ գույքից օգտագործման ընթացքում օգտակար հատկությունները՝ ստացվել: Այդ դեպքում դատարանը, գործարքը ճանաչելով անվավեր, դրա գործողությունը դադարեցնում է ապագայում¹⁰³:

Դա նշանակում է, որ մինչև գործարքն անվավեր ճանաչելու մասին վճիռն ուժի մեջ մտնելու պահը կողմերի ունեցած հարաբերությունների նկատմամբ կիրառելի են այն գործարքի դրույթները, որը դատարանի կողմից ճանաչվել է անվավեր: Այլ խոսքով՝ եթե կնքման պահից անվավեր ճանաչվելու դեպքում գործարքի անվավեր ճանաչելու փաստը ստանում է հետադարձ ուժ, ապա այս դեպքում գործարքն ինչպես դրա կնքման պահին, այնպես հետագայում՝ գործի քննության ժամանակ, համարվում է գործող: Հետևաբար, կարելի է եզրակացնել, որ գործարքի գործողությունն ապագայում դադարեցվելու դեպքում այդ հանգամանքը որևէ ազդեցություն չի կարող ունենալ այդ գործարքի հիման վրա նախկինում կայացված դատական ակտի վրա և չպետք է հիմք հանդիսանա այն որևէ վարույթի շրջանակներում վերանայելու համար:

¹⁰³ Стів Гражданское право: учеб.: в 3 т. Т. 1. / *Е.Н. Абрамова, Н.Н. Аверченко, Ю.В. Байгушева* [и др.]; под ред. *А.П. Сергеева*. – М.: РФ-Пресс, 2009, էջեր 489-490:

Ինչպես նշվեց, անվավեր գործարքների երկրորդ խումբն են կազմում առոչինչ գործարքները: Գործարքի առոչնչությունը նշանակում է դրա բացարձակ անվավերություն, որը հետևանք է գործող օրենսդրության պահանջների կոպիտ խախտման¹⁰⁴: Դրանով է պայմանավորված այն իրողությունը, որ օրենսդիրն առոչինչ գործարքներն անվավեր է համարում անկախ նման ճանաչումից: Այդ իսկ պատճառով այն դեպքում, երբ դատական ակտը հիմնվել է այդպիսի գործարքի վրա, ապա նույնիսկ այլ դատական ակտով այդ փաստի հաստատումը, մեր կարծիքով, չպետք է հիմք հանդիսանա համապատասխան դատական ակտի վերանայման համար: Նման պայմաններում ավելի ճիշտ է խոսել դատարանի կողմից թույլ տրված դատական սխալի մասին, քանի որ առոչինչ, այսինքն՝ ի սկզբանե իրավաբանական հետևանքներին հանգեցնելու անընդունակ գործարքը չի կարող հիմք ծառայել կողմերի փոխհարաբերությունները հաստատելու համար:

Այսպիսով, գործարքի անվավեր ճանաչման հիմքով դատական ակտերի վերանայման ճիշտ պրակտիկա ձևավորելու նկատառումից ելնելով՝ արդարացված է թվում ՔԴՕ նոր հանգամանքների շարքում նախատեսել դրույթ այն մասին, որ դատական ակտը նոր հանգամանքներով վերանայման ենթակա է մաս այն դեպքում, եթե դատարանի օրինական ուժի մեջ մտած դատական ակտով կնքման պահից անվավեր է ճանաչվել այն գործարքը, որը հիմք է ծառայել տվյալ դատական ակտը կայացնելու համար:

ՔԴՕ 204.32-րդ հոդվածի 1-ին կետում նախատեսված նոր երևան եկած հանգամանքների երկրորդ խումբը, ինչպես վերը նշվեց, կազմում են գործի լուծման համար էական նշանակություն ունեցող այն հանգամանքները, որոնք հայտնի են եղել գոր-

¹⁰⁴ См. Комментарий к Гражданскому кодексу Российской Федерации. В 2 т. Т. 1. Части первая, вторая ГК РФ / под ред. **Т.Е. Абовой, А.Ю. Кабалкина**; Ин-т государства и права РАН. – 2-е изд., перераб. и доп. – М.: Изд-во «Юрайт», 2009, էջ 202:

ծին մասնակցող անձանց, բայց նրանցից անկախ պատճառներով չեն ներկայացվել դատարան: Այսինքն՝ այս խմբում ընդգրկված հանգամանքները նախորդից տարբերվում են միայն այն հատկանիշով, որ դրանք գործը լուծելիս հաշվի չեն առնվել ոչ թե բողոք բերած գործին մասնակցող անձին անհայտ լինելու, այլ նրա կողմից ներկայացնելու անհնարինության պատճառով: Յետևաբար, դրանց էությունը ճիշտ ըմբռնելու համար անհրաժեշտ է անդրադառնալ միայն այս հատկանիշի վերլուծությանը, քանի որ մյուսների վերաբերյալ արտահայտված տեսակետները հավասարապես կիրառելի են նաև տվյալ դեպքում:

Խնդրո առարկա հարցի վերաբերյալ առկա իրավակարգավորումից բխում է, որ գործի լուծման համար էական նշանակություն ունեցող հանգամանքները կարող են համարվել նոր երևան եկած, եթե գործին մասնակցող անձի կողմից դրանց չվկայակոչումը պայմանավորված է եղել օբյեկտիվ պատճառներով: Այլ կերպ ասած՝ տվյալ դեպքում օրենսդիրը հանգամանքի նոր երևան եկած լինելու հնարավորությունը ուղղակի կախվածության մեջ է դրել գործին մասնակցող անձանց՝ իրենց պահանջների և առարկությունների հիմքում որոշակի փաստական հանգամանքներ դնելու պարտականության չկատարման պատճառներից:

Պահանջների և առարկությունների հիմքում որոշակի փաստական հանգամանքներ դնելու պարտականությունը (փաստատման ծանրությունը) բխում է ՔԴՕ 48-րդ, 87-րդ, 95-րդ և մի շարք այլ դրույթներից¹⁰⁵:

ՔԴՕ 87-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հայցվորը պարտավոր է, ի թիվս այլնի, հայցադիմումում նշել ոչ միայն իր պահանջները, այլև այն հանգամանքները, որոնց վրա հիմնվում են հայցապահանջները: Նշված պահանջները վերաբերում են

¹⁰⁵ Տե՛ս *Սեդոյան Ա.Գ.*, Ապացուցումը Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարությունում: Դասախոսություններ: Երևանի պետ. համալսարան: Եր., 2011, էջեր 74-75:

նաև հակընդդեմ հայցվորի և վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ ներկայացնող երրորդ անձի կողմից հայցի հարուցման դեպքերին: Դատավարական օրենսդրությունը սահմանում է նաև հայցադիմումի պատասխանին ներկայացվող պահանջները, որոնցից մեկն էլ պատասխանողի կողմից իր դիրքորոշման հիմքում ընկած հանգամանքների մասին նշելու պարտականությունն է, եթե վերջինս մասնակի կամ ամբողջությամբ առարկում է հայցվորի պահանջի դեմ (ՔԴՕ 95-րդ հոդվ., մաս 2):

Հայցադիմումին և հայցադիմումի պատասխանին ներկայացվող նշված պահանջների վերլուծությունը վկայում է, որ կողմերը կրում են հայցի առարկայի և դրա փաստական հիմքի վերաբերյալ դիրքորոշում արտահայտելու պարտականություն ¹⁰⁶ : Հենց այդ դիրքորոշումներն էլ յուրաքանչյուր գործով ունեն սկզբունքային նշանակություն, քանի որ գործի լուծման համար էական նշանակություն ունեցող ապացուցման ենթակա փաստերի շրջանակի սահմանումն անմիջական կախվածության մեջ է մտնում գործին մասնակցող անձանց վկայակոչած փաստերի վերաբերյալ մյուս կողմի ներկայացրած առարկություններից: Ընդ որում, ինչպես բխում է ՔԴՕ 48-րդ հոդվածի 2-րդ մասի և 149⁸-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետի համադրումից, գործին մասնակցող անձինք իրենց պահանջների և առարկությունների հիմքում որոշակի փաստական հանգամանքներ դնելու պարտականությունը պետք է կատարեն մինչև դատարանի կողմից ապացուցման առարկան որոշելը:

Վերոգրյալ դատողությունների լույսի ներքո՝ գտնում ենք, որ գործնականում անհնար են թվում այնպիսի իրավիճակները, երբ գործին մասնակցող անձն իրենից անկախ պատճառներով զրկված լինի որոշակի հանգամանքներ դատարանին հայտնելու հնարավորությունից: Թերևս նման վերացական հնարավորության մասին կարելի է խոսել այն բացառիկ դեպքերում, երբ գոր-

¹⁰⁶ Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի 2011 թվականի դեկտեմբերի 11-ի թիվ ՍԴՈ-1004 որոշումը (ՀՀՊՏ 2011.12.14/66(869).1 Հոդ. 1645.4):

ծին մասնակցող անձը ֆիզիկապես չի կարողացել կատարել որևէ գործողություն: Սակայն նման պայմաններում էլ կվերանանոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման անհրաժեշտությունը, քանի որ առնվազն վրա կհասնի դատարանի կողմից գործին մասնակցող անձին դատական նիստի ժամանակի և վայրի մասին ծանուցման դատավարական պարտականության խախտման փաստը, ինչը ՔԴՕ 228-րդ հոդվածի իմաստով արդեն իսկ դատական ակտի անվերապահ բեկանման հիմք է:

Այս կապակցությամբ ուշադրության է արժանի նաև այն հանգամանքը, որ օրենսդիրը ՔԴՕ 204.32-րդ հոդվածի 1-ին կետում խոսում է ոչ թե գործի լուծման համար էական նշանակություն ունեցող հանգամանքները գործին մասնակցող անձի կամքից անկախ պատճառներով չվկայակոչելու, այլ չներկայացնելու մասին: Այնինչ հայտնի է, որ ներկայացվել կամ չներկայացվել կարող են միայն ապացույցները (ՔԴՕ 28-րդ հոդվ. 1-ին մասի 3-րդ կետ, 49-րդ հոդվ. 1-ին մաս և այլն), իսկ հանգամանքները ոչ թե ներկայացվում, այլ վկայակոչվում են (ՔԴՕ 48-րդ հոդվ., 1-ին): Այս պարզ իրողությունը հաշվի չառնելու հետևանքով օրենսդրական առկա իրավակարգավորումը բավարար նախադրյալներ է պարունակում «հանգամանք վկայակոչելու» և «ապացույց ներկայացնելու» դատավարական տարբեր բովանդակություն և արժեք ներկայացնող գործողությունները միմյանց միախառնելու համար:

Ասվածի մասին է վկայում նաև քննարկվող դրույթի կապակցությամբ ձևավորված իրավակիրառ պրակտիկան: Այսպես, օրինակ, ՀՀ վճռաբեկ դատարանը թիվ 3-1558 (ՎԴ) քաղաքացիական գործով 12.12.2007թ. կայացրած որոշմամբ նշել է հետևյալը. «Սույն բողոքին կից ներկայացված՝ կտակի բնօրինակի հաստատված պատճենը, այսինքն՝ Արաբկիրի նոտարական տարածքի նոտարական գրասենյակի արխիվում պահպանվող 18.04.1989 թվականի Վոլոդյա Մխիթարյանի կտակի բնօրինակ-

կը և 1989 թվականի սեղանամատյանը ... ԴԴ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ սույն գործի լուծման համար էական նշանակություն ունեցող նոր երևան եկած հանգամանքներ չեն կարող որակվել, քանի որ դրանք հայտնի են եղել գործին մասնակցող անձ Նարինե Մխիթարյանին (Գասպարյանին), և գործի քննության ընթացքում դրանց ներկայացնելը դատարան անհնար չէր»: Մեկ այլ գործի շրջանակում էլ ԴԴ բարձրագույն դատական ատյանը հայտնել է այսպիսի դիրքորոշում. «եղվարդ Շահբազյանի 25.03.2009 թվականի բացատրությունում վկայակոչված հանգամանքները հայտնի են եղել Լևոն Գրիգորյանին, և նա ապացուցել է իրենից անկախ պատճառներով դրանք դատարան չներկայացնելու փաստը: Մասնավորապես՝ տվյալ հանգամանքը հիմնավորվում է վճռաբեկ բողոքին կից ներկայացված Վարդաբլուրի գյուղապետարանի 28.04.2009 թվականի տեղեկանքով, համաձայն որի՝ եղվարդ Շահբազյանը ընտանիքով 1996 թվականից բացակայել է Հայաստանի Հանրապետությունից, և վերջինիս գտնվելու վայրը հայտնի չի եղել, ուստի դրա ներկայացումը դատարան անհնար է եղել»¹⁰⁷:

Վերոգրյալի համատեքստում կարելի է եզրակացնել, որ ՔԴՕ 204.32-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով նոր երևան եկած հանգամանքների երկրորդ խումբը գործնականում ընկալվում է ոչ թե որպես բողոք բերած անձի կանքից անկախ պատճառներով չվկայակոչված հանգամանք, այլ որպես չներկայացված ապացույց: Իսկ դրանց տարբերությունների մասին խոսվել է վերևում:

Ավելին, ՔԴՕ 219-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ, եթե առաջին ատյանի դատարանում գործի քննության ժամանակ ապացույցը չի ներկայացվել կողմերի կանքից անկախ հանգամանքներով, ապա վերաքննիչ դատարանը բեկանում է գործը և այն ուղարկում համապատասխան առաջին ատյանի դատարան՝

¹⁰⁷ Տե՛ս ԴԴ վճռաբեկ դատարանի թիվ 3-177(ՎԴ) քաղաքացիական գործով 2010 թվականի փետրվարի 5-ի որոշումը:

նոր քննության, եթե գտնում է, որ ապացույցն էական նշանակություն ունի գործի լուծման համար:

Նշված դրույթի առկայության պայմաններում նոր երևան եկած հանգամանքների քննարկվող խմբի զոյության իրավունքը խիստ վիճելի է թվում, քանի որ այն արդյունքում հանգեցնում է դատական ակտերի վերանայման տարբեր վարույթների խառնաշփոթին: Խոսքն այն մասին է, որ այդ կերպ բողոք բերած անձը հնարավորություն է ստանում իր կամքից անկախ պատճառներով չներկայացված ապացույցի հիման վրա նոր երևան եկած հանգամանքներով բողոքարկել դատական ակտն այն դեպքում, երբ դա պետք է արվեր մինչև վերանայվող դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը վերաքննության կարգով: Իսկ նման պայմաններում ակնհայտ է, որ այդպիսի վերանայումը իրենից ներկայացնում է հենց օրինական ուժի մեջ մտած դատական ակտի քողարկված բողոքարկում:

Բացի այդ, կարծում ենք, որ օրենսդրի կողմից գործին մասնակցող անձանց հայտնի և նրանցից անկախ պատճառներով դատարան չներկայացված հանգամանքները նոր երևան եկած դիտարկելը հաջողված համարվել չի կարող: Բանը նրանում է, որ «երևան գալ» բառը հայերենում օգտագործվում է «երևալ», «հայտնվել», «ասպարեզ իջնել», «հայտնաբերվել» և այլ նման իմաստներով¹⁰⁸: Հետևաբար «նոր երևան եկած» չեն կարող համարվել այն հանգամանքները, որոնք գործի սկզբնական քննության ժամանակ արդեն հայտնի են եղել գործին մասնակցող անձանց: Այլ կերպ ասած՝ այդ հանգամանքները գործին մասնակցող անձանց հայտնի լինելու ուժով որևէ ձևով չեն բավարարում նոր երևան եկած լինելու պահանջին: Այս առումով տեղին է նշել մասնագիտական գրականության մեջ առկա այն մոտեցումը, որ հանգամանքների հենց ակնհայտ լինելու հատկանիշն է գերազանցապես բնութագրում նոր երևան եկած հանգա-

¹⁰⁸ Տե՛ս *Աղայան Է.Ք.*, Արդի հայերենի բացատրական բառարան - Երևան, «Հայաստան» հրատարակչություն, 1976, էջ 342:

մանքներով դատական ակտերի վերանայման ինստիտուտը՝ որպես վերանայման բացառիկ ձև¹⁰⁹:

Հիմք ընդունելով նշվածը՝ գտնում ենք, որ նոր երևան եկած հանգամանքների նշված խումբը չպետք է նախատեսվի որպես դատական ակտերի վերանայման հիմք, քանի որ դրանք գործնականում չունեն ճիշտ կիրառություն, իսկ իրենց էությանը համատեղելի չեն «նոր երևան եկած հանգամանք» հասկացությանը: Նման եզրահանգումը պայմանավորված է նաև նրանով, որ որևէ այլ պետության դատավարական օրենսդրության մեջ ամրագրված չեն նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման նման հիմքեր: Ավելին, այն նախատեսված չի եղել նաև 1964 թվականի ՀՍՍՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում:

Ընդհանրացնելով վերոշարադրյալը՝ առաջարկում ենք ՔԴՕ 204.32-րդ հոդվածի 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1) բողոք բերած անձն ապացուցում է, որ այդ հանգամանքները գոյություն են ունեցել գործի լուծման պահին, հայտնի չեն եղել և չէին կարող հայտնի լինել բողոք բերած գործին մասնակցող անձին և դատարանին, և այդ հանգամանքները գործի լուծման համար ունեն էական նշանակություն.»:

Ենթադրվում է, որ նոր երևան եկած հանգամանքների հետազոտվող խմբի հատկանիշները հնարավորինս սպառնիչ կերպով արտացոլող նման ձևակերպումը մեծապես կնպաստի այդ հիմքով բերվող բողոքների քանակի նվազմանը, քանի որ բողոք բերելու ցանկություն ունեցող անձանց համար ի սկզբանե առավել հստակ և կանխատեսելի կլինի նման բողոքի հետագա ճակատագիրը: Իսկ այդ հանգամանքը կարող է հանգեցնել նոր

¹⁰⁹ Տե՛ս **Ахмедов С.М.**, Производство по пересмотру судебных актов по вновь открывшимся обстоятельствам в системе пересмотра судебных актов в арбитражном процессе. Дис. ... канд. юрид. наук – Москва, 2008, էջ 85:

երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման իրավասություն ունեցող դատարանների ծանրաբեռնվածության թեթևացմանը:

Նոր երևան եկած հանգամանքների հաջորդ խմբին են դասվում դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով հաստատված՝ վկայի ակնհայտ կեղծ ցուցմունքները, փորձագետի ակնհայտ կեղծ եզրակացությունը, թարգմանչի ակնհայտ սխալ թարգմանությունը, փաստաթղթերի կամ իրեղեն ապացույցների կեղծված լինելը, որոնք հանգեցրել են ապօրինի կամ չհիմնավորված դատական ակտ կայացնելուն (ՔԴՕ 204.32-րդ հոդվ., 2-րդ կետ): Այս հանգամանքները, ի տարբերություն նախորդների, ունեն այն առանձնահատկությունը, որ դրանք չեն մտնում ապացուցման առարկայի կազմի մեջ և չեն հանդիսանում ապացուցման ենթակա փաստեր¹¹⁰:

Քանի որ տվյալ պարագայում հանգամանքի նոր երևան եկած լինելու հնարավորությունն օրենսդիրը ուղղակիորեն կապում է ապացուցման միայն որոշակի միջոցների կեղծման հետ, ապա դա նշանակում է, որ ապացույցների կեղծված լինելու փաստը ոչ միշտ կարող է հիմք հանդիսանալ դատական ակտի վերանայման համար: Խոսքն այն մասին է, որ գործին մասնակցող անձը ևս կարող է քրեական պատասխանատվության ենթարկվել սուտ ցուցմունք տալու համար, որպիսի փաստը, սակայն, ՔԴՕ 204.32-րդ հոդվածի 2-րդ կետի իմաստով նոր երևան եկած հանգամանք չէ:

Նշված խմբում ընդգրկված նոր երևան եկած հանգամանքներին բնութագրական է այն հանգամանքը, որ դրանք պետք է հաստատված լինեն օրինական ուժի մեջ մտած դատավճռով: Միևնույն ժամանակ, ուշադրության է արժանի մասնագիտական գրականության մեջ հանդիպող այն տեսակետը, ըստ որի՝

¹¹⁰ Տե՛ս **Резуненко А.Н.**, Пересмотр судебных актов, вступивших в законную силу, по вновь открывшимся обстоятельствам как стадия гражданского процесса. Дис. ... канд. юрид. наук – Волгоград, 2001, էջ 62:

այս հիմքով դատական ակտերի վերանայման համար անհրաժեշտ է նաև վկայի, փորձագետի կամ թարգմանչի մեղավորության հաստատված լինելը համապատասխանաբար սուտ ցուցմունք տալու, ակնհայտ կեղծ եզրակացություն տալու կամ ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու մեջ¹¹¹: Խնդիրը նրանում է, որ արդարադատության դեմ ուղղված այս հանցագործությունները կարող են կատարվել ոչ միայն վկայի, փորձագետի, թարգմանչի, այլև քաղաքացիական գործով որևէ դատավարական կարգավիճակ չունեցող անձի կողմից: Օրինակ, ՀՀ քրեական օրենսգրքի¹¹² 340-րդ հոդվածը քրեական պատասխանատվություն է նախատեսում սուտ ցուցմունք, կեղծ եզրակացություն տալու կամ սխալ թարգմանություն կատարելու համար կաշառելու կամ հարկադրելու համար: Իսկ այդ դեպքում ապացույցների կեղծման կամ սխալ թարգմանության մեջ մեղավոր կարող են ճանաչվել այլ անձինք: Հետևաբար, առավել ընդունելի է Ա.Բ. Բորիսովի կարծիքն այն մասին, որ տվյալ դեպքում բավարար է միայն ապացույցների կեղծման (սխալ թարգմանության) փաստի հաստատումը դատավճռով¹¹³:

Դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով հաստատված ապացույցների կեղծման կամ սխալ թարգմանության փաստը կարող է նոր երևան եկած հանգամանք համարվել միայն այն դեպքում, երբ այն հանգեցրել է չհիմնավորված, իսկ դրա հետևանքով նաև ապօրինի դատական ակտի կայացմանը: Դա նշանակում է, որ կեղծված ապացույցը պետք է վերաբերի գործի լուծման համար էական նշանակություն ունեցող հանգամանքներին, իսկ թարգմանությունը՝ տեղեկություններ պարունակի այդպիսի հանգամանքների մասին:

¹¹¹ Տե՛ս **Воложанин В.П. и др.**, Советский гражданский процесс. - М., Изд-во «Юрид. С 56 лит.», 1978, էջ 338:

¹¹² Ընդունվել է 18.04.2003թ.: Տե՛ս ՀՀՊՏ 2003.05.02/25(260) Հոդ. 407:

¹¹³ Տե՛ս **Борисов А.Б.**, Комментарий к гражданскому процессуальному кодексу РФ (постатейный). – М.: Книжный мир, 2009, էջ 493:

Վկայի կողմից սուտ ցուցմունք տալը¹¹⁴ դրսևորվում է գործի քննության ժամանակ իրականությանը չհամապատասխանող տեղեկություններ հաղորդելու մեջ, որոնք պետք է վերաբերեն կոնկրետ գործով ապացուցման ենթակա հանգամանքներին: Այն առկա է ինչպես այն դեպքում, երբ իրականությանը չհամապատասխանող տեղեկություն է տրվում իրականում գոյություն չունեցող հանգամանքների մասին, այնպես էլ այն դեպքում, երբ իրականում գոյություն ունեցող հանգամանքները խեղաթյուրվում են¹¹⁵: Այսինքն՝ սուտ ցուցմունք պետք է համարել գործով փաստական հանգամանքների մասին վկայի հայտնած սխալ տեղեկությունները և ոչ թե դրանց մասին նրա կարծիքները: Իսկ այն դեպքում, երբ հարցաքննության կանչված վկան լռում է գործի լուծման համար էական նշանակություն ունեցող հանգամանքների մասին, ապա պետք է խոսել ոչ թե սուտ ցուցմունք տալու, այլ ցուցմունք տալուց հրաժարվելու մասին:

Փորձագետի կողմից ակնհայտ կեղծ եզրակացություն տալը կարող է դրսևորվել փորձագետի կողմից նյութերի՝ փաստաթղթերի, իրեղեն ապացույցների հետազոտման արդյունքում ակնհայտ սխալ եզրահանգումների գալու, փորձաքննության ժամանակ բացահայտված փաստերի խեղաթյուրման, դրանց մասին լռելու կամ հետազոտման սխալ մեթոդների կիրառման մեջ: Իսկ թարգմանչի կողմից ակնհայտ սխալ թարգմանությունը կարող է արտահայտվել գործի նյութերի, վկայի և գործին մասնակցող անձանց ցուցմունքների, փորձագետի բացատրության, դա-

¹¹⁴ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածը քրեական պատասխանատվություն է նախատեսում վկայի կողմից սուտ ցուցմունք տալու համար, սակայն անհասկանալի պատճառներով օրենսդրի կողմից ՔԴՕ 204.32-րդ հոդվածի 2-րդ կետում խոսվում է վկայի ոչ թե սուտ, այլ ակնհայտ կեղծ ցուցմունքների մասին:

¹¹⁵ Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Հատուկ մաս (երկրորդ հրատարակություն՝ փոփոխություններով և լրացումներով). *Ս. Առաքելյան, Ա. Գաբրիելյան, Դ. Խաչիկյան, Գ. Ղազինյան, Ն. Մաղաքյան, Ա. Մարգարյան, Տ. Սիմոնյան, Վ. Քոչարյան*. - Երևանի պետ. համալս. - Եր.: Երևանի համալս. հրատ., 2006, էջ 906:

տաքննության ժամանակ կողմերի ճառերի սխալ և խեղաթյուրված ներկայացմամբ¹¹⁶:

Միաժամանակ, պետք է նշել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ վկայի կողմից սուտ ցուցմունք տալու, փորձագետի կողմից ակնհայտ կեղծ եզրակացություն տալու և թարգմանչի կողմից ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար անձը ենթակա չէ քրեական պատասխանատվության, եթե իր արարքը նշանակություն չէր կարող ունենալ գործի լուծման համար կամ նա նախնական քննության կամ դատական քննության ընթացքում մինչև դատարանի կողմից դատավճիռ կամ որոշում կայացնելը կամովին հայտնել է իր տված սուտ ցուցմունքի, կեղծ եզրակացության կամ սխալ թարգմանության մասին:

Վերոգրյալի կապակցությամբ ուշագրավ է ՀՀ վճռաբեկ դատարանի մոտեցումը, որը, ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի 3-րդ մասի լույսի ներքո անդրադառնալով սուտ ցուցմունք տալու հանցակազմի վերլուծությանը, գտել է, որ.

ա) սուտ ցուցմունք տալու հանցակազմի պարտադիր տարր է հանդիսանում անձի կողմից տված ցուցմունքի՝ հիմնական գործի ճիշտ լուծման համար նշանակություն ունենալու հանգամանքը, որը, անհերքելիորեն, կարող է պարզաբանվել միայն հիմնական գործով ձեռք բերված ապացույցների հետազոտմամբ և զնահատմամբ,

բ) հիմնական գործի քննության ընթացքում, ընդհուպ մինչև դատարանի կողմից վերջնական դատական ակտ կայացնելը, անձը հնարավորություն ունի հարցաքննվելու և այլ ցուցմունք տալու, կամ կարող է հայտնել իր տված ցուցմունքի սուտ լինելու մասին¹¹⁷:

¹¹⁶ Տե՛ս **Алиев Т.Т.**, Производство по пересмотру судебных постановлений ввиду вновь открывшихся обстоятельств в гражданском судопроизводстве: теоретические и практические аспекты, перспективы развития. Дис. ... док. юрид. наук - Саратов, 2005, էջ 244:

¹¹⁷ Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ LԴ/0301/01/09 քրեական գործով 2010 թվականի օգոստոսի 27-ի որոշումը:

Նկատի ունենալով, որ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի 3-րդ մասը վերաբերում է նաև ակնհայտ կեղծ եզրակացություն տալու և ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու հանցակազմերին՝ գտնում ենք, որ ՀՀ վճռաբեկ դատարանի այս դիրքորոշումը հավասարապես կիրառելի է նաև դրանց կապակցությամբ: Հետևաբար, այն բոլոր դեպքերում, երբ դատավճռով հաստատված է սուտ ցուցմունք տալու, ակնհայտ կեղծ եզրակացություն տալու կամ ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու հանգամանքները, ապա կարելի է խոսել այն մասին, որ այդ ցուցմունքը, եզրակացությունը կամ թարգմանությունը հանգեցրել է հիմնական գործով չհիմնավորված դատական ակտի կայացմանը, քանի որ ունեցել է էական նշանակություն տվյալ գործի ճիշտ լուծման համար:

ՔԴՕ 204.32-րդ հոդվածի 2-րդ կետում նախատեսված մյուս նոր երևան եկած հանգամանքներն են փաստաթղթերի կամ իրեղեն ապացույցների կեղծված լինելը: Ապացույցների կեղծումը կարող է դրսևորվել իրական ապացույցները կեղծ, իրականությանը չհամապատասխանող ապացույցներով փոխարինելու մեջ, որը կատարվում է կամ նոր ապացույցի ստեղծմամբ, կամ իրական ապացույցը փոփոխությունների ենթարկելով¹¹⁸:

Ի տարբերություն վկայի սուտ ցուցմունքի, փորձագետի ակնհայտ կեղծ եզրակացության և թարգմանչի ակնհայտ սխալ թարգմանության, փաստաթղթերի և իրեղեն ապացույցների կեղծված լինելը միշտ չէ, որ կարող է էական նշանակություն ունենալ գործի լուծման համար և հանգեցնել չհիմնավորված կամ ապօրինի դատական ակտի կայացմանը: Ըստ որում, եթե կեղծված ապացույցով հաստատվող հանգամանքը գործի լուծման համար էական նշանակություն չունի, ապա դրա կեղծված լինե-

¹¹⁸ Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Հատուկ մաս (երկրորդ հրատարակություն՝ փոփոխություններով և լրացումներով). *Մ. Առաքելյան, Ա. Գաբուզյան, Դ. Խաչիկյան, Գ. Ղազինյան, Ն. Մաղաքյան, Ա. Մարգարյան, Տ. Սիմոնյան, Վ. Քոչարյան.* - Երևանի պետ. համալս. - Եր.: Երևանի համալս. իրատ., 2006, էջեր 899-900:

լու հանգամանքը ՔԴՕ 204.32-րդ հոդվածի 2-րդ կետի իմաստով չի կարող համարվել նոր երևան եկած: Նույն կերպ դատական ակտի վերանայման հիմք չի կարող լինել օրինական ուժի մեջ մտած դատավճռով հաստատված գործում առկա որևէ ապացույցի կեղծված լինելը, եթե դատական ակտի հիմքում դրված հանգամանքները հաստատված են համարվել նաև այլ, լավորակ ապացույցների հիման վրա¹¹⁹:

Իսկ այն դեպքում, երբ դատավճռով հաստատված է գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստը հաստատող միակ ապացույցի կեղծված լինելը, ապա այդ դեպքում նշված հանգամանքը միարժեքորեն պետք է դիտարկել որպես նոր երևան եկած: Նշված մոտեցումն, ըստ էության, տեղ է գտել նաև իրավակիրառ պրակտիկայում: Մասնավորապես, ՀՀ վճռաբեկ դատարանը գործերից մեկի շրջանակում նշել է հետևյալը. «ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարանի՝ թիվ ԱՐԴ-0080/01/09 քրեական գործով օրինական ուժի մեջ մտած 07.08.2009 թվականի դատավճռով հաստատված հանգամանքները ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.32-րդ հոդվածով սահմանված նոր երևան եկած հանգամանք են, քանի որ նշված դատավճռով հաստատված է համարվել «Համայնքի ղեկավարի կողմից 05.06.2000 թվականին տրված Համայնքի տնտեսական թիվ 3 գրքից՝ գրանցման համար՝ 228, քաղվածք»-ի կեղծված լինելու հանգամանքը, իսկ նշված քաղվածքը դրվել է Դատարանի 30.04.2009 թվականի վճռի, ապա նաև Վճռաբեկ դատարանի 08.07.2009 թվականի «Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին» որոշման կայացման հիմքում»¹²⁰:

Միաժամանակ, ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ ՔԴՕ 204.32-րդ հոդվածի 2-րդ կետում խոսք է գնում ոչ թե ընդհանրապես գրավոր ապացույցների, այլ միայն փաստաթղթերի

¹¹⁹ Տե՛ս Советский гражданский процесс: Учебник / Под ред. **М.К. Треушников**. – М.: Изд-во МГУ, 1989, էջ 346:

¹²⁰ Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ՎԴ/0196/05/08 վարչական գործով 2010 թվականի հուլիսի 30-ի որոշումը:

կեղծված լինելու մասին:

Բանը նրանում է, որ «փաստաթուղթ» հասկացությունը ունի ավելի նեղ բովանդակություն, քան «գրավոր ապացույց» հասկացությունն է: Մասնավորապես, ՔԴՕ 54-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գրավոր ապացույցներ են գործի համար նշանակություն ունեցող հանգամանքների մասին տեղեկություններ պարունակող ակտերը, պայմանագրերը, տեղեկանքները, գործարար թղթակցությունը, այլ փաստաթղթերը և նյութերը, այդ թվում՝ էլեկտրոնային կամ կապի այլ միջոցով կամ փաստաթղթերի իսկությունը հաստատելու հնարավորություն ընձեռող այլ եղանակով ստացված ապացույցները: Այսինքն՝ գրավոր ապացույցների թվին են դասվում ոչ միայն փաստաթղթերը, այլև գործի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքների մասին տեղեկություններ պարունակող այլ նյութերը:

Այդ իսկ պատճառով ՔԴՕ 204.32-րդ հոդվածի 2-րդ կետի տառացի մեկնաբանությունից կարող է ստացվել, որ այս հիմքով դատական ակտը կարող է վերանայվել միայն փաստաթղթի կեղծված լինելու դեպքում, իսկ գործի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքների մասին տեղեկություններ պարունակող այլ նյութերի (քար, ապակի, կաշի, գործվածքեղեն և այլն) կեղծված լինելու հանգամանքը օրինական ուժի մեջ մտած դատական ակտի վերանայման առումով որևէ նշանակություն չի կարող ունենալ: Հետևաբար, մնան դեպքերը բացառելու համար, մեր կարծիքով, անհրաժեշտ է քննարկվող դրույթում օգտագործել հենց «գրավոր ապացույց» բառակապակցությունը:

Այսպիսով, վկայի սուտ ցուցմունքները, փորձագետի ակնհայտ կեղծ եզրակացությունը, թարգմանչի ակնհայտ սխալ թարգմանությունը, գրավոր կամ իրեղեն ապացույցների կեղծված լինելը հիմք կարող են հանդիսանալ դատական ակտը նոր երևան եկած հանգամանքներով վերանայելու համար, եթե.

1) կեղծված ապացույցները կամ ակնհայտ սխալ թարգմանությունը դրվել է դատական ակտի հիմքում, այսինքն՝ դրանցով

հաստատվող փաստերը գործի լուծման համար ունեն էական նշանակություն,

2) ապացույցների կեղծված լինելու կամ ակնհայտ սխալ թարգմանության փաստերը հաստատված են դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

Քաղաքացիական դատավարությունում օրինականության սկզբունքը կարող է խախտվել ոչ միայն դատական ակտերի հիմքում անթույլատրելի ապացույցներ դնելու, այլև դատավարության սուբյեկտների կողմից այլ հակաիրավական վարքագիծ դրսևորելու հետևանքով: Այդ իսկ պատճառով ՔԴՕ 204.32-րդ հոդվածի 3-րդ կետը նոր երևան եկած հանգամանքների առանձին խումբ է դիտարկում դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով հաստատված հանցավոր արարքները, որոնք գործի քննության հետ կապված կատարվել են գործին մասնակցող անձանց, նրանց ներկայացուցիչների կամ դատավորի կողմից:

Այս խմբում ընդգրկված հանգամանքները նախորդներից տարբերվում են ամենից առաջ իրենց սուբյեկտային կազմով: Այսինքն՝ եթե նախորդ խմբում ընդգրկված հանցավոր արարք կատարողների շրջանակը սահմանափակված չէ, ապա տվյալ դեպքում որպես այդպիսին կարող են հանդես գալ միայն գործին մասնակցող անձինք, նրանց ներկայացուցիչները և դատավորը: Այլ կերպ ասած՝ օրենսդիրը, առաջնորդվելով հանցագործության հատուկ սուբյեկտի սահմանման գաղափարով, սահմանափակել է այն անձանց շրջանակը, որոնց հանցավոր արարքները կարող են հանգեցնել նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայմանը:

Վերոգրյալի համատեքստում ուշադրության է արժանի այն հարցի պարզաբանումը, թե նոր երևան եկած հանգամանքների որ հիմքով պետք է ղեկավարվել այն իրավիճակներում, երբ բացահայտված հանգամանքները (մարդկանց գործողությունները) համապատասխանում են և՛ ՔԴՕ 204.32-րդ հոդվածի 2-րդ կետի, և՛ ՔԴՕ 204.32-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներին: Ասվածի օրինակ կարող է հանդիսանալ գործին մասնակցող անձի կամ

նրա ներկայացուցչի կողմից ապացույց կեղծելու հանգամանքը (ՀՀ քրեական օրենսգրքի 349-րդ հոդվ., 1-ին մաս): Տվյալ դեպքում, կարծում ենք, որ այդ հանգամանքը պետք է դիտարկվի հենց ՔԴՕ 204.32-րդ հոդվածի 3-րդ կետի լույսի ներքո, քանի որ այն կատարվել է այդ դրույթում նախատեսված սուբյեկտի կողմից: Նշվածը բխում է նաև հանրաճանաչ այն սկզբունքից, համաձայն որի՝ «հատուկ օրենքը վերացնում է ընդհանուրի գործողությունը» (lex specialis derogat legi generali): Այս առումով հարկ է նշել, որ բարձրացված խնդրի նման կարգավորման օգտին է արտահայտվել նաև Տ.Տ. Ալիևը¹²¹:

Նոր երևան եկած հանգամանքների այս խմբին վերագրվող մյուս առանձնահատկությունը դրսևորվում է նրանում, որ գործին մասնակցող անձանց, նրանց ներկայացուցիչների և դատավորի կողմից հանցավոր արարքների կատարումը պետք է կապված լինի գործի քննության հետ: Ասվածից հետևում է, որ այս հիմքով դատական ակտը չի կարող վերանայվել այն դեպքում, երբ նշված անձանց կողմից կատարված հանցագործությունները կապված են այլ գործի հետ, եթե նույնիսկ այդ երկու գործերը նույնանման են:

Միննույն ժամանակ, «գործի քննության հետ կապված» արտահայտությունը չի կարող մեկնաբանվել այնպես, որ գործին մասնակցող անձանց, նրանց ներկայացուցիչների կամ դատավորի կողմից հանցավոր արարքները պետք է կատարված լինեն գործի քննության, այսինքն՝ դատական միտի ժամանակ: Դրանք կարող են կատարվել նաև մինչև գործի քննությունը, նույնիսկ մինչև գործի հարուցումը¹²²: Նման իրավիճակ հնարավոր է, օրինակ, կաշառք տալու հանցակազմի դեպքում: Այլ խոս-

¹²¹ Տե՛ս **Алиев Т.Т.**, Производство по пересмотру судебных постановлений ввиду вновь открывшихся обстоятельств в гражданском судопроизводстве: теоретические и практические аспекты, перспективы развития. Дис. ... док. юрид. наук - Саратов, 2005, էջ 249:

¹²² Տե՛ս **Резуененко А.Н.**, Пересмотр судебных актов, вступивших в законную силу, по вновь открывшимся обстоятельствам как стадия гражданского процесса. Дис. ... канд. юрид. наук – Волгоград, 2001, էջ 67:

քով՝ գտնում ենք, որ գործին մասնակցող անձանց, նրանց ներկայացուցիչների կամ դատավորի կողմից կատարված հանցավոր արարքների գործի քննության հետ կապը պետք է որոշել ոչ թե այդ արարքների կատարման ժամանակի, այլ դրանց հետապնդած նպատակի տեսանկյունից:

Սակայն պետք է նշել, որ գործի քննության հետ կապված ցանկացած հանցանք չէ, որ կարող է հիմք հանդիսանալ նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտը վերանայելու համար: Մասնավորապես, գործի քննության հետ կապված հանցավոր արարքների շարքին է դասվում դատավորի կողմից շահադիտական կամ այլ անձնական դրդումներով դատական ակտ կայացնելը, որի համար քրեական պատասխանատվությունը նախատեսված է ՀՀ քրեական օրենսգրքի 352-րդ հոդվածով: Ընդ որում, նշված արարքի համար քրեական հետապնդման հարուցումը օրենսդիրը կապել է վերադաս դատական ատյանի կողմից այդ ակտի բեկանման հանգամանքի հետ (ՀՀ դատական օրենսգրքի 13-րդ հոդվ., 6-րդ մաս), որը պայմանավորված է դատավորի անձեռնմխելիության լրացուցիչ երաշխիքներ սահմանելու անհրաժեշտությունից: Այդ իսկ պատճառով դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով այս արարքի կատարման փաստի հաստատումը չի կարող հանգեցնել ակնհայտ անարդար դատական ակտի վերանայմանը, քանի որ այն արդեն իսկ պետք է բեկանված լինի մինչև քրեական հետապնդման հարուցումը:

Լ.Պ. Սմիշլյակի և Ի.Գ. Ֆիլչենկոյի կարծիքով գործին մասնակցող անձանց, նրանց ներկայացուցիչների և դատավորի կողմից գործի քննության հետ կապված հանցավոր արարքները նոր երևան եկած հանգամանք հանդիսանալու համար պետք է կարողանան ազդել գործի ելքի վրա¹²³: Այսինքն, ըստ նրանց,

¹²³ См. *Авдюков М.Г. и др.*, Советский гражданский процесс – М., Изд-во Московского университета, 1964, էջեր 314-315, *Фильченко И.Г.*, Процессуальные гарантии принятия обоснованного судебного решения в гражданском процессе. Дис. ... канд. юрид. наук – Воронеж, 2010, էջեր 163-164:

նշված հանցանքները պետք է գործի լուծման համար ունենան էական նշանակություն: Իսկ հեղինակների մյուս մասը (Ի.Վ. Ռե- շետնիկովան, Վ.Մ. Շերստյուկը և այլք) գործին մասնակցող ան- ծանց, նրանց ներկայացուցիչների և դատավորի կողմից գործի քննության հետ կապված հանցավոր արարքները, անկախ դրանց հետևանքներից, միշտ էլ դիտարկում է որպես նոր երևան եկած հանգամանքներ¹²⁴:

Գործող օրենսդրության համատեքստում առավել հիմնավոր է թվում երկրորդ խումբ հեղինակների տեսակետը, քանի որ քննարկվող արարքները նոր երևան եկած հանգամանք որակելու կապակցությամբ օրենսդիրը, ի տարբերություն ապացույցների կեղծման կամ ակնհայտ սխալ թարգմանության հանգամանքնե- րի, որևէ վերապահում չի նախատեսել դրանց հետևանքների տեսանկյունից: Մասնագիտական գրականության մեջ այս հան- գամանքը բացատրվում է այն իրողությամբ, որ գործին մասնակ- ցող անծանց, նրանց ներկայացուցիչների և դատավորի հանցա- վոր գործողությունների դեպքում դատական ակտը՝ որպես ար- դարադատության ակտ, հեղինակագրվում է, որպիսի պայման- ներում էլ այն պետք է բեկանել և գործը քննել նորից¹²⁵:

Այնուամենայնիվ, կարծում ենք, որ նման մոտեցման հետ կարելի է համաձայնել մասնակիորեն: Իհարկե, այն դեպքում, երբ խոսքը վերաբերում է դատավորի կողմից գործի քննության հետ կապված հանցավոր արարք կատարելուն, ապա այլ իրա- վաչափ լուծում, քան կայացված դատական ակտի բեկանումն է, չի մնում: Ընդ որում, այսպիսի հնարավորության ընձեռումն ար- դարացված է թվում դատավորի կողմից գործի քննության հետ

¹²⁴ Տե՛ս, օրինակ, **Аргунов В.Н. и др.**, Научно-практический комментарий к Гражданскому процессуальному кодексу РСФСР. М.: Городец-издат, 2000, էջ 529, **Решетникова И.В.**, Доказывание в гражданском процессе: учеб.-практ. пособие. – М.: Изд-во «Юрайт», 2010, էջ 378:

¹²⁵ Տե՛ս Советский гражданский процесс: Учебник / Под ред. **К.И. Комиссарова и В.М. Семенова**. – 2-е изд., перераб. и доп. – М.: Юрид. лит., 1988, էջեր 398-399:

կապված ցանկացած հանցավոր արարքի դեպքում՝ անկախ այն հանգամանքից, թե նման արարքը տվյալ գործով կայացված դատական ակտի օրինականության և հիմնավորվածության վրա ունեցել է որևէ ազդեցություն, թե ոչ: Այլապես, եթե գործով կայացված դատական ակտի վերանայման հնարավորությունը կապվի դատավորի կողմից կատարված հանցավոր արարքի հետևանքների հետ, ապա այդպիսի կարգավորումն ինքնին կխաթարի վստահությունը արդարադատության նկատմամբ:

Հարցի այս կերպ լուծումը բխում է իրավական պետությունում դատավորի ունեցած բարձր կարգավիճակից, ով պարտավոր է իր վարքագծով ամրապնդել կողմերի, իրավաբանական հանրության և հասարակության հավատը ոչ միայն իր, այլև դատավարության և դատարանի անկախության, անկողմնակալության և արդարության հանդեպ:

Մինչդեռ գործին մասնակցող անձինք և նրանց ներկայացուցիչները քաղաքացիական դատավարությունում չունեն այն նույն դատավարական կարգավիճակը, որը բնութագրական է դատավորին՝ որպես ղեկավար և գլխավոր դեր ունեցող սուբյեկտի: Այլ խոսքով՝ եթե վերջինս կրում է քաղաքացիական գործի քննության և ճիշտ լուծման պարտականությունը, ապա գործին մասնակցող անձինք և նրանց ներկայացուցիչները դատավարությանը մասնակցում են միայն սեփական կամ իրենց վստահողների շահերի պաշտպանության անհրաժեշտությունից ելնելով:

Գործին մասնակցող անձանց, նրանց ներկայացուցիչների և դատավորի կարգավիճակների առանձնահատկություններով էլ պայմանավորված է նրանց կողմից գործի քննության հետ կապված հանցավոր արարքների տարբեր նշանակությունը տվյալ գործով կայացված դատական ակտի օրինականության և հիմնավորվածության վրա: Մասնավորապես, դատավորի կողմից նման արարքի կատարումն ինքնին բավարար է կայացված դատական ակտի ապօրինի լինելը ենթադրելու համար, քանի որ

այդ դեպքում առնվազն կարելի է պնդել դատավորի անկախության և միայն օրենքին ենթարկվելու սահմանադրական սկզբունքի խախտման մասին (ՀՀ Սահմանադրության 97-րդ հոդվ., 1-ին մաս):

Ինչ վերաբերում է գործին մասնակցող անձանց և նրանց ներկայացուցիչներին, ապա գործի քննության հետ կապված նրանց կատարած ցանկացած հանցավոր արարք չէ, որ ունենում է փաստացի ազդեցություն տվյալ գործով կայացված դատական ակտի վրա: Այսպես, օրինակ, սուտ ցուցմունք, կեղծ եզրակացություն տալու կամ սխալ թարգմանություն կատարելու նպատակով կաշառելու կամ հարկադրելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 340-րդ հոդվածով քրեական պատասխանատվության ենթարկելու համար չի պահանջվում հանցավոր անձի հետապնդած նպատակի իրագործում: Հետևաբար, գործին մասնակցող անձանց կամ նրանց ներկայացուցիչների կողմից գործի քննության հետ կապված այդպիսի արարքների կատարումը որևէ կերպ չի կարող ազդել դատական ակտի օրինականության և հիմնավորվածության վրա: Այս տեսանկյունից այնքան էլ հիմնավոր չէ Բ.Յա. Պոլոնսկիի այն պնդումը, որ գործին մասնակցող անձանց և նրանց ներկայացուցիչների կողմից հանցավոր արարքների կատարման փաստերից ածանցվում է օրինական ուժի մեջ մտած դատական ակտի ապօրինի լինելը¹²⁶:

Հինք ընդունելով վերոգրյալը՝ կարծում ենք, որ օրենսդրի կողմից տարբեր դատավարական կարգավիճակ ունեցող սուբյեկտների՝ դատավորի, գործին մասնակցող անձանց և նրանց ներկայացուցիչների կողմից կատարված հանցավոր արարքները նույն չափանիշներով նոր երևան եկած հանգամանք որակելը օբյեկտիվորեն հիմնավորված չի կարող համարվել: Նկատի ունենալով այդ հանգամանքը՝ գործին մասնակցող անձանց և նրանց ներկայացուցիչների կողմից գործի քննության հետ կապ-

¹²⁶ Ст'я Арбитражный процесс: компендиум / отв. ред. **В.В. Ярков**. – М.: Изд-во «Инфотропик Медиа», 2011, էջեր 309-310:

ված հանցավոր արարքների կատարման փաստը նոր երևան եկած հանգամանք դիտարկելու պարտադիր պայման պետք է նախատեսել նաև դրանց ազդեցությունը դատական ակտի օրինականության և հիմնավորվածության վրա:

Քննարկվող խմբում ընդգրկված հանգամանքների հետ կապված հաջորդ խնդիրը դրսևորվում է նրանում, թե արդյոք անձը կարող է գործի քննության ժամանակ կատարել հանցավոր արարք, իսկ հետագայում այն վկայակոչել որպես նոր երևան եկած:

ՔԴՕ 204.32-րդ հոդվածի վերլուծությունից հետևում է, որ այն գործին մասնակցող անձանց, նրանց ներկայացուցիչների կամ դատավորի կողմից հանցավոր արարք կատարելու փաստը նոր երևան եկած հանգամանք որակելու տեսանկյունից չի կարևորում այն հարցը, թե ում կողմից է բերվում դատական ակտը վերանայելու բողոքը: Յետևաբար, նման պայմաններում առաջադրված հարցին պետք է տալ դրական պատասխան: Այդ մասին է վկայում նաև ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ԵՔԴ/0611/02/08 քաղաքացիական գործով 2010 թվականի հոկտեմբերի 29-ի որոշումը, որով ՀՀ վճռաբեկ դատարանը, քննության առնելով պատասխանողներից մեկի վճռաբեկ բողոքը, այն հիմքով, որ տվյալ անձի կողմից սուտ ցուցմունք տալու փաստը հաստատվել է Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի՝ 26.05.2010թ. օրինական ուժի մեջ մտած դատավճռով, որոշել է վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն:

Մինչդեռ գործի քննության հետ կապված հանցավոր արարք կատարած անձին այդ հիմքով բողոք ներկայացնելու հնարավորության չսահմանափակումը ոչնչով արդարացված չի կարող համարվել: Ավելին, նման իրավիճակները հակասում են նոր երևան եկած հանգամանքների էությանը, քանի որ այդ դեպքում հանցանք կատարած անձի համար այդ հանգամանքը չի կարող համարվել նոր երևան եկած:

Ամփոփելով վերոշարադրյալ դատողությունները՝ գտնում ենք, որ ՔԴՕ 204.32-րդ հոդվածի 3-րդ կետը պետք է շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով հաստատվել է, որ բողոք բերած անձ չհանդիսացող գործին մասնակցող անձինք կամ նրանց ներկայացուցիչները կատարել են գործի քննության հետ կապված հանցավոր արարք, որը հանգեցրել է ապօրինի կամ չհիմնավորված դատական ակտ կայացնելուն, կամ գործի քննության հետ կապված հանցավոր արարքը կատարվել է դատավորի կողմից.»:

Ինչպես բխում է ՔԴՕ 204.32-րդ հոդվածից, և՛ գործին մասնակցող անձանց, նրանց ներկայացուցիչների, դատավորի կողմից գործի քննության հետ կապված հանցավոր արարքները, և՛ ապացույցների կեղծման ու ակնհայտ սխալ թարգմանության հանգամանքները նոր երևան եկած որակելու պարտադիր պայման է հանդիսանում դրանց՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով հաստատված լինելը: Օրենսդիրը նման ձևով, փաստորեն, փորձել է առավել զգույշ մոտեցում դրսևորել նոր երևան եկած հանգամանքների այս խմբերի նկատմամբ և դրանով իսկ կանխել օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի անհիմն բեկանումները:

Սակայն պետք է նկատի ունենալ, որ ոչ բոլոր դեպքերում է հնարավոր լինում հանցավոր արարքների կատարման փաստը հաստատել դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով: Բանը նրանում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը¹²⁷ նախատեսում է քրեական գործի վարույթը կամ քրեական հետապնդումը բացառող որոշակի հիմքեր, այդ թվում՝ «ոչ արդարացնող» (անցել են վաղեմության ժամկետները, անձը մահացել է, ընդունվել է համաներման ակտ և այլն), որոնց առկայության դեպքում քրեական գործի հարուցումը ենթակա է մերժման, իսկ հարուցված քրեական գործի վարույթը՝ կարճման հենց

¹²⁷ Ընդունվել է 01.07.1998թ.: Տե՛ս ՀՀԴՏ 1998.09.21/22(55):

քրեական հետապնդման մարմինների որոշմամբ:

Նշվածի համատեքստում անհասկանալի է մնում այն հարցի պատասխանը, թե ինչպես պետք է վարվել այն իրավիճակներում, երբ ՔԲՕ 204.32-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերում նախատեսված հանրորեն վտանգավոր արարքները հաստատվել են ոչ թե դատարանի դատավճռով, այլ քրեական հետապնդման մարմինների՝ դատախազի, քննիչի և հետաքննության մարմնի որոշումներով:

Հարկ է նշել, որ դատավարագիտության մեջ այս հարցի լուծման վերաբերյալ կարծիքները բավականին բազմազան են: Այդուհանդերձ, դրանց ուսումնասիրությունը թույլ է տալիս պնդելու, որ դրանք, ըստ էության, հանգում են խնդրի լուծման երեք տարբերակի:

Համաձայն առաջին մոտեցման՝ եթե ապացույցների կեղծման փաստը ինչ-ինչ պատճառներով հնարավոր չի լինում հաստատել դատարանի դատավճռով, ապա դրանց վրա հիմնված դատական ակտը ենթակա է վերանայման ոչ թե նոր երևան եկած հանգամանքներով, այլ հսկողական վարույթի կարգով¹²⁸:

Ինչպես հայտնի է, հսկողական վարույթի նպատակը դատական սխալների վերացումն է և միասնական պրակտիկայի ձևավորումը¹²⁹: Ի տարբերություն հսկողական վարույթի՝ նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայումը հանդիսանում է ոչ թե դատական սխալի վերացման, այլ արդարադատության իրականացման արդյունքում տեղ գտած թերությունները շտկելու միջոց: Իսկ այս տեսանկյունից հարցը դիտարկելիս ակնհայտ է, որ նույն հանգամանքը (ապացույցի կեղծված լինելը և այլն), միայն նրանից ելնելով, թե ինչ ակտով է հաստատված, չի կարող մի դեպքում վկայել դատական սխալի, իսկ մյուս դեպքում՝ արդարադատության իրականացման արդ-

¹²⁸ Տե՛ս, օրինակ, **Авдеенко Н.И. и др.**, Гражданский процесс – М., Изд-во «Юридическая литература», 1968, էջ 338:

¹²⁹ Տե՛ս **Никоноров С.Ю.**, Производство в порядке надзора в гражданском процессе. Дис. ... канд. юрид. наук – Москва, 2004, էջ 7:

յունքում տեղ գտած թերությունների մասին: Հետևաբար, մի պահ մոռացության մատնելով այն հանգամանքը, որ գործող քաղաքացիական դատավարական օրենսդրությամբ հսկողական վարույթը նախատեսված չէ՝ կարծում ենք, որ դրա առկայության դեպքում էլ հարցի այս կերպ լուծումը չէր բխի հսկողական վարույթի էությունից:

Հեղինակների երկրորդ խումբը տեսակետ է հայտնում այն մասին, որ ապացույցների կեղծման, ակնհայտ սխալ թարգմանության, ինչպես նաև գործին մասնակցող անձանց, նրանց ներկայացուցիչների կամ դատավորի կողմից գործի քննության հետ կապված հանցավոր արարքների կատարման փաստերը հիմք են դատական ակտը նոր երևան եկած հանգամանքներով վերանայելու համար նաև այն դեպքում, երբ դրանք հաստատվել են ոչ թե դատավճռով, այլ քրեական հետապնդման մարմինների որոշմամբ¹³⁰: Ընդ որում, այս տեսակետի որոշ կողմնակիցներ իրենց դիրքորոշումը պայմանավորում են որոշակի հանգամանքներով: Այսպես, օրինակ, Լ.Ա. Տերեխովան քրեական գործով վարույթը կարճելու որոշմամբ հաստատված հանգամանքները նոր երևան եկած որակելու համար պարտադիր պայման է համարում այդ մասին օրենքում համապատասխան լրացման կատարումը¹³¹:

Դատավարագետների երրորդ մասն էլ այն կարծիքին է, որ ապացույցների կեղծման և դատավարության սուբյեկտների հանցավոր արարքները չեն կարող հիմք հանդիսանալ դատական ակտը նոր երևան եկած հանգամանքներով վերանայելու համար, եթե դրանք հաստատված չեն դատարանի՝ օրինական

¹³⁰ Տե՛ս, օրինակ, **Анохин В.С.**, Арбитражное процессуальное право России: Учеб. для студ. высш. учеб. заведений. – М.: Гуманит. изд. центр «ВЛАДОС», 1999, էջ 419, **Мельников А.А. и др.**, Курс советского гражданского процессуального права. Том II, М., Изд-во «Наука», 1981, էջ 313:

¹³¹ Տե՛ս **Терехова Л.А.**, Право на исправление судебной ошибки как компонент судебной защиты. Дис. ... док. юрид. наук - Екатеринбург, 2008, էջ 235:

ուժի մեջ մտած դատավճռով¹³²: Այլ խոսքով՝ ըստ այս մոտեցման հեղինակների՝ քրեական հետապնդման մարմինների որոշմամբ հաստատված հանգամանքները չեն կարող նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման հիմք հանդիսանալ:

Վերը նշված երկու տեսակետներն էլ, իհարկե, առաջին հայացքից կարող են ընդունելի համարվել: Այդուհանդերձ, նախքան առաջադրված հարցի կապակցությամբ վերջնական հետևություն անելը, հարկ ենք համարում խնդիրը դիտարկել անմեղության կանխավարկածի սկզբունքի և քրեական գործի վարույթը կամ քրեական հետապնդումը բացառող «ոչ արդարացնող» հիմքերի լույսի ներքո:

ՀՀ Սահմանադրության 21-րդ հոդվածի համաձայն՝ հանցագործության համար մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ օրենքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով: Այս սկզբունքի էությունն անձի մեղքը բացառապես դատական կարգով հաստատելու երաշխավորումն է, այսինքն՝ այս սկզբունքի ուժով անձի մեղքը կարող է հաստատվել բացառապես քրեական դատավարության արդյունքում և միայն դատական ակտով: Այդ պատճառով էլ անձի մեղավորության վերաբերյալ ոչ մի հետևություն մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը իրավաբանական նշանակություն չունի¹³³:

¹³² Տե՛ս, օրինակ, Советский гражданский процесс. Учебник. Изд. 2-е, исправ. и доп. Под ред. **М.А. Гурвича**. – М., «Высш. школа», 1975, էջ 278, **Власов А.А., Власова М.Г., Черкашин В.А.**, Гражданский процесс в вопросах и ответах: Учеб. пособие / Под ред. А.А. Власова. – М.: ТК Велби, Изд-во «Проспект», 2004, էջ 311, Гражданский процесс: учеб. для студентов вузов/ [**Абушенко Д.Б. и др.**]; отв. ред. – **В.В. Ярков**. – 7-е изд., перераб. и доп. – М.: Волтерс Клувер, 2009, էջ 570:

¹³³ Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն: Ընդհանուր մաս (4-րդ հրատարակություն, լրացումներով և փոփոխություններով) / **Ս. Դիրանդյան, Ա. Հարությունյան, Գ. Ղազինյան և այլք**. - Երևանի պետ. համալս. - Եր.: Երևանի համալս. հրատ., 2006, էջ 160:

Ամենեղության կանխավարկածի սկզբունքը, նպատակ ունենալով պաշտպանել անձին հանիրավի մեղադրանքից, միաժամանակ չի կարող բացառել իրավասու մարմնի կողմից նրան հանցագործության մեջ կասկածելու հանգամանքը: Այս առումով քննարկվող սկզբունքի հետ անմիջականորեն առնչվում են քրեական գործի վարույթը կամ քրեական հետապնդումը բացառող այնպիսի հիմքերը, որոնք կրում են ոչ ռեաբիլիտացիոն կամ ոչ արդարացնող բնույթ: Այդ հիմքերը սպառնիչ կերպով նախատեսված են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 4-13-րդ կետերում, որոնց շարքին են դասվում վաղեմության ժամկետների անցած լինելը, անձի մահը, համաներման ակտի առկայությունը և այլն: Դրանց էությունը դրսևորվում է նրանում, որ այդ հիմքերով քրեական գործի հարուցումը մերժելու կամ քրեական գործի վարույթը կարճելու դեպքում, ի տարբերություն արդարացնող հիմքերի, անձը ձեռք չի բերում արդարացվածի կարգավիճակ:

Հայտնի է, որ քրեական իրավունքում «հանցակազմ» հասկացությունը բնորոշվում է որպես հանրորեն վտանգավոր արարքի՝ քրեական օրենսգրքով սահմանված հատկանիշների համակցություն: Այսինքն՝ որպեսզի անձը քրեական պատասխանատվության ենթարկվի, նրա արարքը պետք է որակվի հանրորեն վտանգավոր, որում առկա են քրեական օրենսգրքով նախատեսված կոնկրետ արարքի բոլոր հատկանիշները: Հետևաբար, հանցագործության յուրաքանչյուր տեսակին համապատասխանում է իր կոնկրետ հանցակազմը, որի հիմնական տարրերն են օբյեկտը, օբյեկտիվ կողմը, սուբյեկտը և սուբյեկտիվ կողմը: Ընդ որում, այս տարրերից թեկուզ մեկի բացակայությունը վկայում է հանցակազմի, հետևաբար՝ նաև հանցագործության բացակայության մասին:

Վերոգրյալ դատողությունների լույսի ներքո ակնհայտ է, որ արարքը հանցագործություն որակելու պարտադիր պայման է հանդիսանում նաև հանցակազմի սուբյեկտիվ կողմի, այդ թվում՝

անձի մեղավորության առկայությունը, որը կարող է հաստատվել բացառապես դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով: Այդ իսկ պատճառով քրեական հետապնդման մարմինների կողմից ոչ արդարացնող հիմքերով քրեական գործի վարույթի կարճման որոշմամբ չի կարող ապացուցվել անձի մեղավորությունը, իսկ առնվազն այդ հիմքով՝ նաև հանցավոր արարքի կատարումը: Հետևաբար, վիճելի է այն պնդումը, որ ոչ արդարացնող հիմքերով քրեական գործի կարճման դեպքում մեղադրյալի կողմից հանցանքի կատարումը, որպես կանոն, մինչդատական կամ դատական վարույթներում ապացուցված է¹³⁴:

Այս կապակցությամբ ուշագրավ է ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ԵՇԴ/0008/01/09 քրեական գործով 2009 թվականի նոյեմբերի 26-ի որոշումը: Նշված գործով ՀՀ վճռաբեկ դատարանը, անդրադառնալով համաներման ակտի ընդունման հիմքով դատարանի կողմից գործի վարույթի կարճման պայմաններում հանցագործությամբ պետությանը պատճառված վնասի բռնագանձման իրավաչափությանը, գտել է, որ նման պայմաններում ստորադաս դատարանների գործողությունները իրավաչափ չեն: ՀՀ վճռաբեկ դատարանն իր դիրքորոշման հիմքում դրել է այն պատճառաբանությունը, որ տվյալ դեպքում առաջադրված մեղադրանքում անձի մեղավորությունը կամ անմեղությունը ՀՀ Սահմանադրությամբ և քրեադատավարական օրենքով սահմանված կարգով ապացուցված չէ: Այսինքն՝ այս կերպ շեշտադրվել է այն հանգամանքը, որ օրինական ուժի մեջ մտած դատավճռի բացակայության պայմաններում ոչ արդարացնող հիմքերով քրեական գործի վարույթի կարճումը նույնիսկ դատարանի կողմից բավարար չէ անձի մեղավորությունն ապացուցված համարելու համար:

Նկատի ունենալով վերոգրյալը՝ գտնում ենք, որ ապացույցների կեղծման, ակնհայտ սխալ թարգմանության, ինչպես

¹³⁴ Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի 2010 թվականի մարտի 30-ի թիվ ՍԴՈ-871 որոշումը (ՀՀԴՏ 2010.04.07/14(748) Հոդ. 354):

նաև գործին մասնակցող անձանց, նրանց ներկայացուցիչների և դատավորի կողմից գործի քննության հետ կապված հանցավոր արարքները չեն կարող հաստատվել քրեական գործի հարուցումը մերժելու կամ քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշումներով: Այլ կերպ ասած՝ մենք ևս համամիտ ենք այն հեղինակների հետ, ում կարծիքով քննարկվող հանգամանքները (հանցավոր արարքները) չեն կարող հիմք հանդիսանալ դատական ակտը նոր երևան եկած հանգամանքներով վերանայելու համար, եթե դրանք հաստատված չեն դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

Դատական պրակտիկայի ուսումնասիրությունը նույնպես վկայում է այն մասին, որ գործնականում ՔԴՕ 204.32-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերում նախատեսված հանգամանքները հաստատող միակ թույլատրելի ապացույց է դիտարկվում դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճիռը¹³⁵: Հակառակ մոտեցումը, մեր կարծիքով, կարող է հանգեցնել ՀՀ Սահմանադրությամբ և մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային փաստաթղթերով անրագրված անձի անմեղության կանխավարկածի սկզբունքի խախտմանը:

Մյուս կողմից, մտահոգությունների տեղիք է տալիս գործին մասնակցող այն անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության անհրաժեշտությունը, ովքեր «ոչ արդարացնող» հիմքերով քրեական գործի հարուցումը մերժվելու կամ քրեական գործի վարույթը կարճվելու հետևանքով զրկվում են նոր երևան եկած հանգամանքների համապատասխան հիմքերով դատական ակտերի վերանայման իրավունքը իրացնելու հնարավորությունից և, փաստորեն, հայտնվում փակուղում: Իսկ

¹³⁵ Տե՛ս, օրինակ, ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ԵԱՔԴ/1137/02/08 քաղաքացիական գործով 2009 թվականի մարտի 13-ի, թիվ ԵՇԴ/1410/02/08 քաղաքացիական գործով 2009 թվականի հունիսի 26-ի, թիվ ԵԱՔԴ/1693/02/08 քաղաքացիական գործով 2009 թվականի հուլիսի 24-ի և թիվ ԵԱՔԴ/2610/02/08 քաղաքացիական գործով 2009 թվականի հուլիսի 24-ի որոշումները:

նշված հանգամանքը, բնականաբար, չի կարող համատեղելի լինել դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի հետ, որի էությունը ամենից առաջ դրսևորվում է խախտված կամ վիճարկվող իրավունքները վերականգնող դատական ակտ ստանալու հնարավորության մեջ¹³⁶:

ՀՀ սահմանադրական դատարանը, անդրադառնալով դատական պաշտպանության իրավունքի մեկնաբանությանը, սկզբունքային դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ. «Անձի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքից ածանցվում է պետության պոզիտիվ պարտականությունը՝ ապահովել այն թե՛ նորմաստեղծ, թե՛ իրավակիրառական գործունեություն իրականացնելիս: Դա ենթադրում է, մի դեպքում, օրենսդրի պարտականությունը՝ լիարժեք դատական պաշտպանության հնարավորություն և մեխանիզմներ ամրագրել օրենքներում, մյուս կողմից, իրավակիրառողի պարտականությունը՝ առանց բացառությունների քննարկման ընդունել անձանց՝ օրինական կարգով իրենց ուղղված դիմումները, որոնցով նրանք հայցում են իրավական պաշտպանություն իրենց իրավունքների ենթադրյալ խախտումներից»¹³⁷:

Այս տեսանկյունից խնդիրը դիտարկելիս ակնհայտ է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածով նախատեսված քրեական գործի վարույթը կամ քրեական հետապնդումը բացառող «ոչ արդարացնող» հիմքերի վերաբերյալ առկա իրավակարգավորումներն ամրագրելիս օրենսդիրը չի դրսևորել բավարար հետևողականություն և համակարգային մոտեցում: Բանը նրանում է, որ գործող քրեադատավարական օրենսդրությունը նշված հանգամանքների մեծ մասի համար չի ամրագրել քրեական գործի հարուցումը մերժելու կամ գործի վարույթը

¹³⁶ Տե՛ս *Гукасян Р.Е.*, Избранные труды по гражданскому процессу. – М.: Проспект, 2008, էջ 379:

¹³⁷ Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի 2007 թվականի նոյեմբերի 28-ի թիվ ՍԴՈ-719 որոշումը (ՀՀՊՏ 2007.12.21/16.1):

կարճելու արգելք այն իրավիճակներում, երբ համապատասխան հանցավոր արարքների հաստատումը դատավճռով կարող է անհրաժեշտ լինել դատական գործի վարույթը նոր երևան եկած հանգամանքներով նորոգելու համար:

Միևնույն ժամանակ, նույն անհրաժեշտությամբ պայմանավորված՝ այդպիսի սահմանափակում է նախատեսվել քրեական գործի վարույթը կամ քրեական հետապնդումը բացառող «ոչ արդարացնող» հիմքերից հանցանք կատարած անձի մահվան դեպքում (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվ., 1-ին մաս, 10-րդ կետ), որպիսի փաստը, սակայն, բավարար չի կարող համարվել:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ կարծում ենք, որ արդարացված կլինի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածում նախատեսել ընդհանրական դրույթ այն մասին, որ . «Եթե որոշակի հանցավոր արարքի հաստատումը դատավճռով կարող է հիմք հանդիսանալ այլ դատական գործով օրինական ուժի մեջ մտած դատական ակտը նոր երևան եկած հանգամանքներով վերանայելու համար, ապա սույն հոդվածի 1-ին մասի 6-րդ, 9-13-րդ կետերում նախատեսված հիմքերով քրեական գործի հարուցման մերժում, վարույթի կարճում և քրեական հետապնդման դադարեցում թույլատրվում է բացառապես այն դեպքում, երբ այլ դատական գործով նոր երևան եկած հանգամանքներով բողոք բերելու իրավունք ունեցող բոլոր անձինք այդ մասին գրավոր համաձայնություն են հայտնել քրեական վարույթն իրականացնող մարմնին»:

Գործող դատավարական օրենսդրությունը նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման հնարավորություն է նախատեսում նաև այն դեպքերում, երբ վերացվում է այն դատական ակտը, դատավճիռը, վարչական կամ տեղական ինքնակառավարման մարմնի որոշումը, որը հիմք է ծառայել տվյալ վճռի կայացման համար (ՔԴՕ 204.32-րդ հոդվ., 4-րդ մաս):

Նոր երևան եկած հանգամանքների այս խմբի ամրագրումն

առաջին հերթին պայմանավորված է օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի նախադատելիությունը (լատիներեն «Praejudicio» եզրույթից) հաշվի առնելու անհրաժեշտությամբ: Արդարադատության ակտերի միջև պրեյուդիցիալ կապը դրսևորվում է նրանում, որ օրինական ուժի մեջ մտած սկզբնական դատական ակտը կանխորոշում է նոր կայացվելիք դատական ակտի բովանդակությունն այն մասով, որը վերաբերում է նախկինում քննված այլ գործով արդեն իսկ հաստատված փաստերին: Ընդ որում, այդ դեպքում պահանջվում է ընդամենը ներկայացնել նախկինում քննված գործով օրինական ուժի մեջ մտած վճիռը կամ դատավճիռը, որոնք, որպես բացառություն, համարվում են նախապես հաստատվածի ուժ ունեցող (ՔԴՕ 53-րդ հոդվ., 2-րդ մաս):

Դա բացատրվում է այն հանգամանքով, որ փաստերը, որոնք հաստատված են սկզբնական գործով կայացված վճռով կամ դատավճռով, համարվում են հավաստի, այսինքն՝ իրականությանը համապատասխանող¹³⁸: Այդ իսկ պատճառով օրինական ուժի մեջ մտած դատական ակտի նախադատելիությունից ածանցվում է դատարանի պարտականությունը՝ ներմուծելու նման հանգամանքը նոր կայացվելիք դատական ակտի մեջ, իսկ գործին մասնակցող անձանց կամքը այս հարցում որևէ ազդեցություն ունենալ չի կարող: Հետևաբար, սկզբնական դատական ակտի բեկանումը ինքնաբերաբար պետք է հանգեցնի դրա հիման վրա կայացված այլ դատական ակտի նախադատելի համարված հանգամանքների չսպացուցվածությանը:

Միաժամանակ, պետք է նկատի ունենալ, որ դատական ակտերի նախադատելիությունը չի կրում բացարձակ բնույթ և ունի գործողության օբյեկտիվ սահմաններ: Այլ խոսքով՝ այն գործին մասնակցող անձանց համար միայն որոշակի սահմաններում

¹³⁸ Տե՛ս **Осокина Г.Л.**, Курс гражданского судопроизводства России. Общая часть: Учебное пособие. – Томск: Изд-во Том. ун-та, 2002, էջեր 524-525:

է ենթադրում ապացուցման պարտականությունից ազատում, ինչպես նաև կրկնակի ապացուցման կամ նման հանգամանքները հետագա դատավարություններում հերքելու արգելք:

ՔԴՕ 52-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նախկինում քննված՝ քաղաքացիական գործով օրինական ուժի մեջ մտած դատարանի վճռով հաստատված հանգամանքները նույն անձանց միջև դատարանում այլ գործ քննելիս կրկին չեն ապացուցվում: Այս կանոնի վերլուծությանը ՀՀ վճռաբեկ դատարանն անդրադարձել է իր թիվ 3-93 (ՎԴ) քաղաքացիական գործով 2008 թվականի փետրվարի 29-ի որոշմամբ և սկզբունքային դիրքորոշում ձևավորել այն դեպքերի կապակցությամբ, երբ նախկինում քննված քաղաքացիական գործով օրինական ուժի մեջ մտած վճռով հաստատված հանգամանքները կարող են նախադատելի չհամարվել: Մասնավորապես, նշված որոշման համաձայն. «Նախկինում քննված քաղաքացիական գործով օրինական ուժի մեջ մտած դատարանի վճռով հաստատված հանգամանքները ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի 2-րդ մասի իմաստով ունեն նախադատելի նշանակություն քննվող գործի համար, բացառությամբ այն բացառիկ դեպքերի, երբ.

ա) այդ հաստատված հանգամանքը վերաբերելի չէ նախկինում քննված քաղաքացիական գործով հայցի առարկային (չի դասվում հաստատման ենթակա հանգամանքների շարքը) և / կամ

բ) այդ հանգամանքը հաստատվել է ֆորմալ դատավարական կանոնների կոպիտ խախտմամբ կամ կողմերից մեկի՝ դատավարական հնարավորությունների սահմանափակվածության պայմաններում»:

Ի տարբերություն նախկինում քննված քաղաքացիական գործով օրինական ուժի մեջ մտած վճռի, որով հաստատված բոլոր հանգամանքները, բացառությամբ վերոնշյալ դեպքերի, պարտադիր են գործի նոր քննության ժամանակ՝ քրեական գործով օրինական ուժի մեջ մտած դատավճիռը պարտա-

դիր է դատարանի համար միայն այն փաստերով, ըստ որոնց հաստատված են որոշակի գործողություններ և դրանք կատարած անձինք: Ընդ որում, օրինական ուժի մեջ մտած դատավճռով հաստատված ոչ թե ցանկացած, այլ միայն այն գործողություններն են նախադատելի, որոնց միջոցով դրսևորվում է համապատասխան հանցագործության օբյեկտիվ կողմը¹³⁹:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ դատական ակտի համար նախադատելի վճռի կամ դատավճռի բեկանումը նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման հիմք կարող է դիտարկվել այն պայմանով, եթե պահպանվել են սկզբնական դատական ակտի նախադատելիության սահմանները: Հակառակ պարագայում կարելի է խոսել դատարանի կողմից թույլ տրված դատական սխալի մասին, որպիսի պայմաններում դրա վերանայումը նոր երևան եկած հանգամանքներով, մեր կարծիքով, կլինի քողարկված բողոքարկում և կարող է հանգեցնել իրավական որոշակիության սկզբունքի խախտմանը:

Բացի այդ, անհրաժեշտ է նկատի ունենալ, որ քաղաքացիական գործերով կայացված դատական ակտերի միջև կապը կարող է դրսևորվել նաև դրանց պարտադիրության միջոցով: Այս հատկանիշի եռությունը ընդհանուր առմամբ արտացոլված է ՔԴՕ 14-րդ հոդվածում, ըստ որի՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը պարտադիր են ոչ միայն գործին մասնակցող անձանց, այլև բոլոր պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց պաշտոնատար անձանց, իրավաբանական անձանց և քաղաքացիների համար ու ենթակա են կատարման Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում: Նշված սուբյեկտները պարտավոր են հարգել դատական ակտի հեղինակությունը, իրենց գործողություններով նպաստել դրա կատարմանը, իրենց գործունեության ընթացքում հաշվի առնել դատական ակտը և չեն կարող ելնել այն ենթադրությունից, թե օրինական ուժի մեջ մտած դատական ակտը ճիշտ չէ, քանի որ

¹³⁹ Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ 3-1091 (ՎԴ) քաղաքացիական գործով 2007 թվականի սեպտեմբերի 5-ի որոշումը:

օրինական ուժի մեջ մտնելու պահից դատական ակտը ձեռք է բերում իրավական ակտի, իսկ դատարանի՝ դրանում ձևակերպված իշխանական պատվիրանները՝ իրավական նորմի ուժ¹⁴⁰:

Վերոգրյալի համատեքստում գտնում ենք, որ դատական ակտի բեկանումը՝ որպես նոր երևան եկած հանգամանք, պետք է որակել նույնիսկ այն դեպքում, երբ վերջինս չի եղել նախադատելի և դրվել է վերանայման ենթակա դատական ակտի հիմքում: Ընդ որում, ասվածը վերաբերում է ոչ միայն վճռի, այլև քաղաքացիական գործով կայացված ցանկացած դատական ակտի բեկանմանը, քանի որ ՔԴՕ 204.32-րդ հոդվածի 4-րդ կետում օգտագործվում է «դատական ակտ» հասկացությունը, որպիսին համարվում են քաղաքացիական գործերով կայացվող և՛ վճիռը, և՛ որոշումը, և՛ վճարման կարգադրությունը (ՔԴՕ 13-րդ հոդվ.):

Դատական ակտերին զուգահեռ օրենսդիրը նոր երևան եկած հանգամանքների քննարկվող խմբին է դասել այն վարչական ակտերի վերացումը, որոնք ևս հիմք են ծառայել վերանայվող դատական ակտի կայացման համար:

Հարկ է նշել, որ դատավարագիտության մեջ վարչական ակտերի վերացումը նոր երևան եկած հանգամանք որակելու հարցը երբեմն բացատրվում է նրանով, որ վարչական ակտերը քաղաքացիական դատավարության կարգով քննվող գործի համար նույնպես կարող են ունենալ նախադատելի նշանակություն, եթե դրանք կայացված են համապատասխան մարմինների և պաշտոնատար անձանց իրավասության սահմաններում¹⁴¹: Մինչդեռ նման մոտեցումը, անկախ որևէ վերապահումից, ընդունելի չի կարող համարվել, քանի որ նախադատելիությունը հանդիսանում է բացառապես դատարանի վճիռների և դատավճիռների օրինական ուժի հատկանիշներից մեկը:

¹⁴⁰ Տե՛ս *Մեդրյան Ս.Գ.*, Առաջին ատյանի դատարանի քաղաքացիական գործերով դատական ակտերը: Երևան պետ. համալսարան: Եր.: ԵՊՀ հրատ., 2010, էջ 161:

¹⁴¹ Տե՛ս *Резуценко А.Н.*, Пересмотр судебных актов, вступивших в законную силу, по вновь открывшимся обстоятельствам как стадия гражданского процесса. Дис. ... канд. юрид. наук – Волгоград, 2001, էջ 80:

Վարչական ակտերի ընդունման, կատարման և մի շարք այլ հարցերի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով¹⁴²: Նշված օրենքի 53-րդ հոդվածի 1-ին մասը նվիրված է վարչական ակտի հասկացության սահմանմանը, որի համաձայն. «Վարչական ակտն արտաքին ներգործություն ունեցող այն որոշումը, կարգադրությունը, հրամանը կամ այլ անհատական իրավական ակտն է, որը վարչական մարմինն ընդունել է հանրային իրավունքի բնագավառում կոնկրետ գործի կարգավորման նպատակով, և ուղղված է անձանց համար իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն, վերացնելուն կամ ճանաչելուն»:

ՀՀ վճռաբեկ դատարանը, անդրադառնալով վարչական ակտերի իրավական հետևանքներ առաջացնելու հարցին, իր որոշումներում բազմիցս շեշտադրել է այն հանգամանքը, որ չվիճարկված վարչական ակտն իրավաչափ է և որևէ անձ, այդ թվում՝ պետական մարմինը, չի կարող կասկածի տակ դնել դրա իրավաչափությունը: Ըստ ՀՀ վճռաբեկ դատարանի. «Եթե վարչական ակտը չի վիճարկվել, չի հաստատվել դրա առոչինչ լինելը, չի ճանաչվել ոչ իրավաչափ՝ անվավեր, չի կորցրել իր ուժը, հետևաբար յուրաքանչյուր ոք, ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի համաձայն, պարտավոր է ելնել այն կանխավարկածից, որ այն ընդունվել է Սահմանադրությամբ կամ օրենքներով իր լիազորությունների շրջանակում»¹⁴³:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ կարելի է համաձայնել Ի.Գ. Ֆիլչենկոյի այն տեսակետի հետ, որ վարչական ակտերի օգտագործումը՝ որպես դատարանի հետևությունների հիմք, պայմանավորված է այդ ակտերի իրավաբանական ուժով¹⁴⁴: Ընդ որում,

¹⁴² Ընդունվել է 18.02.2004թ.: Տե՛ս ՀՀՊՏ 2004.03.31/18(317) Հոդ. 413:

¹⁴³ Տե՛ս, օրինակ, ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ՎԴ/3986/05/09 վարչական գործով 2010 թվականի հունիսի 25-ի որոշումը:

¹⁴⁴ Տե՛ս **Фильченко И.Г.**, Процессуальные гарантии принятия обоснованного судебного решения в гражданском процессе. Дис. ... канд. юрид. наук – Воронеж, 2010, էջ 164:

դրանց հիման վրա դատարանը կարող է հետևություններ անել ինչպես կողմերի իրավունքների և պարտականությունների մասին, այնպես էլ հաստատված համարել գործի այլ փաստական հանգամանքները:

Վարչական ակտերի վերացման հետևանքով դատական ակտերի վերանայման խնդիրը քննարկելիս ուշադրության է արժանի այն հարցը, թե որ պահից է այն վերացվել: Բանը նրանում է, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 64-րդ հոդվածը նախատեսել է ոչ իրավաչափ վարչական ակտի իրավաբանական ուժը կորցնելու հնարավորություն ինչպես դրա անվավեր ճանաչելու մասին որոշում ընդունելու, այնպես էլ վարչական ակտն ընդունելու պահից: Իսկ առաջին դեպքում, այսինքն՝ անվավեր ճանաչելու մասին որոշման ընդունման պահից վարչական ակտը վերացվելիս այն իրավաբանական հետևանքների չի հանգեցնում հենց այդ պահից: Հետևաբար, եթե վարչական ակտն ուժը կորցնում է այն անվավեր ճանաչելու մասին որոշում ընդունելու պահից, ապա նման պայմաններում, մեր համոզմամբ, դա չպետք է հիմք հանդիսանա օրինական ուժի մեջ մտած դատական ակտը վերանայելու համար, քանի որ մինչև անվավեր ճանաչման մասին որոշման ընդունումը, որը ներառում է նաև վերանայման ենթակա դատական ակտի կայացման ժամանակահատվածը, վարչական ակտը համարվում է գործող և ենթակա կատարման:

Իրավաբանական գրականության մեջ հաճախ կարծիքներ են հնչում այն մասին, որ նորմատիվ իրավական ակտերի անվավեր ճանաչումը ևս հիմք կարող է հանդիսանալ օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի վերանայման համար: Այսպես, օրինակ, ըստ Յու.Ա. Պոպովայի՝ նորմատիվ իրավական ակտերի անվավեր ճանաչման դեպքում ևս առկա են բոլոր հիմքերը նոր երևան եկած հանգամանքների այս խմբի հիմքով դատական ակտերը վերանայելու համար¹⁴⁵:

¹⁴⁵ См. *Попова Ю.А.*, Судопроизводство по делам, возникающим из публично-правовых отношений (теоретические проблемы). Краснодар, КГАУ, 2002, т.2 159:

Ի տարբերություն Յու.Ա. Պոպովայի՝ Ի.Ա. Պետրովան նորմատիվ իրավական ակտերի անվավեր ճանաչումը որպես նոր երևան եկած հանգամանք է դիտարկում այն բացառիկ դեպքերում, երբ համապատասխան նորմատիվ իրավական ակտը անվավեր է ճանաչվել ուժի մեջ մտնելու պահից¹⁴⁶: Ընդ որում, այս դիրքորոշումն իր արտացոլումն է ստացել նաև Ռուսաստանի Դաշնության իրավակիրառ պրակտիկայում¹⁴⁷:

Մինչդեռ ինչպես առաջին, այնպես էլ երկրորդ տեսակետների կիրառելիությունը գործող քաղաքացիական դատավարության օրենսդրության պայմաններում որոշակի տարակուսանքի տեղիք է տալիս: Խնդիրը նրանում է, որ ՔԴՕ 204.32-րդ հոդվածի 4-րդ մասը նորմատիվ իրավական ակտերի անվավեր ճանաչումը՝ որպես նոր երևան եկած հանգամանք, ուղղակիորեն չի ամրագրել:

Կարծում ենք, որ նշված դրույթում վարչական ակտերից առանձին «տեղական ինքնակառավարման մարմնի որոշում» արտահայտության օգտագործումը նույնպես նման եզրահանգման հիմքեր չի ստեղծում, քանի որ դրանում նշում չկա տեղական ինքնակառավարման մարմնի որոշման նորմատիվ բնույթի մասին: Իսկ այդ հանգամանքը թույլ է տալիս հանգել այն հետևության, որ այդ դեպքում օրենսդիրը նկատի է ունեցել տեղական ինքնակառավարման մարմնի անհատական իրավական ակտերը: Ընդ որում, ինչպես բխում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 3-րդ և 53-րդ հոդվածների համադրումից, տեղական ինքնակառավարման մարմնի անհատական իրավական ակտը ևս հանդիսանում է վարչական ակտ, որպիսի պայմաններում ՔԴՕ 204.32-րդ հոդվածի 4-րդ կե-

¹⁴⁶ Տե՛ս *Петрова И.А.*, Пересмотр судебных актов по вновь открывшимся обстоятельством в гражданском и арбитражном процессах (сравнительно-правовой аспект). Дис. ... канд. юрид. наук – Москва, 2010, էջ 135:

¹⁴⁷ Տե՛ս Сборник постановлений Пленумов Верховного Суда и Высшего Арбитражного Суда Российской Федерации по гражданским делам / сост. д-р юрид. наук, проф. *А.П. Сергеев*. – 4-е изд., переб. и доп. – М.: Проспект, 2009, էջեր 1111-1112:

տում դրանց մասին առանձին խոսելն այնքան էլ հաջողված չէ:

Շարադրվածից ելնելով՝ գտնում ենք, որ նորմատիվ իրավական ակտերի անվավեր ճանաչումը նոր երևան եկած հանգամանք դիտարկող հեղինակների տեսակետը խոցելի է թվում:

Մյուս կողմից, սակայն, բարձրացված հարցը նպատակահարմար ենք համարում քննարկել նորմատիվ իրավական ակտերի անվավեր ճանաչելու պահի և անվավերության հետևանքների կիրառման առանձնահատկությունների դիտանկյունից:

Նշված խնդրի կարգավորմանն է նվիրված ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի¹⁴⁸ 140-րդ հոդվածը, ըստ որի անվավեր ճանաչված նորմատիվ իրավական ակտը, որպես կանոն, ուժը կորցնում է այն անվավեր ճանաչելու մասին վարչական դատարանի որոշման պաշտոնական հրապարակման պահից, իսկ դրա վրա հիմնված՝ վարչական դատարանի որոշման ընդունմանը նախորդող ժամանակահատվածում ընդունված և կատարված վարչական կամ դատական ակտերը վերանայման ենթակա չեն, սակայն վարչական դատարանի որոշման օրինական ուժի մեջ մտնելու պահից այլևս չեն կարող կիրառվել: Այսինքն՝ ընդհանուր կանոնի համաձայն՝ օրենսդիրը նորմատիվ իրավական ակտերի ուժը կորցնելու ժամկետ է նախատեսել այդ մասին վարչական դատարանի որոշման ուժի մեջ մտնելու պահը, իսկ այդ հանգամանքին հետադարձ ուժ չի տվել:

Իսկ այն բոլոր դեպքերում, երբ նորմատիվ իրավական ակտի ուժի մեջ մտնելու պահից անվավեր չճանաչումը կարող է հանգեցնել ծանր հետևանքների հանրության և պետության համար, ապա օրենսդիրը արել է նշված կանոնից բացառություն և թույլատրել նորմատիվ իրավական ակտի անվավեր ճանաչումը հենց ուժի մեջ մտնելու պահից: Ընդ որում, որպես այսպիսի բացառության տրամաբանական շարունակություն, նախատեսվել է նաև այդպիսի ակտերի հիման վրա կայացված դատական ակտերի վերանայման պահանջ: Մասնավորապես, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 140-րդ հոդվածի 7-րդ մասի համա-

¹⁴⁸ Ընդունվել է 28.11.2007թ.: Տե՛ս ՀՀՊՏ 2007.12.19/64(588) Հոդ. 1300:

ծայն՝ իրենց ուժի մեջ մտնելու պահից անվավեր ճանաչված նորմատիվ իրավական ակտերի, ինչպես նաև դրանց հիման վրա ընդունված կամ դրանց բովանդակությունը վերարտադրող նորմատիվ իրավական ակտերի կիրառման վերաբերյալ կատարված վարչական և դատական ակտերը պետք է վերանայվեն դրանք ընդունած (կայացրած) վարչական մարմինների և դատարանների կողմից՝ չահագրգիռ անձանց պահանջով, եթե ընդունվել են անվավեր ճանաչված նորմատիվ իրավական ակտերի՝ ուժը կորցնելուն նախորդող վերջին երկու տարվա ընթացքում:

Վերոգրյալի համատեքստում ակնհայտ է, որ ՔԴՕ և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 140-րդ հոդվածի 7-րդ մասերի միջև առկա է աններդաշնակություն այն առումով, որ ՔԴՕ-ն չի ամրագրել որոշակի կառուցակարգեր ուժի մեջ մտնելու պահից անվավեր ճանաչված նորմատիվ իրավական ակտերի հիման վրա կայացված դատական ակտերի վերանայումն ապահովելու համար: Ուստի, առկա իրավական բացը լրացնելու նպատակով անհրաժեշտ է ուժի մեջ մտնելու պահից նորմատիվ իրավական ակտի անվավեր ճանաչումը ևս նախատեսել ՔԴՕ դատական ակտերի վերանայման հիմքերի շարքում, իսկ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 140-րդ հոդվածի 7-րդ մասում նախատեսված երկու տարվա սահմանափակումը վերացնել:

Վերադառնալով ՔԴՕ 204.32-րդ հոդվածում նախատեսված նոր երևան եկած հանգամանքների հետազոտությանը՝ պետք է նշել, որ դրանց, ի տարբերություն ՔԴՕ 204.32-րդ հոդվածի 1-3-րդ կետերում նախատեսվածների, բնութագրական չէ գործի քննության ժամանակ գոյություն ունենալու և օբյեկտիվ պատճառներով անհայտ մնալու հատկանիշները: Ասվածը պայմանավորված է այն հանգամանքով, որ և՛ դատական ակտերի բեկանումը, և՛ վարչական ակտերի վերացումը, անկախ վերջիններիս ուժը կորցնելու պահից, օբյեկտիվ իրականությունում ծագում են գործի քննության ավարտից հետո, որպիսի պայմաններում այս հանգամանքները, ըստ էության, չեն կարող լինել նոր երևան

եկած: Այդ իսկ պատճառով դրանք ավելի շուտ հանդիսանում են նոր հանգամանքներ, որոնք, ինչպես արդարացիորեն նշում է Ս.Ս. Ջավրիևը, ընդամենը օրենքով հավասարեցվել են նոր երևան եկած հանգամանքներին¹⁴⁹: Իսկ այս տեսանկյունից հարցը դիտարկելիս՝ առավել ճիշտ է թվում դրանց ամրագրումը ՔԴՕ նոր հանգամանքների շարքում, ինչը բխում է խնդրո առարկա հարցի վերաբերյալ իրավակարգավորումների հիմքում միևնույն չափանիշներ ներդնելու անհրաժեշտությունից:

Այսպիսով, կատարված հետազոտությունների արդյունքում առաջարկում ենք՝

1) ՔԴՕ 204.32-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբադրությամբ.

«Հոդված 204.32. Նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման հիմքերը

Նոր երևան եկած հանգամանքները հիմք են դատական ակտի վերանայման համար, եթե՝

1) բողոք բերած անձն ապացուցում է, որ այդ հանգամանքները գոյություն են ունեցել գործի լուծման պահին, հայտնի չեն եղել և չէին կարող հայտնի լինել բողոք բերած գործին մասնակցող անձին և դատարանին, և այդ հանգամանքները գործի լուծման համար ունեն էական նշանակություն.

2) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով հաստատված՝ վկայի սուտ ցուցմունքները, փորձագետի ակնհայտ կեղծ եզրակացությունը, թարգմանչի ակնհայտ սխալ թարգմանությունը, գրավոր կամ իրեղեն ապացույցների կեղծված լինելը հանգեցրել են ապօրինի կամ չհիմնավորված դատական ակտ կայացնելուն.

3) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով հաստատվել է, որ բողոք բերած անձ չհանդիսացող գործին

¹⁴⁹ Տե՛ս **Завруев С.С.** Пересмотр по вновь открывшимся обстоятельствам решений, определений, постановлений президиума суда надзорной инстанции, вступивших в законную силу, в гражданском процессе. Дис. ... канд. юрид. наук – Москва, 2008, էջ 51:

մասնակցող անձինք կամ նրանց ներկայացուցիչները կատարել են գործի քննության հետ կապված հանցավոր արարք, որը հանգեցրել է ապօրինի կամ չհիմնավորված դատական ակտ կայացնելուն, կամ գործի քննության հետ կապված հանցավոր արարքը կատարվել է դատավորի կողմից:»:

2) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 7-րդ մասով.

«7. Եթե որոշակի հանցավոր արարքի հաստատումը դատավճռով կարող է հիմք հանդիսանալ այլ դատական գործով օրինական ուժի մեջ մտած դատական ակտը նոր երևան եկած հանգամանքներով վերանայելու համար, ապա սույն հոդվածի 1-ին մասի 6-րդ, 9-13-րդ կետերում նախատեսված հիմքերով քրեական գործի հարուցման մերժում, վարույթի կարճում և քրեական հետապնդման դադարեցում թույլատրվում է բացառապես այն դեպքում, երբ այլ դատական գործով նոր երևան եկած հանգամանքներով բողոք բերելու իրավունք ունեցող բոլոր անձինք այդ մասին գրավոր համաձայնություն են հայտնել քրեական վարույթն իրականացնող մարմնին:»:

3) ՔԴՕ 204.33-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-5-րդ կետերով.

«3) դատարանի օրինական ուժի մեջ մտած դատական ակտով կնքման պահից անվավեր է ճանաչվել այն գործարքը, որը հիմք է ծառայել տվյալ դատական ակտը կայացնելու համար.

4) բեկանվել է այն դատական ակտը, դատավճիռը կամ ընդունման պահից անվավեր է ճանաչվել այն վարչական ակտը, որը հիմք է ծառայել տվյալ դատական ակտի կայացման համար.

5) վարչական դատարանը ուժի մեջ մտնելու պահից անվավեր է ճանաչել այն նորմատիվ իրավական ակտը, որի հիման վրա կայացվել է տվյալ դատական ակտը:»:

ԳԼՈՒԽ 2.

ՆՈՐ ԵՐԼԱՆ ԵՎ ԱԾ ՀԱՆԳԱՍԱՆՔՆԵՐՈՎ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ

§ 1. Նոր երևան եկած հանգամանքներով բողոք ներկայացնելու իրավունք ունեցող սուբյեկտները

Նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման վարույթի ծագման համար անհրաժեշտ են օբյեկտիվ, սուբյեկտիվ և ձևական մի շարք նախադրյալներ: Իրավաբանական գրականության մեջ, բողոքարկման իրավունքի իրականացման սուբյեկտիվ նախադրյալներ ասելով, ավանդաբար հասկացվում է այն սուբյեկտների շրջանակը, ովքեր ունեն բողոք ներկայացնելու իրավունք:

Նոր երևան եկած հանգամանքներով բողոք բերելու իրավունք ունեցող սուբյեկտների սահմանմանը օրենսդիրը նվիրել է ՔԴՕ 204.31-րդ հոդվածը, որի 1-ին կետի համաձայն՝ նոր երևան եկած հանգամանքներով բողոք բերելու իրավունք ունեն գործին մասնակցող անձինք և նրանց իրավահաջորդները:

Գործին մասնակցող անձինք քաղաքացիական դատավարական իրավահարաբերությունների հիմնական մասնակիցներն են, որոնց շարքին են դասվում կողմերը, վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջ ներկայացնող և չներկայացնող երրորդ անձինք, ինչպես նաև հատուկ հայցային և հատուկ վարույթներով՝ դիմողները: Նշված սուբյեկտներին մեկ խմբում ընդգրկելը պայմանավորված է նրանով, որ դրանք բոլորն էլ գործի ելքում ունեն իրավաբանական շահագրգռվածություն¹⁵⁰: Իսկ այդ հանգամանքի ուժով դատավարական օրենսդրությունը արդարացիորեն գործին մասնակցող անձանց օժտել է վարույթի

¹⁵⁰ Տե՛ս Гражданский процесс: Учебник. 3-е изд., перераб. и доп. / Под ред. **М.К. Треушников**. М.: Издательский Дом «Городец», 2010, էջ 91:

շարժման վրա ազդելու հնարավորությամբ, այդ թվում՝ դատական ակտերի բողոքարկման իրավունքով (ՔԴՕ 28-րդ հոդվ., 1-ին մաս, 7-րդ կետ):

Սակայն պետք է նկատի ունենալ, որ ոչ միշտ է հնարավոր լինում գործին մասնակցող անձանց կողմից դատական ակտերի բողոքարկման իրավունքը իրականացնել, քանի որ հաճախ օբյեկտիվ և սուբյեկտիվ բնույթի հանգամանքների բերմամբ (քաղաքացու մահ, իրավաբանական անձի վերակազմակերպում, պահանջի գիշում, պարտքի փոխանցում և այլն) նրանք կարող են դուրս գալ նյութական իրավահարաբերություններից և դրանով իսկ կորցնել գործի ելքով իրավաբանական շահագրգռվածությունը: Նման դեպքերում առաջանում է դատավարական իրավահաջորդություն կատարելու անհրաժեշտություն, որը, ՔԴՕ 36-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, թույլատրվում է դատավարության ցանկացած փուլում: Ընդ որում, դատավարական իրավահաջորդությունը կարող է կատարվել ոչ միայն վիճելի, այլև վճռով սահմանված իրավահարաբերությունից անձի դուրս գալու դեպքում¹⁵¹:

Ինչպես հետևում է շարադրվածից, դատավարական իրավահաջորդության հիմքը նյութական իրավահաջորդությունն է, որը կարող է լինել ինչպես ընդհանուր (ունիվերսալ), երբ իրավահաջորդին են անցնում իրավանախորդի բոլոր իրավունքները և պարտականությունները, այնպես էլ մասնակի (սինգուլյար), երբ իրավահաջորդին են փոխանցվում նյութական իրավահարաբերության առանձին սուբյեկտիվ իրավունքներ կամ պարտականություններ: Այդուհանդերձ, գոյություն ունեն իրավունքների և պարտականությունների առանձին տեսակներ, օրինակ՝ ալիմենտային պարտավորություններով իրավունքները և պարտականությունները, որոնք չեն կարող հանդիսանալ նյութական

¹⁵¹ См. у *Исаенкова О.В., Демичев А.А.*, Гражданское процессуальное право России: учебник /Под. ред. О.В. Исаенковой. – М.: Норма, 2009, էջ 93:

իրավահաջորդության օբյեկտ¹⁵²:

Հետևաբար, նույնիսկ այն դեպքում, երբ քաղաքացու մահվան հետևանքով տեղի է ունեցել ընդհանուր իրավահաջորդություն, սակայն կոնկրետ գործով վիճելի հարաբերության դեպքում դա չի թույլատրվում, այսինքն՝ համապատասխան իրավունքները և պարտականությունները ենթակա չեն փոխանցման, ապա այդ դեպքերում դատավարական իրավահաջորդությունը պետք է բացառել, իսկ որպես դրա դատավարական հետևանք՝ քաղաքացիական գործի վարույթը կարճել (ՔԴՕ 109-րդ հոդվ., 4-րդ կետ):

Վերոգրյալ դատողությունների լույսի ներքո առանձնակի կարևորություն է ստանում այն հարցադրումը, թե ինչպիսի բովանդակությամբ է օրենսդիրը ՔԴՕ 204.31-րդ հոդվածում օգտագործել «նրանց իրավահաջորդները» արտահայտությունը:

Դատավարագիտության մեջ անվիճելի է այն մոտեցումը, ըստ որի՝ անկախ այն հանգամանքից, թե նյութական իրավունքում իրավահաջորդությունը ընդհանուր է, թե մասնակի, դատավարական իրավահաջորդությունը միշտ էլ ընդհանուր է, քանի որ դատարանի կողմից իրավանախորդին իրավահաջորդով փոխարինելու պահից նրան են անցնում իրավանախորդի դատավարական իրավունքների և պարտականությունների համալիրը, իսկ իրավանախորդը դուրս է գալիս դատավարությունից¹⁵³: Այսինքն՝ իրավահաջորդը, մտնելով վարույթ, ձեռք է բերում այն նույն դատավարական կարգավիճակը, ինչ նրա կողմից փոխարինված իրավանախորդը:

Այս տեսանկյունից հարցը դիտարկելիս ակնհայտ է, որ քննարկվող դրույթում խոսքը վերաբերում է գործին մասնակցող անձանց իրավահաջորդներին ոչ թե դատավարական, այլ նյութաիրավական իմաստով: Հակառակ դեպքում, գործին մասնակ-

¹⁵² Տե՛ս *Авдюков М.Г. и др.*, Советский гражданский процесс – М., Изд-во Московского университета, 1964, էջեր 49-50:

¹⁵³ Տե՛ս *Караева Е.В.*, Вопросы апелляционного производства в гражданском процессе. Дис. ... канд. юрид. наук – Саратов, 2005, էջ 110:

ցող անձանցից առանձին դրանց մասին խոսելը կիմաստազրկվեր և չէր ունենա որևէ իրավական նշանակություն այն առումով, որ իրավահաջորդության թույլատրված անձն արդեն իսկ ունի գործին մասնակցող անձի դատավարական կարգավիճակ:

Նման պայմաններում ստացվում է, որ գործին մասնակցող անձի ցանկացած իրավահաջորդ իրավասու է ներկայացնել դատական ակտը նոր երևան եկած հանգամանքներով վերանայման բողոք նույնիսկ այն դեպքում, երբ վիճելի կամ դատական ակտով սահմանված իրավահարաբերությունները թույլ չեն տալիս իրավահաջորդություն: Իսկ այդ հանգամանքը, փաստորեն, հակասության մեջ է գտնվում դատավարական իրավահաջորդության ինստիտուտի էության հետ: Ուստի, վիճելի կամ դատական ակտով սահմանված իրավահարաբերություններում իրավահաջորդության թույլատրելիության պայմանը պետք է պարտադիր կերպով ամրագրվի ՔԴՕ 204.31-րդ հոդվածում, իսկ դրա չպահպանումը հանգեցնի համապատասխան բողոքի վերադարձմանը:

Որոշակի տեսական և գործնական հետաքրքրություն է ներկայացնում դատախազի կողմից նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման բողոք բերելու հնարավորության հարցի պարզումը, քանի որ այդ մասին ՔԴՕ-ն որևէ ուղղակի կարգավորում չի նախատեսել:

Գործող դատավարական օրենսդրությունը դատախազի մասնակցությունը քաղաքացիական դատավարությանը ամենից առաջ պայմանավորել է պետական շահերի պաշտպանության հայցի հարուցման հանգամանքով (ՀՀ Սահմանադրության 103-րդ հոդվ., 4-րդ մաս, 4-րդ կետ): Հարկ է նշել, որ քաղաքացիական դատավարության իրավունքի գիտության մեջ չկա միասնական մոտեցում պետական շահերի պաշտպանության հայց հարուցած դատախազի դատավարական կարգավիճակի վերաբերյալ:

Այսպես, որոշ հեղինակների կարծիքով՝ դատախազը քաղաքացիական դատավարությունում հանդես է գալիս պետության ներկայացուցչի կարգավիճակում, ով իրականացնում է օրի-

նականության նկատմամբ հսկողություն¹⁵⁴: Ըստ հեղինակների մյուս մասի՝ դատախազը քաղաքացիական դատավարությունում ունի կողմի կարգավիճակ և հանդիսանում է դատավարության կողմ, եթե հարուցել է հայց¹⁵⁵: Իսկ դատավարագետների երրորդ խումբը (Վ.Ն. Արգունովը, Ա.Ա. Վլասովը և այլք) հայց հարուցած դատախազին հայցվոր է համարում միայն դատավարական իմաստով¹⁵⁶:

Կարծում ենք, որ առավել հիմնավորված է թվում հենց վերջին տեսակետը, քանի որ պետական շահերի պաշտպանության հայց հարուցած դատախազը չի հանդիսանում վիճելի իրավահարաբերության սուբյեկտ, նրա դեմ չի կարող ներկայացվել հակընդդեմ հայց, նա չի կրում պետական տուրքի վճարման պարտավորություն, և նրա վրա չեն տարածվում կայացված վճռի օրինական ուժի նյութաիրավական հետևանքները:

Դրա հետ մեկտեղ, օրենսդիրը պետական շահերի պաշտպանությամբ դատարանում հանդես եկած դատախազին վերապահել է այն բոլոր իրավունքները և պարտականությունները, որոնք դատավարական օրենքով սահմանված են հայցվորի համար («Դատախազության մասին» ՀՀ օրենքի¹⁵⁷ 27-րդ հոդվ., 5-րդ մաս): Հետևաբար, կարելի է եզրակացնել, որ հայցվոր դատախազը՝ որպես գործին մասնակցող անձ, ունի նաև նոր երևան եկած հանգամանքներով բողոք բերելու իրավունք:

Բացի պետական շահերի պաշտպանության հայցի հարուցումից, քաղաքացիական դատավարությանը դատախազի մասնակցությունը կարող է դրսևորվել նաև այլ ձևով: Մասնավորա-

¹⁵⁴ Տե՛ս **Новик-Качан М.Ю.**, Надзорное производство в гражданском процессе. Дис. ... канд. юрид. наук – Москва, 2005, էջ 73:

¹⁵⁵ Տե՛ս Гражданский процесс. Учебник /Под. ред. **В.А. Мусина, Н.А. Чечиной, Д.М. Чечота.** – М.: «ПРОСПЕКТ», 1997, էջ 92:

¹⁵⁶ Տե՛ս Советский гражданский процесс: Учебник / Под ред. **М.К. Треушников.** – М.: Изд-во МГУ, 1989, էջ 85, Տե՛ս **Власов А.А.**, Гражданский процесс: учебник для бакалавров /А.А. Власов. – 4-е изд., перераб. и доп. – М.: Изд-во «Юрайт», 2012, էջ 122:

¹⁵⁷ Ընդունվել է 22.02.2007թ.: Տե՛ս ՀՀՊՏ 2007.04.11/19(543) Հոդ. 455:

պես, ՀՀ Սահմանադրության 103-րդ հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետը սահմանում է, որ օրենքով նախատեսված դեպքերում և կարգով դատախազությունը բողոքարկում է դատարանի վճիռները և որոշումները: Ընդ որում, ինչպես արդարացիորեն նշում է Ռ.Գ. Պետրոսյանը, դատախազությունն իրավունք ունի օգտվելու իր այս լիազորությունից նույնիսկ այն դեպքերում, երբ համապատասխան դատական ակտերը կայացվել են առանց նրա մասնակցության¹⁵⁸: Այլապես սահմանադրական նման դրույթը չէր ունենա նորմատիվային արժեք, քանի որ պետական շահերի պաշտպանության հայցի հարուցումից հետո դատախազը, դառնալով գործին մասնակցող անձ, այսպես, թե այնպես, ի թիվս այլ դատավարական իրավունքների, ունի նաև դատական ակտերի բողոքարկման իրավունք:

Հատկանշական է, որ հենց այս տրամաբանությունն է դրված դատախազության՝ դատական ակտերի բողոքարկման լիազորության իրականացումը կոնկրետացնող «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 6-րդ մասի հիմքում, որի համաձայն. «Օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի դեմ վճռաբեկ բողոք կարող են բերել միայն գլխավոր դատախազն ու նրա տեղակալները: Ընդ որում, քաղաքացիական կամ վարչական գործով պետական շահերին վերաբերող օրինական ուժի մեջ մտած դատական ակտը գլխավոր դատախազն ու նրա տեղակալները կարող են բողոքարկել անկախ տվյալ գործի քննությանը դատախազության մասնակցությունից»:

Այսպիսով, նույնիսկ գործի քննությանը մասնակցած չլինելու դեպքում դատախազությունը՝ ի դեմս գլխավոր դատախազի և նրա տեղակալների, իրավասու է պետական շահերին վերաբերող օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը նոր երևան եկած հանգամանքներով վերանայման բողոք ներկայաց-

¹⁵⁸ Տե՛ս *Պետրոսյան Ռ.Գ.*, Հայաստանի քաղաքացիական դատավարություն (իրավ. գիտ. դոկտոր, պրոֆ. Գ.Յ. Ղարախանյանի խմբագրությամբ): Երրորդ հրատարակություն - Եր.: Երևանի համալսարանի հրատ., 2007, էջ 229:

նել վճռաբեկ դատարան: Հետևաբար, արդարացված կլինի ՔԴՕ նախատեսված նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման բողոք բերելու իրավունք ունեցող անձանց ցանկում առանձին խոսել նաև գլխավոր դատախազի և նրա տեղակալների մասին: Իսկ դրանով կվերանա «Դատախազության մասին» ՀՀ օրենքի և ՔԴՕ միջև հնարավոր աններդաշնակությունն առաջանալու հավանականությունը այն դեպքերի համար, երբ գործի քննությանը դատախազությունը մասնակցած չի լինի, այսինքն՝ չի ունենա գործին մասնակցող անձի կարգավիճակ:

Միևնույն ժամանակ, տարակուսանքի տեղիք է տալիս այն հանգամանքը, որ «Դատախազության մասին» ՀՀ օրենքը որևէ կարգավորում չի պարունակում այն հարցի վերաբերյալ, թե ովքեր են իրավասու բողոքարկել պետական շահերին վերաբերող օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը վերաքննիչ դատարանում: Մինչդեռ ակնհայտ է, որ պետական շահերի պաշտպանության նպատակով կարող է անհրաժեշտ լինել օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը բողոքարկել ոչ միայն վճռաբեկ, այլև վերաքննիչ դատարան:

Հիմք ընդունելով վերոգրյալը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ դատախազությունը միասնական համակարգ է, որը ղեկավարում է գլխավոր դատախազը՝ կարծում ենք, որ հիմնավոր կլինի նախատեսել պետական շահերին վերաբերող օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը նաև վերաքննիչ դատարանում բողոքարկելու հնարավորություն և այն նույնպես վերապահել գլխավոր դատախազին և նրա տեղակալներին:

ՔԴՕ 204.31-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն. «Նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով դատական ակտերի վերանայման բողոք բերելու իրավունք ունեն այն անձինք, ովքեր օրենքի դրույթի սահմանադրականության հարցի վերաբերյալ սահմանադրական դատարանի որոշման ընդունման օրվա դրությամբ ունեցել են այդ իրավունքը «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պա-

հանջներին (ժամկետներին) համապատասխան իրացնելու հնարավորություն կամ նույն օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ կամ 5-րդ կետերի ուժով զրկված են եղել սահմանադրական դատարանում իրենց գործի քննության հնարավորությունից»։ Իսկ նույն հոդվածի 3-րդ կետը այդպիսի իրավունք է վերապահում մաս այն անձանց, ովքեր Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ գործող միջազգային դատարանի կողմից համապատասխան դատական ակտի կայացման պահին ունեցել են միջազգային պայմանագրի պահանջներին (ժամկետներին) համապատասխան միջազգային դատարան դիմելու իրավունք։

Թեև նշված դրույթների ձևակերպումները կրում են ընդհանրական բնույթ, այսինքն՝ առաջին տպավորությամբ հավասարապես կիրառելի են և՛ նոր երևան եկած, և՛ նոր հանգամանքներով դատական ակտերը վերանայելիս, այնուամենայնիվ, հիմք ընդունելով այդ նորմերի բովանդակությունը, գտնում ենք, որ տվյալ դեպքում խոսքը կարող է վերաբերել բացառապես նոր հանգամանքների հիմքով դատական ակտերի վերանայմանը։ Այլ կերպ ասած՝ նույնիսկ ՔԴՕ 204.31-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերի պահանջներին անձի համապատասխանության դեպքում վերջինս իրավասու չէ ներկայացնելու դատական ակտը նոր երևան եկած հանգամանքներով վերանայելու բողոք։

Դրա հետ մեկտեղ, անհրաժեշտ ենք համարում նկատել, որ քննարկվող դրույթներում առկա իրավակարգավորումները այնքան էլ հաջողված չեն թվում։ Մասնավորապես, դրանցում օգտագործված «այն անձինք» արտահայտության տառացի մեկնաբանության դեպքում ստացվում է, որ անձը ՔԴՕ 204.31-րդ հոդվածի 2-րդ կամ 3-րդ կետերի պայմանները բավարարելու դեպքում, անկախ նրանից՝ հանդիսանում է տվյալ գործին մասնակցող անձ, թե ոչ, իրավունք ունի ներկայացնելու դատական ակտը նոր հանգամանքներով վերանայելու բողոք։

Այս իրավիճակը, ըստ էության, հետևանք է այն բանի, որ օրենսդիրը, առանց խորամուխ լինելու հարցի էության մեջ, տա-

ռացիորեն վերարտադրել է ՀՀ Սահմանադրական դատարանի կողմից նոր հանգամանքների վերաբերյալ արտահայտած իրավական դիրքորոշումները, որոնց նպատակը ոչ թե նոր հանգամանքներով դատական ակտերի վերանայում պահանջելու իրավունքի ընձեռումն է անսահմանափակ թվով անձանց, այլ նոր հանգամանքներով դատական ակտերի վերանայման ինստիտուտի արդյունավետության բարձրացումը¹⁵⁹: Ուստի, հնարավոր խառնաշփոթներից խուսափելու համար արդարացված կլինեն ԶԴՕ 204.31-րդ հոդվածից հանել նշված դրույթները և դրանք համապատասխան փոփոխություններով ամրագրել նոր հանգամանքներն ամրագրող ԶԴՕ 204.33-րդ հոդվածում:

Միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ որոշ երկրներ նոր երևան եկած հանգամանքներով բողոք ներկայացնելու իրավունք են վերապահել նաև այլ սուբյեկտների: Ասվածի օրինակ է հանդիսանում Լիտվայի քաղաքացիական դատավարության օրենսգիրքը, որը վարույթի նորոգում պահանջելու իրավունք է նախատեսել ոչ միայն գործին մասնակցող անձանց, այլև այն անձանց համար, որոնք մասնակից չեն դարձվել գործին, և նրանց իրավունքները խախտվել են օրինական ուժի մեջ մտած դատական ակտով¹⁶⁰:

Այս կապակցությամբ պետք է նշել, որ մասնագիտական գրականության մեջ ևս հաճախ կարծիքներ են արտահայտվում այն մասին, որ անհրաժեշտ է ընդլայնել նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման բողոք ներկայացնելու իրավունք ունեցող սուբյեկտների շրջանակը՝ դրանում ներառելով նաև գործին մասնակից չդարձված այն ան-

¹⁵⁹ Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի 2008 թվականի ապրիլի 15-ի թիվ ՍԴՈ-751 որոշումը (ՀՀՊՏ 2008.04.30/25(615) Հոդ. 401) և 2009 թվականի հոկտեմբերի 13-ի թիվ ՍԴՈ-833 որոշումը (ՀՀՊՏ 2009.10.21/53(719) Հոդ. 1168):

¹⁶⁰ Տե՛ս **Борисова Е.А.**, Теоретические проблемы проверки судебных актов в российском гражданском, арбитражном процессах. Дис. ... док. юрид. наук - Москва, 2005, էջեր 81-82:

ծանց, ում իրավունքների և պարտականությունների վերաբերյալ կայացվել է գործն ըստ էության լուծող դատական ակտ:

Այսպես, ռուս դատավարագետ Ս.Ս. Ջավրիևը, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ այդպիսի իրավունքով նշված անձինք օժտված են հսկողական վարույթում, առաջարկում է դատական պրակտիկայում խնդիրներից խուսափելու համար օրենքում կատարել համապատասխան լրացում¹⁶¹: Իսկ, օրինակ, Ս.Ս. Ահմեդովը իր դիրքորոշումը հիմնավորում է նրանով, որ գործին մասնակից չդարձված անձանց նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման համար դատարան դիմելու իրավունքի չտրամադրումը չի համապատասխանում «Սարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի այնպիսի հիմնարար սկզբունքին, ինչպիսին է արդար դատաքննության իրավունքը¹⁶²:

Իհարկե, նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման վարույթի՝ որպես մարդու խախտված իրավունքները ՀՀ Սահմանադրության 18-րդ և 19-րդ հոդվածներին համապատասխան արդար և արդյունավետ դատաքննությանը վերականգնելու կարևոր երաշխիքի նշանակությունը պայմանավորված է նաև այն հանգամանքով, թե որքան լայն է դրանից օգտվելու իրավունք ունեցող անձանց շրջանակը: Այդուհանդերձ, ասվածն ինքնին չի կարող հիմք ծառայել գործին մասնակից չդարձված անձանց դրանց շարքում ներառելու համար, և այդ հարցը անհրաժեշտ ենք համարում դիտարկել ամենից առաջ նոր երևան եկած հանգամանքների էության լույսի ներքո:

¹⁶¹ Տե՛ս **Завериев С.С.**, Пересмотр по вновь открывшимся обстоятельствам решений, определений, постановлений президиума суда надзорной инстанции, вступивших в законную силу, в гражданском процессе. Дис. ... канд. юрид. наук – Москва, 2008, էջեր 89-90:

¹⁶² Տե՛ս **Ахмедов С.М.**, Производство по пересмотру судебных актов по вновь открывшимся обстоятельствам в системе пересмотра судебных актов в арбитражном процессе. Дис. ... канд. юрид. наук – Москва, 2008, էջ 166:

Կարծում ենք, որ հանգամանքների նոր երևան եկած լինելու հնարավորությունը ուղղակի կախվածության մեջ է գտնվում անձի՝ գործի քննությանը մասնակցությունից, քանի որ հանգամանքները այդպիսին կհամարվեն միայն այն դեպքում, երբ դատական ակտի հիմքում չեն դրվի գործի քննության ժամանակ գործին մասնակցող անձանց և դատարանին անհայտ լինելու ուժով: Նման եզրահանգումը բխում է նաև ՔԴՕ 204.32-րդ հոդվածի 1-ին մասի բովանդակությունից, ըստ որի՝ օրենսդիրը նոր երևան եկած է համարում գործի լուծման համար էական նշանակություն ունեցող այն հանգամանքները, որոնք հայտնի չեն եղել և չէին կարող հայտնի լինել գործին մասնակցող անձանց կամ հայտնի են եղել, սակայն նրանց կամքից անկախ պատճառներով չեն ներկայացվել դատարան:

Չետևաբար, գործին մասնակից չդարձվելու պայմաններում անձին նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման բողոք բերելու իրավունքի վերապահումը ընդունելի չի թվում: Այս առումով հատկանշական է, որ ՀՀ վճռաբեկ դատարանը տարբեր գործերով բազմիցս դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ գործին մասնակից չդարձված անձանց հայտնի փաստերը որևէ կերպ չեն կարող համարվել նոր երևան եկած հանգամանքներ, իսկ նրանք չունեն այդ հանգամանքների հիմքով բողոք բերելու իրավունք¹⁶³:

Բացի այդ, բոլոր այն դեպքերում, երբ դատարանը գործը քննում և լուծում է առանց այն անձանց գործի քննությանը մասնակից դարձնելու, ում իրավունքներին և պարտականություններին վերաբերելու է կայացվելիք դատական ակտը, ապա կարելի է խոսել դատարանի կողմից թույլ տրված դատավարական իրավունքի խախտման մասին: Իսկ, ինչպես գիտենք, նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայումը չի կարող ծառայել դատական սխալի վերացմանը: Այդ պատճառով

¹⁶³ Տե՛ս, օրինակ, ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ 3-1206 (ՎԴ) քաղաքացիական գործով 2007 թվականի օգոստոսի 1-ի և թիվ 3-1293 քաղաքացիական գործով 2007 թվականի հոկտեմբերի 10-ի որոշումները:

էլ գործող դատավարական օրենսդրությունը, ի ապահովումն յուրաքանչյուրի արդար դատաքննության իրավունքի, գործին մասնակից չդարձված անձանց, ուն իրավունքների և պարտականությունների վերաբերյալ դատարանը կայացրել է գործն ըստ էության լուծող դատական ակտ, վերապահել է նման դատական ակտերի դեմ ոչ թե նոր երևան եկած հանգամանքներով, այլ վերաքննիչ և վճռաբեկ բողոք բերելու իրավունքով (ՔԴՕ 205-րդ և 229-րդ հոդվ.):

Հարկ է նշել, որ նախկին որոշ խորհրդային հանրապետությունների (Լիտվայի, Լատվիայի, Էստոնիայի, Վրաստանի ՍՍՀ և այլն) քաղաքացիական դատավարության օրենսգրքերը նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման բողոք ներկայացնելու իրավունք էին նախատեսում նաև խորհրդային հանրապետության գերագույն դատարանի նախագահի, նրա տեղակալի, ինչպես նաև ինքնավար մարզի դատարանի նախագահի համար: Ընդ որում, նշված սուբյեկտների համար բողոքարկման ժամկետներ սահմանված չէին¹⁶⁴:

Բնական է, որ ներկայումս այդպիսի կարգավորումներ չեն կարող նախատեսվել ՔԴՕ-ում, քանի որ դրանք, մեղմ ասած, համատեղելի չեն լինի քաղաքացիական դատավարությունում հիմնարար նշանակություն ունեցող տնօրինչականության, կողմերի մրցակցության և իրավահավասարության սկզբունքների հետ:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման վարույթը նախաձեռնելու իրավունքով օժտված են գործին մասնակցող անձինք, նրանց իրավահաջորդները, եթե վիճելի կամ դատական ակտով սահմանված իրավահարաբերությունը թույլ է տալիս իրավահաջորդություն, ինչպես նաև գլխավոր դատախազը և նրա տեղակալները՝ օրենքով նախատեսված դեպքերում:

¹⁶⁴ Տե՛ս **Воложанин В.П. и др.**, Советский гражданский процесс. - М., Изд-во «Юрид. С 56 лит.», 1978, էջ 341:

§ 2. Նոր երևան եկած հանգամանքներով վերանայման օբյեկտները և բողոք ներկայացնելու ժամկետները

Իրավաբանական գրականության մեջ երբեմն բանավեճերի առարկա է հանդիսանում այն հարցը, թե ինչը պետք է համարել նոր երևան եկած հանգամանքներով վերանայման օբյեկտ: Այսպես, օրինակ, Տ.Տ. Ալիևը, որպես նոր երևան եկած հանգամանքներով վերանայման օբյեկտ, դիտարկում է քաղաքացիական գործն ամբողջությամբ: Հեղինակն իր դիրքորոշման հիմքում դնում է այն հիմնավորումը, որ դատարանը նոր երևան եկած հանգամանքի առկայությունը կամ բացակայությունը պարզելու համար չի կարող սահմանափակվել միայն վերանայվող դատական ակտով և այդ հարցում ճիշտ եզրահանգման գալու համար պետք է հետազոտի ոչ միայն վերանայվող դատական ակտը, այլև քաղաքացիական գործն ամբողջությամբ¹⁶⁵:

Ի տարբերություն Տ.Տ. Ալիևի՝ Ա.Ն. Ռեզունենկոն նշում է, որ դատարանը քաղաքացիական գործի նյութերը հետազոտում է բացառապես նոր երևան եկած հանգամանքի առկայությունը կամ բացակայությունը պարզելու և դատական ակտի վերանայման հարցը լուծելու նպատակով: Արդյունքում հեղինակն արտահայտում է այն տեսակետը, որ նոր երևան եկած հանգամանքներով վերանայման օբյեկտը, այդուհանդերձ, հանդիսանում է դատական ակտը և ոչ թե քաղաքացիական գործն ընդհանրապես¹⁶⁶:

Ա.Ն. Ռեզունենկոյի տեսակետը, մեր կարծիքով, առավել հիմնավոր է թվում, քանի որ հանգամանքի «նոր երևան եկած» լի-

¹⁶⁵ Տե՛ս **Алиев Т.Т.**, Производство по пересмотру судебных постановлений ввиду вновь открывшихся обстоятельств в гражданском судопроизводстве: теоретические аспекты, перспективы развития. Дис. ... док. юрид.наук, - Саратов, 2005, т. 109:

¹⁶⁶ Տե՛ս **Резуненко А.Н.**, Пересмотр судебных актов, вступивших в законную силу, по вновь открывшимся обстоятельствам как стадия гражданского процесса. Дис. ... канд. юрид. наук – Волгоград, 2001, էջեր 93-94:

նելը հնարավոր է պարզել միայն գործի բոլոր նյութերի հետազոտության պայմաններում և այն այդպիսին լինելու դեպքում անօրինական կամ անհիմն կարող է դառնալ և վերանայման անհրաժեշտություն ունենալ ոչ թե քաղաքացիական գործն ընդհանրապես, այլ գործի շրջանակներում կայացված դատական ակտը: Հետևաբար, որպես նոր երևան եկած հանգամանքներով վերանայման օբյեկտներ պետք է դիտարկել դատական ակտերը:

Այդպիսի մոտեցմամբ է առաջնորդվել նաև օրենսդիրը՝ ՔԴՕ 204.30-րդ հոդվածում սահմանելով, որ նոր երևան եկած հանգամանքներով վերանայման ենթակա է միայն օրինական ուժի մեջ մտած դատական ակտը: Ընդ որում, նույն հոդվածի համաձայն՝ առաջին ատյանի դատական ակտերը ենթակա են վերանայման վերաքննիչ դատարանի կողմից, իսկ վերաքննիչ և վճռաբեկ դատարանների դատական ակտերը՝ վճռաբեկ դատարանի կողմից:

Նման պայմաններում գործին մասնակցող անձանց՝ նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի բողոքարկման իրավունքի պատշաճ իրականացման ապահովման տեսանկյունից կարևորվում է նոր երևան եկած հանգամանքներով վերանայման ենթակա դատական ակտերի շրջանակի ճշգրիտ որոշումը, քանի որ ՔԴՕ-ի համաձայն՝ դատական ակտ հասկացությունն ունի ընդգրկուն քաղաքացիադատավարական բովանդակություն և իր մեջ ներառում է քաղաքացիական գործերով կայացվող վճիռները, որոշումները և արձակվող վճարման կարգադրությունները:

Կ.Ի. Կոմիսարովի կարծիքով նոր երևան եկած հանգամանքներով, որպես կանոն, վերանայման ենթակա են առաջին ատյանի դատարանի վճիռները, իսկ որոշումներից՝ միայն հայցն առանց քննության թողնելու մասին որոշումը, քանի որ մյուս որոշումներում արտացոլված դատարանի հետևությունները չեն կրում վերջնական բնույթ և կարող են ճշգրտվել առանց այդ որոշումների բեկանման¹⁶⁷: Ըստ էության, նույնանման տեսակետ է

¹⁶⁷ Տե՛ս **Воложанин В.П. и др.**, Советский гражданский процесс. - М., Изд-во «Юрид. С 56 лит.», 1978, էջեր 339-340:

արտահայտել նաև Վ. Մ. Շերստյուկը¹⁶⁸:

Իսկ Ի.Մ. Ջայցևը նոր երևան եկած հանգամանքներով վերանայման ենթակա համարում է արդարադատության այն ակտերը, որոնցով գործի վարույթը վեճի լուծմամբ կամ առանց վեճն ըստ էության լուծելու ավարտվում է ցանկացած ատյանում, ինչպես նաև լրացուցիչ որոշումները¹⁶⁹: Ի տարբերություն վերոնշյալ հեղինակների՝ Մ.Յու. Լեբեդևը, որպես նոր երևան եկած հանգամանքներով վերանայման օբյեկտ, նշում է բոլոր դատական ակտերը¹⁷⁰:

Հաշվի առնելով վերոշարադրյալը՝ կարծում ենք, որ անվիճելի է հեղինակների այն տեսակետը, որ առաջին ատյանի դատարանի վճիռը հանդիսանում է նոր երևան եկած հանգամանքներով վերանայման օբյեկտ: Իսկ ինչ վերաբերում է որոշումները նոր երևան եկած հանգամանքներով վերանայման օբյեկտ դիտարկելու հիմնահարցին, ապա այս առնչությամբ իրավաբանական գրականության մեջ հանդիպում են բավականին տարբեր մոտեցումներ: Այսպես, ըստ Լ.Ս. Մորոզովայի, նոր երևան եկած հանգամանքներով կարող են վերանայվել միայն առաջին ատյանի դատարանի առանձին դատական ակտերը, մասնավորապես՝ արգելող և գործի վարույթն ավարտող որոշումները¹⁷¹: Իսկ Ա.Ն. Ռեզունենկոն նոր երևան եկած եկած հանգամանքներով վերանայման ենթակա համարում է քաղաքացիական գործի հարուցման, նախապատրաստության, ըստ էության քննության և դատական ակտերի կատարման կապակցությամբ առաջին ատ-

¹⁶⁸ См. Гражданский процесс: Учебник. 3-е изд., перераб. и доп. /Под ред. **М.К. Треушников**: Издательский Дом «Городец», 2010, էջ 579:

¹⁶⁹ См. **Петрова И.А.**, Пересмотр судебных актов по вновь открывшимся обстоятельствам в гражданском и арбитражном процессах (сравнительно-правовой аспект). Дис. ... канд. юрид. наук– Москва, 2010, էջ 40:

¹⁷⁰ См. **Лебедев М.Ю.** Гражданский процесс: учебник для вузов и ссузов /М. Ю. Лебедев. – М.: Изд-во «Юрайт»; Высшее образование, 2010, էջ 340:

¹⁷¹ См. **Морозова Л.С.**, Пересмотр решений по вновь открывшимся обстоятельствам. – М.: Госюриздат, 1959, էջ 59:

յանի դատարանի կողմից կայացված որոշումները: Ընդ որում, որոշումների նման լայն շրջանակը պայմանավորված է այն հանգամանքով, որ հեղինակը որոշման վերանայման օբյեկտ հանդիսանալու հանգամանքը կապում է որոշման ինքնուրույն ուժի մեջ մտնելու հատկության հետ¹⁷²: Որոշման նոր երևան եկած հանգամանքներով վերանայման հնարավորության հարցը դրա ինքնուրույն ուժի մեջ մտնելու հանգամանքով է պայմանավորում նաև Ս.Տ. Ալիևը, ով առաջարկում է վերանայման ենթակա դատական ակտերի ավելի ընդգրկուն ցանկ¹⁷³:

Վերոգրյալից կարելի է եզրակացնել, որ նոր երևան եկած հանգամանքներով որոշումների վերանայման հնարավորությունը մեծապես կախվածության մեջ է դրված դրա ինքնուրույն օրինական ուժի մեջ մտնելու հանգամանքից, ինչն այնքան էլ հիմնավոր չի թվում: Խոսքն այն մասին է, որ քաղաքացիական գործերով բոլոր որոշումներն էլ ունակ են մտնելու օրինական ուժի մեջ (ՔԴՕ 144¹ հոդվ.): Մինչդեռ քաղաքացիատավարական օրենսդրության վերլուծությունը վկայում է, որ առաջին ատյանի դատարանի ոչ բոլոր միջանկյալ դատական ակտերն են ենթակա բողոքարկման, այլ հիմնականում նրանք, որոնք կարող են կասեցնել կամ խոչընդոտել դատարանի մատչելիության իրավունքի իրացման ընթացքը:

Օրենսդրի նման մոտեցումը բխում է այն ողջամիտ տրամաբանությունից, որ հարուցված, չկասեցված և շարունակվող վարույթի տրամաբանական ավարտը գործն ըստ էության լուծող դատական ակտի կայացումն է, հետևաբար՝ նման վարույթի շրջանակներում կայացված միջանկյալ ակտերը, անձի իրա-

¹⁷² Տե՛ս *Резуценко А.Н.*, Пересмотр судебных актов, вступивших в законную силу, по вновь открывшимся обстоятельствам как стадия гражданского процесса. Дис. ... канд. юрид. наук – Волгоград, 2001, էջ 102:

¹⁷³ Տե՛ս *Алиев Т.Т.*, Производство по пересмотру судебных постановлений ввиду вновь открывшихся обстоятельств в гражданском судопроизводстве: теоретические аспекты, перспективы развития. Дис. ... док. юрид. наук - Саратов, 2005, էջեր 120-124:

վունքի ենթադրյալ խախտման դեպքում կարող են վիճարկվել գործն ըստ էության լուծող դատական ակտի բողոքարկման շրջանակներում: Մինչդեռ կասեցված կան ընդհատված վարույթի պարագայում նման հնարավորությունը բացառվում է և միջանկյալ դատական ակտի դեմ պաշտպանության միակ միջոցը դրա անմիջական բողոքարկման հնարավորությունն է¹⁷⁴:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ գտնում ենք, որ նոր երևան եկած հանգամանքներով վերանայման ենթակա են առաջին ատյանի դատարանի ոչ թե ցանկացած, այլ միայն այն որոշումները (միջանկյալ դատական ակտերը), որոնց համար օրենքով նախատեսված է անմիջական բողոքարկման հնարավորություն:

Անհրաժեշտ ենք համարում ուշադրության հրավիրել նաև նոր երևան եկած հանգամանքներով վճարման կարգադրության¹⁷⁵ վերանայման հնարավորության հարցը, որի կապակցությամբ մասնագիտական գրականության մեջ հանդիպում են հակասական տեսակետներ: Այսպես, Ս.Ս. Ջավրիևը, հիմնավորելով նոր երևան եկած հանգամանքներով վճարման կարգադրության վերանայման կառուցակարգի նախատեսման անհրաժեշտությունը, նշում է, որ վճարման կարգադրությունը դեռևս չի կարող հանդիսանալ նոր երևան եկած հանգամանքներով վերանայման օբյեկտ¹⁷⁶: Ի տարբերություն Ս.Ս. Ջավրիևի՝ Ի.Ա. Պետրովան, հաշվի առնելով օրենսդրական ուղղակի արգելքի բացակայությունը, հանգել է այն եզրակացության, որ վճարման կարգադ-

¹⁷⁴ Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի 2010 թվականի նոյեմբերի 2-ի թիվ ԱԴՈ-922 որոշումը (ՀՀՊՏ 2010.11.10/57(791) Հոդ. 1252):

¹⁷⁵ Ռուսաստանի Դաշնության քաղաքացիական դատավարության օրենսգրքում վճարման կարգադրությանը իր իրավական բնույթով համարժեք դատական ակտը կոչվում է դատական հրաման: Հետևաբար, դրա վերաբերյալ արտահայտված դիրքորոշումները, ըստ էության, կիրառելի են նաև վճարման կարգադրության նկատմամբ:

¹⁷⁶ Տե՛ս **Запруев С.С.**, Пересмотр по вновь открывшимся обстоятельствам решений, определений, постановлений суда надзорной инстанции, вступивших в законную силу, в гражданском процессе. Дис. ... канд. юрид. наук –Москва, 2008, էջեր 105-106:

րութունը կարող է վերանայվել նոր երևան եկած հանգամանքներով¹⁷⁷:

Մենք ևս հակված ենք այն կարծիքին, որ վճարման կարգադրությունը կարող է վերանայվել նոր երևան եկած հանգամանքներով: Ասվածը պայմանավորված է ամենից առաջ վճարման կարգադրության իրավական բնույթով, որն իրենից ներկայացնում է պարտապանից որոշակի դրամական գումարներ բռնագանձելու վերաբերյալ առերևույթ (*prima facie*) հիմնավոր պահանջով առանց դատական նիստ հրավիրելու, բանավոր ապացույցներ հետազոտելու և պահանջի հիմնավորվածությունն ըստ էության ստուգելու, դատարանի կողմից դիմողի ներկայացրած առերևույթ արժանահավատ ապացույցների հիման վրա կայացվող դատական ակտ, որը ստանում է օրինական ուժի մեջ մտած վճռի ուժ օրենքով սահմանված ժամկետում դրա վերաբերյալ պարտապանի կողմից առարկություններ չներկայացնելու դեպքում¹⁷⁸: Այլ կերպ ասած՝ օրենքում նախատեսված պայմանների առկայության դեպքում վճարման կարգադրությունը դառնում է օրինական ուժի մեջ մտած գործն ըստ էության լուծող դատական ակտ, որի վերանայման օբյեկտ հանդիսանալու հանգամանքը որևէ տեսանկյունից կասկած չի հարուցում: Այդ մասին է վկայում նաև ձևավորված իրավակիրառ պրակտիկան, որում հանդիպում են նոր երևան եկած հանգամանքներով վճարման կարգադրությունների վերանայման դեպքեր¹⁷⁹: Այդուհանդերձ, ելնելով իրավական որոշակիության սկզբունքի պահպանման անհրաժեշտությունից՝ նպատակահարմար կլիներ ՔԴՕ-ում նա-

¹⁷⁷ Տե՛ս *Пемпоев И.А.* Пересмотр судебных актов по вновь открывшимся обстоятельствам в гражданском и арбитражном процессах (сравнительно-правовой аспект). Дис. ... канд. юрид. наук – Москва, 2010, էջ 47:

¹⁷⁸ Տե՛ս *Մեղրյան Ս.Գ.* Առաջին ատյանի դատարանի քաղաքացիական գործերով դատական ակտերը: Երևանի պետ. համալսարան: Եր.: ԵՊՉ հրատ. – 2010, էջ 61:

¹⁷⁹ Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 2010 թվականի հուլիսի 30-ի թիվ ՎԴ/22343/03/08 որոշումը, 2011 թվականի մարտի 4-ի թիվ ՎԴ/34786/03/09 որոշումը և այլն:

խատեսել վճարման կարգադրության բողոքարկման վերաբերյալ դրույթներ, ինչպես որ դա արված է, օրինակ, Ուկրաինայի քաղաքացիական դատավարության օրենսգրքում (361-րդ հոդվ., 1-ին մաս)¹⁸⁰:

Ելնելով վերոշարադրյալից՝ կարելի է եզրակացնել, որ վերաքննիչ դատարանի կողմից նոր երևան եկած հանգամանքներով վերանայման ենթակա են առաջին ատյանի դատարանի օրինական ուժի մեջ մտած վճիռները, օրինական ուժի մեջ մտած վճռի ուժ ստացած վճարման կարգադրությունները և միայն այն որոշումները, որոնց համար օրենքով նախատեսված է վերաքննության հնարավորություն:

Առաջին ատյանի դատարանի նշված դատական ակտերից բացի, նոր երևան եկած հանգամանքներով կարող են վերանայվել նաև վերաքննիչ և վճռաբեկ դատարանների օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը: Ըստ որում, դրանց շրջանակի կապակցությամբ ևս մասնագիտական գրականության մեջ արտահայտվել են տարբեր կարծիքներ: Այսպես, ըստ Վ.Ս. Շերստյուկի՝ նոր երևան եկած հանգամանքներով կարող են վերանայվել վերաքննիչ և վճռաբեկ դատարանների այն դատական ակտերը, որոնցով փոփոխվել է ստորադաս դատարանի դատական ակտը, կարճվել գործի վարույթը կամ հայցը թողնվել է առանց քննության¹⁸¹: Ըստ էության, նույնաբովանդակ կարծիք է արտահայտել Մ.Ս. Շաքարյանը, ով նոր երևան եկած հանգամանքներով վերանայման ենթակա համարում էր վերադաս դատարանների այն որոշումները, որոնցով բեկանվել և փոփոխվել են ստորադաս դատարանների դատական ակտերը¹⁸²:

Կ.Ի. Կոմիսարովը ևս հնարավոր է համարում վերադաս դատարանների դատական ակտերի նոր երևան եկած հանգա-

¹⁸⁰ Стів Гражданский процессуальный кодекс Украины. – Х.: Одиссей, 2011, էջ 147:

¹⁸¹ Стів Гражданский процесс: Учебник. 3-е изд., перераб. и доп. /Под ред. **М.К. Треушников**.: Издательский Дом «Городец», 2010, էջ 579:

¹⁸² Стів Советский гражданский процесс: Учебник. /Отв. ред. **М.С. Шакарян**: Изд-во «Юридическая литература», М., 1985, էջ 378:–

մանքներով վերանայման հնարավորությունը, մասնավորապես՝ այն ակտերի, որոնցով ավարտվում է գործի վարույթը: Միևնույն ժամանակ, հեղինակը կարծիք է հայտնում այն մասին, որ գործը նոր քննության ուղարկելու մասին որոշումը չի կարող նոր երևան եկած հանգամանքներով վերանայման օբյեկտ հանդիսանալ, քանի որ այն չի խոչընդոտում գործի նոր քննությունը նոր երևան եկած հանգամանքների հաշվառմամբ իրականացնելուն¹⁸³:

Ի տարբերություն նշված հեղինակների, Դ.Ն. Վատմանը նոր երևան եկած հանգամանքներով վերանայման օբյեկտ է դիտարկում վերադաս դատական ատյանների կողմից կայացվող բոլոր դատական ակտերը՝ այդ կապակցությամբ չնշելով որևէ սահմանափակում¹⁸⁴:

Վերը շարադրված բոլոր տեսակետներն էլ, մեր կարծիքով, պարունակում են որոշակի թերություններ: Մասնավորապես, ԲԴՕ-ի ուսումնասիրությունը վկայում է, որ ՀՀ վերաքննիչ դատարանի՝ ինչպես գործն ըստ էության լուծող, այնպես էլ միջանկյալ դատական ակտերի դեմ բերված վերաքննիչ բողոքների քննության արդյունքում կայացված բոլոր դատական ակտերն առանց սահմանափակման վճռաբեկ բողոքի հիման վրա կարող են վերանայվել ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից (ԲԴՕ 221 հոդվ., 222 հոդվ., մաս 2):

Հետևաբար, արտահայտված այն տեսակետը, որ նոր երևան եկած հանգամանքներով վերանայման ենթակա են վերադաս դատարանների միայն այն որոշումները, որոնցով բեկանվել և փոփոխվել են ստորադաս դատարանների դատական ակտերը, իսկ գործը նոր քննության ուղարկելու մասին որոշումը ենթակա չէ վերանայման, ասվածի լույսի ներքո ոչ ամբողջական է ար-

¹⁸³ Стів Гражданский процесс: Учебник / [Абушенко Д.Б. и др.]; отв. ред. – В.В. Ярков. – 7-е изд., перераб. и доп. – М.: Волтерс Клувер, 2009, էջ 572:

¹⁸⁴ Стів Резуненко А.Н., Пересмотр судебных актов, вступивших в законную силу, по вновь открывшимся обстоятельствам как стадия гражданского процесса. Дис. ... канд. юрид. наук – Волгоград, 2001, էջ 96:

տացուլուն իրերի իրական դրությունը:

Միևնույն ժամանակ, դա չի նշանակում, որ վերաքննիչ դատարանի բոլոր դատական ակտերն են ենթակա վերանայման նոր երևան եկած հանգամանքներով: Այլ կերպ ասած՝ մենք չենք կիսում Դ.Ն. Վատմանի կարծիքն այն մասին, որ վերադաս դատարանների բոլոր դատական ակտերն էլ հանդիսանում են նոր երևան եկած հանգամանքներով վերանայման օբյեկտներ: Խնդիրը նրանում է, որ վերաքննիչ դատարանը, բացի գործն ըստ էության լուծող և միջանկյալ դատական ակտերի դեմ բերված վերաքննիչ բողոքների քննության արդյունքում կայացված դատական ակտերից, վերաքննիչ բողոքարկման ընթացքում կայացնում է մի շարք միջանկյալ դատական ակտեր (վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու, պետական տուրքի վճարումը հետաձգելու, վերաքննիչ վարույթը կասեցնելու և այլն), որոնցից, սակայն, ոչ բոլորը կարող են լինել վերանայման օբյեկտ:

Նման դիրքորոշումը պայմանավորված է այն հանգամանքով, որ ՀՀ դատական օրենսգրքի 50-րդ հոդվածի 6-րդ մասը սահմանում է վերաքննիչ դատարանի միջանկյալ դատական ակտերի վերանայման հնարավորությունը միայն օրենքով նախատեսված բացառիկ դեպքերում: Այլ կերպ ասած՝ վերաքննիչ դատարանի միջանկյալ դատական ակտերը ենթակա են վերանայման, եթե դա ուղղակիորեն նախատեսված է օրենքով: Իսկ ՔԴՕ 222-րդ հոդվածի 3-րդ մասի բովանդակությունից հետևում է, որ վճարել դատարանի կողմից, այդ թվում՝ նոր երևան եկած հանգամանքներով, կարող են վերանայվել միայն վերաքննիչ դատարանի՝ վերաքննիչ բողոքը վերադարձնելու, վերաքննիչ վարույթը կարճելու և կասեցնելու, ինչպես նաև դատական տուգանք կիրառելու վերաբերյալ միջանկյալ դատական ակտերը¹⁸⁵: Հետևաբար,

¹⁸⁵ Կարծում ենք, որ նման սպառիչ ցանկ սահմանելիս օրենսդիրը թույլ է տվել բացթողում այն առումով, որ դրանց շարքում նշված չէ նաև վերաքննիչ դատարանի դատավորի ինքնաբացարկի մասին որոշման վերանայման հնարավորությունը: Մինչդեռ ՀՀ դատական օրենսգրքի 91-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ ինքնաբացարկի մասին որոշումը ևս ենթակա է բողոքարկման, որպիսի պայմաններում ՔԴՕ 222-րդ հոդվածի 3-րդ մասում պետք է կատարել համապատասխան լրացում:

վերաքննիչ դատարանի այն միջանկյալ դատական ակտերը, որոնց համար օրենքով նախատեսված չէ վերանայման հնարավորություն, չեն հանդիսանում նոր երևան եկած հանգամանքներով վերանայման օբյեկտ, իսկ անձի ենթադրյալ խախտված իրավունքների պաշտպանությունը այդ դեպքում կարող է իրականացվել միայն գործն ըստ էության լուծող դատական ակտի բողոքարկման, այսինքն՝ «հետաձգված բողոքարկման» շրջանակում:

Այսպիսով, վճռաբեկ դատարանի կողմից նոր երևան եկած հանգամանքներով վերանայման ենթակա են վերաքննիչ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած գործն ըստ էության լուծող և միջանկյալ դատական ակտերի դեմ բերված վերաքննիչ բողոքների քննության արդյունքում կայացված դատական ակտերը, ինչպես նաև այն միջանկյալ դատական ակտերը, որոնց համար օրենքով նախատեսված է բողոքարկման հնարավորություն:

Իսկ ինչ վերաբերում է նոր երևան եկած հանգամանքներով վերանայման ենթակա վճռաբեկ դատարանի դատական ակտերի շրջանակին, ապա այս առնչությամբ նախևառաջ պետք է նկատի ունենալ, որ վճռաբեկ դատարանի կողմից նոր երևան եկած հանգամանքներով իր իսկ որոշումների վերանայումը հանդիսանում է բացառություն ընդհանուր կանոնից: Ասվածը հիմնավորվում է այն հանգամանքով, որ, ՔԴՕ-ի համաձայն, վճռաբեկ դատարանի որոշումները վերջնական են և ենթակա չեն բողոքարկման: Այդ իսկ պատճառով ՔԴՕ-ն չի պարունակում որևէ դրույթ վճռաբեկ դատարանի դատական ակտերի վերանայման վերաբերյալ, որպիսի պայմաններում միակ կիրառելի իրավակարգավորումը հանգում է նրան, որ դատական ակտը պետք է լինի օրինական ուժի մեջ մտած (ՔԴՕ 204.30 հոդվ.): Սակայն նման մոտեցումն էլ կարող է հանգեցնել մեկ այլ ծայրահեղության, երբ նոր երևան եկած հանգամանքներով վերանայման օբյեկտներ դիտարկվեն վճռաբեկ դատարանի բոլոր դատական ակտերը, այդ թվում՝ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու մասին որոշումը:

Մինչդեռ, մեր կարծիքով, առաջադրված հարցը պետք է

ստանա այլ լուծում՝ հաշվի առնելով նաև ընդհանրապես վճռաբեկ վարույթի իրավակարգավորման հիմքում ընկած տրամաբանությունը: Մասնավորապես, նկատի ունենք ՔԴՕ-ում նախատեսված վճռաբեկ բողոք բերելու այն սահմանափակումը, ըստ որի՝ անձը կարող է վճռաբեկ բողոք բերել դատական ակտի միայն իր համար անբարենպաստ մասի դեմ: Ընդ որում, նշված սահմանափակման չպահպանումը կհանգեցնի վճռաբեկ բողոքի վերադարձման, քանի որ բողոքը բերված կլինի այն անձի կողմից, ում իրավունքը չի խախտվել: Հետևաբար, կարելի է ենթադրել, որ վճռաբեկ դատարանի կողմից նոր երևան եկած հանգամանքներով վերանայման օբյեկտներ են հանդիսանում վճռաբեկ դատարանի ոչ թե բոլոր, այլ միայն օրինական ուժի մեջ մտած այն դատական ակտերը, որոնք բողոք բերած անձի համար կարող են ունենալ անբարենպաստ նշանակություն:

Այս առնչությամբ ուշագրավ է նաև այն փաստը, որ իրավակիրառ պրակտիկայում նոր երևան եկած հանգամանքներով առավելապես բողոքարկվում են վճռաբեկ բողոքը վերադարձնելու և գործի քննության արդյունքներով կայացված վճռաբեկ դատարանի որոշումները¹⁸⁶:

Ամփոփելով վերոգրյալը՝ պետք է արձանագրել, որ նոր երևան եկած հանգամանքներով վերանայման օբյեկտներ են հանդիսանում նաև այն դատական ակտերը, որոնց վերանայումը նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտման հիմքով անհնար է: Իսկ այդ հանգամանքը միարժեք դրական պետք է դիտարկել ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված դատական պաշտպանության իրավունքի և դրա կարևոր բաղադրիչ հանդիսացող դատական ակտերի բողոքարկման իրավունքի երաշխավորման տեսանկյունից:

Նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման վարույթի օբյեկտիվ նախադրյալներից մեկն էլ բո-

¹⁸⁶ Տե՛ս, օրինակ, ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ՎԴ/5705/05/08 վարչական գործով 2009 թվականի հուլիսի 24-ի և թիվ ԱՐԱԴ/0223/02/09 քաղաքացիական գործով 2010 թվականի դեկտեմբերի 27-ի որոշումները:

դոք բերելու համար սահմանված ժամկետն է: ՔԴՕ 204.34-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտի վերանայման բողոք կարող է բերվել 3 ամսվա ընթացքում այն օրվանից, երբ բողոք բերող անձն իմացել է կամ կարող էր իմանալ դրանց ի հայտ գալու մասին: Այսինքն՝ օրենսդիրը բողոքի ներկայացման համար նախատեսված եռամսյա ժամկետի հաշվարկման մեկնակետը սահմանել է՝ ելնելով կա՛ն սուբյեկտիվ (իմացել է), կա՛ն օբյեկտիվ (կարող էր իմանալ) չափանիշներից:

Մինչդեռ նման ընդհանրական ձևակերպումը, մեր կարծիքով, հետևանք է այն բանի, որ դրանում հաշվի առնված չեն նոր երևան եկած հանգամանքների առանձին խմբերին բնորոշ առանձնահատկությունները: Մասնավորապես, ինչպես բխում է ՔԴՕ 204.32-րդ հոդվածի 1-ին կետի բովանդակությունից, հանգամանքները նոր երևան եկած կարող են համարվել միայն այն դեպքում, երբ դրանք ոչ միայն հայտնի չեն եղել, այլև չէին կարող հայտնի լինել բողոք բերած անձին: Այդ իսկ պատճառով նոր երևան եկած հանգամանքների այս խմբի հիմքով բողոք բերելու ժամկետի հաշվարկման օր կարող է հանդիսանալ բացառապես դրանց մասին բողոք բերող անձի իմանալու օրը:

Իսկ բոլոր այն դեպքերում, երբ դատական ակտերի վերանայման բողոքը բերվում է նոր երևան եկած հանգամանքների մյուս խմբերի հիմքով, ապա արդարացված է թվում բողոք բերելու ժամկետի հաշվարկն այն օրվանից, երբ բողոք բերող անձը կարող էր իմանալ այդ հանգամանքների երևան գալու մասին: Նման դիրքորոշումը պայմանավորված է այն իրողությամբ, որ քննարկվող նոր երևան եկած հանգամանքները, որպես կանոն, պետք է հաստատվեն դատական ակտերով, որոնք, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի, ենթակա են պարտադիր հրապարակման Հայաստանի Հանրապետության դատական իշխանության պաշտոնական ինտերնետային կայքում, իսկ դրանց օրինական ուժի մեջ մտնելու պահից յուրաքանչյուր ոք իրավունք ունի ծանոթանալու համապատասխան դատական գործին (ՀՀ

դատական օրենսգրքի 20-րդ հոդվ., 4-րդ մաս և 68-րդ հոդվ., 1-ին մաս): Դրանով իսկ այս հանգամանքները ստանում են հանրամատչելի բնույթ, ինչը գործնականում կարող է անհնար դարձնել դրանց մասին փաստացի իմանալու և դրանց մասին իմանալու հնարավորության առաջացման պահերի հարցի լուծումը:

Այս տեսանկյունից առավել ընդունելի է Ռուսաստանի Դաշնության, Ուկրաինայի քաղաքացիական դատավարության օրենսգրքերի համապատասխանաբար 395-րդ 362-րդ հոդվածների 2-րդ և 3-րդ մասերի կանոնակարգումները, որոնք բողոք բերելու ժամկետի հաշվարկի սկիզբ են համարում նոր երևան եկած հանգամանքները հաստատող դատավճիռների օրինական ուժի մեջ մտնելու օրը¹⁸⁷: Ընդ որում, պետք է նշել, որ հարցն այս կերպ էր լուծված դեռևս 1864 թվականի Քաղաքացիական դատավարության կանոնագրքում¹⁸⁸:

Գործող դատավարական օրենսդրության ուսումնասիրությունը թույլ է տալիս պնդելու, որ այն չի պարունակում հատուկ կանոններ, որոնք կոչված են կարգավորելու գործին մասնակցող անձանց իրավահաջորդների կողմից դատական ակտերի բողոքարկման համար սահմանված ժամկետի հաշվարկման հետ կապված հարաբերությունները: Արդյունքում ստացվում է, որ այդ անձինք ևս նոր երևան եկած հանգամանքներով բողոք բերելու իրավունք ունեն երեք ամսվա ընթացքում այն օրվանից հաշվարկված, երբ իմացել են կամ կարող էին իմանալ նոր երևան եկած հանգամանքների ի հայտ գալու մասին:

Այնինչ իրերի նման դրությունը որոշակիորեն խնդրահարույց

¹⁸⁷ Ст'я Комментарий к Гражданскому процессуальному кодексу Российской Федерации /под ред. **М.А. Вукот.** М.: Изд-во «Юрайт», 2012, էջ 515, Гражданский процесс Украины: Учебное пособие для подготовки к экзамену / **Погребной С.А., Гонгало Р.Ф., Волкова Н.В. и др.** – Х.: Одиссей, 2011, էջեր 183-184:

¹⁸⁸ Ст'я **Հովհաննիսյան Վ.Վ.**, Քաղաքացիական գործերով դատական վերանայման ինստիտուտի զարգացման հիմնախնդիրները Հայաստանում /Վ.Վ. Հովհաննիսյան: Երևանի պետ. համալսարան: - Երևան, ԵՊՀ հրատ., 2011, էջեր 146-147:

է թվում: Նախնառաջ, չեն բացառվում այն իրավիճակները, երբ գործին մասնակցող անձի իրավահաջորդ դարձած անձը մինչև նյութական իրավահարաբերությունում իրավահաջորդության պահը արդեն իսկ առնվազն երեք ամիս իրազեկ լինի նոր երևան եկած հանգամանքներին: Իսկ այդ հանգամանքը ՔԴՕ 204.34-րդ հոդվածի 1-ի մասի տառացի մեկնաբանման պայմաններում, փաստորեն, թույլ կտա խոսել այն մասին, որ վերջինս բաց է թողել բողոք բերելու ժամկետը:

Մյուս կողմից, մտահոգությունների տեղիք է տալիս այն, որ ՔԴՕ-ն գործին մասնակցող անձի իրավահաջորդի կողմից նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտը բողոքարկելիս որևէ նշանակություն չի տալիս այն հարցին, թե արդյոք դատավարությունից դուրս եկած գործին մասնակցող անձը իմացել է նոր երևան եկած հանգամանքների մասին: Հետևաբար, կարելի է եզրակացնել, որ գործին մասնակցող անձի իրավահաջորդը զրկված չէ նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի բողոքարկման իրավունքից նույնիսկ այն դեպքում, երբ իրավանախորդը, տեղեկանալով այդ հանգամանքների մասին, բաց է թողել բողոք բերելու ժամկետը:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ գտնում ենք, որ անհրաժեշտ է ՔԴՕ-ում ամրագրել գործին մասնակցող անձանց իրավահաջորդների կողմից բողոք բերելու ժամկետի հաշվարկման վերաբերյալ առանձին դրույթ, քանի որ առկա վիճակը իր մեջ պարունակում է կողմերի իրավահավասարության սկզբունքի խախտման լուրջ վտանգ:

Թեև բողոք բերելու համար սահմանված ժամկետը հանդիսանում է դատավարական հարաբերությունների կայունության, որոշակիության և հստակության ապահովման կարևոր երաշխիք, այնուամենայնիվ, բողոք բերող անձի դիմումով դատարանը կարող է այն վերականգնել, եթե համարի, որ ժամկետի բացթողման պատճառը հարգելի է¹⁸⁹:

¹⁸⁹ Տե՛ս *Коршунов Н.М.*, Гражданский процесс: учеб. пособие /Н.М. Коршунов, Ю.Л. Мареев; пор. ред. Н.М. Коршунова. – М.: МПСИ, 2011, էջ 482:

Միևնույն ժամանակ, ուշադրության է արժանի ԲԴՕ 204.34-րդ հոդվածի 3-րդ մասը, ըստ որի. «Դատական ակտի վերանայման բողոք չի կարող ներկայացվել, եթե դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելուց հետո անցել է քսան տարի»: Այլ կերպ ասած՝ դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելուց հետո քսան տարին լրանալու փաստի ուժով օրենսդիրը բացառել է դրա վերանայման հնարավորությունը նույնիսկ այն դեպքում, երբ անձը բողոքը բերել է օրենքով սահմանված եռամսյա ժամկետի պահպանմամբ կամ վկայակոչել է այդ ժամկետի բացթողման հարգելի պատճառներ: Ընդ որում, ինչպես բխում է ԲԴՕ 204.34-րդ հոդվածի 3-րդ մասի ձևակերպումից, այն, ի տարբերություն դատավարական այլ ժամկետների, չի կարող վերականգնվել կամ երկարաձգվել:

Միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նման սահմանափակող դրույթներ ամրագրված են նաև այլ երկրների դատավարական օրենսդրություններում: Այսպես, օրինակ, Յունգարիայի քաղաքացիական դատավարության օրենսգիրքը չի թույլատրում վարույթի նորոգումն այն դեպքում, երբ դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելու օրվանից անցել է հինգ տարի¹⁹⁰, իսկ ԱՄՆ-ում այդ կապակցությամբ նախատեսված է ավելի սեղմ՝ մեկամյա ժամկետ¹⁹¹:

Հարկ է նշել, որ մասնագիտական գրականության մեջ հանդիպում են տեսակետներ այն մասին, որ նոր երևան եկած հանգամանքներով բողոք բերելու իրավունքը որոշակի ժամկետով սահմանափակելը ընդունելի չէ: Մասնավորապես, ըստ Ա.Ն. Ռեզունենկոյի. «Որոշակի դեպքերում դա կհանգեցնի դատական ակտի վերանայման անհնարինության, քանի որ նոր երևան եկած հանգամանքները կարող են հայտնաբերվել սահմանված առա-

¹⁹⁰ Стен Проверка судебных постановлений в гражданском процессе стран ЕС и СНГ: монография / под ред. **Е.А. Борисовой**. – 2-е изд., перераб. и доп. – М.: Норма, 2012, т. 131:

¹⁹¹ Стен **Аболонин Г.О.**, Гражданское процессуальное право США: монография / **Г.О. Аболонин**. – М.: Волтерс Клувер, 2010, т. 362:

վելագույն ժամկետը լրանալուց հետո: Իսկ այդ հանգամանքը բացասական կանդիդատուրա իրավունքների և շահերի դատական պաշտպանության հնարավորության վրա, իսկ դա էլ իր հերթին էականորեն վնաս կպատճառի քաղաքացիների և իրավաբանական անձանց իրավական վիճակին»¹⁹²:

Կասկած չի հարուցում այն հանգամանքը, որ արդար դատաքննության իրավունքը ամենից առաջ ենթադրում է դատարանի մատչելիություն, այդ թվում՝ բողոքարկման ընթացակարգերում, եթե այդպիսիք նախատեսված են: Սակայն մյուս կողմից չպետք է մոռանալ, որ այն պահպանված է համարվում միայն այն դեպքում, երբ անձը հնարավորություն ունի ստանալու որոշակի, հաստատուն որոշում՝ կապված իր իրավունքների և պարտականությունների հետ, և կարող է համոզված լինել, որ որոշ ժամանակ անց այդ որոշումը չի վերացվի:

Նման պայմաններում ակնհայտ է, որ արդար դատաքննության իրավունքը, ի թիվս այլ դրույթների, պահանջում է որոշակի ժամկետի ամրագրում, որի լրանալը ինքնին կբացառի դատական ակտի վերանայման հնարավորությունը: Այս առումով հատկանշական է, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը մի շարք գործերում հետևողականորեն արձանագրել է արդար դատաքննության իրավունքի խախտում այն պատճառով, որ օրինական ուժի մեջ մտած դատական ակտի վերանայում պահանջելու պետության իրավասու մարմնի իրավունքը չի ունեցել որևէ ժամկետային սահմանափակում¹⁹³: Հետևաբար, ստիպված ենք չհամաձայնել Ա.Ն. Ռեզունենկոյի այն պնդմանը, որ նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման իրավունքը որոշակի ժամկետով պայմանավորելը բացասական է անդրադառնում անձանց դատական պաշտպանության

¹⁹² Տե՛ս **Резуценко А.Н.** Пересмотр судебных актов, вступивших в законную силу, по вновь открывшимся обстоятельствам как стадия гражданского процесса. Дис. ... канд. юрид. наук – Волгоград, 2001, էջեր 126-127:

¹⁹³ Տե՛ս, օրինակ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի **Վոլկովան ընդդեմ Ռուսաստանի** գործով 2005 թվականի ապրիլի 5-ի վճիռը, կետ 34:

իրավունքի վրա:

Հինք ընդունելով վերոգրյալը՝ կարծում ենք, որ անհրաժեշտ է.

1) ՔԴՕ 204.30-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով կարող են վերանայվել օրինական ուժի մեջ մտած այն դատական ակտերը, որոնք ենթակա են բողոքարկման, ինչպես նաև օրինական ուժի մեջ մտած վճռի ուժ ստացած վճարման կարգադրությունները, վճռաբեկ դատարանի՝ վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին և վճռաբեկ բողոքի քննության արդյունքում կայացված որոշումները:»:

2) ՔԴՕ 204.34-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 204.34. Նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով դատական ակտի վերանայման բողոք ներկայացնելու ժամկետը

1. Նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով դատական ակտի վերանայման բողոք կարող է բերվել 3 ամսվա ընթացքում, որի հաշվարկը սկսվում է՝

1) սույն օրենսգրքի 204.32-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված դեպքում՝ այն պահից, երբ բողոք բերող անձն իմացել է դրանց ի հայտ գալու մասին.

2) սույն օրենսգրքի 204.32-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերով նախատեսված դեպքերում՝ դատավճռի օրինական ուժի մեջ մտնելու օրվանից.

3) սույն օրենսգրքի 204.33-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված դեպքում՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի համապատասխան որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից.

4) սույն օրենսգրքի 204.33-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված դեպքում՝ Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ գործող միջազգային դատարանի՝ ուժի մեջ մտած

վճիռը կամ որոշումն այդ դատարանի կանոնակարգերով սահմանված կարգով այդ դատարան դիմած անձին հանձնելու օրվանից.

5) սույն օրենսգրքի 204.33-րդ հոդվածի 3-րդ և 5-րդ կետերով նախատեսված դեպքերում՝ դատարանի դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելու օրվանից.

6) սույն օրենսգրքի 204.33-րդ հոդվածի 4-րդ կետով նախատեսված դեպքում՝ այն դատական կամ վարչական ակտի օրինական ուժի մեջ մտնելու օրվանից, որով համապատասխանաբար բեկանվել է դատական ակտը, դատավճիռը կամ վերացվել վարչական ակտը:

2. Գործին մասնակցող անձի իրավահաջորդի կողմից նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով բողոք ներկայացվելու դեպքում սույն հոդվածի 1-ին մասում նախատեսված եռամսյա ժամկետի մեջ չեն հաշվարկվում գործին մասնակցող անձի մահվանից հետո մինչև ժառանգությունը ձևակերպելը ընկած ժամանակահատվածը, ինչպես նաև այն ժամանակահատվածը, որի ընթացքում անձը մինչև իրավահաջորդ դառնալը իմացել է սույն օրենսգրքի 204.32-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված նոր երևան եկած հանգամանքների մասին:

3. Դատական ակտի վերանայման բողոք չի կարող ներկայացվել, եթե դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելու օրվանից անցել է քսան տարի:»:

§ 3. Նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման վարույթի ձևական նախադրյալները

Նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման վարույթի հարուցման դատավարական միջոցը իրավասու անձանց կողմից ներկայացված բողոքն է, որի ձևին և բովանդակությանը ներկայացվող պահանջների ամբողջությունն էլ կազմում են քննարկվող վարույթի ձևական նախադրյալները:

Հարկ է նշել, որ նախկինում, բացառությամբ Լիտվայի, մնացած խորհրդային հանրապետությունների, այդ թվում՝ Հայաստանի քաղաքացիական դատավարության օրենսգրքերն այս կապակցությամբ որևէ պահանջներ չէին նախատեսում¹⁹⁴: Արդյունքում անհրաժեշտ վավերապայմանների որոշումը հնարավոր էր լինում միայն դատավարական օրենքի համակարգային վերլուծության և տրամաբանական եզրահանգումների միջոցով: Իսկ հարցի այս կերպ լուծումը, ինչպես նշում է Ա.Պ. Տոմինան, բավարարող չէ, քանի որ կարող է ազդել կողմերի մրցակցության և դատարանի վերջնական որոշման արդյունքների վրա¹⁹⁵:

Ենթադրվում էր, որ ՔԴՕ-ի ընդունման ժամանակ այս խնդիրը պետք է արժանանար անհրաժեշտ ուշադրության: Սակայն ՔԴՕ-ի ընդունմամբ ոչ միայն չամրագրվեց նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման բողոքի ձևին և բովանդակությանը ներկայացվող առանձին պահանջներ, այլև ընդհանրապես անտեսվեց նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման վարույթի ինքնուրույն գոյության իրավունքը՝ նոր երևան եկած հանգամանքները դիտարկելով միայն որպես վճռաբեկ բողոք բերելու հիմքեր: Եվ միայն «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության 2007 թվականի նոյեմբերի 28-ի թիվ ՀՕ-277-Ն օրենքի ընդունմամբ իրերի դրությունը շտկվեց, և ՔԴՕ-ն առանձին լրացվեց նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման դիմումի բովանդակությունը սահմանող 204¹²-րդ հոդվածով:

Ներկայումս նոր երևան եկած, ինչպես նաև նոր հանգամանքներով դատական ակտերի վերանայման բողոքին ներկա-

¹⁹⁴ Տե՛ս *Мельников А.А. и др.*, Курс советского гражданского процессуального права. Том II, М., Изд-во «Наука», 1981, էջեր 317-318:

¹⁹⁵ Տե՛ս *Томина А.П.*, Принцип состязательности на стадиях проверки судебных постановлений в гражданском процессе. Дис. ... канд. юрид. наук – Москва, 2008, էջեր 140-141:

յացվող պահանջները սահմանված են ՔԴՕ 204.36-րդ հոդվածում, որում, թեև ուղղակիորեն դրույթներ չկան բողոքի ձևի կապակցությամբ, սակայն, հետազոտվող վարույթը կարգավորող նորմերի համադրված վերլուծությունը վկայում է, որ այն պետք է ներկայացվի գրավոր ձևով:

ՔԴՕ 204.36-րդ հոդվածը սահմանում է, որ նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման բողոքը պետք է պարունակի՝ 1) այն դատարանի անվանումը, որին բողոքը հասցեագրվում է, 2) վերանայման ենթակա դատական ակտի կայացման տարին, ամիսը, ամսաթիվը, 3) դատական ակտի վերանայման հիմք դարձած նոր երևան եկած կամ նոր հանգամանքի շարադրանքը, 4) բողոքով ներկայացվող պահանջը՝ ըստ համապատասխան նոր երևան եկած կամ նոր հանգամանքի, 5) բողոք ներկայացրած անձի անունը, ազգանունը (անվանումը), 6) բողոքին կցվող փաստաթղթերի ցանկը:

Ինչպես բխում է վերոգրյալից, օրենսդիրը, որպես բողոքի բովանդակային տարր, չի ամրագրել բողոք բերող անձի բնակության (գտնվելու) վայրի հասցեի մասին տեղեկությունները: Եվ եթե վերաքննիչ կամ վճռաբեկ բողոքների դեպքում այսպիսի տեղեկությունները կարող են հիմնականում անհրաժեշտ չլինել, քանի որ վերաքննիչ և վճռաբեկ վարույթները ժամանակային առումով, որպես կանոն, կրում են շարունակական բնույթ, ապա նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման վարույթի դեպքում, մեր կարծիքով, իրավիճակն այլ է:

Մասնավորապես, հաշվի առնելով այն, որ այս վարույթի հարուցումը թույլատրելի է դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելուց հետո մինչև քսան տարին լրանալը՝ ակնհայտ է, որ այդ ժամանակահատվածում ողջամտորեն հնարավոր է բողոք բերող անձի հասցեի փոփոխություն: Իսկ բոլոր այն դեպքերում, երբ բողոքարկման նախաձեռնություն են ցուցաբերում գործին մասնակցող անձանց իրավահաջորդները և գործի քննությանը մասնակցություն չունեցած դատախազությունը, ապա հասկանալի է, որ նրանց կողմից իրենց հասցեները հայտնելու պարտակա-

նության նախատեսումը ավելի, քան անհրաժեշտ է: Հետևապես, կարելի է համաձայնել Ա.Բ. Բորիսովայի այն կարծիքի հետ, որ բողոքը պետք է պարունակի, ի թիվս այլ տեղեկությունների, նաև բողոք բերող անձի բնակության կամ գտնվելու վայրի հասցեն¹⁹⁶:

Մասնագիտական գրականության մեջ որպես նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտի վերանայման բողոքին ներկայացվող պահանջ է դիտարկվում գործի համարը և դատական ակտը կայացրած դատարանի անվանումը¹⁹⁷: Դատական գործի համարը, համաձայն ՀՀ Դատարանների նախագահների խորհրդի «Հայաստանի Հանրապետության դատարանների գործավարության կանոնները հաստատելու մասին» 2007 թվականի դեկտեմբերի 21-ի թիվ 23-Լ որոշմամբ հաստատված 4-րդ հավելվածի 1-ին կետի, իր մեջ ներառում է դատարանի ծածկագիրը, դատական գործի գրանցման հերթական համարը, դատական գործի հերթական տեսակի ծածկագիրը և դատական գործի ստացման ժամանակը: Այսինքն՝ այն իրենից ներկայացնում է դատական գործն անհատականացնող տեղեկությունների համակցություն: Իսկ դատական ակտը կայացրած դատարանի անվանման հիշատակումը որոշակիացնում է բողոքարկման օբյեկտը և առերևույթ թույլ տալիս լուծել այն հարցը, թե արդյոք բողոքը հասցեագրված է համապատասխան դատարանին:

Հենց այս պարզ իրողությունից ելնելով է օրենսդիրը վերաքննիչ և վճռաբեկ բողոքների կապակցությամբ, ի թիվս այլ տեղեկությունների, դատական գործի համարը և բողոքարկվող դատական ակտը կայացրած դատարանի անվանումը նշելը համարում պարտադիր (ՔԴՕ 210 հոդվ., 1-ին մաս, 3-րդ կետ և 231 հոդվ., 1-ին մաս, 3-րդ կետ): Մինչդեռ ՔԴՕ-ն, շեղվելով իրավակարգավորման այս ընդհանուր տրամաբանությունից, անհաս-

¹⁹⁶ Տե՛ս **Борисов А.Б.**, Комментарий к гражданскому процессуальному кодексу РФ (постатейный). – М.: Книжный мир, 2009, էջ 495:

¹⁹⁷ Տե՛ս Гражданский процесс. Учебник /Под. ред. **В.А. Мусина, Н.А. Чечинной, Д.М. Чечота.** – М.: «ПРОСПЕКТ», 1997, էջ 368:

կանալի պատճառներով, որպես նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտի վերանայման բողոքում ներառվող տեղեկություն, չի նախատեսել գործի համարը և դատական ակտը կայացրած դատարանի անվանումը, ինչը, բնականաբար, ենթակա է շտկման:

Գործող դատավարական օրենքի բացթողումներից մեկն էլ կարելի է համարել այն, որ օրենսդիրը, ամրագրելով նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման բողոքին կից ներկայացվող փաստաթղթերի ցանկը նշելու պահանջ, չի հստակեցրել այն փաստաթղթերի շրջանակը, որոնք պետք է կցվեն նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման բողոքին: Իսկ այդ հանգամանքը կարող է խնդիրներ առաջացնել իրավունքի սուբյեկտների կողմից դատական ակտերի վերանայման իրենց իրավունքն արդյունավետորեն իրացնելիս, քանի որ ՔՊՕ 204.37-րդ հոդվածի 4-րդ մասը, ի թիվս այլ դեպքերի, բողոքը վերադարձնելու հիմք է դիտարկում դրա բովանդակությանը ներկայացվող պահանջների չպահպանումը, այդ թվում՝ կից ներկայացվող փաստաթղթերի ցանկը չնշելը:

Իհարկե, խնդիրը որոշակիորեն մեղմում է ՔՊՕ 204.38-րդ հոդվածի 1-ին մասի իրավակարգավորումը, որը թույլ է տալիս նոր և նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման վարույթի վրա տարածել ՔՊՕ ընդհանուր դրույթները, եթե քննարկվող վարույթի վերաբերյալ առանձնահատուկ կանոններ նախատեսված չեն: Այդուհանդերձ, վերաքննիչ և վճռաբեկ բողոքների բովանդակության վերաբերյալ դրույթների մեխանիկական կիրառման դեպքում կարող են անտեսվել նոր երևան եկած հանգամանքներով վերանայման բողոքի բովանդակային առանձնահատկությունները: Դրա հետ մեկտեղ, հենց այդ առանձնահատկությունների ուժով նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման բողոքին կից ներկայացվող փաստաթղթերի մի մասը նախատեսված չէ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների վերաբերյալ իրավակարգավո-

րուններում, ինչի պատճառով էլ ԶԴՕ-ի «ընդհանուր դրույթներ»-ի սուբսիդիար կիրառումը չի կարող նպաստել խնդրի լիարժեք լուծմանը:

Նման պայմաններում տեսական և գործնական մեծ կարևորություն է ստանում այն հարցի պատասխանը, թե ինչպիսի փաստաթղթեր պետք է կցվեն վերանայման բողոքին:

Նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման բողոքը, ինչպես և մյուս դատավարական փաստաթղթերը իրավական հետևանքներ առաջացնելու համար պետք է ստորագրված լինեն իրավասու անձանց կողմից: Յետևաբար, բոլոր այն դեպքերում, երբ նշված բողոքը ստորագրվում է ներկայացուցչի կողմից, ապա բողոքին պետք է կցվեն նրա լիազորությունները հավաստող փաստաթղթեր¹⁹⁸:

Ի տարբերություն վերաքննիչ և վճռաբեկ բողոքների, որոնք հանդիսանում են պետական տուրքի գանձման օբյեկտ՝ նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտի վերանայման բողոք բերողներին օրենսդիրը ազատել է պետական տուրքի վճարումից («Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի¹⁹⁹ 22-րդ հոդվ., 1-ին մաս, «թ» կետ): Դա բացատրվում է նրանով, որ քննարկվող վարույթի շրջանակներում պետությունը՝ ի դեմս դատարանների, կատարում է ոչ թե նոր գործողություններ, այլ լրացնում է նախկին գործողության՝ հայցադիմումի կամ բողոքի քննության ժամանակ օբյեկտիվ պատճառներով տեղ գտած թերությունները: Ըստ էության, դա է նկատի ունեցել ՀՀ սահմանադրական դատարանը իր հետևյալ դիրքորոշումը ձևակերպելիս. «Նշված դեպքերում պետական տուրք վճարելու պարտականության բացակայությունը պայմանավորված է այն տրամաբանությամբ, համաձայն որի՝ դատարանի կողմից կատարվող գործողությունը, որպես պետական տուրքի գանձման օբ-

¹⁹⁸ Տե՛ս *Женетль С.З., Никуфоров А.В.*, Гражданский процесс: Учебник. – 3-е изд. – М.: РИОР:ИНФРА-М, 2012, էջ 365:

¹⁹⁹ Ընդունվել է 27.12.1997թ.: Տե՛ս ՀՀԴՏ 1998.01.11/1:

յեկտ, թելադրված է օբյեկտիվորեն փաստված իրավական անհրաժեշտությամբ, ...»²⁰⁰:

Վերոգրյալի համատեքստում ուշադրության է արժանի «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի «թ» կետի այն ձևակերպումը, ըստ որի՝ նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման բողոքներով պետական տուրքի վճարումից ազատված են միայն ֆիզիկական անձինք և ոչ առևտրային կազմակերպությունները: Արդյունքում ստացվում է, որ առևտրային իրավաբանական անձինք կրում են նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման բողոք ներկայացնելու համար պետական տուրք վճարելու պարտականությունը, ինչը, մեր կարծիքով, հակասում է ոչ միայն նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման վարույթի էությանը, այլև համատեղելի չէ օրենքի առջև իրավահավասարության սկզբունքի հետ: Հետևաբար, անհրաժեշտ է քննարկվող դրույթից հանել սուբյեկտային սահմանափակում նախատեսող ձևակերպումները:

Այսպիսով, չնայած վերաքննիչ և վճռաբեկ բողոքներին կից ներկայացվող փաստաթղթերի ցանկի վերաբերյալ դրույթները ՔՊՕ 204.38-րդ հոդվածի 1-ին մասի ուժով կիրառելի են նաև նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման բողոքի կապակցությամբ, այնուամենայնիվ, վերջին դեպքում պետական տուրքի վճարման մասին ապացույցի ներկայացման անհրաժեշտությունը բացակայում է:

Միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ որոշ երկրների դատավարական օրենսդրությունները նախատեսում են նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտի վերանայման բողոքում (հայցադիմում, դիմում և այլն) այն ապացույցները կցելու պահանջ, որոնցով հավաստվում են նոր երևան եկած հանգամանքները: Այսպես, օրինակ, Չերմանիայի

²⁰⁰ Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի 2010 թվականի մայիսի 25-ի թիվ ՍԴՈ-890 որոշումը (ՀՀՊՏ 2010.06.09/25(759) Հոդ. 612):

Դաշնային Հանրապետության քաղաքացիական դատավարության կանոնագրքի 558-րդ պարագրաֆի 2-րդ մասի համաձայն՝ գործի նորոգման մասին հայցադիմումին պետք է կցվեն այն փաստաթղթերի բնօրինակները կամ պատճենները, որոնց վրա հիմնվում է այդ հայցադիմումը:

Ղազախստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 406.1-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ դատական ակտը նոր երևան եկած հանգամանքներով վերանայելու մասին դիմումին, ի թիվս այլ փաստաթղթերի, պետք է կցվեն նաև նոր երևան եկած հանգամանքները հաստատող փաստաթղթերի պատճենները: Նման դրույթ է պարունակում նաև Ռուսաստանի Դաշնության արբիտրաժային դատավարության օրենսգրքի 313-րդ հոդվածը²⁰¹:

Այս կապակցությամբ ուշագրավ է գործող դատավարական օրենսդրության կարգավորումները: Բանն այն է, որ ՔԴՕ-ն, մի կողմից, չի ամրագրում բողոքում նոր երևան եկած հանգամանքները հաստատող ապացույցները նշելու և դրանք բողոքին կցելու պահանջ, սակայն մյուս կողմից՝ բողոք վերադարձնելու հիմք է դիտարկում այն դեպքը, երբ չի ներկայացվել նոր երևան եկած հանգամանքը հաստատող ապացույց (ՔԴՕ 204.37-րդ հոդվ., 4-րդ մաս, 5-րդ կետ): Ասվածից հետևում է, որ օրենսդիրը անուղղակիորեն նախատեսել է նոր երևան եկած հանգամանքները հաստատող ապացույցները բողոքին կից ներկայացնելու պարտականություն:

Ինչպես նշվեց, ՔԴՕ 204.31-րդ հոդվածի 1-ին մասը նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման բողոք ներկայացնելու իրավունքով օժտել է նաև գործին մասնակցող անձանց իրավահաջորդներին: Եվ չնայած նրան, որ օրենքը այդ անձանց կողմից բողոքարկման իրավունքը իրաց-

²⁰¹ См. **Рыжаков А.П.**, Комментарий к Арбитражному процессуальному кодексу Российской Федерации (постатейный)/ А.П. Рыжаков. – М.: Дело и Сервис, 2011, т.2, стр 424-425:

նելու կապակցությամբ որևէ հատուկ կանոններ չի ամրագրել, այնուամենայնիվ, ելնելով դատավարական իրավահաջորդության ինստիտուտի էությունից, այս դեպքում ևս դատարանին պետք է ներկայացվեն իրավահաջորդության փաստը հավաստող ապացույցներ (ժառանգության իրավունքի վկայագիր, պարտքի փոխանցման պայմանագիր և այլն)²⁰²:

ՔԴՕ 204.37-րդ հոդվածի 4-րդ մասը նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման բողոքը վերադարձնելու հիմք է համարում նաև այն դեպքը, երբ բողոքը ներկայացվել է օրենքով սահմանված ժամկետի խախտմամբ և բողոք ներկայացրած անձը միջնորդություն չի ներկայացրել դա վերականգնելու մասին: Այսպիսի դրույթի ամրագրումն այն իրավաչափ սահմանափակման տրամաբանական շարունակությունն է, ըստ որի՝ դատավարական գործողության ժամկետի լրանալը զրկում է անձին համապատասխան գործողությունը կատարելու հնարավորությունից, որը կարող է վերականգնվել ոչ այլ կերպ, քան դատարանի որոշմամբ՝ գործին մասնակցող անձանց դիմումի հիման վրա (ՔԴՕ 77-րդ հոդվ.): Ասվածից հետևում է, որ նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման բողոքին կից ներկայացվող փաստաթուղթ պետք է դիտարկել բաց թողնված ժամկետը հարգելի համարելու և այն վերականգնելու մասին միջնորդությունը բոլոր այն դեպքերում, երբ բողոքը ներկայացվում է օրենքով սահմանված ժամկետը լրանալուց հետո:

Քանի որ քաղաքացիադատավարական օրենսդրությունը առանձին դրույթներ չի պարունակում նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման բողոքի ներկայացման դատավարական կարգի վերաբերյալ, ապա անհասկանալի է մնում այն հարցի պատասխանը, թե արդյոք բողոք բերած անձը կրում է գործին մասնակցող մյուս անձանց և՛ բողոքը, և՛ կից

²⁰² Ст'я Гражданский процесс/ **И.В. Решетникова, В.В. Ярко**. – 6-е изд., перераб. – М.:Норма: Инфра-М, 2012, էջ 64:

փաստաթղթերը ուղարկելու և այդ մասին ապացույցը բողոքին կցելու պարտականություն:

Բանն այն է, որ նոր և նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման վարույթը կարգավորող նորմերը այս կապակցությամբ չեն պարունակում որևէ կարգավորում, իսկ վերաքննիչ և վճռաբեկ վարույթների համապատասխան դրույթները, որոնք ՔԴՕ 204.38-րդ հոդվածի 1-ին մասի ուժով ենթակա են կիրառման, ունեն որոշակի տարբերություններ: Մասնավորապես, եթե երկու դեպքում էլ բողոք բերող անձինք կրում են բողոքը գործին մասնակցող մյուս անձանց ուղարկելու և այդ մասին ապացույցը բողոքին կցելու պարտականություն (ՔԴՕ 211-րդ և 230-րդ հոդվ.), ապա միայն վերաքննիչ բողոք ներկայացնելիս է անրագրված գործին մասնակցող մյուս անձանց նաև բողոքին կից ներկայացվող փաստաթղթերն ուղարկելու պահանջ: Ըստ որում, նման տարբերությունների հիմքում դրված է այն տրամաբանությունը, որ վճռաբեկ դատարանի իրավասությունը սահմանափակվում է միայն իրավունքի հարցերի ուսումնասիրությամբ²⁰³, իսկ վերաքննիչ դատարանում փաստի հարցերը քննարկման են ենթակա բացառիկ դեպքերում (ՔԴՕ 219-րդ հոդվ.):

Վերոգրյալի լույսի ներքո ստացվում է, որ նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման բողոքին, ելնելով նրանից, թե որ առյանին է ներկայացվում վերանայման բողոքը, պետք է կցվեն մի դեպքում բողոքը և կից փաստաթղթերը, իսկ մյուս դեպքում՝ միայն բողոքը գործին մասնակցող անձանց ուղարկելու մասին ապացույցներ:

Մինչդեռ նման մոտեցումը, մեր կարծիքով, համահունչ չէ նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման վարույթի էությանը: Ասվածը պայմանավորված է այն իրո-

²⁰³ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի *«Սելտեքս» ՍԴԸ-ն և Մեսրոպ Սովսեսյանն ընդդեմ Հայաստանի* գործով 2008 թվականի հունիսի 17-ի վճիռը, կետ 88 (ՀՀԴՏ 2009.02.11/8(674)):

ղությամբ, որ, ի տարբերություն վերաքննիչ և վճռաբեկ վարույթների, նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման ժամանակ քննարկման առարկա կարող են լինել բացառապես փաստի հարցեր: Այդ իսկ պատճառով, անկախ նրանից, թե որ դատական ատյանին է հասցեագրվում վերանայման բողոքը, հիմնավոր է թվում բոլոր դեպքերում ոչ միայն բողոքը, այլև կից փաստաթղթերը գործին մասնակցող մյուս անձանց ուղարկելու մասին ապացույց կցելու պարտականության նախատեսումը ՔԴՕ-ում: Նման դիրքորոշումը բխում է նաև կողմերի իրավահավասարության սկզբունքը պահպանելու անհրաժեշտությունից, քանի որ, որպես կանոն, գործին մասնակցող մյուս անձինք չեն տիրապետում նոր երևան եկած հանգամանքները հաստատող փաստաթղթերին²⁰⁴:

Կարծում ենք, որ նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման բողոքին կցվող փաստաթղթերի հարցը քննարկելիս ուշադրության պետք է հրավիրել նաև ՔԴՕ-ում ամրագրված այն դրույթը, ըստ որի՝ բողոք ներկայացնելիս բողոքի պատճենը պետք է ուղարկվի նաև ստորադաս դատարան, իսկ այդ մասին ապացույցը՝ կցվի վերաքննիչ կամ վճռաբեկ բողոքին:

Անվիճելի է, որ այսպիսի պարտականության ամրագրումը կոչված է ապահովելու անձի՝ ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքը, քանի որ բողոք բերած անձի կողմից ուղարկված բողոքը ստանալուց հետո դատական ակտը կայացրած դատարանի մոտ առաջանում է դատական գործը համապատասխանաբար վերաքննիչ և վճռաբեկ դատարան ուղարկելու պարտականություն (ՔԴՕ 209-րդ հոդվ., 2-րդ մաս և 230-րդ հոդվ., 2-րդ մաս): Սակայն նոր երևան եկած հանգամանքները կարգավորող դրույթների համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ գործը վերադաս դատարան ուղարկելու պարտա-

²⁰⁴ Ст'я Арбитражный процесс: компендиум / отв. ред. **В.В. Ярков**. – М.: Изд-во «Инфотропик Медиа», 2011, էջ 314:

կանությունը դառնում է անհրազորժելի, իսկ բողոքը դատական ակտը կայացրած դատարանին ուղարկելը՝ ինքնանպատակ այն դեպքում, երբ նոր երևան եկած հանգամանքներով բողոք է բերվում հենց վճռաբեկ դատարանի կողմից կայացված դատական ակտերի դեմ:

Ամփոփելով վերոգրյալը՝ առաջարկում ենք ՔԴՕ 204.36-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 204.36. Բողոքի ձևը և բովանդակությունը

1. Նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով դատական ակտերի վերանայման բողոքը ներկայացվում է գրավոր, որը պետք է պարունակի՝

1) այն դատարանի անվանումը, որին բողոքը հասցեագրվում է.

2) բողոք բերող անձի և գործին մասնակցող անձանց անունները (անվանումները), նրանց բնակության (գտնվելու վայրի) հասցեները.

3) դատարանի անվանումը, որի կայացրած դատական ակտի դեմ բերվում է բողոքը, գործի համարը և դատական ակտի կայացման տարին, ամիսը, ամսաթիվը.

4) դատական ակտի վերանայման հիմք հանդիսացող նոր երևան եկած կամ նոր հանգամանքի շարադրանքը և հիմնավորումը, թե ինչու է այն հիմք դատական ակտի վերանայման համար.

5) բողոք բերող անձի պահանջը.

6) բողոքին կցվող փաստաթղթերի ցանկը:

2. Բողոքին կցվում են՝

1) ներկայացուցչի լիազորությունները հավաստող փաստաթուղթ, եթե այն առկա չէ դատական գործում և բողոքը ստորագրվել է ներկայացուցչի կողմից.

2) նոր երևան եկած կամ նոր հանգամանքները հաստատող ապացույցներ՝ բացառությամբ այն դեպքերի, երբ բողոքը բերվել է սույն օրենսգրքի 204.33-րդ հոդվածի 1-ին և 5-րդ կետերում

նախատեսված հանգամանքների հիմքով.

3) իրավահաջորդության փաստը հավաստող փաստաթուղթ, եթե բողոքը ներկայացվում է գործին մասնակցող անձի իրավահաջորդի կողմից.

4) բողոք ներկայացնելու ժամկետը վերականգնելու մասին միջնորդություն, եթե բողոքը ներկայացվել է սույն օրենսգրքի 204.34-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ժամկետի խախտմամբ.

5) բողոքը դատական ակտ կայացրած դատարանին ուղարկելու մասին ապացույց՝ բացառությամբ այն դեպքի, երբ բողոքը բերվում է վճռաբեկ դատարանի դատական ակտի դեմ.

6) բողոքը և կից փաստաթղթերը գործին մասնակցող այլ անձանց ուղարկելու մասին ապացույց.

3. Սույն հոդվածի 2-րդ մասում նախատեսված, ինչպես նաև բողոք բերող անձի այլ միջնորդությունները կարող են ներկայացվել նաև բողոքում ներառվելու ձևով:»:

ԳԼՈՒԽ 3.

ՆՈՐ ԵՐԼԱՆ ԵԿԱԾ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐՈՎ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

§ 1. Նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման վարույթի հարուցումը

Նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման վարույթի հարուցումը դատավարության այս փուլի սկզբնական և կարևորագույն մասն է, քանի որ միայն դրանից հետո դատարանը կարող է ձեռնամուխ լինել օրինական ուժի մեջ մտած դատական ակտը նոր երևան եկած հանգամանքներով վերանայելուն: Գործող դատավարական օրենսդրությունը, ինչպես վերանայման մյուս վարույթների դեպքում, նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման վարույթի հարուցումը պայմանավորում է ոչ միայն օրենքով սահմանված կարգով բողոք ներկայացնելու, այլև այն իրավասու դատարանի կողմից վարույթ ընդունելու հանգամանքներով:

Պետք է նշել, որ մինչև «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության 2008 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ ՀՕ-233-Ն օրենքի²⁰⁵ ընդունումը ՔԴՕ-ն նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման իրավունքը վերապահում էր միայն համապատասխան դատական ակտը կայացրած առաջին ատյանի դատարանին (ՔԴՕ 204⁹-րդ հոդվ., 1-ին մաս): Ըստ էության, նման դրույթ նախատեսված էր նաև ՀՀ 1964թ. քաղաքացիական դատավարության օրենսգրքում միայն այն տարբերությամբ, որ դրանով վճռաբեկ կամ հսկողական ատյանների ո-

²⁰⁵ Տե՛ս ՀՀՊՏ 2008.12.30/76(666) Հոդ. 1416:

րոշումների վերանայումը, որոնք փոփոխել էին առաջին ատյանի դատարանի վճիռը կամ նոր վճիռ էին արձակել, կատարվում էր վճիռը փոփոխած կամ նոր վճիռ կայացրած դատարանի կողմից²⁰⁶:

Այս կապակցությամբ անհրաժեշտ է նկատի ունենալ, որ նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման լիազորությունը դատական ակտը կայացրած ատյանին վերապահելու մասին դրույթը դատավարագիտության մեջ ստացել է ոչ միարժեք գնահատականներ: Այսպես, օրինակ, ըստ Ս.Մ. Ահմեդովի՝ նման դատավարական կարգը պայմանավորված է նրանով, որ այս փուլում օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը ոչ թե վերանայվում են դատական սխալի հիմքով, այլ տեղի է ունենում գործի քննության ժամանակ անհայտ մնացած և դրա լուծման համար էական նշանակություն ունեցող հանգամանքների կապակցությամբ գործի նորոգում²⁰⁷: Իսկ Ա.Ն. Ռեզունենկոն այսպիսի կարգավորումը բացատրում է այն իրողությամբ, որ նոր երևան եկած հանգամանքների լույսի ներքո դատական ակտի սխալ լինելը այնքան ակնհայտ է և հեշտ շտկելի, որ նպատակահարմար չէ գործը վերանայման համար փոխանցել վերադաս դատարանին²⁰⁸:

Ի տարբերություն նշված հեղինակների՝ Լ.Ա. Տերեխովան կարծիք է հայտնում այն մասին, որ նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայումը պետք է իրականացնի վերադաս դատարանը: Չեղինակը իր տեսակետի հիմքում

²⁰⁶ Տե՛ս *Յովհաննիսյան Վ.Վ.*, Քաղաքացիական գործերով դատական վերանայման ինստիտուտի զարգացման հիմնախնդիրները Հայաստանում /Վ.Վ. Յովհաննիսյան: Երևանի պետ. համալսարան: - Երևան, ԵՊՀ հրատ., 2011, էջ 226:

²⁰⁷ Տե՛ս *Ахмедов С.М.*, Производство по пересмотру судебных актов по вновь открывшимся обстоятельствам в системе пересмотра судебных актов в арбитражном процессе. Дис. ... канд. юрид. наук – Москва, 2008, էջեր 138-139:

²⁰⁸ Տե՛ս *Резуненко А.Н.*, Пересмотр судебных актов, вступивших в законную силу, по вновь открывшимся обстоятельствам как стадия гражданского процесса. Дис. ... канд. юрид. наук – Волгоград, 2001, էջ 129:

դնում է այն հիմնավորումը, որ օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի վերանայման հիմք հանդիսացող հանգամանքների գնահատականը պետք է տրվի վերադաս դատարանների առավել բարձրորակ դատավորների կողմից, քանի որ այդ հանգամանքների ճիշտ որակումը օբյեկտիվորեն դժվար է և պահանջում է ոչ միայն օրենքների և դատական պրակտիկայի, այլև իրավաբանական դոկտրինայի իմացություն²⁰⁹:

Իհարկե, երկու մոտեցումներն էլ առաջին հայացքից կարող են ընդունելի թվալ, սակայն, կարծում ենք, որ խնդիրը անհրաժեշտ է դիտարկել ոչ թե նպատակահարմարության, այլ դատական համակարգի գործառնական աստիճանակարգման և արդարադատական գործառույթների ներհամակարգային տարանջատման սկզբունքների տեսանկյունից:

Հայաստանի Հանրապետության դատարանակազմության սահմանադրական հիմքն է կազմում Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածը, որի 1-ին մասի համաձայն. «Հայաստանի Հանրապետությունում գործում են ընդհանուր իրավասության առաջին ատյանի, վերաքննիչ դատարանները և վճռաբեկ դատարանը, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ նաև մասնագիտացված դատարանները»: Նույն հոդվածի 2-րդ մասում միաժամանակ սահմանված է, որ Հայաստանի Հանրապետության բարձրագույն դատական ատյանը, բացի սահմանադրական արդարադատության հարցերից վճռաբեկ դատարանն է, որը կոչված է ապահովելու օրենքի միատեսակ կիրառությունը:

Այսինքն՝ ՀՀ Սահմանադրությունը նախատեսում է ստորադատության վրա հիմնված ընդհանուր իրավասության դատարանների եռաստիճան համակարգ: Ընդ որում, ինչպես նշում է ՀՀ սահմանադրական դատարանը. «Տարբեր ատյանների դատա-

²⁰⁹ Տե՛ս *Терехова Л.А.*, Право на исправление судебной ошибки как компонент судебной защиты. Дис. ... док. юрид. наук - Екатеринбург, 2008, էջեր 269-270:

րանները միմյանցից տարբերվում են իրենց իրավասությունների շրջանակով: Տվյալ դատական ատյանի իրավասությունների շրջանակով են պայմանավորված այդ դատարանի կողմից ընդունվող դատական ակտերի բնույթն ու բովանդակությունը. յուրաքանչյուր դատական ատյանի կողմից ընդունվող դատական ակտը հանդիսանում է տվյալ ատյանի իրավասությունների և գործառույթների կրողը: Հետևաբար, հաշվի առնելով, որ յուրաքանչյուր դատական ատյանի գործառույթի իրացման արդյունքում անձի իրավունքների դատական պաշտպանությունը նոր որակ է ստանում, յուրաքանչյուր դատական ատյանի կողմից իր գործառույթների իրականացման արդյունքում ընդունված ակտն իր ինքնուրույն դերակատարությունն ունի դատական պաշտպանության իրավունքի իրացման ողջ գործընթացում»²¹⁰:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ ակնհայտ է, որ դատական ակտը կայացրած, այն էլ միայն առաջին ատյանի դատարանին նոր երևան եկած հանգամանքներով վերանայման լիազորություն տալը խնդրահարույց է հենց սահմանադրականության տեսանկյունից, քանի որ դրա հետևանքով աղավաղվում է դատական երեք ատյանների միջև եղած գործառութային կապերը և խաթարվում դատական եռաստիճան համակարգի էությունը:

Նշված նկատառումներից ելնելով՝ օրենսդիրը ներկայումս սահմանել է, որ նոր երևան եկած հանգամանքներով առաջին ատյանի դատարանի դատական ակտը վերանայում է վերաքննիչ դատարանը, իսկ վերաքննիչ և վճռաբեկ դատարանների դատական ակտերը՝ վճռաբեկ դատարանը (ՔԴՕ 204.30-րդ հոդվ., 2-րդ մաս): Այլ խոսքով՝ օրենքը նոր երևան եկած հանգամանքներով բողոքը քննելու իրավասությամբ օժտված դատարանը որոշելու հիմքում, բացառությամբ վճռաբեկ դատարանի որոշումների վերանայման դեպքերի, դրել է «մեկ ատյան բարձր» սկզբունքը: Այս առումով ուշագրավ է, որ նոր երևան եկած հան-

²¹⁰ Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի 2008 թվականի սեպտեմբերի 9-ի թիվ ՍԴՈ-758 որոշումը (ՀՀՊՏ 2008.09.17/58(648) Հոդ. 943):

զամանքներով դատական ակտերի վերանայումը վերադաս ատյանին վերապահելու կանոնը իր ամրագրումն է ունեցել ինչպես խորհրդային հանրապետությունների (Ուկրաինայի, Բելառուսի և այլն)²¹¹, այնպես էլ ժամանակակից որոշ երկրների, օրինակ՝ Լատվիայի, քաղաքացիական դատավարության օրենսգրքերում:

Գործող դատավարական օրենսդրությունը ոչ միայն նախատեսել է նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման հարցում իրավասու դատարաններին, այլև առանձին հոդվածով սահմանել քննարկվող վարույթի հարուցման դատավարական կարգը: Մասնավորապես, ՔԴՕ 204.37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Դատարանը, սույն օրենսգրքի 144 հոդվածի 2-րդ կետով սահմանված կարգով, բողոքը ստանալուց հետո՝ մեկամսյա ժամկետում, որոշում է կայացնում նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով դատական ակտի վերանայման վարույթ հարուցելու կամ բողոքը վերադարձնելու մասին»:

Հարկ է նշել, որ դատական ակտը նոր երևան եկած հանգամանքներով վերանայելու մասին դիմումը վերադարձնելու ինստիտուտը հայտնի չի եղել խորհրդային դատավարական օրենսդրությանը²¹²: Ավելին, այն ՔԴՕ-ում ամրագրվել է միայն «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության 2007 թվականի նոյեմբերի 28-ի թիվ ՉՕ-277-Ն օրենքի ընդունումից հետո:

Ներկայումս նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտի վերանայման բողոքի վերադարձման հիմքերը թվարկված են ՔԴՕ 204.37-րդ հոդվածի 4-րդ մասում, ըստ որի՝ դատական ակտի վերանայման բողոքը վերադարձվում է, եթե՝ 1) չեն պահպանվել բողոքի ձևին և բովանդակությանը ներկայացվող պահանջները, 2) բողոքում նշված դատական ակտի վերանայումը

²¹¹ Ст'я Гражданский процесс. Учебник/ Под ред. **С.Н. Абрамова** - М., Изд-во министерства юстиции СССР, 1948, էջ 397:

²¹² Ст'я **Мельников А.А. и др.**, Курс советского гражданского процессуального права. Том II, М., Изд-во «Наука», 1981, էջ 318:

ընդդատյա չէ²¹³ այն դատարանին, որին հասցեագրվել է բողոքը, 3) բողոքը ներկայացվել է դրա համար սույն օրենքով նախատեսված ժամկետի խախտմամբ, և բողոք ներկայացրած անձը միջնորդություն չի ներկայացրել դա վերականգնելու մասին²¹⁴, 4) մինչև դատական ակտի վերանայման վարույթ հարուցելու մասին որոշում կայացնելը բողոք ներկայացրած անձից դիմում է ստացվել այն վերադարձնելու մասին, 5) դատական ակտը վերանայելու համար հիմք դարձած՝ նոր երևան եկած կամ նոր հանգամանքը հաստատող ապացույց չի ներկայացվել:

Թեև ՔԴՕ 204.37-րդ հոդվածի 4-րդ մասի ձևակերպումից տպավորություն է ստեղծվում այն մասին, որ նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման բողոքի վերադարձման հիմքերի ցանկը սպառիչ է՝ այնուամենայնիվ, զործող դատավարական օրենսդրության ուսումնասիրությունը թույլ է տալիս հանգել փոքր-ինչ այլ եզրակացության: Մասնավորապես, ինչպես բխում է վերաքննիչ և վճռաբեկ բողոքների վերադարձման հիմքերի և նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման բողոքների վերադարձման հիմքերի համեմատական վերլուծությունից, օրենսդիրը վերաքննիչ և վճռաբեկ բողոքների վերադարձման հիմքերի

²¹³ Դատավարագիտության մեջ ընդդատություն ասելով հասկացվում է կանոնների ամբողջություն, որոնք կարգավորում են գործերի բաշխումը առաջին ատյանի դատարանների միջև (տե՛ս, օրինակ, Гражданский процесс: учеб. пособие /**А.Б. Смушкин, Т.В. Суркова, О.С. Черникова.** – 3-е изд., перераб. – М.: Изд-во «Омега-П», 2009, էջ 88): Հետևաբար տվյալ դեպքում ճիշտ կլինի օգտագործել «ենթակա չէ» բառը, քանի որ խոսքը վերաբերում է ոչ թե նույն ատյանի, այլ տարբեր ատյանի դատարանների իրավասությունների տարանջատմանը:

²¹⁴ Ինչպես տեսնում ենք, բողոքի վերադարձման այս հիմքը և ձևակերպված է թերություններով, քանի որ դրանում հաշվի չի առնվել այն դեպքը, երբ բողոք բերած անձը ներկայացրել է բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին միջնորդություն, որը, սակայն, դատարանը մերժել է: Թեև այս հարցը գործնականում խնդիր չի առաջացնում վերաքննիչ և վճռաբեկ բողոքների վերադարձման կանոնների սուբսիդիար կիրառման պայմաններում՝ այդուհանդերձ, ճիշտ կլիներ քննարկվող դրույթում կատարել համապատասխան լրացում:

շարքում նախատեսել է մի շարք դեպքեր, որոնք նախատեսված չեն նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման բողոքի վերադարձման հիմքերի ցանկում: Իսկ մյուս կողմից, ՔԴՕ 204.38-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ այնքանով, որքանով նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման վարույթը կարգավորող բաժնում չկան հատուկ կանոններ, ապա այս վարույթի նկատմամբ կիրառելի են ՔԴՕ ընդհանուր կանոնները:

Հետևաբար, կարելի է ենթադրել, որ նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման բողոքը ենթակա է վերադարձման նաև այն դեպքում, երբ՝ 1) բողոք է ներկայացրել այն անձը, ով բողոք ներկայացնելու իրավունք չունի, 2) բողոքարկվել է այն դատական ակտը, որը ենթակա չէ բողոքարկման, 3) բողոքը բերել է այն անձը, ում իրավունքը չի խախտվել, և 4) բողոքում հիմնավորված չէ նոր երևան եկած հանգամանքի առկայությունը (ՔԴՕ 213-րդ և 233-րդ հոդվ.): Ընդ որում, չնայած նրան, որ նոր երևան եկած հանգամանքի առկայության հիմնավորվածությունը գործող դատավարական օրենսդրությունը նախատեսել է վճռաբեկ վարույթը կարգավորող նորմերով՝ այն գործնականում կիրառվում է և՛ վերաքննիչ, և՛ վճռաբեկ դատարանի կողմից²¹⁵:

Միևնույն ժամանակ, հարկ է նկատել, որ նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման բողոքների վերադարձման հիմքերի ցանկը որոշակի լրանշակման կարիք

²¹⁵ Տե՛ս, օրինակ, ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի՝ թիվ ԵՔԴ/1270/02/08 քաղաքացիական գործով 2010 թվականի դեկտեմբերի 20-ի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին որոշումը», ՀՀ վճռաբեկ դատարանի՝ թիվ ՍԴ/0804/02/09 քաղաքացիական գործով 2011 թվականի մարտի 16-ի, թիվ 3-561 քաղաքացիական գործով 2011 թվականի օգոստոսի 31-ի, թիվ ԵԱՔԴ/0496/02/10 քաղաքացիական գործով 2011 թվականի օգոստոսի 31-ի, թիվ 3-1417 (ՎԴ) քաղաքացիական գործով 2011 թվականի սեպտեմբերի 22-ի, թիվ 3-1349 (ՎԴ) քաղաքացիական գործով 2011 թվականի հոկտեմբերի 5-ի վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշումները:

ունի: Ամենից առաջ խոսքն այն մասին է, որ, մի կողմից, օրենքը առանց բացառության արգելել է այն դատական ակտերի վերանայումը, որոնց օրինական ուժի մեջ մտնելուց հետո անցել է քսան տարի (ՔԴՕ 204.34-րդ հոդվ., 4-րդ մաս), սակայն, մյուս կողմից, ի խախտումն «իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջների, չի նախատեսել դատական ակտի վերանայման բողոքը դրա օրինական ուժի մեջ մտնելու պահից քսան տարին լրանալուց հետո ներկայացման դեպքերի կապակցությամբ որևէ իրավական հետևանք: Այդ իսկ պատճառով կարծում ենք, որ ճիշտ կլիներ ՔԴՕ-ում նախատեսել դրույթ այն մասին, ըստ որի՝ դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելու պահից քսան տարին լրացած լինելը ինքնին հիմք է բողոքը վերադարձնելու համար: Հատկապես, եթե հաշվի առնենք, որ նման կարգավորում նախատեսված է եղել ՔԴՕ 204¹⁴-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, որը, սակայն, անհասկանալի պատճառներով չի վերարտադրվել գործող օրենսդրության մեջ:

Հաջորդ խնդիրը կապված է այն իրավիճակների հետ, երբ նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման բողոքը ինչ-ինչ պատճառներով բերվում է ստորադաս դատարանի դատական ակտի դեմ այն դեպքում, երբ գործում առկա է վերադաս դատարանի օրինական ուժի մեջ գտնվող դատական ակտ:

Այս կապակցությամբ մասնագիտական գրականության մեջ կարծիք է արտահայտվել այն մասին, որ վերադաս դատարանի օրինական ուժի մեջ գտնվող դատական ակտի առկայության պայմաններում էլ հնարավոր է առաջին ատյանի դատարանի վճռի վերանայումը և բեկանումը²¹⁶: Ուշագրավ է այն հանգամանքը, որ ՔԴՕ-ն ևս չի բացառում այդպիսի վերաքննիչ և վճռա-

²¹⁶ Տե՛ս **Алиев Т.Т.**, Производство по пересмотру судебных постановлений ввиду вновь открывшихся обстоятельств в гражданском судопроизводстве: теоретические аспекты, перспективы развития. Дис. ... док. юрид. наук - Саратов, 2005, էջեր 140-141:

բեկ բողոքների ներկայացման և քննության հնարավորությունը, քանի որ նկարագրված դեպքը չի հանդիսանում ո՛չ բողոքը վերադարձնելու, և ո՛չ էլ բողոքը մերժելու հիմք:

Այնուամենայնիվ, կարծում ենք, որ առկա չեն բավարար հիմքեր նման տեսակետի հետ համաձայնելու համար: Մասնավորապես, ինչպես նշեցինք, ընդհանուր իրավասության առաջին ատյանի, վերաքննիչ և վճռաբեկ դատարանները դատական իշխանության շրջանակներում կազմում են գործառնական համակարգային ամբողջություն, որի հիմքում ընկած է գործառնական աստիճանակարգման եւ արդարադատական գործառույթների ներհամակարգային տարանջատման սկզբունքները: Եվ քանի որ յուրաքանչյուր դատական ատյանի կողմից իր գործառույթների իրականացման արդյունքում ընդունված դատական ակտով եզրափակվում է տվյալ ատյանի իրավասությունները և գործի վերանայման լիազորությունը փոխանցվում է վերադաս ատյանին, ապա ստացվում է, որ նույն ատյանի օրինական ուժի մեջ գտնվող դատական ակտի առկայության պայմաններում իրականացված վերանայումը կհանգեցնի իրավասությունների սահմանազանցմանը: Ավելին, որպես ասվածի տրամաբանական շարունակություն՝ դա կբերի այն իրավիճակին, երբ միևնույն գործով միաժամանակ առկա կլինեն նույն ատյանի կողմից կայացված և օրինական ուժի մեջ գտնվող երկու դատական ակտեր, ինչը, բնականաբար, անընդունելի է:

Վերոգրյալի լույսի ներքո գտնում ենք, որ օրինական ուժի մեջ գտնվող վերադաս դատական ատյանի դատական ակտի առկայության պայմաններում ստորադաս դատարանի դատական ակտը նոր երևան եկած հանգամանքներով վերանայման բողոքները չեն կարող դառնալ քննության առարկա: Ասվածը, բարեբախտաբար, իր արտացոլումն է գտել դատական պրակտիկայում, քանի որ նման դեպքերում դատարանները կայացնում են նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտի վերա-

նայման բողոքը վերադարձնելու մասին որոշում²¹⁷: Այդուհանդերձ, ելնելով ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածին համապատասխան նման դատավարական գործողություն կատարելու համար անհրաժեշտ իրավական հիմք ստեղծելու անհրաժեշտությունից, հիմնավոր կլինի ՔԴՕ-ում լրացնել դրույթ այն մասին, որ նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման բողոքը ենթակա է վերադարձման այն դեպքում, երբ տվյալ գործով կամ տվյալ հարցով վերադաս դատարանի դատական ակտի առկայության պայմաններում բողոք է բերվել ստորադաս դատարանի դատական ակտի դեմ:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման բողոքների վերադարձման հիմքերից յուրաքանչյուրն էլ, բացառությամբ բողոքը վերադարձնելու մասին դիմում ներկայացնելու դեպքի, վկայում են բողոք բերած անձի կողմից բողոքարկման իրավունքի իրականացման որևէ պայմանի խախտման մասին: Դա է պատճառը, որ դատարանը, հայտնաբերելով այդ հիմքերից որևէ մեկը, չի կարող հարուցել նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման վարույթ: Ընդ որում, ինչպես բխում է «Դատական ակտը նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով վերանայելու վարույթը» վերտառությամբ ՔԴՕ 3.³-րդ բաժնի ուսումնասիրությունից, դրանում ամրագրված չեն դրույթներ այն մասին, թե ինչ դատավարական գործողություններ կարող է կատարել բողոք բերած անձը բողոքը վերադարձվելու պարագայում: Հետևաբար, այս դեպքում ևս բարձրացված հարցի պատասխանը պետք է գտնել ՔԴՕ 204.38-րդ հոդվածի 1-ին մասի ուժով կիրառելի վերաքննիչ և վճռաբեկ բողոքները վերադարձնելու հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերի իրավակարգավորման շրջանակներում:

²¹⁷ Տե՛ս, օրինակ, ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի՝ թիվ ԱՐԴ1/0444/02/08 քաղաքացիական գործով 2010 թվականի սեպտեմբերի 30-ի «վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշումը:

Այսպես, ՔԴՕ 213-րդ հոդվածը սահմանում է, որ վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին որոշման մեջ պետք է նշվեն թույլ տրված բոլոր առերևույթ խախտումները: Եվ այն դեպքում, երբ բողոքը վերադարձնելու հիմք է հանդիսանում բողոքի ձևին և բովանդակությանը ներկայացվող պահանջների խախտումները, ապա բողոք բերած անձի կողմից համապատասխան խախտումները վերացվելու և որոշումն ստանալուց հետո՝ երկշաբաթյա ժամկետում, կրկին ներկայացվելու դեպքում բողոքը համարվում է դատարանում ընդունված: Դրա հետ մեկտեղ, դատավարական օրենքը, անկախ բողոքի վերադարձման հիմքից, նախատեսում է վերաքննիչ բողոքը վերադարձնելու որոշման վճռաբեկության կարգով բողոքարկման հնարավորություն: Իսկ նույն օրենսգրքի 233-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի համաձայն՝ վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշումը պետք է լինի պատճառաբանված, որով վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը կարող է սահմանել ժամկետ՝ թերությունները վերացնելու և վճռաբեկ բողոքը կրկին ներկայացնելու համար:

Ինչպես տեսնում ենք, ըստ գործող իրավակարգավորման, միայն այն հանգամանքից ելնելով, թե որ դատական ատյանին է հասցեագրված նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտի վերանայման բողոքը, դրա վերադարձման դեպքում բողոք բերած անձը կարող է հայտնվել տարբեր իրավիճակներում, քանի որ մի դեպքում վերջինս ազատ է դատարանի մատնանշած թերությունները վերացնելուց հետո այն կրկին ներկայացնելու հարցում, իսկ մյուս դեպքում բողոքի թերությունները շտկելու հնարավորության օգտագործումը կախվածության մեջ է դրված վճռաբեկ դատարանի հայեցողությունից:

Մինչդեռ իրերի նման դրությունը որոշակի տարակուսանքի տեղիք է տալիս: Բանը նրանում է, որ նման հայեցողական լիազորությամբ վճռաբեկ դատարանին օժտելը պայմանավորված է ոչ թե օրենսդրի ինքնաբերական ցանկությամբ, այլ հենց վճռաբեկ վա-

րույթի առանձնահատկություններով, քանի որ այն կոչված է երաշխավորելու վճռաբեկ դատարանի՝ օրենքի միատեսակ կիրառությունն ապահովելու սահմանադրաիրավական գործառույթի իրացումը: Վճռաբեկ վարույթի վերաբերյալ նման մոտեցման համար հինք է հանդիսանում նաև Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի 1995 թվականի փետրվարի 7-ի թիվ R (95) 5 հանձնարարականը, ըստ որի՝ վճռաբեկ վարույթում բողոքները պետք է վերաբերեն միայն այնպիսի գործերի, որոնք, բխելով դատական տվյալ ատյանի կարգավիճակից, կարող են նպաստել իրավունքի զարգացմանը կամ կարող են նպաստել օրենքի միատեսակ մեկնաբանմանը: Հետևաբար, նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման վարույթի կարգավորման նպատակով վճռաբեկ բողոքների ընդունելիության վերաբերյալ կանոնների մեխանիկական կիրառումը այնքան էլ արդարացված չի թվում:

Բացի այդ, պետք է նշել, որ վճռաբեկ բողոքի թերությունները վերացնելու համար վճռաբեկ դատարանի կողմից ժամկետ սահմանելու հայեցողական այս լիազորության վերաբերյալ իրավակարգավորումը ինքնին հաջողված համարվել չի կարող, քանի որ գործող դատավարական օրենսդրության մեջ բացակայում են ինչպես դրա կամայական իրականացումը կանխելու երաշխիքները, այնպես էլ այդ հայեցողական լիազորության ոչ իրավաչափ իրականացումը հաղթահարելու միջոցները: Արդյունքում չեն բացառվում այնպիսի իրավիճակները, երբ բողոքի զուտ ձևական թերությունները կարող են խոչընդոտել անձին իրացնելու դատական ակտը բողոքարկելու իր իրավունքը և, հետևաբար՝ նաև դատարանի մատչելիության իրավունքը:

Հենց այս մտահոգություններն էլ նկատի ունենալով՝ ՀՀ սահմանադրական դատարանը իր մի շարք որոշումներում օրենսդրի ուշադրությունն է հրավիրել վճռաբեկ դատարանի կողմից բողոքը կրկին ներկայացնելու համար ժամկետ սահմանելու հայեցողական լիազորության իրավաչափ իրականացման ա-

պահովմանը միտված անհրաժեշտ իրավական երաշխիքներն օրենսդրորեն ամրագրելու անհրաժեշտության վրա, որը, սակայն, իր արտացոլումն է ստացել միայն ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում²¹⁸: Մասնավորապես, նշված օրենսգրքի 118.7-րդ հոդվածը սահմանում է, որ վճռաբեկ բողոքը դրա բովանդակությանը ներկայացվող պահանջների խախտմամբ կամ օրենքով նախատեսված ժամկետը լրանալուց հետո առանց համապատասխան միջնորդության ներկայացված լինելու հիմքով վերադարձվելու դեպքում բողոք ներկայացրած անձն իրավունք ունի կրկին բողոք ներկայացնելու վճռաբեկ դատարանի որոշումն ստանալուց հետո՝ տասնհինգօրյա ժամկետում:

Հիմք ընդունելով նշվածը՝ կարծում ենք, որ նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման բողոքների վերադարձման հետ կապված հարաբերությունները համապարփակ կարգավորելու նպատակով հիմնավոր կլինի ՔԴՕ-ում կատարել համապատասխան փոփոխություններ՝ միաժամանակ ընդլայնելով այն հիմքերի շրջանակը, որոնց դեպքում բողոքի թերությունները շտկելու համար ժամկետի տրամադրումը պարտադիր է: Վերջին դիրքորոշման համար հիմք է ընդունվում նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման բողոքի վերադարձման այնպիսի հիմքի առկայությունը, ինչպիսին է համապատասխան հանգամանքը հավաստող ապացույցը բողոքին չկցելը:

Այսպիսով, ամփոփելով վերոշարադրյալ դատողությունները, ակնհայտ է, որ դատարանը նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտի վերանայման վարույթը պարտավոր է հարուցել բոլոր այն դեպքերում, երբ բացակայում են նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման բողոքը վերադարձնելու հիմքերը կամ այդ հիմքերը բողոք բերած անձի

²¹⁸ Տե՛ս, օրինակ, ՀՀ սահմանադրական դատարանի 2007 թվականի ապրիլի 9-ի թիվ ՍԴՈ-690 որոշումը (ՀՀՊՏ 2007.04.25/22(546) Հոդ 505) և 2008 թվականի մայիսի 27-ի թիվ ՍԴՈ-754 որոշումը (ՀՀՊՏ 2008.06.11/36(626) Հոդ. 565):

կողմից օրենքով սահմանված կարգով և ժամկետներում վերացվել են: Նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտի վերանայման վարույթ հարուցելուն ուղղված դատարանի գործողությունները ձևակերպվում են դատարանի որոշմամբ, որը պատշաճ ձևով ուղարկվում է բողոք ներկայացրած անձին և գործին մասնակցող անձանց (ՔԴՕ 204.37-րդ հոդվ., 2-րդ մաս): Այս որոշման մեջ պարտադիր կերպով պետք է նշվեն նաև բողոքի քննության ժամանակը և վայրը²¹⁹:

Նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման վարույթի հարուցման հետ կապված խնդիրները քննարկելիս հատկապես կարևորվում է նաև այն հարցի պատասխանը, թե արդյոք այս վարույթի հարուցումը կարող է խոչընդոտել վերանայման ենթակա դատական ակտի կատարմանը, քանի որ այստեղ վերանայման օբյեկտ կարող են հանդիսանալ բացառապես օրինական ուժի մեջ մտած, հետևաբար նաև կատարելիության հատկանիշով օժտված դատական ակտերը:

Այս կապակցությամբ պետք է նշել, որ օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի կատարելիության հատկանիշը զբաղեցնում է առանձնահատուկ տեղ քաղաքացիական դատավարության նպատակների իրագործման հարցում: Դա պայմանավորված է այն իրողությամբ, որ իրավունքների պաշտպանության համար անհրաժեշտ է ոչ միայն դատական ակտի կայացում, այլև դրա կատարում²²⁰: Այլ խոսքով՝ անձի դատական պաշտպանության իրավունքը վերջնականապես կարող է իրացված համարվել միայն այն դեպքում, երբ ապահովվել է տվյալ անձի օգտին կայացված դատական ակտի կատարումը:

Ուշագրավ է, որ այս մոտեցմամբ է առաջնորդվում նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, որը մի շարք գործերով արտահայտել է հետևյալ իրավական դիրքորո-

²¹⁹ См. Арбитражный процесс: компендиум / отв. ред. **В.В. Ярков**. – М.: Изд-во «Инфотропик Медиа», 2011, էջ 315:

²²⁰ См. **Малешин Д.Я.**, Гражданская процессуальная система России. – М.: Статут, 2011, էջ 128:

շումը. «Դատարանը կրկնում է, որ 6-րդ հոդվածի 1-ին մասը պաշտպանում է քաղաքացիական իրավունքների և պարտականությունների հետ կապված հայց հարուցելու յուրաքանչյուրի իրավունքը: Մինչդեռ, այդ իրավունքը կլիներ անիրական, եթե Պայմանավորվող Պետության իրավական համակարգը թույլ տար, որ վերջնական, պարտադիր դատական որոշումները մնան չկատարված՝ ի վնաս մի կողմի: Անընդունելի կլիներ, եթե 6-րդ հոդվածի 1-ին մասը մանրամասն նկարագրեր կողմերին տրված դատավարական երաշխիքները (արդարացի, հրապարակային դատավարություն և գործերի քննության անընդհատության սկզբունք) առանց դատական որոշումների կատարման երաշխիքների: Կոնվենցիայի 6-րդ հոդվածի մեկնաբանումը միայն դատարանի մատչելիության և դատավարությունների անցկացման իրավունքի շրջանակներում, հավանաբար, կառաջացներ մի իրավիճակ, որը անհամատեղելի կլիներ օրինակականության սկզբունքի հետ, որը Պայմանավորվող Պետությունները Կոնվենցիան վավերացնելիս պարտավորվել են հարգել: Ցանկացած դատարանի կողմից ընդունված դատական որոշման կատարումը Կոնվենցիայի 6-րդ հոդվածի իմաստով պետք է դիտվի որպես «դատավարության» բաղկացուցիչ մաս»²²¹:

Հետևաբար, այս տեսանկյունից հարցը դիտարկելիս կարելի է եզրահանգել, որ նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման վարույթի հարուցումը ինքնին չի ազատում պետությանը գործին մասնակցող անձանցից որևէ մեկի օգտին կայացված և օրինական ուժի մեջ մտած, այսինքն՝ վերջնական դատական ակտի կատարումը ապահովելու պարտականությունից:

Մյուս կողմից, սակայն, չպետք է մոռացության մատնել բողոք բերած անձի իրավունքների արդյունավետ պաշտպանութ-

²²¹ Տե՛ս, օրինակ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի *Չորնսբին ընդդեմ Հունաստանի* գործով 1997 թվականի մարտի 19-ի վճիռը, կետ 40, *Բուրդովն ընդդեմ Ռուսաստանի* գործով 2002 թվականի մայիսի 7-ի վճիռը, կետ 34:

յան երաշխավորման անհրաժեշտությունը: Խոսքն այն մասին է, որ նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտի վերանայման վարույթին զուգահեռ վերանայման ենթակա դատական ակտի կատարման պարագայում չեն բացառվում այնպիսի իրավիճակները, երբ ի վնաս բողոք բերած անձի կայացված դատական ակտը մինչև այդ վարույթի ավարտը արդեն կատարված լինի: Իհարկե, այն բոլոր դեպքերում, երբ վերանայման ենթակա դատական ակտը բեկանվի և փոփոխվի, բողոք բերած անձի՝ որպես կատարողական վարույթով պարտապանի իրավունքների պաշտպանության ձև կարող է հանդիսանալ վճռի կատարման շրջադարձունը: Դրա ելությունը դրսևորվում է նրանում, որ պահանջատերը պարտավոր է պարտապանին վերադարձնել այն ամենը, ինչը նրանից ստացել է բեկանված և փոփոխված դատական ակտի հիման վրա²²²:

Այնուամենայնիվ, կարծում ենք, որ հարցի այս կերպ լուծումը չի կարող բավարար համարվել նախ այն պատճառով, որ վճռի կատարման շրջադարձը, ինչպես բխում է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի²²³ 26-րդ հոդվածի բովանդակությունից, կիրառելի է միայն գույքային պահանջներով կայացված դատական ակտերով: Հետևաբար, վճռի կատարման շրջադարձման հարց չի կարող բարձրացվել ի կատար ածված այն դատական ակտերով, որոնցով գույք չի հանձնվել:

Դրա հետ մեկտեղ, անհրաժեշտ է նկատի ունենալ, որ նույնիսկ գույք հանձնելու վերաբերյալ կատարված բոլոր վճիռները չէ, որ կարող են շրջադարձվել: Մասնավորապես, ինչպես արդարացիորեն նկատում է Ռ.Գ. Պետրոսյանը, վճռի կատարման շրջադարձում տեղի ունենալ չի կարող, եթե քաղաքացու մոտ անբարեխղճության բացակայության դեպքում նրան՝ որպես գոյության միջոց տրվել են աշխատավարձ և դրան հավասարեց-

²²² Տե՛ս *Мамушевский Р.Г.*, Гражданское процессуальное право. Краткий системный курс – М.: А-Приор, 2011, էջ 236:

²²³ Ընդունվել է 05.05.1998թ.: Տե՛ս ՀՀՊՏ 1998.06.15/12(45):

ված միջոցներ, կենսաթոշակներ, կրթաթոշակներ, նպաստներ, կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցում, ալիմենտ և այլ դրամական գումարներ²²⁴:

Շարադրվածը վկայում է այն մասին, որ նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման վարույթին համընթաց վերանայման ենթակա դատական ակտի կատարումը անթույլատրելի է: Հակառակ պարագայում նման վերանայումը կարող է դառնալ իմաստագուրկ և բացառել բողոք բերած անձի համար անդառնալի բացասական հետևանքները կանխելու հնարավորությունը՝ դրանով իսկ պայմանավորելով քննարկվող վարույթի՝ որպես խախտված իրավունքները վերականգնելու կարևոր միջոցի անարդյունավետությունը:

Նման պայմաններում հիմնավոր է թվում այն դատավարագետների տեսակետը, ովքեր հանդես են գալիս նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման վարույթում դատարանին վերանայման ենթակա դատական ակտի կատարման կասեցման իրավունք վերապահելու նախաձեռնությանը²²⁵: Այս առումով հիշարժան է նաև այն հանգամանքը, որ հենց Մարդու իրավունքների եվրոպական դատարանը հազվադեպ դեպքերում արդարացված է համարում վճռի կատարման ուշացումը այն պայմանով, որ դրա արդյունքում չխաթարվի «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով անրագրված արդար դատաքննության իրավունքի եռթ-

²²⁴ Տե՛ս *Պետրոսյան Ռ.Գ.*, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարություն / Ռ.Գ. Պետրոսյան; (իրավ. գիտ. դոկտոր, դոցենտ Լ.Զ. Թադևոսյանի խմբագրությամբ): - Չորրորդ հրատարակություն. - Երևան.: Ոսկան Երևանցի, 2012, էջ 587:

²²⁵ Տե՛ս, օրինակ, *Резуниенко А.Н.* Пересмотр судебных актов, вступивших в законную силу, по вновь открывшимся обстоятельствам как стадия гражданского процесса. Дис. ... канд. юрид. наук – Волгоград, 2001, էջեր 133-134, *Диордиева О.Н.*, Гражданское процессуальное право: Учебно-методический комплекс. – М.: Изд-во «ЕАОИ», 2008, էջ 250:

յունը²²⁶:

Հարկ է նշել, որ ՔԴՕ-ն, ի տարբերություն մի շարք երկրների, այդ թվում՝ Եստոնիայի, Լատվիայի, Ռուսաստանի, Ուկրաինայի, Տաջիկստանի քաղաքացիադատավարական օրենսդրության, առանձին դրույթ է նվիրել այս հարցի կարգավորմանը: Մասնավորապես, ՔԴՕ 204.37-րդ հոդվածի 3-րդ մասում սահմանվել է, որ դատական ակտի վերանայման վարույթ հարուցելու վերաբերյալ որոշմամբ դատարանը կարող է միաժամանակ լրիվ կամ մասամբ կասեցնել դատական ակտի գործողությունը: Եվ չնայած նրան, որ օրենսդիրը այստեղ խոսում է դատական ակտի գործողությունը կասեցնելու մասին՝ այնուամենայնիվ, հասկանալի է, որ տվյալ դեպքում նկատի է առնվել դատական ակտի կատարման կասեցումը: Նման եզրահանգումը բխում է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի ուսումնասիրությունից, որը կատարողական վարույթի ընթացքի վրա ազդող դատական ակտ է համարում ոչ թե դատական ակտի գործողությունը կասեցնելու, այլ դատական ակտի կատարմանն ուղղված կատարողական վարույթը կասեցնելու մասին որոշումը (35-րդ հոդվ., 5-րդ կետ):

Միևնույն ժամանակ, ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ ՔԴՕ-ն վերանայվող դատական ակտի կասեցման հնարավորությունը սահմանափակել է բացառապես նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտի վերանայման վարույթի հարուցման որոշմամբ: Իսկ այս առումով անհասկանալի է մնում այն հարցի պատասխանը, թե արդյոք դատարանը կարող է կասեցնել վերանայվող դատական ակտի կատարումը այն դեպքում, երբ նման անհրաժեշտություն առաջանա ոչ թե մինչև դատական ակտի վերանայման վարույթի հարուցումը, այլ դրանից հետո:

²²⁶ Տե՛ս, օրինակ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի «Իմնոբիլիարե Սաֆֆի» ընկերությունն ընդդեմ Իտալիայի գործով 1999 թվականի հուլիսի 28-ի վճիռը, կետ 74, *Խաչատրյանն ընդդեմ Հայաստանի* գործով 2009 թվականի դեկտեմբերի 1-ի վճիռը, կետ 67:

Իհարկե, այն պարագայում, երբ որպես նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտը վերանայող դատարան է հանդես գալիս ՀՀ վճռաբեկ դատարանը, ապա բարձրացված խնդիրը իր լուծումը կարող է ստանալ վճռաբեկ վարույթը կարգավորող նորմերը այս վարույթի նկատմամբ սուբսիդիար կարգով կիրառելու դեպքում: Մասնավորապես, խոսքը վերաբերում է ՔԴՕ 234-րդ հոդվածի 2-րդ մասին, ըստ որի. «Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելուց հետո վճռաբեկ դատարանը որոշմամբ կարող է կասեցնել դատական ակտի կատարումը»: Մինչդեռ իրերի դրությունը տրամագծորեն այլ է վերաքննիչ վարույթի դեպքում, քանի որ, ի տարբերություն ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 117.5-րդ հոդվածի 4-րդ մասի, ՔԴՕ-ն առհասարակ որևէ նշում չի պարունակում վերաքննիչ վարույթում դատական ակտի կատարումը կասեցնելու մասին: Իսկ նման պայմաններում ակնհայտ է, որ նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտը վերանայող վերաքննիչ դատարանի կողմից վարույթի հարուցումից հետո դատական ակտի կատարման կասեցումը կհանգեցնի օրինականության սկզբունքի խախտման: Այդ իսկ պատճառով գտնում ենք, որ ՔԴՕ-ում պետք է կատարել համապատասխան փոփոխություն:

Դատավարական օրենքի բացթողումներից մեկն էլ կարելի է համարել այն, որ դրանում կարգավորված չէ այն հարցը, թե մինչև որ պահն է գործում դատական ակտի կատարումը կասեցնելու մասին որոշումը: Խնդիրը նրանում է, որ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն. «Կասեցված կատարողական վարույթը վերսկսվում է դրա կասեցումն առաջացրած հանգամանքները վերանալուց հետո՝ պահանջատիրոջ դիմումով կամ հարկադիր կատարողի նախաձեռնությամբ»: Եվ քանի որ վերանայվող դատական ակտի կատարման կասեցման նպատակը բողոք բերած անձին գործի նորոգման ընթացքում դատական ակտի կատարման հնարավոր բացասական հետևանքներից ապահովագրելն է,

ապա, կարծում ենք, որ այս որոշման գործողության տևողությունը պետք է կապել գործի քննության արդյունքում կայացված դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելու հանգամանքի հետ:

Մասնավորապես, այն բոլոր դեպքերում, երբ նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման բողոքը մերժվում է, այսինքն՝ վերանայվող դատական ակտը թողնվում է անփոփոխ, ապա դատական ակտի կատարման կասեցումը դառնում է ինքնանպատակ և, հետևաբար, վերացման ենթակա²²⁷: Նույն տրամաբանությամբ էլ դատական ակտի կատարման կասեցումը ենթակա է վերացման նաև բողոքի բավարարման և դատական ակտի բեկանման պայմաններում, քանի որ դատական ակտի բեկանումը «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը դիտում է կատարողական վարույթը կարճելու հիմք: Այլ կերպ ասած՝ այս դեպքում էլ դադարում է վերանայվող դատական ակտի հնարավոր կատարման վտանգը:

Անփոփելով վերոշարադրյալը՝ առաջարկում ենք.

1) ՔԴՕ 204.37-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 204.37. Դատական ակտի վերանայման բողոքը վերադարձնելը

1. Դատարանը բողոքը ստանալուց հետո՝ մեկամսյա ժամկետում, սույն օրենսգրքի 144-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված կարգով որոշում է կայացնում նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով դատական ակտի վերանայման վարույթ հարուցելու կամ բողոքը վերադարձնելու մասին:

2. Դատական ակտի վերանայման բողոքը վերադարձվում է, եթե՝

²²⁷ Տե՛ս, օրինակ, ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի՝ թիվ ԵՇԴ/1063/02/09 քաղաքացիական գործով 2011 թվականի մարտի 4-ի «Վրիպակն ուղղելու մասին» որոշումը:

1) չեն պահպանվել սույն օրենսգրքի 204.36-րդ հոդվածի պահանջները.

2) բողոքը ներկայացվել է սույն օրենսգրքի 204.34-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետը լրանալուց հետո և միջնորդություն չի պարունակում բաց թողած ժամկետը վերականգնելու մասին,

3) բողոքը ներկայացվել է սույն օրենսգրքով 204.34-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետը լրանալուց հետո և բաց թողած ժամկետը վերականգնելու մասին միջնորդությունը մերժվել է.

4) բողոքում նշված դատական ակտի վերանայումը ենթակա չէ այն դատարանին, որին հասցեագրվել է բողոքը.

5) մինչև դատական ակտի վերանայման վարույթ հարուցելու մասին որոշում կայացնելը բողոք ներկայացրած անձից դիմում է ստացվել այն վերադարձնելու մասին.

6) դատական ակտը վերանայելու համար հիմք հանդիսացող նոր երևան եկած կամ նոր հանգամանքը հաստատող ապացույց չի ներկայացվել՝ բացառությամբ այն դեպքերի, երբ բողոքը բերվել է սույն օրենսգրքի 204.33-րդ հոդվածի 1-ին և 5-րդ կետերում նախատեսված հանգամանքների հիմքով.

7) բողոք է ներկայացրել այն անձը, ով բողոք ներկայացնելու իրավունք չունի.

8) բողոքարկվել է այն դատական ակտը, որը ենթակա չէ բողոքարկման.

9) բողոք է ներկայացրել այն անձը, ում իրավունքը չի խախտվել.

10) բողոքը ներկայացվել է սույն օրենսգրքի 204.34-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված ժամկետը լրանալուց հետո.

11) տվյալ գործով կամ տվյալ հարցով վերադաս դատարանի օրինական ուժի մեջ գտնվող դատական ակտի առկայության պայմաններում բողոք է բերվել ստորադաս դատարանի դատական ակտի դեմ.

12) բողոքի շրջանակում ակնհայտորեն հիմնավորված չէ նոր երևան եկած կամ նոր հանգամանքի առկայությունը:

3. Դատական ակտի վերանայման բողոքը վերադարձնելու մասին որոշման մեջ նշվում են բողոքում թույլ տրված բոլոր առեքույթ խախտումները: Նման որոշման դեպքում բողոք բերող անձին պատշաճ ձևով ուղարկվում է միայն դատական ակտի վերանայման բողոքը վերադարձնելու մասին որոշումը:

4. Սույն հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ և 6-րդ կետերով նախատեսված հիմքով բողոքում թույլ տրված խախտումները վերացվելու և որոշումն ստանալուց հետո՝ երկշաբաթյա ժամկետում կրկին ներկայացվելու դեպքում, դատարանը եռօրյա ժամկետում որոշում է կայացնում նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով դատական ակտերի վերանայման վարույթ հարուցելու մասին: Բողոքը կրկին ներկայացվելու դեպքում խախտումները վերացնելու համար նոր ժամկետ չի տրամադրվում:

5. Վերաքննիչ դատարանի՝ դատական ակտի վերանայման բողոքը վերադարձնելու մասին որոշումը կարող է բողոքարկվել վճռաբեկության կարգով՝ որոշումը ստանալուց հետո՝ երկշաբաթյա ժամկետում: Որոշումը վճռաբեկ դատարանի կողմից վերացվելու դեպքում դատարանը գործը ստանալուց հետո՝ եռօրյա ժամկետում կայացնում է նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով դատական ակտի վերանայման վարույթ հարուցելու մասին որոշում:»:

2) ՔԴՕ-ն լրացնել հետևյալ բովանդակությամբ 204.37¹-րդ հոդվածով.

« Դրոշված 204.37¹. Դատական ակտի վերանայման վարույթ հարուցելը

1. Դատական ակտի վերանայման բողոքը վերադարձնելու հիմքերի բացակայության դեպքում դատարանը կայացնում է նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով դատական ակտի վերանայման վարույթ հարուցելու մասին որոշում:

2. Դատարանը նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով դատական ակտի վերանայման վարույթ հարուցելու մասին որո-

շում կայացնելուց հետո այն պատշաճ ձևով ուղարկում է բողոք ներկայացրած անձին և գործին մասնակցող անձանց՝ նշելով բողոքի քննության ժամանակը և վայրը:

3. Դատարանը դատական ակտի վերանայման վարույթ հարուցելու մասին որոշմամբ կամ գործի քննության ընթացքում կարող է իր նախաձեռնությամբ կամ գործին մասնակցող անձի միջնորդությամբ կասեցնել բողոքարկվող դատական ակտի կամ դրա մի մասի կատարումը:

4. Բողոքարկվող դատական ակտի կամ դրա մի մասի կատարման կասեցումը պահպանվում է մինչև բողոքի քննության արդյունքում կայացված դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը, իսկ դատական ակտի վերանայման վարույթը կարճվելու դեպքում՝ մինչև այդ մասին դատական ակտի հրապարակումը:»:

§ 2. Նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման բողոքի քննության դատավարական կարգը

Նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման վարույթի՝ որպես քաղաքացիական դատավարության փուլի, ինքնուրույնությունը պայմանավորված է ոչ միայն վերանայման հիմքերով, օբյեկտներով, ժամկետներով և այլ հատկանիշներով, այլև գործի քննության դատավարական կարգով²²⁸: Դա բխում է այն իրողությունից, որ քննարկվող վարույթում դատարանի հիմնական խնդիրը ոչ թե գործի ըստ էության քննությունն է կամ ստորադաս ատյանի կողմից թույլ տրված դատական սխալների վերացումը, այլ նոր երևան եկած հանգամանքների առկայության կամ բացակայության պարզումն է:

Պետք է նշել, որ գործող քաղաքացիական դատավարության

²²⁸ Տե՛ս **Терехова Л.А.**, Право на исправление судебной ошибки как компонент судебной защиты. Дис. ... док. юрид. наук - Екатеринбург, 2008, էջեր 258-259:

օրենսդրությունը մինչև «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության 2010 թվականի մայիսի 20-ի թիվ ԶՕ-94-Ն օրենքի²²⁹ ընդունումը այս հարցի կապակցությամբ նախատեսում էր առանձին կարգավորում: Մասնավորապես, «Դինոմի քննության կարգը» վերտառությամբ 204¹⁷-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում էր, որ. «Դատարանը դատական նիստում լսում է նոր երևան եկած հանգամանքների վերաբերյալ դիմում ներկայացրած անձի հիմնավորումները և պահանջը, ինչպես նաև գործին մասնակցող անձանց դիրքորոշումը դատական ակտի վերանայման կապակցությամբ»: Միևնույն ժամանակ, նույն հոդվածի 2-րդ մասում նախատեսված էր, որ դատական նիստի ժամանակի և վայրի մասին պատշաճ ձևով ժամուցված դիմողի կամ գործին մասնակցող անձանց չներկայանալն արգելք չէ գործի քննության համար:

Մինչդեռ նշված օրենքի ընդունմամբ, որով ՔԴՕ-ն լրացվեց «Դատական ակտը նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով վերանայելու վարույթը» վերտառությամբ նոր՝ երրորդ³ բաժնով, օրենսդիրը ՔԴՕ կարգավորումից դուրս թողեց նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման բողոքի քննության հատուկ կանոնակարգումը և սահմանափակվեց միայն ՔԴՕ 204.38-րդ հոդվածի 1-ին մասի ընդհանրական կանոնի ամրագրմամբ, ըստ որի. «Եթե սույն բաժնով նախատեսված չեն հատուկ կանոններ, ապա նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով դատական ակտի վերանայման վարույթի վրա տարածվում են սույն օրենսգրքի ընդհանուր կանոնները»:

Դատավարական օրենքի նման ձևակերպումը, ինչպես արդարացիորեն նշում է Ռ.Գ. Պետրոսյանը, դատական ակտերը նոր երևան եկած հանգամանքներով վերանայող վերաքննիչ և վճռաբեկ դատարաններին թելադրում է համապատասխանաբար դեկավարվել իրենց բուն գործունեությունը կանոնակարգող վե-

²²⁹ Տե՛ս ՀՀՊՏ 2010.06.23/28(762) Հոդ. 709:

րաքննիչ և վճռաբեկ վարույթները կարգավորող ՔԴՕ չորրորդ և հինգերորդ բաժինների դրույթներով²³⁰: Ընդ որում, պետք է նկատի ունենալ, որ օրենսդիրը և՛ վերաքննիչ, և՛ վճռաբեկ դատարաններում սահմանել է գործի քննության գրեթե միևնույն դատավարական կարգը՝ որպես հինք ընդունելով վճռաբեկ դատարանում գործի քննության կանոնները: Մասնավորապես, ՔԴՕ 217-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն. «Վերաքննիչ դատարանում գործի քննությունն իրականացվում է վճռաբեկ դատարանում գործի քննության կանոններով, եթե սույն բաժնով այլ կանոններ նախատեսված չեն»: Յետևաբար, նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման բողոքների քննության դատավարական կարգը անհրաժեշտ է պարզաբանել վճռաբեկ դատարանում գործի քննության կարգը սահմանող դատավարական կանոնների տեսանկյունից՝ հաշվի անելով վերաքննիչ վարույթի առանձնահատկությունները:

Նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման վարույթ հարուցելու մասին որոշում կայացնելուց հետո դատարանը պարտավոր է կատարել որոշակի գործողություններ, որոնք ուղղված են առաջին իսկ դատական նիստում գործի ճիշտ քննության ապահովմանը²³¹: Այսպես, բողոքը գործի քննությանը նախապատրաստելու նպատակով ՔԴՕ-ն սահմանում է, որ վերանայման վարույթի հարուցումից հետո դատարանի դատական կազմի դատավորները ծանոթանում են բողոքին և գործի մյուս մյուսերին: Իսկ դատական կազմի այն անդամը, ում դատարանի նախագահը հանձնարարել է դատական նիստում զեկուցել գործը, պարտավոր է ոչ միայն մանրակրկիտ ուսումնասիրել գործը՝ ծանոթանալ բողոքին, գործի մյուս մյուս-

²³⁰ Տե՛ս *Պետրոսյան Ռ.Գ.*, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարություն / Ռ.Գ. Պետրոսյան; (իրավ. գիտ. դոկտոր, դոցենտ Լ.Զ. Թադևոսյանի խմբագրությամբ): - Չորրորդ հրատարակություն. - Երևան.: Ոսկան Երևանցի, 2012, էջեր 544-545:

²³¹ Տե՛ս *Мазурин С.Ф.*, Гражданский процесс. – Питер, Изд-во «Питер Пресс», 2008, էջ 158:

թերին, այլև զեկուցում պատրաստել դատական նիստի համար (ՔԴՕ 237-րդ հոդվ., 1-ին մաս):

Դատական ակտի վերանայման բողոքը գործի քննությանը պատշաճ նախապատրաստելու տեսանկյունից չի կարելի թերագնահատել նաև գործում գտնվող բողոքի պատասխանի ուսումնասիրության կարևորությունը, քանի որ այն իրենից ներկայացնում է բողոքի հիմքերի և հիմնավորումների վերաբերյալ գործին մասնակցող այլ անձանց դիրքորոշումը:

Հարկ է նշել, որ ՀՀ նախկին քաղաքացիական դատավարության օրենսգիրքը չէր նախատեսում նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման դիմումի պատասխան ներկայացնելու դատավարական կարգը²³²: Ի տարբերություն նախկին իրավակարգավորման՝ գործող դատավարական օրենսդրությունը թեկուզև վերաքննիչ և վճռաբեկ վարույթների դրույթների միջոցով ամրագրել է բողոքի պատասխան ներկայացնելու գործին մասնակցող այլ անձանց իրավունքը: Մասնավորապես, ՔԴՕ 212-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Գործին մասնակցող անձը, վերաքննիչ բողոքի պատճենն ստանալուց հետո՝ երկշաբաթյա ժամկետում, իրավունք ունի պատասխան ուղարկելու վերաքննիչ դատարան և գործին մասնակցող այլ անձանց»: Իսկ նույն օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ գործին մասնակցող անձը, ստանալով վճռաբեկ բողոքի պատճենը, մինչև գործի քննությունն իրավունք ունի իր պատասխանն ուղարկելու վճռաբեկ դատարան և գործին մասնակցող անձանց:

Նշված նորմերի համեմատության արդյունքում դժվար չէ նկատել, որ դրանց միակ տարբերությունը բողոքի պատասխան ներկայացնելու համար սահմանված ժամկետների մեջ է: Այսինքն՝ եթե վերանայման բողոքը վերաքննիչ դատարանի կող-

²³² Տե՛ս *Հովհաննիսյան Վ.Վ.*, Քաղաքացիական գործերով դատական վերանայման ինստիտուտի զարգացման հիմնախնդիրները Հայաստանում /Վ.Վ. Հովհաննիսյան: Երևանի պետ. համալսարան: - Երևան, ԵՊՀ հրատ., 2011, էջ 228:

մից քննվելու դեպքում գործին մասնակցող անձը բողոքի պատասխան կարող է ներկայացնել բողոքի պատճենը ստանալուց հետո՝ երկշաբաթյա ժամկետում, ապա վճռաբեկ դատարանի դեպքում՝ իր այդ իրավունքից կարող է օգտվել մինչև գործի քննությունը սկսելը:

Այնինչ կարծում ենք, որ հարցի նման կարգավորումը այնքան էլ արդարացված չի թվում: Խոսքն ամենից առաջ այն մասին է, որ օրենսդիրը նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտի վերանայման բողոքը վերաքննիչ դատարանին հասցեագրվելու դեպքում բողոքի պատասխանը ներկայացնելու համար նախատեսված երկշաբաթյա ժամկետի հաշվարկի սկիզբ է համարում բողոքի պատճենը ստանալու օրը: Եվ քանի որ դատական ակտի վերանայման հարցը լուծելու համար ՔԴՕ-ն սահմանել է մեկամսյա ժամկետ, ապա չեն բացառվում այնպիսի իրավիճակները, երբ գործին մասնակցող անձի կողմից բողոքի պատասխան ներկայացնելուց հետո դատարանը կայացնի դատական ակտի վերանայման բողոքը վերադարձնելու մասին որոշում:

Նման պայմաններում ակնհայտ է, որ այդ մասով առկա իրավակարգավորումը չի բխում դատական խնայողության սկզբունքից, քանի որ գործին մասնակցող այլ անձանց կողմից բողոքի պատասխան ներկայացնելը, փաստորեն, կարող է լինել նաև ապարդյուն: Ավելին, այն կարող է նաև վնաս պատճառել գործին մասնակցող այլ անձանց գույքային շահերին, քանի որ դատական ակտի վերանայման վարույթի չհարուցման պայմաններում չի կարող լուծվել նաև բողոքի պատասխան ներկայացնելու կապակցությամբ գործին մասնակցող անձանց դատական ծախսերի բաշխման հարցը: Հավանաբար այս հանգամանքներն է նկատի ունեցել օրենսդիրը, երբ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 117.7-րդ հոդվածում վերաքննիչ բողոքի պատասխան ներկայացնելու երկշաբաթյա ժամկետի հաշվարկի սկիզբ է դիտարկել ոչ թե բողոքը, այլ այն վարույթ ընդունելու մասին որոշումը ստանալու օրը:

Որոշակի տարակուսանքի տեղիք է տալիս նաև վճռաբեկ դատարանի կողմից դատական ակտը վերանայելիս բողոքի պատասխան ներկայացնելու համար մինչև գործի քննությունը սկսելը ժամկետի ամրագրումը: Իհարկե, այն, ի տարբերություն վերաքննիչ դատարանի կողմից դատական ակտի վերանայման, հնարավորություն է տալիս խուսափել վերը նշված խնդիրներից: Սակայն մյուս կողմից կարող է ստացվել այնպես, որ գործին մասնակցող անձը բողոքի պատասխանը ներկայացնի բառացիորեն գործի քննությունից մի քանի ժամ առաջ: Իսկ այդ հանգամանքը հնարավորություն չի տա գործին մասնակցող այլ անձանց, այդ թվում՝ բողոք բերած անձին, ծանոթանալու պատասխան ներկայացրած անձի դիրքորոշմանը՝ գործին մասնակցող այլ անձանց բողոքի պատասխանը ուղարկելու ՔԴՕ 235-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը դարձնելով հռչակագրային և խախտելով կողմերի իրավահավասարության սկզբունքը:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ գտնում ենք, որ անհրաժեշտ է ՔԴՕ առանձին դրույթով սահմանել նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման բողոքի դեմ գործին մասնակցող այլ անձանց կողմից բողոքի պատասխան ներկայացնելու դատավարական կարգը: Նման դիրքորոշման օգտին է խոսում նաև նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտի վերանայման բողոքի դեմ բողոքի պատասխան ներկայացնելու հետ կապված այլ խնդիրները:

Մասնավորապես, հայտնի է, որ քաղաքացիական դատավարությունը, ի թիվս այլ սկզբունքների, իրականացվում է նրցակցության սկզբունքին համապատասխան, որը ենթադրում է գործին մասնակցող յուրաքանչյուր անձի իրավունքը և միաժամանակ պարտականությունը ապացուցել այն հանգամանքների առկայությունը, որոնք ընկած են իր պահանջների և առարկությունների հիմքում²³³: Այստեղից հետևում է, որ բողոք բերած

²³³ Տե՛ս **Томина А.П.**, Принцип состязательности на стадиях проверки судебных постановлений в гражданском процессе. Дис. ... канд. юрид. наук – Москва, 2008, էջ 18:

անձն է կրում նոր երևան եկած հանգամանքների առկայության ապացուցման պարտականությունը, իսկ այն դեպքում, երբ գործին մասնակցող անձը իր կողմից ներկայացված պատասխանում վկայակոչում է որոշակի հանգամանքներ, ապա դրանց ապացուցման բեռն է կրում է հենց վերջինս: Ընդ որում, այդ հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը վիճելի մնալու բացասական հետևանքներն էլ օրենսդիրը դրել է հենց ապացուցման բեռը կրող անձի վրա (ՔԴՕ 48-րդ հոդվ., 6-րդ մաս):

Սակայն եթե գործող դատավարական օրենսդրությունը ոչ միայն հնարավորություն է տալիս, այլև բողոքը վերադարձնելու սպառնալիքով պարտավորեցնում է բողոք բերած անձին բողոքին կից ներկայացնել նաև նոր երևան եկած հանգամանքների առկայությունը հիմնավորող ապացույցներ, ապա նույնը չի կարելի ասել բողոքի պատասխանի կապակցությամբ: Այլ կերպ ասած՝ ՔԴՕ-ն, մի կողմից, սահմանում է բողոքի պատասխան ներկայացրած անձի պարտականությունը ապացուցելու վկայակոչած հանգամանքները, իսկ, մյուս կողմից, չի նախատեսում այդ պարտականությունը կատարելու, այսինքն՝ բողոքի պատասխանին, ապացույցներ կցելու իրավական հնարավորություն (ՔԴՕ 212-րդ և 235-րդ հոդվ.):

Մինչդեռ իրերի նման դրությունը համատեղելի չէ ոչ միայն կողմերի մրցակցության, այլև նրանց իրավահավասարության սկզբունքի հետ: Գաղտնիք չէ, որ կողմերի իրավահավասարության սկզբունքը սերտորեն կապված է մրցակցության սկզբունքի հետ, քանի որ առանց իրավահավասարության գործին մասնակցող անձինք լիարժեք մրցակցել չեն կարող: Դա բխում է նրանից, որ կողմերի իրավահավասարության սկզբունքը հիմնվում է ինչպես նրանց լսված լինելու իրավունքը («audiatur et altera pars» - «Թող լսված լինի մյուս կողմը») ապահովելու, այնպես էլ մրցակցող կողմերի դատավարական միջոցների հավասարության («non debet actori licere quod reo non permittitur» - «Չի կարելի հայցվորին թույլատրել այն, ինչն արգելված է պատասխանո-

դին») երաշխավորման վրա²³⁴: Այս մոտեցումը իր արտացոլումն է գտել նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքում, որի համաձայն. «Կողմերի իրավահավասարության սկզբունքը՝ կողմերի միջև արդարացի հավասարակշռության իմաստով, հանդիսանում է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված արդար դատաքննության հիմնական տարրերից մեկը և պահանջում է, որպեսզի յուրաքանչյուր կողմին տրամադրվի ողջամիտ հնարավորություն՝ ներկայացնելու իր գործն այնպիսի պայմաններում, այդ թվում՝ ապացույցներ ներկայացնելու, որոնք նրան իր հակառակորդի նկատմամբ չեն դնի էականորեն նվազ բարենպաստ վիճակում»²³⁵:

Վերոշարադրյալի լույսի ներքո՝ կարելի է եզրակացնել, որ նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման վարույթում ապացույցներ ներկայացնելու իրավական հնարավորությամբ պետք է օժտված լինեն ոչ միայն բողոք բերած անձը, այլև բողոքի դեմ պատասխան ներկայացրած գործին մասնակցող այլ անձինք: Ըստ որում, հարկ է նկատի ունենալ, որ քննարկվող վարույթի նախկին իրավակարգավորումը, թեկուզև ոչ ուղղակի, նախատեսում էր նման հնարավորություն: Նման եզրահանգման համար հիմք է ընդունվում ՔԴՕ 204¹⁶-րդ հոդվածի 2-րդ 4-րդ կետը, որտեղ խոսվում էր դիմումի պատասխանում դրան կցվող փաստաթղթերի ցանկը նշելու անհրաժեշտությամբ մասին:

Դատական ակտի վերանայման բողոքը գործի քննությանը նախապատրաստելուն ուղղված գործողությունները կատարե-

²³⁴ Տե՛ս **Авдюков М.Г. и др.,** Советский гражданский процесс – М., Изд-во Московского университета, 1964, էջ 22:

²³⁵ Տե՛ս, օրինակ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի **Դե Դայեսը և Գիսելն ընդդեմ Բելգիայի** գործով 1997 թվականի փետրվարի 24-ի վճիռը, կետ 53, , **Պլատակուն ընդդեմ Դունաստանի** գործով 2001 թվականի հունվարի 11-ի վճիռը, կետ 47:

լուց հետո դատարանը ձեռնամուխ է լինում այն դատական նիստում քննելուն: Այսինքն՝ նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման բողոքի քննության դատավարական ձևը դատական նիստն է²³⁶:

Գործի քննությունը, ընդհանուր կանոնի համաձայն, իրականացվում է դռնբաց նիստում: Սակայն բոլոր այն դեպքերում, երբ դռնբաց նիստում բողոքի քննությունը կարող է հակասել գաղտնիքների (պետական, ծառայողական և այլն) պահպանության շահերին, դատարանը կարող է այն քննել դռնփակ նիստում²³⁷: Գործը դռնփակ նիստում քննելու մասին դատարանը պետք է կայացնի որոշում (ՔԴՕ 8-րդ հոդվ., 3-րդ մաս):

Գործին մասնակցող անձինք իրավունք ունեն ներկա գտնվելու դատական նիստին, որոնք պատշաճ ձևով ծանուցվում են նիստի ժամանակի և վայրի մասին: Բացառություններ տալու անհրաժեշտության դեպքում դատարանն իրավունք ունի իր նախաձեռնությամբ դատական նիստին կանչել բողոք բերած անձին և գործին մասնակցող այլ անձանց, սակայն նրանց չներկայանալը արգելք չէ գործի քննության համար:

Սահմանված ժամին նախագահողը բացում է դատական նիստը և հայտարարում, թե ում բողոքով, որ դատարանի և որ դատական ակտի դեմ բերված բողոքով է քննվում գործը: Այնուհետև նախագահողը պարզում է դատական նիստին ներկայացված անձանց ինքնությունը և ստուգում է ներկայացուցիչների լիազորությունները²³⁸:

²³⁶ Ст'я Комментарий к Гражданскому процессуальному кодексу Российской Федерации /под ред. **М.А. Вукот**. М.: Изд-во «Юрайт», 2012, էջ 517:

²³⁷ Ст'я Гражданский процесс: Учебник /Под ред. д.ю.н., проф. **А.Г. Коваленко**, д.ю.н., проф. **А.А. Мохова**, д.ю.н., проф. **П.М. Филиппова**. – М.: Юридическая фирма «КОНТРАКТ»; «ИНФРА-М», 2008, էջ 304:

²³⁸ Ст'я **Алиев Т.Т.**, Производство по пересмотру судебных постановлений ввиду вновь открывшихся обстоятельств в гражданском судопроизводстве: теоретические аспекты, перспективы развития. Дис. ... д.ю.н., - Саратов, 2005, էջ 330:

Գործի քննությունը սկսվում է դատարանի դատական կազմի համապատասխան դատավորի զեկուցումով, որի ընթացքում զեկուցողը շարադրում է նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտի վերանայման բողոքի և դրա դեմ ներկայացված պատասխանի փաստարկները: Ձեկուցման իմաստը դրսևորվում է նրանում, որ և՛ գործը քննող դատարանը, և՛ գործին մասնակցող անձինք կարողանան հստակ պատկերացում կազմել գործի հանգամանքների, վերանայվող դատական ակտի էության, ինչպես նաև բողոքի և դրա դեմ ներկայացված բողոքի պատասխանի փաստարկների մասին:

Ձեկուցումը ավարտելուց հետո դատական կազմում ընդգրկված մյուս դատավորներն իրավունք ունեն հարցեր տալ զեկուցողին և գործին մասնակցող անձանց (ՔԴՕ 217-րդ հոդվ., 4-րդ մաս, 238-րդ հոդվ., 1-ին մաս): Նման հարցերի կապակցությամբ գործին մասնակցող անձանց բացատրությունները լսելուց հետո, իսկ հարցերի բացակայության դեպքում զեկուցումից հետո դատարանը ավարտում է գործի քննությունը և հայտարարում դատական ակտի հրապարակման վայրը և ժամանակը: Ընդ որում, գործի քննության արդյունքում դատարանը կայացնում է որոշում, որի կայացման, հրապարակման, գործին մասնակցող անձանց հանձնելու և ուժի մեջ մտնելու հետ կապված հարաբերությունները ևս կարգավորվում են ՔԴՕ ընդհանուր դրույթներով:

Նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման բողոքի քննության գործող դատավարական կարգը սահմանող նորմերի ուսումնասիրությունը թույլ է տալիս պնդել, որ օրենսդիրը որևէ հատուկ կանոն չի ամրագրել գործում առկա, այդ թվում՝ բողոքին կից ներկայացված ապացույցների հետազոտման և գնահատման վերաբերյալ: Արդյունքում օրինաչափ հարց է առաջանում այն մասին, թե արդյոք դատարանը պետք է հետազոտի և գնահատի գործում առկա ապացույցները բողոքի հիմնավորվածությունը պարզելու, այսինքն՝ նոր երևան եկած հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը հաստատելու համար:

Ինչպես հայտնի է, գործի լուծման համար էական նշանակություն ունեցող հանգամանքների առկայության կամ բացակայության մասին հավաստի և ճշգրիտ հետևությունների հանգելու միակ դատավարական միջոցը դատական ապացուցումն է, որը հնարավորություն է տալիս ապահովել օրինական և հիմնավորված դատական ակտերի կայացումը: Ընդ որում, դատարանը գործի հանգամանքները կարող է հաստատել բացառապես օրենքով նախատեսված ապացուցման միջոցների օգնությամբ²³⁹:

Սակայն անհրաժեշտ է նկատի ունենալ, որ գործում որևէ ապացույցի առկայությունը ինքնին չի ենթադրում դատարանի կողմից համապատասխան փաստի հաստատում: Դատարանը այդ նպատակով դեռևս պետք է անմիջականորեն ընկալի ապացույցի բովանդակությունը և միայն կատարված վերլուծությունների արդյունքում հանգի որոշակի հետևությունների: Այսինքն՝ դատական ապացուցման մաս են կազմում նաև ապացույցների հետազոտմանը և զնահատմանն ուղղված դատավարական գործողությունները²⁴⁰:

Շարադրվածի համատեքստում ակնհայտ է, որ առաջադրված հարցին պետք է տալ դրական պատասխան: Այլ կերպ ասած՝ գտնում ենք, որ առանց գործում առկա ապացույցների հետազոտման և զնահատման դատարանի կողմից նոր երևան եկած հանգամանքների առկայության կամ բացակայության մասին ցանկացած հետևություն խաթարում է դատական ապացուցման հիմքում ընկած ողջ տրամաբանությունը: Այդ իսկ պատճառով հիմնավոր է թվում դատավարական օրենքում համապատասխան լրացում կատարելու մասին Ա.Պ. Տոմինայի առաջարկությունը²⁴¹: Նման եզրահանգումը բխում է նաև այն իրո-

²³⁹ Տե՛ս **Боннер А.Т.**, Установление обстоятельств гражданских дел – М.: Городец, 2000, էջ 109:

²⁴⁰ Տե՛ս Гражданский процесс: Учебник. 3-е изд., перераб. и доп. / Под ред. **М.К. Треушников**. М.: Издательский Дом «Городец», 2010, էջ 268:

²⁴¹ Տե՛ս **Томина А.П.**, Принцип состязательности на стадиях проверки судебных постановлений в гражданском процессе. Дис. ... канд. юрид. наук – Москва, 2008, էջ 152:

դությունից, որ ՀՀ սահմանադրական դատարանը ևս հատկապես կարևորել է նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման վարույթում ապացուցման գործընթացի հետ կապված սկզբունքների երաշխավորման անհրաժեշտությունը²⁴²:

Այսպիսով, կարելի է հանգել այն եզրակացության, որ նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման բողոքի քննության դատավարական կարգը, որոշակի ընդհանրություններով հանդերձ, առանձնանում է ինչպես առաջին ատյանում գործի ըստ էության քննությունից, այնպես էլ վերաքննիչ և վճռաբեկ դատարաններում գործող ընթացակարգերից:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ կարծում ենք, որ անհրաժեշտ է ՔԴՕ-ն լրացնել հետևյալ բովանդակությամբ դրույթներով՝

1) «Հոդված 204.37². Դատական ակտի վերանայման բողոքի պատասխանը

1. Գործին մասնակցող անձը, նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով դատական ակտի վերանայման վարույթ հարուցելու մասին դատարանի որոշումը ստանալուց հետո՝ երկշաբաթյա ժամկետում, իրավունք ունի պատասխան ուղարկելու դատարան և գործին մասնակցող այլ անձանց:

2. Դատական ակտի վերանայման բողոքի պատասխանը ներկայացվում է գրավոր, որում նշվում են՝

1) դատարանի անվանումը, որին հասցեագրվում է պատասխանը.

2) պատասխանը ներկայացրած անձի և գործին մասնակցող անձանց անունները (անվանումները).

3) դատարանի անվանումը, որի կայացրած դատական ակտի դեմ բերվել է վերանայման բողոք, գործի համարը և դատական ակտի կայացման տարին, ամիսը, ամսաթիվը.

²⁴² Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի 2012 թվականի սեպտեմբերի 28-ի թիվ ՍԴՌ-1049 որոշումը (ՀՀՊՏ 2012.10.10/49(923).1 Հոդ. 1096.1):

4) բողոքի հիմքերի և հիմնավորումների վերաբերյալ դիրքորոշումը և դրա հիմնավորումները.

5) պատասխանին կցվող փաստաթղթերի ցանկը:

3. Ներկայացված պատասխանին կցվում է պատասխանը, իսկ ապացույցներ ներկայացվելու դեպքում, նաև ապացույցների պատճենները գործին մասնակցող այլ անձանց ուղարկելու ապացույցները:

4. Պատասխանը ստորագրում է պատասխանը ներկայացրած անձը կամ նրա ներկայացուցիչը: Ներկայացուցչի ստորագրած պատասխանին կցվում է նրա լիազորությունները հավաստող լիազորագիրը կամ այլ փաստաթուղթ, եթե այն տվյալ գործով նախկինում չի ներկայացվել:»:

2) «Հոդված 204.37³. Դատական ակտի վերանայման բողոքի քննության կարգը

1. Դատական նիստը սկսելու համար սահմանված ժամին նախագահողը բացում է դատական նիստը, հրապարակում դատարանի կազմը և քննության ենթակա գործը: Դատական նիստի քարտուղարը դատարանին զեկուցում է գործին մասնակցող անձանց՝ նիստին ներկա լինելու, չներկայացած անձանց պատշաճ կարգով ծանուցված լինելու մասին: Նիստի ժամանակի և վայրի մասին պատշաճ ձևով ծանուցված գործին մասնակցող անձանց չներկայանալը արգելք չէ բողոքի քննության համար:

2. Նիստը նախագահողը պարզում է դատական նիստին ներկայացած գործին մասնակցող անձանց ինքնությունը, ստուգում է ներկայացուցիչների լիազորությունները: Այնուհետև դատական նիստը նախագահողը պարզում է՝ ունեն արդյոք կողմերը միջնորդություններ մինչև բողոքի քննության սկիզբը:

3. Բողոքի քննությունը սկսվում է նախագահող դատավորի կամ կոլեգիալ կազմի դատավորի զեկուցումով, որի ընթացքում զեկուցողը շարադրում է բողոքի և բողոքի դեմ ներկայացված պատասխանի փաստարկները:

4. Ջեկուցումն ավարտելուց հետո դատարանը անցնում

է գործուն առկա ապացույցների հետազոտմանը, որն իրականացվում է առաջին ատյանի դատարանում ապացույցների հետազոտման կարգը սահմանող կանոններին համապատասխան:

5. Դատական կազմի դատավորները իրավունք ունեն հարցեր տալ դատական նիստին ներկա գործին մասնակցող անձանց, որից հետո բողոքի քննությունը համարվում է ավարտված, և հայտարարվում է դատական ակտը հրապարակելու վայրն ու ժամանակը:»:

3) «Չողված 204.37⁴. Ապացույցների գնահատումը

1. Դատական ակտի վերանայման բողոքի հիմքի առկայությունը կամ բացակայությունը պարզելու նպատակով դատարանը պարտավոր է գնահատել դատական նիստում հետազոտված ապացույցները և հաստատված համարելու նոր փաստ, եթե հետազոտված ապացույցների հիման վրա հնարավոր է հանգել նման եզրակացության:

2. Նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով դատական ակտի վերանայման վարույթում դատարանը ապացույցները գնահատում է սույն օրենսգրքի 53-րդ հոդվածով սահմանված կարգով:»:

§ 3. Նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերը վերանայող դատարանի լիազորությունները

Նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերը վերանայող դատարանի լիազորությունները այն դատավարական միջոցներն են, որոնք հնարավորություն են տալիս դատարանին որոշել գործի քննության հետագա ընթացքը և անհրաժեշտության դեպքում ազդել վերանայվող դատական ակտի գործողության վրա: Դրանք դատարանին տրված իրավունքներն ու պարտականություններն են՝ գործի քննության արդյունքում օրենսդրությամբ նախատեսված իրավաչափ գործողություններ կատարելու համար: Ըստ որում, ինչպես ցանկացած այլ

դեպքում, նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերը վերանայող դատարանի լիազորությունները ևս ամենից առաջ կանխորոշվում են քննարկվող վարույթի խնդիրներով²⁴³:

ՀՀ նախկին քաղաքացիական դատավարության օրենսգիրքը նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտը վերանայող դատարանին օժտել էր երկու լիազորությամբ: Մասնավորապես, սահմանված էր, որ դատարանը, քննության առնելով նոր երևան եկած հանգամանքների հետևանքով վճիռը կամ որոշումը վերանայելու վերաբերյալ դիմումը, կամ բավարարում էր դիմումը և բեկանում վճիռը կամ որոշումը, կամ մերժում էր դատական ակտի վերանայումը²⁴⁴: Ըստ էության, նույնաբովանդակ դրույթ էր պարունակում նաև ՔԴՕ 204¹⁸-րդ հոդվածը միայն այն տարբերությամբ, որ այստեղ դատարանին հնարավորություն էր տրված դիմումը բավարարելիս դատական ակտը բեկանել ոչ միայն ամբողջությամբ, այլև մի մասով:

Սակայն նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման վարույթի նոր իրավակարգավորումների ամրագրման ժամանակ օրենսդիրը այլևս հատուկ նորմ չնվիրեց դատարանի լիազորությունների սահմանմանը: Իսկ այդ հանգամանքը դատական ակտերը նոր երևան եկած հանգամանքներով վերանայող դատարանին պարտավորեցնում է ղեկավարվել ՔԴՕ ընդհանուր կանոններով, այսինքն՝ վերաքննիչ և վճռաբեկ դատարանների լիազորությունները սահմանող դրույթներով:

Այսպես, ՔԴՕ 221-րդ և 240-րդ հոդվածների 2-րդ մասերի ուժով նոր երևան եկած հանգամանքներով միջանկյալ դատական ակտերի վերանայման արդյունքում դատարանը իրավասու

²⁴³ Տե՛ս **Тимофеев Ю.А.**, Полномочия суда второй инстанции в гражданском процессе: современные проблемы. Дис. ... канд. юрид. наук – Екатеринбург, 2008, էջեր 91-92:

²⁴⁴ Տե՛ս **Հովհաննիսյան Վ.Վ.**, Քաղաքացիական գործերով դատական վերանայման ինստիտուտի զարգացման հիմնախնդիրները Հայաստանում /Վ.Վ. Հովհաննիսյան: Երևանի պետ. համալսարան: - Երևան, ԵՊՀ հրատ., 2011, էջ 226:

է մերժել դատական ակտի վերանայման բողոքը՝ դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ, կամ կայացնել նոր դատական ակտ, որն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից: Իսկ նույն հողվածների առաջին մասերը գործն ըստ էության լուծող դատական ակտի վերանայման կապակցությամբ դատարանին օժտում են հետևյալ լիազորություններով՝

1) մերժել բողոքը՝ դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ: Այն դեպքում, երբ դատարանը մերժում է բողոքը, սակայն դատարանի կայացրած գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտը թերի կամ սխալ է պատճառաբանված, ապա դատարանը պատճառաբանում է անփոփոխ թողնված դատական ակտը,

2) ամբողջությամբ կամ մասնակիորեն բավարարել բողոքը՝ համապատասխանաբար ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանելով դատական ակտը: Բեկանված մասով գործն ուղարկվում է համապատասխան ստորադաս դատարան՝ նոր քննության՝ սահմանելով նոր քննության ծավալը: Չբեկանված մասով դատական ակտը մնում է օրինական ուժի մեջ,

3) ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանել դատական ակտը և հաստատել կողմերի հաշտության համաձայնությունը,

4) մասնակիորեն բեկանել և փոփոխել ստորադաս դատարանի ակտը, եթե ստորադաս դատարանի հաստատած փաստական հանգամանքները հնարավորություն են տալիս կայացնելու նման ակտ, և եթե դա բխում է արդարադատության արդյունավետության շահերից,

5) ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանել դատական ակտը և կարճել գործի վարույթը ամբողջովին կամ դրա մի մասը կամ առանց քննության թողնել հայցն ամբողջովին կամ դրա մի մասը,

6) վերաքննիչ դատարանի կողմից դատական ակտը փոփոխվելու դեպքերում ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանել վերաքննիչ դատարանի դատական ակտը՝ օրինական ուժ

տալով առաջին ատյանի դատարանի դատական ակտին, եթե վերանայումը իրականացվում է վճռաբեկ դատարանի կողմից: Այս դեպքում վճռաբեկ դատարանը լրացուցիչ պատճառաբանում է առաջին ատյանի դատական ակտը, եթե այն թերի կամ սխալ է պատճառաբանված:

Վերոգրյալի հիման վրա կարելի է արձանագրել, որ նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերը վերանայող դատարանի լիազորությունները, գործող կարգավորման համաձայն, ստացել են որոշակի զարգացում: Խոսքը նախ և առաջ այն մասին է, որ ներկայումս, ելնելով վերանայման օբյեկտի տեսակից, դատարանը օժտվել է տարբեր լիազորություններով: Բացի այդ, օրենսդիրը ընդլայնել է գործն ըստ էության լուծող դատական ակտի բեկանելու լիազորության բովանդակությունը՝ դրանում ներառելով դատական ակտի բեկանման լիազորության այնպիսի դատավարական հետևանքներ, ինչպիսիք են գործը նոր քննության ուղարկելը, դատական ակտը փոփոխելը, գործի վարույթը կարճելը և այլն²⁴⁵:

Միևնույն ժամանակ, անհրաժեշտ է նկատել, որ, ի տարբերություն վերաքննիչ և վճռաբեկ վարույթների, որտեղ հստակեցված են դատական ակտի բեկանման հիմք հանդիսացող նյութական կամ դատավարական իրավունքի նորմերի խախտումները, գործող քաղաքացիական դատավարության օրենսդրությունը չի սահմանել այն պայմանները, որոնց դեպքում դատարանը քննարկվող վարույթում կարող է բեկանել դատական ակտը և իրացնել իր մյուս լիազորությունները: Այս առումով տեղին է հիշատակել Ս.Յու. Կացի այն տեսակետը, որ նման պայմանների բացակայությունը կարող է հանգեցնել հակասական իրավակիրառ պրակտիկայի ձևավորմանը, քանի որ նույն հիմքերի առկայության դեպքում տարբեր դատական ատյաններ կարող են կի-

²⁴⁵ Տե՛ս *Гойденко Е.Г.*, Отмена не вступивших в законную силу судебных решений в гражданском процессе. Дис. ... канд. юрид. наук – Москва, 2007, էջեր 135-136:

րառել տարբեր լիազորություններ²⁴⁶:

Պետք է նշել, որ դատավարագիտության մեջ միանշանակ է ընդունվում այն հանգամանքը, որ բոլոր այն դեպքերում, երբ դատարանը պարզում է նոր երևան եկած հանգամանքների բացակայությունը, դատական ակտի վերանայման բողոքը ենթակա է մերժման²⁴⁷: Դրան հակառակ, սակայն, տարակածություններ են նկատվում այն կապակցությամբ, թե որ դեպքում դատարանը կարող է բավարարել բողոքը և բեկանել վերանայվող դատական ակտը:

Մասնավորապես, ըստ որոշ հեղինակների (Տ.Տ. Ալիև, Մ.Յու. Լեբեդև և այլք)՝ դատարանը, հաստատված համարելով նոր երևան եկած հանգամանքների առկայությունը, պետք է կայացնի վերանայվող դատական ակտը բեկանելու մասին որոշում²⁴⁸: Իսկ դատավարագետների մյուս խումբը (Ռ.Գ. Պետրոսյանը, Մ.Ա. Գուրվիչը, Կ.Ի. Կոմիսարովը և այլք) նշում է, որ դատարանը գործը քննելիս պետք է պարզի նոր երևան եկած հանգամանքների առկայությունը, ինչպես նաև այն, թե որքանով են դրանք ազդում վերանայվող դատական ակտի օրինականության և հիմնավոր-

²⁴⁶ Տե՛ս **Кац С.Ю.**, Проблемы пересмотра судебных постановлений по гражданским делам в порядке надзора. Автореф. Дис. ... док. юрид. наук – Харьков, 1970, էջ 35:

²⁴⁷ Տե՛ս, օրինակ, **Резуенко А.Н.** Пересмотр судебных актов, вступивших в законную силу, по вновь открывшимся обстоятельствам как стадия гражданского процесса. Дис. ... канд. юрид. наук – Волгоград, 2001, էջ 142, **Исаенкова О.В., Демичев А.А.**, Гражданское процессуальное право России: учебник /Под. ред. О.В. Исаенковой. – М.: Норма, 2009, էջեր 392-393:

²⁴⁸ Տե՛ս, օրինակ, **Алиев Т.Т.**, Производство по пересмотру судебных постановлений ввиду вновь открывшихся обстоятельств в гражданском судопроизводстве: теоретические аспекты, перспективы развития. Дис. ... док. юрид. наук - Саратов, 2005, էջ 342, **Тертышников В.И.**, Гражданский процесс Украины (лекции): Учебное пособие. – Харьков: Издатель ФЛ-П Вапнярчук Н.Н., 2009, էջ 232, **Лебедев М.Ю.** Гражданский процесс: учебник для вузов и ссузов /М. Ю. Лебедев. – М.: Изд-во «Юрайт»; Высшее образование, 2010, էջ 342:

վածության վրա²⁴⁹:

Նշված տեսակետների համեմատության արդյունքում դժվար չէ նկատել, որ, ի տարբերություն առաջինի, երկրորդ մոտեցման հեղինակները դատական ակտի բեկանման լիազորության իրացումը պայմանավորում են ոչ միայն նոր երևան եկած հանգամանքների առկայությամբ, այլև գործի ելքի վրա դրանց ունեցած ազդեցությամբ: Եվ քանի որ նոր երևան եկած հանգամանքներով վերանայման ենթակա են բացառապես օրինական ուժի մեջ մտած, այսինքն՝ իրավական որոշակիությամբ օժտված դատական ակտերը, ապա առաջին հայացքից առավել ընդունելի է թվում հենց վերջին մոտեցումը: Հատկապես, եթե նկատի է ունենանք, որ նոր երևան եկած հանգամանքների գրեթե բոլոր խմբերին էլ բնութագրական է դրանց գործի ելքի վրա համար նշանակություն ունենալու հատկանիշը:

Այդուհանդերձ, չպետք է մոռացության մատնել նաև այն իրողությունը, որ նոր երևան եկած հանգամանքների շարքում օրենսդիրը դասել է նաև գործի քննության հետ կապված դատավորի կողմից հանցանք կատարելու փաստը, որը շատ դեպքերում կարող է գործի ելքի վրա չունենալ որևէ ազդեցություն: Ասվածի օրինակ է այն իրավիճակները, երբ դատավորը գործի կապակցությամբ ստանում է կաշառք, բայց նաև կայացնում է ըստ էության ճիշտ դատական ակտ: Իսկ նման պայմաններում վերանայվող դատական ակտի բեկանման հարցը միաժամանակ և՛ նոր երևան եկած հանգամանքների առկայության, և՛ գործի ելքի համար դրանց էական լինելու պայմանների հետ կապելը կհան-

²⁴⁹ Տե՛ս, օրինակ, *Պետրոսյան Ռ.Գ.*, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարություն /Ռ.Գ. Պետրոսյան/; (իրավ. գիտ. դոկտոր, դոցենտ Լ.Զ. Թադևոսյանի խմբագրությամբ): - Չորրորդ հրատարակություն. - Երևան: Ոսկան Երևանցի, 2012, էջ 545, *Боннер А.Т. и др.*, Советский гражданский процесс – М., Изд-во «Юридическая литература», 1985, էջ 383, Гражданский процесс: учеб. для студентов вузов /*Абушенко Д.Б. и др.*]; отв. ред. – *В.В. Ярков*. – 7-е изд., перераб. и доп. – М.: Волтерс Клувер, 2009, էջեր 573-574, Гражданский процесс Украины: Учебное пособие для подготовки к экзамену / *Погребной С.А., Гонгалю Р.Ф., Волкова Н.В. и др.* – Х.: Одиссей, 2011, էջ 184:

գեցնի նրան, որ վերանայվող դատական ակտը պետք է մնա օրինական ուժի մեջ:

Մինչդեռ, կարծում ենք, որ հանցանք կատարած դատավորի կողմից կայացված դատական ակտի օրինական ուժի մեջ թողնելու հնարավորությունը ինքնին հակասում է քաղաքացիական դատավարության օրենսդրության հիմքում դրված տրամաբանությանը, քանի որ այն գործի ելքի հետ ակնհայտորեն առնչություն չունեցող ավելի մեղմ խախտումները (գործի քննությունը ոչ օրինական կազմով, դատական նիստի արձանագրության բացակայությունը և այլն) դիտարկում է որպես դատական ակտի անվերապահ բեկանման հիմքեր (ՔԴՕ 228-րդ հոդվ., 2-րդ մաս): Հետևաբար, գործի ելքի վրա ունեցած ազդեցությունը չպետք է ունենա սկզբունքային նշանակություն քննարկվող վարույթում դատական ակտի բեկանման համար: Պատահական չէ, որ դեռևս մինչհեղափոխական ռուս դատավարագետները նշում էին, որ նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտի բեկանումը չի կանխորոշում դրան հակառակ դատական ակտի կայացման անհրաժեշտությունը²⁵⁰:

Այս կապակցությամբ ուշագրավ է, որ ՀՀ սահմանադրական դատարանը ևս, չկարևորելով գործի ելքի վրա նոր երևան եկած հանգամանքների ազդեցության հարցը, հայտնել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «Եթե հարուցված վերանայման վարույթի շրջանակներում հաստատվում է նոր երևան եկած հանգամանքի առկայության փաստը՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.32-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ կետերի պահանջները հաշվի առնելով, ապա վերանայման վարույթի արդյունքում պետք է ուժը կորցրած ճանաչվեն համապատասխան դատական ակտերը»²⁵¹:

²⁵⁰ Տե՛ս **Заверие С.С.**, Пересмотр по вновь открывшимся обстоятельствам решений, определений, постановлений президиума суда надзорной инстанции, вступивших в законную силу, в гражданском процессе. Дис. ... канд. юрид. наук – Москва, 2008, էջ 105:

²⁵¹ Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի 2012 թվականի սեպտեմբերի 28-ի թիվ ՍԴՈ-1049 որոշումը:

Միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ որոշ երկրների քաղաքացիական դատավարության օրենսգրքերը նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման վարույթում դատական ակտի բեկանման հարցում արդեն իսկ ամրագրել են վերոհիշյալ մոտեցումը: Այսպես, օրինակ, Լատվիայի քաղաքացիական դատավարության օրենսգրքի 482-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն. «Եթե դատարանը հաստատում է նոր երևան եկած հանգամանքի առկայությունը, ապա ամբողջությամբ կան մասնակիորեն բեկանում է դատարանի վճիռը կամ որոշումը և գործն ուղարկում առաջին ատյանի քննությանը»: Իսկ Էստոնիայի քաղաքացիական դատավարության օրենսգրքի 354-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ դիմումի հիմնավորվածության, այսինքն՝ նոր երևան եկած հանգամանքների առկայության դեպքում, դատարանը բեկանում է դատական ակտը և այն ուղարկում բեկանված դատական ակտ կայացրած դատարան՝ նոր քննության:

Շարադրվածի համատեքստում գտնում ենք, որ քննարկվող վարույթում դատական ակտի բեկանման լիազորության իրացման անհրաժեշտ և բավարար պայման պետք է դիտարկել միայն համապատասխան հանգամանքի առկայությունը: Ըստ որում, հաշվի առնելով նման նորմի բացակայությունը, արդարացված կլիներ ՔԴՕ-ն լրացնել այդպիսի դրույթով, որը հնարավորություն կտա ոչ միայն կանխատեսելի դարձնել վերանայվող դատական ակտի բեկանման հարցը, այլև ելակետեր ունենալ նշված լիազորության իրականացման իրավաչափությունը վերադաս դատական ատյանի կողմից գնահատելու համար:

Նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերը վերանայող դատարանի լիազորությունները քննարկելիս առանձնահատուկ ուշադրության է արժանի ՔԴՕ 204.38-րդ հոդվածի 2-րդ մասը, որի համաձայն. «Այդ վարույթի արդյունքում կայացված դատական ակտում դատարանը կարող է չփոփոխել վերանայված դատական ակտի եզրափակիչ մասը, միայն եթե

ծանրակշիռ փաստարկների մատնանշմամբ հիմնավորում է, որ սույն օրենսգրքի 204.32 կամ 204.33 հոդվածով նախատեսված հանգամանքներն ըստ էության չէին կարող ազդել գործի ելքի վրա»:

Դրանով իսկ օրենսդիրը, փաստորեն, նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման վարույթում ընդհանուր կանոն է դիտարկում այն, որ գործի ելքի վրա ազդող նոր երևան եկած հանգամանքների հիմքով դատական ակտը բեկանելու դեպքում դատարանը պետք է ոչ թե գործը ուղարկի նոր քննության, այլ փոփոխի վերանայվող դատական ակտը:

Նման կարգավորման հիմքում ընկած է այն ողջամիտ տրամաբանությունը, որ գործը նոր քննության ուղարկելու համար, որպես կանոն, հիմք կարող է ծառայել գործի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները պարզելու, ապացույցները ստուգելու կամ նոր ապացույցներ ձեռք բերելու անհրաժեշտությունը²⁵²: Եվ քանի որ նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտը վերանայող դատարանը, ունենալով թեկուզև սահմանափակված ճանաչողության օբյեկտ, օժտված է ապացույցներ հետազոտելու և գնահատելու և, հետևաբար, որոշակի փաստեր հաստատված համարելու կամ չհամարելու իրավասությամբ, ապա ակնհայտ է, որ շատ դեպքերում գործը նոր քննության ուղարկելը դառնում է ինքնանպատակ: Դրա հետ մեկտեղ, նման պայմաններում գործը նոր քննությանն ուղարկելը կարող է սպառնալիք պարունակել նաև գործի քննության ողջամիտ ժամկետի պահպանման տեսանկյունից:

Մինչդեռ իրավակիրառ պրակտիկայի վերլուծությունը թույլ է տալիս արձանագրել բոլորովին այլ արդյունքներ: Մասնավորապես, ՔԴՕ 204.38-րդ հոդվածի 2-րդ մասի ամրագրումից՝ 2011 թվականի նոյեմբերի 21-ից մինչև 2012 թվականի հոկտեմբերի

²⁵² Ст'я Советский гражданский процесс: Учебник / Под ред. **М.К. Треуш-никова**. – М.: Изд-во МГУ, 1989, էջ 341:

19-ը ընկած ժամանակահատվածում ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից կայացված դատական ակտերի ուսումնասիրությունը վկայում է, որ առկա չէ որևէ դեպք, երբ դատարանը փոփոխած լինի վերանայվող դատական ակտերը և կայացնի գործի այլ ելքով դատական ակտ: Ավելին, դրանցում նշված չեն նաև այն փաստարկները, թե ինչու դատարանը չի փոփոխում վերանայվող դատական ակտը և ինչու է գործը ուղարկում նոր քննության²⁵³:

Ստեղծված իրավիճակը, ըստ էության, նրա հետևանքն է, որ գործող քաղաքացիական դատավարության օրենսդրությամբ նախատեսված վերաքննիչ և վճռաբեկ դատարանների դատական ակտը բեկանելու և փոփոխելու լիազորությունները, որոնց իրացման համար հիմք կարող է հանդիսանալ բացառապես ստորադաս դատարանի հաստատած հանգամանքները, տվյալ դեպքում կիրառելի չեն, քանի որ թույլ չեն տալիս հաշվի առնել նաև քննարկվող վարույթի արդյունքում հաստատված հանգամանքները: Այլ կերպ ասած՝ օրենսդիրը, մի կողմից, ամրագրել է նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտի վերանայման արդյունքում այն փոփոխելու դատարանի պարտականությունը, սակայն, մյուս կողմից, դատարանի համար չի սահմանել համապատասխան լիազորություն: Իսկ նման պայմաններում ավելի, քան ակնհայտ է, որ նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման վարույթի՝ որպես խախտված իրավունքները վերականգնելու կարևոր երաշխիքի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով անհրաժեշտ է ԶԴՕ-ում կատարել համապատասխան փոփոխություն:

Ընդհանրացնելով շարադրվածը՝ առաջարկում ենք՝

²⁵³ Տե՛ս, օրինակ, ՀՀ վճռաբեկ դատարանի՝ թիվ ԵԶԴ/0601/02/08 քաղաքացիական գործով 2012 թվականի հունիսի 29-ի, թիվ ԵՇԴ/1216/02/10 քաղաքացիական գործով 2012 թվականի հունիսի 29-ի, թիվ 2-3/2004 քաղաքացիական գործով 2012 թվականի հոկտեմբերի 19-ի, թիվ ԳԴ4/0491/02/09 քաղաքացիական գործով 2012 թվականի հոկտեմբերի 19-ի և թիվ ՎԴ/0280/05/10 վարչական գործով 2012 թվականի հոկտեմբերի 19-ի որոշումները:

1) ՔԴՕ 204.38-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Դատարանը, պարզելով սույն օրենսգրքի 204.32-րդ հոդվածով կամ 204.33-րդ հոդվածի 1-ին, 3-5-րդ կետերով նախատեսված հիմքերի առկայությունը, բեկանում է վերանայվող դատական ակտը: Դատարանը սույն օրենսգրքի 204.33-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայության դեպքում կարող է չբեկանել վերանայվող դատական ակտը, միայն եթե ծանրակշիռ փաստարկների մատնանշմամբ հիմնավորում է, որ այն ըստ էության չէր կարող ազդել գործի ելքի վրա:

3. Դատարանը սույն օրենսգրքի 204.32-րդ և 204.33-րդ հոդվածներով նախատեսված հանգամանքներով, բեկանելով վերանայվող դատական ակտը, փոփոխում է այն, եթե գործով հաստատված հանգամանքները հնարավորություն են տալիս առանց գործի նոր քննության կայացնելու նոր դատական ակտ:»:

2) ՔԴՕ 204.38-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 4-րդ մասով.

«4. Վերաքննիչ դատարանի դատական ակտն օրենքով սահմանված ընդհանուր կարգով կարող է բողոքարկվել վճռաբեկ դատարան:»:

**ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՆՈՐՄԱՏԻՎ ԻՐԱՎԱԿԱՆ
ԱԿՏԵՐԻ, ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ
ՆՅՈՒԹԵՐԻ ՑԱՆԿ**

ՆՈՐՄԱՏԻՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐ

***Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական
ակտեր***

1. ՀՀ Սահմանադրություն (05.07.1995թ.), ՀՀՊՏ 2005.12.05/Հատուկ թողարկում Հոդ. 1426):

2. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիա (04.11.1950թ.), ՀՀՊՏ 2002.06.05/17(192) Հոդ. 367:

3. ՀՀ սահմանադրական դատարանի 2007թ. ապրիլի 9-ի թիվ ՍԴՈ-690 որոշում, ՀՀՊՏ 2007.04.25/22(546) Հոդ. 505:

4. ՀՀ սահմանադրական դատարանի 2007թ. հուլիսի 20-ի թիվ ՍԴՈ-709 որոշում, ՀՀՊՏ 2007.08.01/39(563) Հոդ. 849:

5. ՀՀ սահմանադրական դատարանի 2007թ. նոյեմբերի 28-ի թիվ ՍԴՈ-719 որոշում, ՀՀՊՏ 2007.12.21/16.1:

6. ՀՀ սահմանադրական դատարանի 2008թ. ապրիլի 15-ի թիվ ՍԴՈ-751 որոշում, ՀՀՊՏ 2008.04.30/25(615) Հոդ. 401:

7. ՀՀ սահմանադրական դատարանի 2008թ. մայիսի 27-ի թիվ ՍԴՈ-754 որոշում, ՀՀՊՏ 2008.06.11/36(626) Հոդ. 565:

8. ՀՀ սահմանադրական դատարանի 2008թ. սեպտեմբերի 9-ի թիվ ՍԴՈ-758 որոշում, ՀՀՊՏ 2008.09.17/58(648) Հոդ. 943:

9. ՀՀ սահմանադրական դատարանի 2008թ. նոյեմբերի 25-ի թիվ ՍԴՈ-780 որոշում, ՀՀՊՏ 2008.12.10/71(661) Հոդ. 1276:

10. ՀՀ սահմանադրական դատարանի 2009թ. հոկտեմբերի 13-ի թիվ ՍԴՈ-833 որոշում, ՀՀՊՏ 2009.10.21/53(719) Հոդ. 1168:

11. ՀՀ սահմանադրական դատարանի 2009թ. դեկտեմբերի 8-ի թիվ ՍԴՈ-845 որոշում, ՀՀՊՏ 2009.12.16/64(730) Հոդ. 1378:

12. ՀՀ սահմանադրական դատարանի 2010թ. մարտի 30-ի թիվ ՍԴՈ-871 որոշում, ՀՀՊՏ 2010.04.07/14(748) Հոդ. 354:

13. ՀՀ սահմանադրական դատարանի 2010թ. մայիսի 25-ի թիվ ՍԴՈ-890 որոշում, ՀՀՊՏ 2010.06.09/25(759) Հոդ. 612:

14. ՀՀ սահմանադրական դատարանի 2010թ. նոյեմբերի 2-ի թիվ ՍԴՈ-922 որոշում, ՀՀՊՏ 2010.11.10/57(791) Հոդ. 1252:

15. ՀՀ սահմանադրական դատարանի 2011թ. փետրվարի 8-ի թիվ ՍԴՈ-936 որոշում, ՀՀՊՏ 2011.02.16/9(812) Հոդ. 134:

16. ՀՀ սահմանադրական դատարանի 2011թ. դեկտեմբերի 11-ի թիվ ՍԴՈ-1004 որոշում, ՀՀՊՏ 2011.12.14/66(869).1 Հոդ. 1645.4:

17. ՀՀ սահմանադրական դատարանի 2012թ. սեպտեմբերի 28-ի թիվ ՍԴՈ-1049 որոշում, ՀՀՊՏ 2012.10.10/49(923).1 Հոդ. 1096.1:

18. ՀՀ 1964 թվականի հունիսի 4-ի քաղաքացիական դատավարության օրենսգիրք (ուժը կորցրել 01.01.1999թ.):

19. ՀՀ քաղաքացիական օրենսգիրք (05.05.1998թ.), ՀՀՊՏ 1998.08.10/17(50):

20. ՀՀ դատական օրենսգիրք (21.02.2007թ.) ՀՀՊՏ 2007.04.18/20(544) Հոդ. 489:

21. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք (17.06.1998թ.), ՀՀՊՏ 1998.09.09/20(53):

22. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք (01.07.1998թ.), ՀՀՊՏ 1998.09.21/22(55):

23. ՀՀ քրեական օրենսգիրք (18.04.2003թ.), ՀՀՊՏ 2003.05.02/25(260) Հոդ. 407:

24. ՀՀ ընտանեկան օրենսգիրք (09.11.2004թ.), ՀՀՊՏ 2005.01.19/4 (376) Հոդ. 60:

25. «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենք (27.12.1997թ.), ՀՀՊՏ 1998.01.11/1:

26. «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենք (05.05.1998թ.), ՀՀՊՏ 1998.06.15/12(45):

27. «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք (03.04.2002թ.), ՀՀՊՏ 2002.05.21/15(190) Հոդ. 344:

28. «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենք (18.02.2004թ.), ՀՀՊՏ 2004.03.31/18(317) Հոդ. 413:

29. «Դատախազության մասին» ՀՀ օրենք (22.02.2007թ.), ՀՀՊՏ 2007.04.11/19(543) Հոդ. 455:

Օտարերկրյա նորմատիվ իրավական ակտեր

30. Գերմանիայի քաղաքացիական դատավարության օրենսգիրք (1950թ.) // http://albookerk.ru/g/vitrum/grazhdanskij_processual'nyj_kodeks_frg__8.html:

31. Լատվիայի քաղաքացիական դատավարության օրենք (1998թ.) // <http://do.gendocs.ru/docs/index-92469.html?page=12>:

32. Բելառուսի քաղաքացիական դատավարության օրենսգիրք (1999թ.) // <http://www.pravo.by/main.aspx?guid=3871&p0=hk9900238&p2={NRPA}>:

33. Ղազախստանի քաղաքացիական դատավարության օրենսգիրք (1999թ.) // http://online.zakon.kz/Document/?doc_id=1013921&page=1:

34. Ռուսաստանի քաղաքացիական դատավարության օրենսգիրք (2002թ.) // <http://base.consultant.ru/cons/cgi/online.cgi?req=doc;base=LAW;n=127758>:

35. Մոլդովայի քաղաքացիական դատավարության օրենսգիրք (2003թ.) // http://www.jguard.ru/images/attaches/254/gpk_moldova.txt:

36. Ուկրաինայի քաղաքացիական դատավարության օրենսգիրք (2004թ.) // <http://registration.svs.co.ua/zakon/CPK-1.htm>:

37. Էստոնիայի քաղաքացիական դատավարության օրենսգիրք (2005թ.) // http://estonia.news-city.info/docs/sistemsw/dok_ieghez/index.htm:

38. Տաջիկստանի քաղաքացիական դատավարության օրենսգիրք (2008թ.) // <http://mmk.tj/ru/legislation/legislation-base/codecs/>:

ՄԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԳԻՏԱԿԱՆ ՀՈՂԿԱԾՆԵՐ ԵՎ ԱՅԼ ՏԵՍԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

39. **Աղայան Է.Բ.**, Արդի հայերենի բացատրական բառարան - Երևան, «Հայաստան» իրատարակչություն, 1976, 932 էջ:

40. **Բարսեղյան Տ.Կ.**, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք: Առաջին մաս. (երրորդ հրատարակ-

կություն) - Երևանի պետ. համալս. - Եր.: Երևանի համալս. հրատ., 2006, 560 էջ:

41. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ / ընդհանուր խմբագրությամբ՝ **Գ.Հարությունյանի, Ա.Վաղարշյանի.** - Եր.: «Իրավունք», 2010, 1086 էջ:

42. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն: Ընդհանուր մաս (4-րդ հրատարակություն, լրացումներով և փոփոխություններով) / **Ս. Դիլբանդյան, Ա. Հարությունյան, Գ. Ղազինյան և այլք.** - Երևանի պետ. համալս. - Եր.: Երևանի համալս. հրատ., 2006, 416 էջ:

43. Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Հատուկ մաս (երկրորդ հրատարակություն՝ փոփոխություններով և լրացումներով) / **Ս. Առաքելյան, Ա. Գաբուզյան, Հ. Խաչիկյան, Գ. Ղազինյան, Ն. Մաղաքյան, Ա. Մարգարյան, Տ. Սիմոնյան, Վ. Քոչարյան.** - Երևանի պետ. համալս. - Եր.: Երևանի համալս. հրատ., 2006, 968 էջ:

44. **Հովհաննիսյան Վ.Վ.,** Վերաքննիչ բողոքարկման իրավունքի սուբյեկտները ՀՀ քաղաքացիական դատավարությունում // Օրինականություն, 2011, ¹ 66:

45. **Հովհաննիսյան Վ.Վ.,** Վերաքննիչ դատարանի գործառութային լիազորությունների դասակարգման հիմնախնդիրները քաղաքացիական դատավարությունում // Բանբեր Երևանի Համալսարանի (Իրավագիտություն), 2012, ¹ 138.3:

46. **Հովհաննիսյան Վ.Վ.,** Քաղաքացիական գործերով դատական վերանայման ինստիտուտի զարգացման հիմնախնդիրները Հայաստանում / Վ.Վ. Հովհաննիսյան: Երևանի պետ. համալսարան: - Երևան, ԵՊՀ հրատ., 2011, 256 էջ:

47. **Մեղրյան Ա.Գ.,** Ապացույցներ ներկայացնելու պարտականությունը քաղաքացիական դատավարությունում // Օրինականություն, 2011, ¹ 66:

48. **Մեղրյան Ա.Գ.,** Ապացուցման առարկայի հիմնախնդիրը քաղաքացիական դատավարությունում // Բանբեր Երևանի համալսարանի (Իրավագիտություն), 2011, ¹ 134.3:

49. **Մեղրյան Ա.Գ.,** Ապացուցումը Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարությունում: Դասախոսութ-

յուններ: Երևանի պետ. համալսարան: Եր., 2011, 256 էջ:

50. **Մեղրյան Ա.Գ.**, Առաջին ատյանի դատարանի քաղաքացիական գործերով դատական ակտերը: Երևան պետ. համալսարան: Եր.: ԵՊՀ հրատ., 2010, 192 էջ:

51. **Մեղրյան Ա.Գ.**, Քաղաքացիական դատավարությունում ապացուցման պարտականության բովանդակությունը // Պետություն և իրավունք, 2011, ¹ 2 (52):

52. **Պետրոսյան Ռ.Գ.**, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարություն / Ռ.Գ. Պետրոսյան (իրավ. գիտ. դոկտոր, դոցենտ Լ.Զ. Թադևոսյանի խմբագրությամբ): - Չորրորդ հրատարակություն. - Երևան.: Ոսկան Երևանցի, 2012, 692 էջ:

53. **Պետրոսյան Ռ.Գ.**, Հայաստանի քաղաքացիական դատավարություն (իրավ. գիտ. դոկտոր, պրոֆ. Գ.Հ. Ղարախանյանի խմբագրությամբ): - Երրորդ հրատարակություն - Եր.: Երևանի համալսարանի հրատ., 2007, 768 էջ:

54. **Аболонин Г.О.**, Гражданское процессуальное право США: монография /Г.О. Аболонин. – М.: Волтерс Клувер, 2010, 432 էջ:

55. **Авдеенко Н.И. и др.**, Гражданский процесс – М., Изд-во «Юридическая литература», 1968, 456 էջ:

56. **Авдеенко Н.И. и др.**, Советский гражданский процесс – Ленинград, Изд-во Ленинградского университета, 1984, 424 էջ:

57. **Авдюков М.Г. и др.**, Советский гражданский процесс – М., Изд-во Московского университета, 1964, 454 էջ:

58. **Алиев Т.Т.**, Рассмотрение заявления о пересмотре по вновь открывшимся обстоятельствам решения, определения суда // Закон и право – 2004. - N 5:

59. **Алиев Т.Т., Громов Н.А.**, Влияние вновь открывшихся обстоятельств на законность и обоснованность решения суда // Законность. – 2004. - N 2:

60. **Анохин В.С.**, Арбитражное процессуальное право России: Учеб. для студ. высш. учеб. заведений. – М.: Гуманит. изд. центр «ВЛАДОС», 1999, 496 էջ:

61. **Антимонов Б.С., Герзон С.Л.**, Обжалование и пересмотр решений по гражданским делам. – М., Госюриздат,

1953, 157 ʘ:

62. Арбитражный процесс: компендиум / отв. ред. **В.В. Ярков**. – М.: Изд-во «Инфотропик Медиа», 2011, 368 ʘ:

63. **Аргунов В.Н. и др.** Научно-практический комментарий к Гражданскому процессуальному кодексу РСФСР. М.: Городец-издат, 2000, 704 ʘ:

64. **Афанасьев С.Ф., Зайцев А.И.**, Гражданское процессуальное право: учебник для бакалавров / 3-е изд., перераб. и доп. – М. : Изд-во «Юрайт», 2011, 602 ʘ:

65. **Баулин О.В.**, Доказательства и доказывание в гражданском судопроизводстве: учебное пособие /О.В. Баулин, Д.Г. Фильченко; под общ. ред. О.В. Баулина. - Воронеж: Изд-во Воронежского государственного университета, 2006, 264 ʘ:

66. **Боннер А.Т. и др.**, Советский гражданский процесс – М., Изд-во «Юридическая литература», 1985, 528 ʘ:

67. **Боннер А.Т.**, Установление обстоятельств гражданских дел – М.: Городец, 2000, 328 ʘ:

68. **Борисов А.Б.**, Комментарий к гражданскому процессуальному кодексу РФ (постатейный). – М.: Книжный мир, 2009, 608 ʘ:

69. **Вандышев В.В., Дернова Д.В.**, Гражданский процесс. Курс лекций – СПб: Питер, 2001, 416 ʘ:

70. **Васьковский Е.В.**, Курс гражданского процесса. Том 1 – М.: Изд-во «Бр. Башмаковых», 1913, 699 ʘ:

71. **Власов А.А.**,Гражданский процесс: учебник для бакалавров /А.А. Власов. – 4-е изд., перераб. и доп. – М.: Изд-во «Юрайт», 2012, 548 ʘ:

72. **Власов А.А., Власова М.Г., Черкашин В.А.**, Гражданский процесс в вопросах и ответах: Учеб, пособие / Под ред. А.А. Власова. – М.: ТК Велби, Изд-во «Проспект», 2004, 368 ʘ:

73. **Воложанин В.П. и др.**, Советский гражданский процесс. - М., Изд-во «Юрид. С 56 лит.», 1978, 432 ʘ:

74. Гражданский процесс. Учебник/ Под ред. **С.Н. Абрамова** - М., Изд-во министерства юстиции СССР, 1948, 484 ʘ:

75. Гражданский процесс: учеб. для студентов вузов/ [Абушенко Д.Б. и др.]; отв. ред. – **В.В. Янков.** – 7-е изд., перераб. и доп. – М.: Волтерс Клувер, 2009, 784 тг:
76. Гражданский процесс: Учебник /Под ред. д.ю.н., проф. **А.Г. Коваленко**, д.ю.н., проф. **А.А. Мохова**, д.ю.н., проф. **П.М. Филиппова.** – М.: Юридическая фирма «КОНТРАКТ»; «ИНФРА-М», 2008, 448 тг:
77. Гражданский процесс. Учебник /Под. ред. **В.А. Мусина, Н.А. Чечиной, Д.М. Чечота.** – М.: «ПРОСПЕКТ», 1997, 480 тг:
78. Гражданский процесс/ **И.В. Решетникова, В.В. Янков.** – 6-е изд., перераб. – М.: Норма: Инфра-М, 2012, 336 тг:
79. Гражданский процесс: учеб. пособие /**А.Б. Смушкин, Т.В. Суркова, О.С. Черникова.** – 3-е изд., перераб. – М.: Изд-во «Омега-Л», 2009, 304 тг:
80. Гражданский процесс: Учебник. 3-е изд., перераб. И доп. / Под ред. **М.К. Треушникова.** М.: Издательский Дом «Городец», 2010, 816 тг:
81. Гражданский процесс Украины: Учебное пособие для подготовки к экзамену / **Погребной С.А., Гонгало Р.Ф., Волкова Н.В. и др.** – Х.: Одиссей, 2011, 208 тг:
82. Гражданский процесс: Учебник / Под ред. **М.С. Шакарян.** – М., Юрид. лит., 1993, 560 тг:
83. Гражданское право: учеб.: в 3 т. Т. 1. / **Е.Н. Абрамова, Н.Н. Аверченко, Ю.В. Байгушева** [и др.]; под ред. **А.П. Сергеева.** – М.: РГ-Пресс, 2009, 1008 тг:
84. Гражданское право. В 4 т. Т. 1: Общая часть: учеб. для студентов вузов / [Ем В.С. и др.]; отв. ред. – **Е.А. Суханов.** – 3-е изд., перераб и доп. – М.: Волтерс Клувер, 2010, 736 тг:
85. Гражданское процессуальное право России: Учебник для вузов /**П.В. Алексей, Н.Д. Эриашвили, В.Н. Галузо и др.**; Под ред. проф. П.В. Алексея, проф. Н.Д. Амаглобели. – М.: ЮНИТИ-ДАНА, 2005, 432 тг:
86. Гражданское процессуальное право России: Учебник для вузов /Под ред. **М.С. Шакарян** – М.: Изд-во «Былина», 1998, 504 тг:

87. **Громов Н.А.**, Реквизиты заявления о пересмотре судебных актов по вновь открывшимся обстоятельствам // Законность. – 1995. - ¹ 8:

88. **Громов Н.А.**, Применение преюдициальных актов при рассмотрении судами гражданских дел по вновь открывшимся обстоятельствам // Законность. – 1998. - ¹ 2:

89. **Горохов Б.А.**, Практика применения Гражданского процессуального кодекса Российской Федерации : прак. пособие /под ред. В.Н. Соловьева. – 2-е изд., перераб. и доп. – М.: Изд-во «Юрайт», 2010, 674 тз:

90. **Гукасян Р.Е.**, Избранные труды по гражданскому процессу. – М.: Проспект, 2008, 480 тз:

91. **Давыдов В.А.**, Возобновление уголовного судопроизводства ввиду новых или вновь открывшихся обстоятельств: теория и практика исправления судебных ошибок / В.А. Давыдов. – М.: Изд-во «Юрайт», 2012, 313 тз:

92. **Диордиева О.Н.**, Гражданское процессуальное право: Учебно-методический комплекс. – М.: Изд-во «ЕАОИ», 2008, 284 тз:

93. **Женетль С.З., Никифоров А.В.**, Гражданский процесс: Учебник. – 3-е изд. – М.: РИОР:ИНФРА-М, 2012, 432 тз:

94. **Зайцев И.М.**, Устранение судебных ошибок в гражданском процессе. - С., Изд-во Саратовского университета, 1985, 136 тз:

95. **Исаенкова О.В., Демичев А.А.**, Гражданское процессуальное право России: учебник /Под. ред. О.В. Исаенковой. – М.: Норма, 2009, 448 тз:

96. Комментарий к Гражданскому кодексу Российской Федерации. В 2 т. Т. 1. Части первая, вторая ГК РФ / под ред. **Т.Е. Абовой, А.Ю. Кабалкина**; Ин-т государства и права РАН. – 2-е изд., перераб. и доп. – М.: Изд-во «Юрайт», 2009, 926 тз:

97. Комментарий к Гражданскому процессуальному кодексу Российской Федерации /под ред. **М.А. Викут**. М.: Изд-во «Юрайт», 2012, 607 тз:

98. **Коршунов Н.М.**, Гражданский процесс: учеб. пособие /Н.М. Коршунов, Ю.Л. Мареев; пор. ред. Н.М. Коршунова. – М.:

МПСИ, 2011, 568 ʘ:

99. **Лебедев М.Ю.** Гражданский процесс: учебник для вузов и ссузов /М. Ю. Лебедев. –М.: Изд-во «Юрайт»; Высшее образование, 2010, 382 ʘ:

100. **Мазурин С.Ф.**, Гражданский процесс. – Питер, Изд-во «Питер Пресс», 2008, 176 ʘ:

101. **Малешин Д.Я.**, Гражданская процессуальная система России. – М.: Статут, 2011, 496 ʘ:

102. **Матушевский Р.Г.**, Гражданское процессуальное право. Краткий системный курс – М.: А-Приор, 2011, 256 ʘ:

103. **Мельников А.А. и др.**, Курс советского гражданского процессуального права. Том II, М., Изд-во «Наука», 1981, 512 ʘ:

104. **Миронов В.И.**, Гражданский процесс: учебник / Миронов В.И. – М.: Эксмо, 2011, 592 ʘ:

105. **Морозова Л.С.**, Пересмотр решений по вновь открывшимся обстоятельствам. – М.: Госюриздат, 1959, 73 ʘ:

106. **Мурадян Э.М.**, Истина как проблема судебного права. -М.: Юрист, 2002, 287 ʘ:

107. **Орлов В.В., Громов Н.А., Белоносов В.О.**, Сходство и отличие признаков института рассмотрения гражданских дел по вновь открывшимся обстоятельствам от других процессуальных стадий // Юрист. – 1999. - №11:

108. **Осокина Г.Л.**, Курс гражданского судопроизводства России. Общая часть: Учебное пособие. – Томск: Изд-во Том. ун-та, 2002, 616 ʘ:

109. **Попова Ю.А.**, Судопроизводство по делам, возникающим из публично-правовых отношений (теоретические проблемы). Краснодар, КГАУ, 2002, 192 ʘ:

110. Проверка судебных постановлений в гражданском процессе стран ЕС и СНГ: монография / под ред. **Е.А. Борисовой**. – 2-е изд., перераб. и доп. – М.: Норма, 2012, 768 ʘ:

111. **Решетникова И.В.**, Доказывание в гражданском процессе: учеб.-практ. пособие. – М.: Изд-во «Юрайт», 2010, 503 ʘ:

112. **Решетникова И.В., Чукавина И.В.**, Комментарий

судебных ошибок в практике применения АПК РФ / 2-е изд., перераб. – М. : Норма, 2009, 400 էջ:

113. **Рыжаков А.П.**, Комментарий к Арбитражному процессуальному кодексу Российской Федерации (постатейный)/ А.П. Рыжаков. – М.: Дело и Сервис, 2011, 448 էջ:

114. **Рыжов К.Б.**, Принцип свободной оценки доказательств и его реализация в гражданском процессе / науч. ред. В.В. Зрков. – М., Изд-во «Инфотропик Медиа», 2012, 240 էջ:

115. Сборник постановлений Пленумов Верховного Суда и Высшего Арбитражного Суда Российской Федерации по гражданским делам / сост. д-р юрид. наук, проф. **А.П. Сергеев**. – 4-е изд., переб. и доп. – М.: Проспект, 2009, 1216 էջ:

116. Советский гражданский процесс: Учебник. /Под ред. **М.А. Гурвича**.: Изд-во «Высшая школа», М., 1967, 436 էջ:

117. Советский гражданский процесс. Учебник. Изд. 2-е, исправ. и доп. Под ред. **М.А. Гурвича**. – М., «Высш. школа», 1975, 400 էջ:

118. Советский гражданский процесс: Учебник / Под ред. **К.И. Комиссарова и В.М. Семенова**. – 2-е изд., перераб. и доп. – М.: Юрид. лит., 1988, 480 էջ:

119. Советский гражданский процесс: Учебник / Под ред. **М.К. Треушникова**. – М.: Изд-во МГУ, 1989, 463 էջ:

120. Советский гражданский процесс: Учебник. /Отв. ред. **М.С. Шакарян**: Изд-во «Юридическая литература», М., 1985, 528 էջ:

121. **Строгович М.С.**, Проверка законности и обоснованности судебных приговоров. – М., Изд-во Академии наук СССР, 1956, 319 էջ:

122. **Тертышников В.И.**, Гражданский процесс Украины (лекции): Учебное пособие. – Харьков: Издатель ФЛ-П Вапнярчук Н.Н., 2009, 328 էջ:

123. **Треушников М.К.**, Судебные доказательства – М.: Издательский Дом «Городец», 2004, 272 էջ:

124. **Шерстюк В.М.**, Пересмотр судебных актов по вновь открывшимся обстоятельствам // Законодательство. – 1999. - № 12:

125. **Эндрюс Нил**, Система гражданского процесса Англии: судеб. разбирательство, медиация и арбитраж / пер. с англ.; под. ред. Р.М. Ходыкина; Кембриджский ун.т. – М.: Изд-во «Инфотропик Медиа», 2012, 544 тг:

ԱՅԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՍԵՂԱՍՊԵՐ

126. **Алиев Т.Т.**, Производство по пересмотру судебных постановлений ввиду вновь открывшихся обстоятельств в гражданском судопроизводстве: теоретические и практические аспекты, перспективы развития. Дис. ... док. юрид. наук - Саратов, 2005, 444 тг:

127. **Ахмедов С.М.**, Производство по пересмотру судебных актов по вновь открывшимся обстоятельствам в системе пересмотра судебных актов в арбитражном процессе. Дис. ... канд. юрид. наук – Москва, 2008, 189 тг:

128. **Борисова Е.А.**, Теоретические проблемы проверки судебных актов в российском гражданском, арбитражном процессах. Дис. ... док. юрид. наук - Москва, 2005, 376 тг:

129. **Гойденко Е.Г.**, Отмена не вступивших в законную силу судебных решений в гражданском процессе. Дис. ... кàíà. юðåå. нàóê – Москва, 2007, 188 тг:

130. **Завриев С.С.**, Пересмотр по вновь открывшимся обстоятельствам решений, определений, постановлений президиума суда надзорной инстанции, вступивших в законную силу, в гражданском процессе. Дис. ... канд. юрид. наук – Москва, 2008, 116 тг:

131. **Караваева Е.В.**, Вопросы апелляционного производства в гражданском процессе. Дис. ... канд. юрид. наук – Саратов, 2005, 190 тг:

132. **Кац С.Ю.**, Проблемы пересмотра судебных постановлений по гражданским делам в порядке надзора. Автореф. Дис. ... дîê. юðåå. нàóê – Харьков, 1970, 38 тг:

133. **Никоноров С.Ю.**, Производство в порядке надзора в гражданском процессе. Дис. ... канд. юрид. наук – Москва,

2004, 172 тг:

134. **Новик-Качан М.Ю.**, Надзорное производство в гражданском процессе. Дис. ... канд. юрид. наук – Москва, 2005, 209 тг:

135. **Петрова И.А.**, Пересмотр судебных актов по вновь открывшимся обстоятельствам в гражданском и арбитражном процессах (сравнительно-правовой аспект). Дис. ... канд. юрид. наук – Москва, 2010, 188 тг:

136. **Резуненко А.Н.**, Пересмотр судебных актов, вступивших в законную силу, по вновь открывшимся обстоятельствам как стадия гражданского процесса. Дис. ... канд. юрид. наук – Волгоград, 2001, 157 тг:

137. **Рожкова М.А.**, Теории юридических фактов гражданского и процессуального права: понятия, классификации, основы взаимодействия. Дис. ... док. юрид. наук - Москва, 2010, 418 тг:

138. **Терехова Л.А.**, Право на исправление судебной ошибки как компонент судебной защиты. Дис. ... док. юрид. наук - Екатеринбург, 2008, 459 тг:

139. **Тимофеев Ю.А.**, Полномочия суда второй инстанции в гражданском процессе: современные проблемы. Дис. ... канд. юрид. наук – Екатеринбург, 2008, 241 тг:

140. **Ткачёв Н.И.**, Законность и обоснованность судебных постановлений в гражданском процессе. Дис. ... канд. юрид. наук – Саратов, 1984, 204 тг:

141. **Томина А.П.**, Принцип состязательности на стадиях проверки судебных постановлений в гражданском процессе. Дис. ... канд. юрид. наук – Москва, 2008, 179 тг:

142. **Тришина Е.Г.**, Проблема судебного контроля в гражданском судопроизводстве. Автореф. Дис. ... канд. юрид. наук – Саратов, 2000, 29 тг:

143. **Фильченко И.Г.**, Процессуальные гарантии принятия обоснованного судебного решения в гражданском процессе. Дис. ... канд. юрид. наук. - Воронеж, 2010, 195 тг:

ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ՆՅՈՒԹԵՐ

144. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի **Դե Զայեսը և Գիսելն ընդդեմ Բելգիայի** գործով 1997թ. փետրվարի 24-ի վճիռ // http://european-court.eu/uploads/ECHR_De_Haes_and_Gysels_v_Belgium_24_02_1997.pdf:

145. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի **Յորնսբին ընդդեմ Յունաստանի** գործով 1997թ. մարտի 19-ի վճիռ // <http://docs.pravo.ru/document/view/16651651/>:

146. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի **«Իմնոբիլիարե Սաֆֆի» ընկերությունն ընդդեմ Իտալիայի** գործով 1999թ. հուլիսի 28-ի վճիռ // <http://docs.pravo.ru/document/view/28787804/>:

147. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի **Բրունարեսկուն ընդդեմ Ռումինիայի** գործով 1999թ. հոկտեմբերի 28-ի վճիռ // http://www.chernobyl86.ru/spisok/zakon/osn_zakon/strasburg/brumares.htm:

148. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի **Պլատակուն ընդդեմ Յունաստանի** գործով 2001թ. հունվարի 11-ի վճիռ // http://www.rroi.narod.ru/echr/another_2/platakou.htm:

149. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի **Բուրդովն ընդդեմ Ռուսաստանի** գործով 2002թ. մայիսի 7-ի վճիռ // <http://www.echr.ru/documents/doc/12027283/12027283.htm>:

150. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի **Ռյաբիխն ընդդեմ Ռուսաստանի** գործով 2003թ. հուլիսի 24-ի վճիռ // <http://european-court.eu/resheniya-evropejskogo-suda-na-russkom-yazyke/ryabyx-protiv-rossii-postanovlenie-evropejskogo-suda/>:

151. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի **Պրավեդնայան ընդդեմ Ռուսաստանի** գործով 2004թ. նոյեմբերի 18-ի վճիռ // <http://european-court.eu/resheniya-evropejskogo-suda-na-russkom-yazyke/pravednaya-protiv-rossii-postanovlenie-evropejskogo-suda/>:

152. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի **Վոլկովան ընդդեմ Ռուսաստանի** գործով 2005 թվականի ապրիլի 5-ի

վճիռ //http://www1.umn.edu/humanrts/russian/euro/Rvolkovacase.html:

153. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի **Նեյլուբին և ընդդեմ Ռուսաստանի** գործով 2006թ. նոյեմբերի 2-ի վճիռ //http://www1.umn.edu/humanrts/russian/euro/Rnelyubincase.html:

154. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի **Բուլգակովան ընդդեմ Ռուսաստանի** գործով 2007 թվականի հունվարի 18-ի վճիռ // http://chernobyl86.ru/spisok/zakon/osn_zakon/strasburg/bulgakova.htm:

155. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի **«Մելտեքս» ՍՊԸ-ն և Մետրոպ Մովսեսյանն ընդդեմ Հայաստանի** գործով 2008թ. հունիսի 17-ի վճիռը, ՀՀՊՏ 2009.02.11/8(674):

156. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի **Խաչատրյանն ընդդեմ Հայաստանի** գործով 2009թ. դեկտեմբերի 1-ի վճիռը, ՀՀՊՏ 2010.10.13/50(784):

157. ՀՀ արդարադատության խորհրդի 2011թ. փետրվարի 25-ի թիվ ԱԽ-3-Ո-6 որոշումը:

158. ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ 3-1206 (ՎԴ) քաղաքացիական գործով 2007թ. օգոստոսի 1-ի որոշումը:

159. ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ 3-1224 (ՎԴ) քաղաքացիական գործով 2007թ. սեպտեմբերի 5-ի որոշումը:

160. ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ 3-1311 (ՎԴ) քաղաքացիական գործով 2007թ. սեպտեմբերի 5-ի որոշումը:

161. ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ 3-1091 (ՎԴ) քաղաքացիական գործով 2007թ. սեպտեմբերի 5-ի որոշումը:

162. ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ 3-1293 քաղաքացիական գործով 2007թ. հոկտեմբերի 10-ի որոշումը:

163. ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ 3-1615 (Ա) քաղաքացիական գործով 2007թ. դեկտեմբերի 12-ի որոշումը:

164. ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ 3-132 (ՎԴ) քաղաքացիական գործով 2008թ. մարտի 27-ի որոշումը:

165. ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ԱՐԴ/0062/02/09 քաղաքացիական գործով 2009թ. փետրվարի 13-ի որոշումը:

166. ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ԵԿԴ/2397/02 քաղաքացիական գործով 2009թ. մարտի 13-ի որոշումը:

167. ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ԵԱԲԴ/1137/02/08 քաղաքացիական գործով 2009թ. մարտի 13-ի որոշումը:
168. ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ԵՄԴ/0771/02/08 քաղաքացիական գործով 2009թ. հունիսի 26-ի որոշումը:
169. ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ԵԱԴԴ/0438/02/08 քաղաքացիական գործով 2009թ. հունիսի 26-ի որոշումը:
170. ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ԵՇԴ/1410/02/08 քաղաքացիական գործով 2009թ. հունիսի 26-ի որոշումը:
171. ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ԵԱԲԴ/1693/02/08 քաղաքացիական գործով 2009թ. հունիսի 24-ի որոշումը:
172. ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ԵԱԲԴ/2610/02/08 քաղաքացիական գործով 2009թ. հունիսի 24-ի որոշումը:
173. ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ՎԴ/5705/05/08 վարչական գործով 2009թ. հունիսի 24-ի որոշումը:
174. ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ԵՇԴ/0008/01/09 քրեական գործով 2009թ. նոյեմբերի 26-ի որոշումը:
175. ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ 3-177(ՎԴ) քաղաքացիական գործով 2010թ. փետրվարի 5-ի որոշումը:
176. ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ՎԴ/0196/05/08 վարչական գործով 2010թ. հունիսի 30-ի որոշումը:
177. ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ՎԴ/22343/03/08 վարչական գործով 2010թ. հունիսի 30-ի որոշումը:
178. ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ԼԴ/0301/01/09 քրեական գործով 2010թ. օգոստոսի 27-ի որոշումը:
179. ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ՎԴ/3986/05/09 վարչական գործով 2010թ. հունիսի 25-ի որոշումը:
180. ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ 3-248/ՎԴ/ քաղաքացիական գործով 2010թ. սեպտեմբերի 10-ի որոշումը:
181. ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ԱՐԱԴ/0223/02/09 քաղաքացիական գործով 2010թ. դեկտեմբերի 27-ի որոշումը:
182. ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ՎԴ/34786/03/09 վարչական գործով 2011թ. մարտի 4-ի որոշումը:
183. ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ԵԱԴԴ/0056/02/08 քաղաքացիական գործով 2011թ. ապրիլի 1-ի որոշումը:
184. ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ԵՇԴ/0473/02/10 քաղաքացիական գործով 2011թ. մայիսի 27-ի որոշումը:
185. ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ԵՇԴ/0611/02/09

քաղաքացիական գործով 2011թ. մայիսի 27-ի որոշումը:

186. ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ՎԴ/4584/05/08 վարչական գործով 2011թ. մայիսի 27-ի որոշումը:

187. ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ԵԲԴ/0601/02/08 քաղաքացիական գործով 2012թ. հունիսի 29-ի որոշումը:

188. ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ԵՇԴ/1216/02/10 քաղաքացիական գործով 2012թ. հունիսի 29-ի որոշումը:

189. ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ 2-3/2004 քաղաքացիական գործով 2012թ. հոկտեմբերի 19-ի որոշումը:

190. ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ԳԴ4/0491/02/09 քաղաքացիական գործով 2012թ. հոկտեմբերի 19-ի որոշումը:

191. ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ՎԴ/0280/05/10 վարչական գործով 2012թ. հոկտեմբերի 19-ի որոշումը:

192. ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ՍԴ/0804/02/09 քաղաքացիական գործով 2011թ. մարտի 16-ի «Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին» որոշումը:

193. ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ 3-561 քաղաքացիական գործով 2011թ. օգոստոսի 31-ի «Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին» որոշումը:

194. ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ԵԱԲԴ/0496/02/10 քաղաքացիական գործով 2011թ. օգոստոսի 31-ի «Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին» որոշումը:

195. ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ 3-1417 (ՎԴ) քաղաքացիական գործով 2011թ. սեպտեմբերի 22-ի «Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին» որոշումը:

196. ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ 3-1349 (ՎԴ) քաղաքացիական գործով 2011թ. հոկտեմբերի 5-ի «Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին» որոշումը:

197. ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի թիվ ԱՐԴ1/0444/02/08 քաղաքացիական գործով 2010թ. սեպտեմբերի 30-ի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշումը:

198. ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի թիվ ԵԲԴ/1270/02/08 քաղաքացիական գործով 2010թ. դեկտեմբերի 20-ի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշումը:

199. ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի թիվ ԵՇԴ/1063/02/09 քաղաքացիական գործով 2011թ. մարտի 4-ի «Վրիպակն ուղղելու մասին» որոշումը:

Տիգրան Արթուրի Մարկոսյան

Տիգրան Արթուրի Մարկոսյանը ծնվել է 1987թ. նոյեմբերի 11-ին Երևան քաղաքում: 2004թ. գերազանցությամբ ավարտել է Ստեփան Շահումյանի անվան թիվ 1 միջնակարգ դպրոցը և նույն տարում ընդունվել ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատ: 2008թ. գերազանցության դիպլոմով ավարտել է բակալավրիատը և նույն տարում ընդունվել ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրա: 2010թ. ավարտել է ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրան և ընդունվել ԵՊՀ ասպիրանտուրա՝ «Դատական իրավունք – դատարանակազմություն, քաղաքացիական դատավարություն, քրեական դատավարություն, կրիմինալիստիկա, դատական փորձաքննություն, փաստաբանություն, օպերատիվ-հետախուզական գործունեության տեսություն» մասնագիտությամբ:

2013թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսությունը և ստացել իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

2009թ. ապրիլից մինչև 2013թ. հուլիսը աշխատել է «ԲՐԵՅՎ» ՍՊԸ-ում որպես իրավաբան:

2011թ. մարտից մինչև 2012թ. դեկտեմբերը համատեղությամբ աշխատել է «ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական ինստիտուտ» ՊՈԱԿ-ում որպես փորձագետ:

2013թ. օգոստոսից առ այսօր աշխատում է ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմում որպես իրավաբանական վարչության պետի տեղակալ:

2010թ. առ այսօր դասավանդում է ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետում: 2011թ. ստացել է փաստաբանական գործունեության արտոնագիր:

Որպես փորձագետ մասնակցել է 2012թ. ՀՀ արդարադատության նախարարության կողմից ձևավորված «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծը մշակող աշխա-

տանքային խմբի գործունեությանը: 2012թ. մարտից առ 2013թ. օգոստոսը հանդիսացել է «ԿԱՍԿԱԴ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ-ի խորհրդի անդամ:

2013 թվականից հանդիսանում է ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ուսանողական խորհրդատվական ծառայության դասախոս-կոորդինատոր:

2013թ. օգոստոսից առ այսօր հանդիսանում է վերադաս հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնա-ժողովի որոշումները քննարկող գանգատարկման խորհրդի անդամ:

Շուրջ մեկ տասնյակ գիտական հոդվածների հեղինակ է:

Տիգրան Արթուրի Մարկոսյան

**ՆՈՐ ԵՐԵՎԱՆ ԵԿԾ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐՈՎ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ
ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Маркосян Тигран Артурович

**ПРОИЗВОДСТВО ПО ПЕРЕСМОТРУ СУДЕБНЫХ АКТОВ ПО
ВНОВЬ ОТКРЫВШИМСЯ ОБСТОЯТЕЛЬСТВАМ В
ГРАЖДАНСКОМ ПРОЦЕССЕ**

Tigran Arthur Markosyan

**PROCEEDING OF REVIEW OF THE JUDICIAL ACTS UNDER
THE NEWLY DISCOVERED CIRCUMSTANCES IN
CIVIL PROCEDURE**

Ձևավորումը՝ Ա. Պետրոսյանի

**Երևանի պետական համալսարանի հրատարակչություն
0025, Երևան, Ա. Մանուկյան 1**

**Հանձնվել է տպագրության 11.11.2013:
Չափսը՝ 60x84^{1/16}: Ծավալը՝ 13 տպ. մամուլ:
Քանակը՝ 250 օրինակ**